

**«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**

**ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
12 (2)**

Երևան 2024

Ցեղասպանագիտական հանդես

Գլխավոր խմբագիր

Հարություն Մարության, պ.գ.դ.,

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Գլխավոր խմբագրի տեղակալ

Նարինե Մարգարյան, պ.գ.թ.,

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Խմբագրական խորհուրդ

Մելինե Անուժյան, պ.գ.թ., Արևմտահայոց հարցերի ուսումնասիրությունների կենտրոն,
Հայաստան

Արսեն Ավագյան, պ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան, Հայաստան

Ռայմոնդ Գևորգյան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ
արտասահմանյան անդամ, Ֆրանսիա

Անդրանիկ Դաբեայան, քաղաքագիտության դոկտոր, Հայկազյան համալսարան,
Լիբանան

Ռոբերտ Թաթոյան, պ.գ.թ., «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ»
հիմնադրամ, Հայաստան

Վահե Թաշճյան, պատմագիտության դոկտոր, «Հուշամատյան» ծրագիր, Գերմանիա

Վալերի Թունյան, պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայաստան

Անահիտ Խոսրոնա, պ.գ.թ., Միջին Արևելքի ուսումնասիրությունների կենտրոն, Չիկագոյի
համալսարան, ԱՄՆ

Աշոտ Հայրունի, պ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան, Հայաստան

Էլկե Հարթման, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, Բեռլինի ազատ համալսարան,
Գերմանիա

Սևանե Ղարիբյան, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, Ժնևի համալսարան,
Շվեյցարիա

Հայկ Մարտիրոսյան, պ.գ.թ., Լեվոն Կոստանյանի հիմնադրամ, Գերմանիա

Վահրամ Շենայան, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, Կալիֆորնիայի պետական
համալսարան, Նորթրիջ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Պետրոս Տեր-Մաթոսյան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, Նեբրասկա-Լինքոլնի
համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Ռուբինա Փիրումյան, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, Կալիֆորնիայի համալսարան,
Ամերիկայի Միացյալ Նահանգներ

***Ts'eghaspanagitakan handes* (“Journal of Genocide Studies”)**

Editor in Chief:

Dr. Harutyun Marutyun, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Associate Editor:

Dr. Narine Margaryan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Editorial Board

Dr. Meline Anumyan, Research Center on Western Armenian Studies, Armenia

Dr., Prof. Arsen Avagyan, Yerevan State University, Armenia

Dr. Antranik Dakessian, Haigazian University, Lebanon

Dr., Prof. Bedross Der Matossian, University of Nebraska-Lincoln, USA

Dr., Prof. Elke Hartmann, Free University Berlin, Germany

Dr., Prof. Ashot Hayruni, Yerevan State University, Armenia

Dr., Prof. Sévane Garibian, University of Geneva, Switzerland

Dr., Prof. Raymond Kevorkian, foreign member of National Academy of Sciences of the Republic of Armenia, France

Dr. Anahit Khosroeva, Center for Middle Eastern Studies, University of Chicago, USA

Dr. Hayk Martirosyan, Lepsiushaus, Potsdam, Germany

Dr., Prof. Rubina Peroomian, University of California, Los Angeles (UCLA), USA

Dr., Prof. Vahram Shemmassian, California State University, Northridge, USA

Dr. Vahé Tachjian, Houshamadyan Project, Germany

Dr. Robert Tatoyan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Dr. Valery Tunyan, Institute of History, National Academy of Sciences of the Republic of Armenia

***Цехаспанагитакан андес* (“Журнал исследований геноцида”)**

Главный редактор

Арутюн Марутян, доктор ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,”
Армения

Заместитель главного редактора

Нарине Маргарян, канд. ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,” Армения

Редакционная коллегия

Арсен Авагян, доктор ист. наук, профессор, Ереванский государственный университет, Армения

Ашот Айруни, доктор ист. наук, профессор, Ереванский государственный университет, Армения

Мелине Анумян, канд. ист. наук, Центр изучения западноармянских вопросов, Армения

Элке Артманн, доктор истории, профессор, Свободный университет Берлина, Германия

Севанэ Гарибян, доктор права, профессор, Женевский университет, Швейцария

Раймонд Геворгян, доктор истории, профессор, иностранный член Национальной академии наук Республики Армения, Франция

Андраник Дакесян, доктор политологии, Айказян университет, Ливан

Айк Мартиросян, канд. ист. наук, дом-музей Лепсиуса (Лепсиусаус), Потсдам, Германия

Рубина Пирумян, доктор филологии, профессор, Калифорнийский университет в Лос-Анджелесе, Соединённые Штаты Америки

Роберт Татоян, канд. ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,” Армения

Ваге Ташчян, доктор истории, проект “Ушамадян,” Германия

Петрос Тер-Матосян, доктор истории, профессор, Университет Небраски-Линкольна, Соединённые Штаты Америки

Валерий Тунян, доктор ист. наук, профессор, Институт истории Национальной академии наук Республики Армения

Анаит Хосроева, канд. ист. наук, Центр ближневосточных исследований, Чикагский университет, США

Ваграм Шеммассян, доктор филологии, профессор, Калифорнийский государственный университет в Нортридже, Соединённые Штаты Америки

Յեղասպանագիտական հանդեսը (ISSN 1829-3980) գրախոսվող պարբերական է և լույս է տեսնում տարին երկու անգամ՝ մայիսին և դեկտեմբերին, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի կողմից (Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, 0028, Ծիծեռնակաբերդի խճուղի 8/8, հեռ.՝ (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am): Հանդեսը Հայաստանում ցեղասպանագիտության ոլորտի հիմնական պարբերականն է, որի նպատակն է ցեղասպանությունների ուսումնասիրությունը՝ պատմական, սոցիալ-հոգեբանական, ժողովրդագրական, կրոնական, մարդաբանական, իրավական, սեռային, մշակութաբանական և այլ գիտակարգերի տեսանկյունից՝ Հայոց ցեղասպանության շեշտադրմամբ:

Յեղասպանագիտական հանդեսում տպագրված հոդվածները, գրախոսությունները և այլ նյութերն արտահայտում են հեղինակների մտեցումները, որոնք կարող են չհամընկնել «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի մտեցումներին: «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամը որևէ իրավական պատասխանատվություն չի կրում հեղինակների սխալների և բացթողումների համար:

Յեղասպանագիտական հանդեսն ինդեքսավորվում է Գիտական հղման հայկական ցուցիչ (ԳՀՀՑ) մատենագիտական շտեմարանում:

Հոդվածները և գրախոսությունները կարելի է ներկայացնել տպագիր կամ ուղարկել հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ handes@genocide-museum.am:

Ts'eghaspanagitakan handes ("Journal of Genocide Studies") (ISSN 1829-3980) is a peer-reviewed journal and published twice a year in May and December by the Armenian Genocide Museum-Institute Foundation (8/8 Tstitsernakaberdy highway, 0028 Yerevan, Republic of Armenia, (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am). *Journal of Genocide Studies* is the main forum for scholarship in the field of genocide studies in Armenia and features articles, reviews and other relevant materials related to the study of genocides from historical, social-psychological, demographic, religious, anthropological, legal, gender, cultural and other scientific fields with a special emphasis on the Armenian Genocide.

Articles, reviews and other materials published in the *Journal of Genocide Studies* reflect the opinion of the authors and may not necessarily coincide with the approaches of the Armenian Genocide Museum-Institute Foundation. The Armenian Genocide Museum-Institute Foundation cannot accept any legal responsibility for the errors and omissions made by the authors.

Journal of Genocide Studies is indexed/abstracted in the Armenian Science Citation Index (ASCI).

Articles, reviews, and other relevant materials can be presented in print or sent to the following address: handes@genocide-museum.am.

Цехаспанагитакан андес ("Журнал исследований геноцида") (ISSN 1829-3980) – рецензируемое издание, выходит в свет два раза в год, в мае и декабре. Журнал издается фондом "Музей-институт Геноцида армян" (Республика Армения, г. Ереван, 0028, Цицернакабердское шоссе 8/8, (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am). Это единственное в Армении периодическое издание в области геноцидоведения, целью которого является научное изучение геноцидов с исторической, социально-психологической, социологической, этнографической, религиозной, антропологической, юридической, гендерной, культурной и других точек зрения с акцентированием на исследование Геноцида армян.

Статьи, обзоры и другие материалы, опубликованные в "Журнале исследований геноцида," отражают мнение авторов и могут не совпадать с подходами фонда "Музей-институт Геноцида армян." Фонд "Музей-институт Геноцида армян" не несет юридической ответственности за ошибки, допущенные авторами.

"Журнал исследований геноцида" индексируется в Армянском индексе научного цитирования (АИНЦ). Статьи, обзоры и другие материалы могут быть представлены в печатном виде или отправлены по следующему электронному адресу: handes@genocide-museum.am.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Աւօ Յ. Գաթրճեան

Համակերտնացման ճանքարներու արդասցողունը երգ-երաժշտութեան մէջ..... 9

Սաթենիկ Ա. Մաթոսյան

Աղբակի գալստակում հայերի դեմ իրականացված ցեղասպանական գործողությունները 1914-1915 թթ. 41

Հարություն Տ. Մարության

Մեծ եղեռնի հիշողության և գերմանացիների մեղասկզբության թեմայի արդասցողունը արալիւսյան բնասարիչության տարիներին (Հայրենական մեծ պատերազմի և հերպատերազմյան շրջան) 57

Սուրեն Ա. Մանուկյան, Նարեկ Մ. Պողոսյան

Հերերոների ցեղասպանությունը. պատմություն և արդիականություն 82

Էթիկայի կանոններ 127

Ցուցումներ հեղինակներին 128

CONTENT

ARTICLES

Avo H. Katerjian

Reflection of the Theme of Concentration Camps in the Songs and Music 9

Satenik A. Matosyan

The Genocidal Actions Against Armenians in the Aghbak Sub-District in 1914-1915..... 41

Harutyun T. Marutyan

Manifestations of the Theme of the Memory of the Medz Yeghern and Germans' Complicity During the Years of Stalin's Regime (The Great Patriotic War and Post-War Period).....57

Suren A. Manukyan, Narek M. Poghosyan

Herero Genocide: History and Modernity.....82

Ethical Guidelines127

Instruction for Authors..... 128

СОДЕРЖАНИЕ

СТАТЬИ

Аво А. Гатрджян

Проявление темы концентрационных лагерей в песне и музыке 9

Сатеник А. Матосян

Геноцидальные действия в отношении армян в Ахбаке в 1914-1915 гг. 41

Арутюн Т. Марутян

*Проявления темы памяти Мец, Егерна и немецком соучастии
в годы сталинского режима (Великая Отечественная война и послевоенные годы)*....57

Сурен А. Манукян, Нарек М. Погосян

Геноцид племени гереро: история и современность82

Правила этики..... 127

Руководство для авторов..... 128

ՀԱՄԱԿԵԴՐՈՆԱՑՄԱՆ ՃԱՄԲԱՐՆԵՐՈՒ ԱՐՏԱՑՈՒՄԸ ԵՐԳ-ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Աւօ Յ. Գաթրճեան

Ազատ հեղափոխող, Հալէպ-Սուրիա

Հոդվածում կը ներկայացուի Մեծ եղեռնի ճամբարներու վայրերու, Եփրատ գետի տարածքին տեղի ունեցած ցեղասպանութեան տարբեր ժամանակահատուածներու մէջ եւ տարբեր լեզուներով ծնունդ առած երգ-երաժշտութիւններ: Դրանց յօրինումներու թեմաները բազմապիսի են՝ տեղի ունեցած անմարդկային դէպքեր, աշխարհագրական վայրեր, տեսարաններու նկարագրութիւններ, որբահաւաք ու որբանոցներ, դէմքեր, զգացումներու արտայայտութիւն եւ այլ սահմակեցուցիչ նիւթեր: Երաժշտական ոճը բազմազան է՝ ժողովրդական, աշուղական, ոռք, հեռի մեթըլ, ռեք, հիփ-հոփ, նիո էյճ, դասական, ճազ եւ այլն, երգ-երաժշտութիւնն արտացոլած բնագաւառները՝ նոյնպէս՝ գեղարուեստական, պատկերասփիտային ֆիլմաշարեր, վաւերագրական ժապաւէններ եւ թատերգութիւններ:

Բանալի բառեր՝ նահատակներ, Եփրատ, Տէր-Չօր (Տէր-էզ-Չօր), արսոր, ոռք, տանջանք, անապատ, սարսափ, ահ, սուգ, որբ, գաղթական, վիշտ, վրէժ, ցեղասպանութիւն:

Հոդվածը ներկայացվել է՝ 05.02.2024: Ընդունվել է տպագրության՝ 26.11.2024:

The article was submitted on 05.02.2024 and accepted for publication on 26.11.2024.

Статья поступила 05.02.2024 и была принята к публикации 26.11.2024.

Ինչպէս հղել՝ Աւօ Յ. Գաթրճեան, «Համակեդրոնացման ճամբարներու արտացոլումը երգ-երաժշտութեան մէջ», *Յեղասպանագիրական հանդես* 12, no. 2 (2024), 9-40:

How to cite: Avo H. Katerjian, “Reflection of the Theme of Concentration Camps in the Songs and Music,” *Ts’eghaspanagitakan handes* 12, no. 2 (2024), 9-40.

Как сослаться: Аво А. Гатрджян, “Проявление темы концентрационных лагерей в песне и музыке,” *Цехаспанagitakan андес* 12, no. 2 (2024), 9-40.

Ժողովուրդի մը երգ-երաժշտութիւնը հայելին է անոր կեանքի գլխաւոր երեսներուն, անոր հոգեյուզական, զգացական, ընկերային եւ նաեւ քաղաքական վիճակներուն:

Անժխտելի իրողութիւն է, որ երգ-երաժշտութիւնը մարդու կեանքի հիմնական բաղադրիչներէն, նաեւ արտայայտիչներէն մէկն է, ուստի Մեծ եղեռնի տարիներուն եւ յետոյ ստեղծագործուած երգ-երաժշտութիւնները տարբեր բնագաւառներու մէջ լուսարձակի տակ առած ենք: Այդ իսկ պատճառով մեր ուսումնասիրութեան առանցքը կը կազմէ 2010 թ. մեր հրատարակած «Հայոց ցեղասպանութեան ազդեցութիւնը երգ-երաժշտութեան վրայ» (Հալէպ, 622 էջ) աշխատութիւնը:

Հայոց ցեղասպանութեան պատմագրութեան մէջ սակաւ եղած են երգ-երաժշտութեան ուսումնասիրութիւնները, ընդհանրապէս ուշադրութեան կեդրոն դարձած են դիւանագիտական փաստաթուղթերը, արխիւները եւ յուշագրութիւնները: Ուսումնասիրական այս աշխատանքը փորձ մըն է՝ խորանալու եւ ուսումնասիրելու ցեղասպանութեան ազդեցութիւնը եւ անդրադարձը «Ապրիլեան երգ-երաժշտութեան»

վրայ, այսինքն՝ երաժշտութեան այն բնագաւառին, որ Հայոց ցեղասպանութեան ընթացքին եւ ժամանակ մը յետոյ ծնունդ առաւ:

Այստեղ կը ներկայացնենք Մեծ եղեռնի ճամբարներու վայրերու, Եփրատ գետի տարածքին տեղի ունեցած ցեղասպանութեան տարբեր ժամանակահատուածներու մէջ եւ տարբեր լեզուներով ծնունդ առած երգ-երաժշտութիւններ: Այս շրջածիրին մէջ է, որ կը հանդիպինք բանատր եւ գրատր վկայութիւններու, վերապրողներու յուշերուն մէջ տեղ գտած երգերու եւ այլ արխիւներու, որոնք կ'անդրադառնան Հայոց ցեղասպանութեան իրագործման վայրերու, գաղթակայաններու (ճամբար), որբ-որբահաւաքներու, որբանոցներու եւ այլ նիւթերու, յատկապէս ցեղասպանութեան վկայ դարձած Սուրիոյ շրջաններուն ու հիմնական գաղթավայրերուն (ճամբար) եւ հաւաքավայրերէն Տէր-էզ-Զօրին, Սուվարին, Մարկատին, Եփրատին եւ այլ շրջաններու:

Երգ-երաժշտութեան բնագաւառի ընդմէջէն կը ներկայացնենք Հայոց ցեղասպանութեան ժամանակ աքսորի ճանապարհին եւ համակերպողացման ճամբարներու մէջ հայերու կեանքի ու ճակատագրի համայնապատկերը:

Ցեղասպանութեան նուիրուած երգ-երաժշտութիւններուն յօրինումներու թեմաները անսահման են, օրինակ՝ տեղի ունեցած անմարդկային դէպքեր, աշխարհագրական վայրեր, տեսարաններու նկարագրութիւններ, որբահաւաք ու որբանոցներ, դէմքեր, զգացումներու արտայայտութիւն եւ այլ սահմուկեցուցիչ նիւթեր...

Լեզուն զանազան է՝ օսմաներէն, հայերէն, անգլերէն, ֆրանսերէն, թրքերէն, արաբերէն, ռուսերէն, շուէտերէն, պուլկարերէն, պարսկերէն, գերմաներէն եւ այլն:

Երգերու մէջ օգտագործուած բառերու էությունը շատ հասկնալի է: Անոնց մէջ ամէնէն շատ գործածուած ու գերիշխող բառերն են՝ *նահապարակներ, Եփրատ, Տէր-Զօր (Տէր-էզ-Զօր), աքսոր, որբ, տանջանք, անապատ, սարսափ, ահ, սուգ, որբ, գաղթական, վիշտ, վրէժ, ցեղասպանութիւն* եւ այլն, որոնք կը շեշտեն երեւոյթը, անկասկած կ'օգնեն հարազատօրէն փոխանցելու զայն:

Երաժշտական ոճը բազմազան է՝ ժողովրդական, աշուղական, ռոք, հետի մեթըլ, բլեր, հիփ-հոփ, նիւո էյճ, դասական, ճագ եւ այլն, երգ-երաժշտութիւնն արտացոլած բնագաւառները՝ նոյնպէս՝ գեղարուեստական, պատկերասփիւռային ֆիլմաշարեր, վաւերագրական ժապաւէններ եւ թատերգութիւններ:

Այս առնչութեամբ տեղին է յիշել, որ սփիւռքահայ ստեղծագործողներն իրենց հետ բերին նաեւ իրենց ծննդավայրերը՝ Մուշը, Վասպուրականը, Չոմախլուն, Սեբաստիան, Այնթապը, Մարաշը եւ այլ շրջաններ, ու նախնեաց ազգային երաժշտութեան մատուցները, որոնք իրենց վաղնջական ազգային արմատներով ու բազմազանութեամբ համազգային հարստութիւն են:

Նիւթը լուսաբանելու համար ուսումնասիրած ենք երգերը, երաժշտութիւնները տարբեր աղբիւրներէ՝ զանազան լեզուներով: Թեմայի շրջանակներուն մէջ ունեցած ենք բազմաթիւ հանդիպումներ եւ հաղորդակցութիւններ հայ թէ օտար արուեստագէտներու հետ: Նոյնպէս ճամբորդած ենք ցեղասպանութեան իրագործման ու տարածաշրջանի տարբեր երկիրներ, քաղաքներ, բնակավայրեր եւ անապատներ՝ ուսումնասիրութիւնը խորացնելու եւ ճշգրիտ ու մանրամասն տեղեկութիւններ հաւաքելու նպատակով:

Սոյն աշխատութիւնը թէեւ կը շօշափէ յատկապէս երգ-երաժշտութիւնը, սակայն պատմական նիւթեր երեւան հանելով՝ տեղ-տեղ, բնականաբար, պարտաւորութիւն

եւ անհրաժեշտութիւն սեպած ենք պատմական եւ աշխարհագրական ակնարկումներ ընելու, որպէսզի մեր ուսումնասիրական այս աշխատութիւնը ատլի կատարեալ եւ ամբողջական ըլլայ:

* * *

Սուրիոյ անապատի ամբողջ տարածքին կան փոքր այլ վայրեր, որոնք եղած են նաեւ համակեդրոնացման ճամբարներ ու սպանդանոցներ: Այդ վայրերէն հոս կը նշենք երկուսը միայն, որոնք կ'առնչուին մեր նիւթին՝ Սուվար (կարելի է հանդիպիլ նաեւ *Սօար* անունին)¹ եւ Մարկատէ:

Առաջին երգը, որ վերապրողի կողմէ երգուած է, Սուվարի եւ Մարկատէի մասին է: Հետեւաբար այդ շրջաններուն մասին ստորեւ նախ կը ներկայացնենք համառօտ տեղեկութիւն մը, որ մեր յաճախակի այցելութիւններու առանցքը դարձած են նաեւ:

Սուրի (արաբ.՝ *ناحية صور*) շրջանը կը գտնուի Սուրիոյ արեւելքը՝ Տէր-էզ-Չօրի նահանգին մէջ: Տէր-էզ-Չօրի գաւառի 7 շրջաններէն մէկն է: Սուրիական անապատին մէջ գտնուող Սուվար գիւղը ինկած է Տէր-էզ-Չօր քաղաքէն 51 քմ հիւսիս-արեւելք, Խապուր² գետի վերջնամասի աջ ափին: 19-րդ դարու վերջաւորութեան եւ 20-րդ դարակարգին գիւղը ունեցած է չէչէն ազգաբնակչութիւն:

Սուվարը 1915 թ. եղած է բռնագաղթի գլխաւոր ուղիներէն՝ կեդրոններէն մէկը, այլ խօսքով, ըստ Միհրան Աղազարեանի, Սուվարը հայ ժողովուրդի մեծագոյն սպանդանոցներէն մէկն է եղած. «1916 Օգոստոսէն մինչեւ Հոկտեմբերի վերջին Սիվար-Շէտտատիէ-Հասրըճա ջարդուած հայութեան ընդհանուր թիւը 110 հազար է: Այսպէս՝ 60 հազար տեղաւորման շրջաններուն մէջ մեռած»³: Անշուշտ, Աղազարեան կը նշէ նաեւ ազատուածներու, տակաւին անապատին մէջ մնացողներու եւ այդ նոյն արքարավայրերուն մէջ տիրող անմարդկային պայմաններուն հետեւանքով մահացողներու մասին⁴:

Մերձաւոր Արեւելքի ամենաերկար գետի՝ Եփրատի ափին գտնուող այս շրջանը Հայոց ցեղասպանութեան ընթացքին այլ շրջաններու նման եղած է համակեդրոնացման ճամբար. ասկէ թորքերը հայերուն ուղղած են դէպի սպանդանոց՝ Մարկատէ:

Երկրորդ շրջանը՝ Մարկատէ (արաբ.՝ *مركم* կամ *مركم*, հին անուանումը՝ Մաքսին), կը գտնուի Ալ-Հասաբէի նահանգին մէջ, Տէր-էզ-Չօր նահանգին հիւսիս-արեւելքը՝ շուրջ 90 քմ հեռաւորութեամբ: Մարկատէի շրջանը բլրային է, ճամբէն կը զատուի եւ բարձրանալ կը սկսի բլուր մը: Մարկատէ անապատային շրջան է:

Հայոց ցեղասպանութեան շրջանին թորքերը անխնայօրէն հայեր ջարդած են՝ հոն հասած գաղթականները դուրս բերելով շարքերէն: Այլ խօսքով՝ տեղահանուած հայ գաղթականներու համակեդրոնացման հաւաքատեղի՝ սպանդանոց եղած է Մարկատէն:

1 Տէ՛ն Աւօ Գաթրճեան, *Հայոց ցեղասպանութեան ազդեցութիւնը երգ-երաժշտութեան վրայ* (Հալէպ, 2010), 40:

2 Խապուր գետը Եփրատի աջ հարկատուներէն է: Տիգրանակերտի շրջանէն բխող 320 քմ երկարութեամբ գետակը Ալ-Հասաբէի (Հասիչէ) մէջ իր մէկ առուակէն՝ Ժաղժաղայէն ջուրերը ստանալէ ետք մայր գետին կը միանայ Տէր-էզ-Չօրէն հարաւ՝ Պուշայրա գիւղին մօտ:

3 Միհրան Աղազարեան, *Աքոնիականի յուշեր* (Ատանա, տպարան «Հայ ձայն»-ի, 1919), 39:

4 Տէ՛ն նոյն տեղը:

Սոյն աշխատութեան մէջ առաջին հերթին կարեւոր նկատած ենք յայտնաբերել այն յիշողութիւններն ու վկայութիւնները, որոնք ուղղակի վերապրողներու կողմէ երգուած են եւ գրի առնուած:

Այստեղ լուսարձակի տակ կ'առնենք Մեծ եղեռնի ականատեսներէն կարմուճցի (Կարմուճ՝ Ուրֆայի գիւղերէն) Արուշ (Յարութիւն) Վարդանեանի յիշողութիւնը իր 11 տարեկանին տեսած եւ ապրած տաժանելի օրերէն, որ կը պատմէ, թէ տարագրութիւնը սկսաւ, երբ կառավարութենէն հրաման եկաւ. «Հինգ օր միջոց կու տանք ձեզի, պատրաստուեցէք, ձեզ Րազգա պիտի տանինք»⁵:

Վարդանեան իր արքայի ճամբուն անցուցած դրուագները հանգրուանային ձեւով կը պատմէ, մինչեւ որ կը հասնին Տէր-էգ-Չօր, ուր քանի մը օր մնալէ ետք ճամբայ կ'ելլեն դէպի Սուվար: Վարդանեանի իսկ խօսքով՝ այդ ճամբան կ'ըլլայ իրենց «մահուան ճանապարհը»: Ան հազիւ մէկ օրուան ճամբայ քալած էր, քանի մը փորձով վերջապէս փախուստ կու տայ կարաւանէն: Անապատի երկար եւ դժնդակ ուղջ օրերէն ետք դիակներու հետեւելով կը հասնի Տէր-էգ-Չօր:

Արուշ Վարդանեան կը շարունակէ իր յուզիչ պատմութիւնը. «Այս հրահանգին համաձայն, տեղոյն վրայ գտնուող բոլոր հայերը դրկուեցան Սուվար: Զիս պաշտպանող ընտանիքն ալ սկսաւ վախնալ, թէ մի գուցէ փորձանքի մատնուին իմ պատճառաւ: Խառնուեցայ կարաւանին եւ քալելով հասայ կրկին Սուվար: Սուվարի մէջ գտնուող գաղթական այրերը նախ զատեցին եւ ջարդուելու համար դրկեցին «Մէրկետէ» լեռը, որ վայրին յարմարութեան համար վերածուած էր սպանդանոցի»⁶:

Վարդանեան այս պատմութենէն ետք կ'աւելցնէ. «Ժողովուրդը իր տառապանքը կ'երգէր»⁷՝ յաջորդաբար ներկայացնելով «Սուվարտան չըգտըմ պաշըմ սելամէթ» երգին բառերը:

ՍՈՒՎԱՐՏԱՆ ՉԸԳՏԸՄ ՊԱՇԸՄ ՍԵԼԱՄԷԹ

Սուվարտան չըգտըմ պաշըմ սելամէթ,
Մերկետէյէ կիրտիմ, գոբտու գըյամէթ,
Էհալի շաշըրտը պու նէ տիր հիքմէթ,
Տինինին ուղրունա էօլէն էրմէնի:

Սապահտան չըգտըմ կինէշ փարլիյօր,
Ճելլատլար օթուրմուշ սիլահ եաղլիյօր,
Ուղրունա պագտըմ պապամ աղլիյօր,
Տինինին ուղրունա էօլէն էրմէնի:

Եօլ վէր Խապուրըմ, եօլ վէր կեչէյիմ չէօլլերէ,
Չըլ չըլպագ եէթիշէյիմ արաբ քէօյլերէ,

5 Աղէտէն վերապրողներ [Լեւոն Մեսրոպ], *Տէր-Չօր* (Փարիզ, տպ. Պ. Էլէկեան, 1955), 198:

6 Նոյն տեղը, 201:

7 Նոյն տեղը, 201-202:

Տերտիմի աննաթայրմ դարիպ էլլերէ,
Տինինին ուղրունա էօլէն էրմէնի:

Suvar'dan çıktım başım selamet,
Merged'e girdim, kopdu kiyamet,
Ehali şaşirdi bu nedir hikmet,
Dininin uğruna ölen ermeni!

Sabahtan çıktım, güneş parlıyor,
Celladlar oturmuş silah yağlıyor,
Uğruna baktım - babam ağlıyor,
Dininin uğruna ölen ermeni!

Yol ver Habur'um, yol ver geçeyim çöllere,
Çil çilbak yetişeyim arap köylere,
Derdimi anlatayım garib ellere
Dininin uğruna ölen ermeni!

Սուվարէն ելայ ողջ գլխով,
Մարկատէ մտայ, աղէտ առաջացաւ,
Ժողովուրդը շուարեցաւ՝ այս ինչ որոշում է,
Յանուն հաւատի մեռնող հայր:

Ատուու ելայ, արելը կը փայլէր,
Դահիճները նստած գէնք կ'իւղոտեն,
Դիմացս նայեցայ, հայրս կու լայ,
Յանուն հաւատի մեռնող հայր:

Ճամբայ տոր, Խսպորս, ճամբայ տոր, անապատները անցնիմ,
Մես-մերկ հասնիմ արար գիւղեր,
Տառապանքս հասկցնեմ օտար մարդոց,
Յանուն հաւատի մեռնող հայր⁸:

Հարկ է նշել, որ այս երգը շատ մը վերապրողներու կողմէ եւ տասնեակ տարբերակներով երգուած է: Երգուած տարբերակներու մէջ միայն մէկ տող մը կայ, որ մնալուն է՝ իւրաքանչիւր տունի վերջին տողը՝ «Տինինին ուղրունա էօլէն էրմէնի» (Յանուն հաւատի մեռնող հայր): Իսկ մեր նշած երգը, որ սկիզբ կ'առնէ «Սուվարտան չըգտըմ պաշըմ սելամէթ» (Սուվարէն ելայ ողջ գլխով) տողով, ունի այլ տարբերակ մը եւս՝ «Մըվագտան չըգտըմ պաշըմ սելամէթ» (Սեբաստիայէն ելայ ողջ գլխով):

8 Գաթրճեան, *Հայոց ցեղասպանութեան ազդեցութիւնը երգ-երաժշտութեան վրայ*, 41-42:

* * *

Տէր-էգ-Չօրը եղած է հաւաքական գերեզմանատուն այն բոլոր հայերուն, որոնք բռնի տեղահանուեցան իրենց երկրէն դէպի սուրիական անապատը Օսմանեան կայսրութեան իրագործած Հայոց ցեղասպանութեան ժամանակ, երբ դէպի հարաւ ուղղուած հայերու կարաւանները կ'անցնէին Հալէպէն, Բաս-ուլ-Էյնէն, Ռ-աքքայէն, ապա՝ Տէր-էգ-Չօրէն:

Տէր-էգ-Չօրի մասին յօրինուած երգերը կ'արտացոլան տարիներ տեւող ցեղասպանութեան, սովի, բնաջնջումի, կոտորածի, թուրք-քիւրտ մերձեցման, հայու կեանքին վերջ տալու զանազան հանգրուանները, ինչպէս նաեւ հայոց յարութիւնը եւ գոյատեւման պայքարը: Յիշողութիւններով մէկտեղուած՝ այս երգերու պատմական հենքը կը մնան եղեռնը, արեան հեղեղումը, կարօտը, օտարանալը, վախը, սարսափը եւ այլն: Հիմնուելով մեզի հասած երգերուն վրայ՝ կրցանք ուսումնասիրել եւ յայտնաբերել ցեղասպանութեան ազդեցութիւնը երգ-երածշտութեան վրայ: Ուստի այս մեկնակէտէն ելլելով՝ այստեղ կը ներկայացնենք այն երգերը, որոնց միջոցով հայ ժողովուրդը մեկնաբանեց ցեղասպանութեան դէպքերը եւ յատկապէս Տէր-էգ-Չօրի դրուագը:

Առ այդ սկսինք Տէր-էգ-Չօրի նուերուած երգերու ներկայացումը: «Մազի չափ մահին մօտ, եղեռնէն վերապրողի յուշեր»-ու Բ մասի՝ «Կոտորած»-ի 16-րդ գլխուն՝ «Ճամբաս Պաղտատի վրայով»-ին մէջ կը հանդիպինք օսմաներէն երգ մը, որ Համբարձում Չիթճեան Տէր-էգ-Չօրի մէջ իր եւ ընկերոջ միջեւ պատահած դէպքի մը յիշատակութեան ընթացքին կը մէջբերէ:

ՏԵՐ-ՉՕՐ ՋԵՕԼԼԵՐԻՆՏԵ ԿԻՒՆԷՇ ՓԱՌԼԻՅՕՐ

Տէր-Չօր չէօլլերինտէ կինէշ փաուլիօր,
Օսմանլի ասքերի դուրշուն եաղլիօր,
Էրմէնի մուհաճիրի եաման աղլիօր,
Տինին ուղրունայ կիտէն Էրմէնի:

Der Zor çöllerinde, güneş parlıyor,
Osmanlı askeri kurşun yağlıyor,
Ermeni muhaciri yaman ağlıyor,
Dininin uğrına giden Ermeni!⁹

Տէր-Չօրի անապատներուն մէջ արեւը կը փայլի,
Օսմանցի (թուրքի) զինուորը փամփուշտ կը տեղացնէ,
Հայ գաղթականներ սաստիկ կու լան,
Յանուն հաւատի կորստող հայ¹⁰:

9 Բնագիրը հայատառ օսմաներէն է, թրքերէնի վերածումը՝ Աւօ Գաթրճեանի:
10 Համբարձում Չիթճեան, *Մազի չափ մահին մօտ, եղեռնէն վերապրողի յուշեր* (Լոնդոն, Taderon Press, 2004), 226:

* * *

Ստորև կը տրուի օսմաներէն այլ երգ մը, որ այս անգամ բնութեան մէջբերումով կը նկարագրի, թէ Տէր-էգ-Չօրի անապատներուն անանուխ կ'աճի, եւ անանուխին հոտը աշխարհին կը բաւէ, աքսորն ու տարագրութիւնը մահէն վատ են: Այս երգն ալ վերը նշուած երգին յար եւ նման ունի այլ տարբերակներ:

DER ZOR ÇÖLLERİNDE

Der Zor çöllerinde
Naneler biter
Nanenin kokusu
Dünyalara yeter
Anne bu sürgünlük
Ölümden beter.

Տէր-Չօր չէօլլերինսէ
Նանէլէր պիթէր
Նանէնին գոքուսու
Տունեալարա եթէր
Աննէ պու Սիրկիննիլիք
Էօլիւմտէն պէթէր:

Տէր-Չօրի անապատներուն
Անանուխ կ'աճի,
Անանուխին հոտը
Աշխարհին կը բաւէ,
Մայրիկ, այս աքսորը
Մահէն աւելի վթար [վատթար] է¹¹:

* * *

Յաջորդաբար տրուած երկու երգերը կը պատկանին Գրիգորիս Ծ. վարդապետ Պալաքեանի¹² (1879-1934): Ան իր ժողովուրդի հետ ապրած է 1915 թ. ցեղասպանութեան արհաւիրքները եւ կենդանի վկայութիւնները յանձնած է իր «Հայ գողգոթան» երկհատոր գիրքին մէջ: Հետեւաբար Հայոց ցեղասպանութեան ամէնէն մոայլ օրերը վարդ.

11 Գաթրճեան, *Հայոց ցեղասպանութեան ազդեցութիւնը երգ-երաժշտութեան վրայ*, 40:

12 Գրիգորիս Ծ. վարդ. Պալաքեան 1915 ապրիլ 24-ին ձերբակալուած է եւ արտորուած: Եղած է Այաշի, Չանկըրըի, Չորումի, Թոմարգայի եւ համակեդրոնացման այլ ճամբարները: Բանտարկուած է Կումի-տասի, Է. Ակնունիի, Սիամանյոյի, Ռուբէն Սեակի եւ ուրիշներու հետ: Հրաշքով փրկուած է մահէն գերմանացիի անուան տակ: Պալաքեանի «Հայ Գողգոթան» երկհատոր գիրքը Հայոց ցեղասպանութեան պատմութեան ուսումնասիրութեան կարեւոր սկզբնաղբիւր է, որ ան կը ներկայացնէ հայ ժողովուրդի ողբերգութեան մանրամասնութիւնները իբրեւ ականատես եւ արհաւիրքէն վերապրող:

Երգի առաջին տունին մէջ անգամ մը եւս կ'արտացոլայ Տէր-էգ-Ջօրի՝ գաղթավայր ըլլալը: Երգին մէջ կը լսուին արձագանգներ վատնուած կեանքերու ցափն, կրած ջարջարանքին, ինչպէս նաեւ խոր բողոքին եւ օսմանեան ու երիտօրրքերու ջարդարարներու հանդէպ ատելութեան.

«Մենք կը քալենք դէպի Ջօր,

Գերեզմանին օրէց օր...»:

Ծ. վարդ. Պալաքեան այս երգը երգած է «Սիրեցի, եարս տարան» երգի եղանակով, որը յօրինած է ֆետայի ու երգահան Մենակը (Գէորգ՝ Եգոր Առստամեան)¹⁵: Կ'երգուի հանդարտօրէն ու նոյնիսկ ողբագին ոճով, որ պարզ ու դիրաւ արտասանելի կը դարձնէ երգը:

ՄԱՀՈՒԱՆ ԹԱՓՕՐԸ ԴԷՊԻ ՋՕՐ

Շարան-շարան թափօրներ,
Աքտրական բիր հայեր,
Մեզ կը տանին դէպի Ջօր.
Հալած-մաշած ամէն օր
Մենք կը մեռնինք տանջանօք,
Բախտէն լքուած անողոր:

Մենք կը քալենք դէպի Ջօր,
Գերեզմանին օրէց օր
Կը մօտենանք վերջապէս,
Ուր կը սպասեն տօթակէզ
Անապատներ անջրդի,
Ուր պիտ մեռնինք անօթի:

Մեր գերեվար զինուորներ
Առեւանգեն մեր կոյսեր,
Մեր մանուկներ կիսամեռ
Դէզով կազմեն բլուրներ,
Իսկ մեր թշուառ հայ մայրեր
Բոկոտն քալեն ամիսներ:

Բայց դուք մի լաք, ո՛վ հայեր,
Մեր արինով օրհնաբեր
Պիտի ծնի Հայաստան,
Ալ չըլլալով հէզ կոխան
Անգութ ոտից վատ թուրքին
Ձեռքը մնանք միշտ գերին:

15 Տե՛ս Աւետիք Իսահակեան, *Հայրուկի երգեր, քանաստեղծութիւններ*, առաջաբանը, ծանօթագրութիւնները, տեքստի պատրաստումը՝ Արիկ Իսահակեանի (Երեւան, «Արեւիկ», 1990), 269:

Աւերակներ մըխացող
Մեր քաղաքներ շէն ու շող,
Լքուած այսօր տէրերէն.
Երբ Հայաստան դարձեալ շէն
Ծըլի ծաղկի օրէց օր,
Թող միշտ յիշուի ՄԱՀՆ Ի ՁՈՒՐ...

Չի մեր արեամբ գնեցինք
Վերածնուած հայրենիք,
Մեր ծով ցաւեր, արցունքներ,
Տառապանքներ ու վըշտեր,
Ու փրկուած Հայաստան
Ըլլայ թող մահարձան:

Այս յոյսերով փակուեցան
Մեր աչքերը յաիտեան,
Մեր ցաւերը անտրտունջ
Խաչը տարինք անմրմունջ,
Խոր վէրքերուն մեր դաժան
Ասոնք եղան բալասան¹⁶:

* * *

1915 թ. Քեսապի շրջանի 6 000 հայերը եւս բռնագաղթի ենթարկուեցան, իսկ 1918 թ. վերջերը հազիւ 2 200 հոգի կրցան իրենց կեանքը ազատել ու վերադառնալ հայրենի տուն:

Քեսապն ալ բնականաբար ունեցած է իր հերոսական ռազմական երգերը՝ յօրինուած տեղական երգիչներու կողմէ տեղական բարբառով: Այդ երգերը կը պատկանին Քեսապի ժողովրդական երգարուեստին՝ պարերգերուն: Նկատի առնելով, որ յաջորդ երգը կը պատկանի Քեսապի երգարուեստին, անհրաժեշտ կը համարինք քանի մը տողով բացատրութիւն տալ երաժշտական այս տեսակին եւ ստորեւ տրուած երգերուն, զորս քաղած ենք անձնապէս Քեսապ ասանի վերջին շար շարող չագալըճցի Ժիրայր Թրթոեանէ¹⁷:

Պարերգերը կը բաժնուին երեք խումբերու՝ յանկերգ, խաղիկ ու շար: Քեսապի լեզուով՝ «շուօր մը էսիլ» (շար մը ըսել) կամ «շէրիլ» (շարել): Այստեղ տեղին է յիշել նաեւ Սասունի եւ Մշոյ դաշտի մէջ դարերէ ի վեր գոյութիւն ունեցած այս տեսակի երգերը, որոնք կոչուած են «շէր», յօրինելը՝ «շէր կապել»¹⁸:

16 Պալաքեան, *Հայ գողգոթան*, 170-172:

17 Ժիրայր Թրթոեան շատ մեծ ժողովրդականութիւն կը վայելէ թէ՛ իր յիշած եւ թէ՛ իր հիւսած երգերով՝ շարերով, խաղիկներով: Ան ինքնին Քեսապի երգարուեստի հանրագիտարան մըն է, այդ իսկ պատճառով շատեր օգտուած են անոր գիտելիքներէն: Այստեղ տեղին է յիշել անոր իւրայատուկ շարերէն մէկը, որ ան ստեղծագործած եւ նուիրած էր Քեսապի ծնունդ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա (Նշան Սարգիսեան) Ամենայն Հայոց կաթողիկոսի (1977-1995 թթ.) Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս՝ Գարեգին Բ անունով) այցելութեան ի ծննդավայր:

18 Տե՛ս Գաթրճեան, *Հայոց ցեղասպանութեան ազդեցութիւնը երգ-երաժշտութեան վրայ*, 68-69:

Ըստ Ժիրայր Թրթռեանի՝ բովանդակության եւ ստեղծման պահի տեսակետով շատ տեղւոյն վրայ ստեղծուած, երկտող կամ քառատող տուներով ոտանասուր է, որոնք իրարմէ կախեալ են իմաստով: Շարի հիմնական սկզբունքը յանգն է. քառեակը կամ իրերայաջորդ երկու տողերու յանգը նոյնանման պէտք է ըլլայ: Շարը կը ստեղծուի պատեն առիթի մը, ակնթարթի մը մէջ:

Ահաւասիկ կը ներկայացնենք «Շար Մեծ եղեռնի» ստեղծագործութիւնը, որուն մէջ կը յիշատակուի Տէր-Էգ-Զօրը:

ՇԱՐ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ

Թըփփիէն կը կըտրին գօռը,
Տէրէն զըզմի Տէր Զօրը:

Թուփէն կը կոտրեն ոտը,
Տարին մեզի Տէր Զօրը:

Շէտցին չըրդիւնց մուճուղ՛նէն
Եասսէն¹⁹ քերիցէն միր չուճուղ՛նէն:

Շատցան շուրջի մժեղները,
Ասի նետեցին մեր մանուկները:

Տընիէր դընէն ըզդ՛ույրուօղ՛ը²⁰,
Վառինք Տիժկիւնցը զպայրուօղ՛ը:

Տանիքը կը փռեն ապարը,
Վառենք տաճիկներուն (թուրքերուն) դրօշակը:

Հէսսիէն կը շինին ըզգէօստը,
Թըղասնա Տիժկունցը հէօստը:

Խմորէն կը շինեն գունտը,
Թող անցնի տաճիկներուն (թուրքերուն) հունտը:

Ճիկուրուօս շինին ըզփա
Մէկկուն Էնվերն ու Թալաաթը:

Կացիտով կը շինեն փայտը,
Սատկեցան Էնվերն ու Թալաաթը²¹:

19 Ասի (Որոնդէս) գետը կը մատնանշէ:

20 «Դ՛ույրուօղ» կը նշանակէ «փխրուն քարահանք մը՝ կապոյտ հողով, որով կը ծածկեն տանիքները»:

21 Գաթրճեան, *Հայոց յեղասպանութեան ազդեցութիւնը երգ-երաժշտութեան վրայ*, 70:

* * *

Յաջորդ երգը՝ «Յիշեցէք զիս», կը պատկանի գրող, մշակութային եւ կրթական գործիչ Մուշեղ Իշխանի գրիչին, որ յօրինուած է 1964 օգոստոսին:

Մուշեղ Իշխան (Մուշեղ Ճենտերէճեան, 1914-1990) 1915 թ. ընտանիքով արքայազն է Տէր-Զօր: Նախակրթութիւնը ստացած է Սուրիա (Դամասկոս) եւ Կիպրոս: 1935 թ. կ'աւարտէ Պէյրութի ճեմարանը, ուր կը գործէ որպէս հայերէնի դասախօս մինչեւ իր մահը:

Մուշեղ Իշխան մտաւորականի ստեղծագործութեան խորքը կը կազմէ տարագիր հայու պայքարը ուժացման վտանգի դէմ՝ յանուն սեփական դիմագիծի պահպանման, ազգային եւ համամարդկային իտէալներու իրագործման: Անոր բանաստեղծութիւնները տոգորուած են նուրբ քնարականութեամբ ու խոհականութեամբ: Ասոնց լաւագոյն օրինակն է անոր «Տառապանք» քերթուածներու հատորը՝ հրատարակուած 1968 թ.²²:

Յատուկ ուշադրութեան արժանի է մասնագիտութեամբ հոգեբան, դասախօս՝ լոսանճելըսաբանակ (ԱՄՆ) Վիզէն Եագուպեանի 1988 թ. լոյս ընծայած «Պատրանք» ձայներիգը: Վիզէն ձայներիգի երգացանկին մէջ ներառած է «Յիշեցէք զիս»-ը, որուն երաժշտութիւնը յօրինած է նոյնինքը՝ մեկնաբան Վիզէն Եագուպեանը: Այս ձայներիգի եւ յատկապէս «Յիշեցէք զիս» երգին մասին մանրամասն տեղեկութիւններ ստացած ենք Վիզէն Եագուպեանէ:

«Յիշեցէք զիս» երգը կը նկարագրէ տառապանքն ու արհաւիրքը, ինչպէս նաեւ հարազատօրէն կը ներկայացուի Հայոց ցեղասպանութեան համակեդրոնացման ճամբարներու մանաւանդ վերջին կայանը՝ անապատ Տէր-էգ-Զօրը: Երգին բառերուն մէջ կ'արտացոլուի Տէր-էգ-Զօրի տառապանքն ու դառնութիւնը ճաշակած Մուշեղ Իշխանի՝ մարդկային անարդարութեան, տառապանքի եւ զրկուած իրատունքներու դէմ պողոկունը:

Այստեղ երգի ընդմէջէն երեւան կ'ելլէ նաեւ Վիզէն Եագուպեանի՝ ցեղասպանութենէն իր բաժինը առած ըլլալուն տառապող վիճակը: Տեղ-տեղ պողոկունով միախառն անոր երգեցողութիւնը ունկնդիրին վերապրիլ կու տայ դառն անցեալը, եւ Մեծ եղեռնի պատումային նկարագրութիւնը ամէն ինչ կը յստակացնէ:

ՅԻՇԵՑԷՔ ԶԻՍ

Պիտի բախեմ, պիտի բախեմ այս գիշեր
Երագներու դուռը փակ,
Որ պահ մը գէթ ձեր խիղճերուն հեշտասէր
Խորունկ քունէն արթննաք:

Զէք ճանչնար զիս, ես այն մանչուկն եմ սիրուն,
Որ յոգնասպառ, կիսամերկ,
Անապատին մէջ Տէր Զօրի մտաւ քուն
Եւ չարթնցաւ ալ երբեք:

22 Տե՛ս նոյն տեղը, 151:

Մի սարսափիք կմախակերայ իմ տեսքէս,
Հող չեմ մտած ես բնաւ,
Կը շրջէի դիակներու մէջ այսպէս
Միշտ անօթի ու ծարաւ...

Սովի բուքէն փոքր դարձած էր արդէն
Ուտած թմբուկ ու կաշի,
Եւ սրունքներս ալ մերկացած մասնէն՝
Մէյ-մէկ ցպիկ նուագի...

Օրեր անվերջ, կարօտ պատառ մը հացի,
Տեսայ արիւն, տեսայ մահ,
Քոտոտ այծի պէս միայն խոտ ծամեցի,
Խոտոն ալ յետոյ չգտայ:

Ծեծը՝ ոչինչ, կը բուժուի վերքը սուրին,
Ոչինչ է վախն իսկ մահուան.
Սարսափելին՝ երբ սովատանջ կը մարին
Փոքրիկ տղաք ինձ նման...

Ոչ զարդ կ'ուզեմ եւ ոչ տաքուկ բրդեղէն,
Կմախքներ միշտ մերկ կ'ըլլան.
Բայց երբ առնէք տաք հացիկներ դուք փուռէն՝
Յիշեցէք զիս անպայման...

Պիտի բախեմ, պիտի բախեմ շարունակ
Մարդոց դռները բոլոր,
Որ ունենայ ամէն մանչուկ, աղջնակ
Կտոր մը հաց ամէն օր²³:

* * *

2006 թուականին Լիբանանի մէջ հրասարակուեցաւ «Silent propaganda» («Լուռ քարոզչութիւն») խորագիրը կրող խտասալիկը, որը նախաձեռնութիւնն էր խումբ մը հայ երիտասարդներու՝ «Ազատ» («Azzad»), «Սուլ-աքթի» («Soul active»), «Սմաք» («Smak»), «Պըրուզ աֆ փրէյ» («Birds of prey»), «Սերուժ» («C-Rouge») եւ այլ խումբերու, որոնց հիմնադիրները լիբանանեան զանազան համալսարաններու մէջ ուսանող հայ երիտասարդներ էին: Այս աշխատանքի հեղինակն է Սեւակ Տէր-Սարգիսեան: Ան խումբ մը համախոհներու հետ հիմնած է «Ազատ» ռոք խումբը:

Վերոնշեալ խտասալիկի յառաջաբանը ունի խօսուն վերնագիր՝ «IT WAS NOT A WAR» («Ասիկա պատերազմ չէր»): Երգացանկը կը բաղկանայ 9 գործերէ, որոնցմէ

23 Նոյն տեղը, 154:

չորրորդը՝ անգլերէն «Տէր Զօր» երգը, կը պատկանի «Ազատ» խումբին, խօսքերու հեղինակը Սեակ Տէր-Սարգիսեանն է, իսկ երաժշտութեանը՝ Շահէ Տէր-Սարգիսեանը: Երգին երաժշտութիւնը հանդարտ է, բայց վերջին կրկներգի բաժինէն առաջ երաժշտութիւնը կ'արագանայ, կարծէք ամբողջ կուտակուած պոռթկումը հոն կը պայթի, չնայած որ երգեցողութիւնը արդէն խորունկ ու ծանր է:

DER ZOR

Hand of destiny completed the plan
Using the force of the filthy hands
Fighting back for our sacred lands
Holding crosses in our hands.

We will be there no more
Memories can make it better for sure
In the desert of Der Zor. (x2)

Lost the faith for a while
Wondering the reason why
A whole people genocide
Incarnated innocent pride.

We will be there no more
Memories can make it better for sure
In the desert of Der Zor. (x2)

We will be there no more
Memories can make it better for sure
In the desert of Der Zor. (x2)²⁴

ՏԷՐ ԶՕՐ

Ճակատագրի ձեռքը ասարտեց ծրագիրը՝
Օգտագործելով ուժը գարշելի ձեռքերուն,
Մեր սուրբ հողերը պաշտպանեցինք՝
Մեր ձեռքը խաչեր գրկեցինք

Մենք այստեղ այլևս չենք ըլլար
Անպայման, յիշողութիւնը ատլի լաւ կը կատարէ
Տէր Զօրի անապատին մէջ

²⁴ Նոյն տեղը, 343-344:

Հաւատքը կորսնցուցինք կարճ ժամանակ՝
Հարց տալով, թէ ինչու
Ամբողջ ժողովուրդ մը ցեղասպանութեան ենթարկուեցաւ,
Մարմնացած անմեղ հայարտութիւն:

Մենք այնտեղ այլեւս չենք ըլլար
Անպայման, յիշողութիւնը ատելի լաւ կը կատարէ
Տէր Զօրի անապատին մէջ

Մենք այնտեղ այլեւս չենք ըլլար
Անպայման, յիշողութիւնը ատելի լաւ կը կատարէ
Տէր Զօրի անապատին մէջ²⁵:

* * *

2009 թ. Հայոց ցեղասպանութեան 94-րդ տարելիցին առիթով Պէյրութի մէջ կազմակերպուած հանդիսութեան մը ընթացքին ներկայացուեցաւ երգչախմբային կատարողութեամբ երգ մը՝ նուիրուած Մեծ եղեռնին:

Երգը կը կրէր «Ապրիլ կրկին» խորագիրը, որուն խօսքերու հեղինակն է Վարդան Թաշճեան, իսկ երաժշտութեանը՝ Զաքար Քէշիշեան:

Նշենք, որ առաջին անգամ կատարուած այս երգը ներկայացուց միացեալ երգչախումբ մը՝ կազմուած վեց երգչախումբերէ՝ «Շնորհալի», «Առաքելոց», «Կոունկ», «Արմիս», «Գուսան» եւ «Այգ», ղեկավարութեամբ Կարօ Աւետեանի:

Երաժշտութիւնը ծանր կշռոյթով է, եւ այդ ծանրութիւնը հետզհետէ կը պահուի, կարծէք ապրելու համար աւագներու տակէն յարութիւն առնելու պատումն է, որ կը ներկայանայ մեզի: Արդարեւ, կսկծեցուցիչ արարքի նկարագրութիւնը իր հնչական ուժգունութեամբ եւ խօսքերու եղերերգայնութեամբ կը համապատասխանէ եղանակի պատմողական ընթացքին²⁶:

ԱՊՐԻԼ ԿՐԿԻՆ

Հոգույս մէջ կ'ոռնայ Տէր Զօրի քամին, ա...ա...ա...
Խօլ կանչեր կու գան անապատէն, ա...ա...ա...
Աշխարհը կ'երգէ, Գարուն է նորէն,
Այցի կ'երթամ ազգիս շիրիմին:

Միրտս է տխուր, երթս՝ հաստատ,
Արցունք կայ սրտիս, հոգիս է քաջ,
Ծով արեան մէջէն կ'երթամ աննահանջ՝
Փառք երգելով ազգիս նահատակ:

25 Նոյն տեղը, 344:

26 Նոյն տեղը, 223:

Կրկնէրգ.-

Ապրիլ, կրկին ապրիլ,
Ծաղկել է դարձեալ հայոց գարնան նշենին,
Աչքերս յառած շողուն արեւին՝
Ապրիլ կ'ուզեմ, ապրիլ:

Ապրիլ, կրկին ապրիլ,
Ծաղկել է դարձեալ հայոց գարնան նշենին,
Աչքերս յառած Սուրբ Արարատին՝
Ապրիլ կ'ուզեմ, ապրիլ:

Ա՛զգ իմ նահատակ, յաղթեցիր մահուան, ա...ա...ա...
Յաղթական անցար գաղթի ճամբան, ա...ա...ա...
Մէկ միլիոն խաչ էր ազգիս Գողգոթան,
Միլիոն հոգւոյ թռիչք յարութեան:

Ձենք տուր, եղբայր, երգենք միասին,
Քոյր սիրասուն, միացիր մեզ,
Չարթիր, իմ լաօ, զարթիր, սիրելիս,
Չայնը հնչեց տուն վերադարձի:

Կրկնէրգ.-

Ապրիլ, կրկին ապրիլ,
Ծաղկել է դարձեալ հայոց գարնան նշենին,
Աչքերս յառած շողուն արեւին՝
Ապրիլ կ'ուզեմ, ապրիլ:

Ապրիլ, կրկին ապրիլ,
Ծաղկել է դարձեալ հայոց գարնան նշենին,
Աչքերս յառած Սուրբ Արարատին՝
Ապրիլ կ'ուզեմ, ապրիլ:

Ապրիլ, կրկին ապրիլ,
Ծաղկել է դարձեալ հայոց գարնան նշենին,
Աչքերս յառած Սուրբ Արարատին՝ ապրիլ կ'ուզեմ,
Ապրիլ կ'ուզեմ, ապրիլ²⁷:

* * *

Հայոց ցեղասպանութեան ականատես վկայարաններէն է նաեւ բոլորիս քաջ ծանօթ Եփրատ գետը: Նկատի առնելով, որ Հայոց ցեղասպանութեան նիւթը արծարծող

27 Նոյն տեղը, 223-224:

ամենն ցայտուն քանի մը բառերէն մէկն է «Եփրատ»-ը, արդարեւ խիստ արժեւորելով գետի կարեւորութիւնը՝ կը պարզաբանենք անոր աշխարհագրական եւ պատմական առանձնայատկութիւնը հայոց պատմութեան մէջ:

Եփրատ գետը սկիզբ կ'առնէ Առաջաօր Ասիայի Հայկական լեռնաշխարհէն: Երկու ճիւղերը (Արեւմտեան Եփրատ եւ Արեւելեան Եփրատ կամ Արածանի) կը միախառնուին Խարբերդի դաշտին մէջ, կը կազմեն մայր գետը, որ, հոսելով հարաւ՝ Միջագետքի հարթավայրը, կը միանայ Տիգրիսին՝ կազմելով Շաթ ալ-Արապ գետը, եւ կը թափի Պարսից ծոց: Այս գետը տխուր համբաւ ունի հայոց պատմութեան մէջ²⁸:

1895-1896 եւ 1915-1916 թթ. Օսմանեան կայսրութեան մէջ հայերու զանգուածային կոտորածներու ժամանակ քաղաքակիրթ աշխարհէն ցեղասպանութեան տարողութիւնը թաքցնելու համար, ինչպէս նաեւ չկրնալով անհամար զոհերը յանձնել հողին՝ թուրք ջարդարարները յաճախ դիակները նետած են գետերը, առաջին հերթին՝ Եփրատ: 1895 թ. դեկտեմբերին Խարբերդի դաշտի հայկական գիւղերու մէջ համիտական գունդի մը դաժան ջարդէն ու անարգանքէն ազատուելու համար բազմաթիւ կանայք նետուած են Եփրատ²⁹:

1896 թ. սեպտեմբերին Ակն քաղաքի մէջ սուրի քաշուած մօտ 2 հազար հայերու դիակները թուրքերը նետած են Եփրատի մէջ: Ակնատեսները այդ դիակներուն հանդիպած են Ակնէն 40-50 մղոն հեռաւորութեան վրայ: Թերճանի³⁰ գաւառի 18 հայկական գիւղերու բնակիչներէն կազմուած կարաւանը կոտորուած եւ նետուած է Եփրատ 1915 թ. մայիսի առաջին կէսին: Օգոստոսին Մարաշէն հարաւ-արեւելք բռնագաղթեցուած հայերու զգալի մասը եւս հեղձամահ է եղած Արեւելեան Եփրատի մէջ: Օգոստոսի 6-ին Ուրֆա փոխադրելու պատրուակով Մալաթիոյ Բեսնէ գիւղէն տեղահանուած 1 800 մարդ խեղդամահ եղած է Եփրատի մէջ: Գերմանացի ականատեսի վկայութեամբ՝ այդ օրերուն Եփրատով քշուած հազարաւոր դիակներ ափ նետուելով կը դառնային գիշատիչներու կեր: 1915 թ. ամառը Եփրատի ջուրերուն յանձնուած են բազմաթիւ տարագիրներ Կ.Պոլսէն, Հռոդոսէն, Նիկոմեոսիայէն, Իտոնիայէն, Կեսարիայէն, Պարտիզակէն եւ այլ վայրերէն: Սակայն Եփրատի մէջ իրենց մահկանացուն կնքած են հիմնականին մէջ Էրզրումի, Բաբերդի, Երզնկայի, Ակնի, Խարբերդի եւ Մշոյ դաշտի հայերը: Ակնատեսներու վկայութեամբ, 1915 թ. յունիսին Երզնկայէն ոչ հեռու՝ Կամախ-Պողագ վայրը, գետն անցնելով, այնքան մարդ նետուած է ջուրը, որ կամուրջի տակ առաջացած է խցում, որուն պատճառով Եփրատ դուրս եկած է ափերէն եւ արեան գոյն ստացած: Տէր-էզ-Զօր գաղթակայաններէն բազմաթիւ հայուհիներ դիմած են անձնասպանութեան՝ մանուկներու հետ նետուելով Եփրատ: Յայտնի են դէպքեր, երբ Եփրատ դիակներ հասցուցած է մինչեւ Պարսից ծոց: 1915 թ. ամառը դիակներու թիւը Եփրատի մէջ այնքան աճած է, եւ այդ զարհուրելի երեւոյթը այնպիսի զայրոյթ առաջացուցած է Եփրատ եւ Տիգրիս գետերու աւազանը ապրող արաբներու, քիւրտներու, Երուսալի առաջադէմ հասարակայնութեան, նոյնիսկ թուրք հոգեւորականներու շարքերուն մէջ, որ երիտթրքական կառավարութիւնը հարկադրուած ցուցմունք տուած

28 Տե՛ս նոյն տեղը, 134:

29 Տե՛ս նոյն տեղը:

30 Երզնկայի (այժմ՝ Էրզինճան) շրջանը, այժմ՝ Մամախաթուն:

է Տիարպէքիի, Խարբերդի, Ուրֆայի եւ Տէր-էզ-Չօրի նահանգապետներուն, որ անոնք արգիլեն սպանուածներու դիակները գետը լեցնել եւ կարգադրեն բոլորին թաղել³¹:

Մօտաւոր հաշուարկներով՝ Եփրատի մէջ խեղդամահ եղած է 55-60 հազար հայ³²:

Ահաասիկ թէ ինչու Եփրատ գետը կը ներկայանայ հայոց պատմութեան մէջ յուզումնալից դիտանկիւնէ՝ հակառակ իր բնական հոսանքին, ջրառատ ըլլալուն:

* * *

Յատուկ ուշադրութեան արժանի է ժողովրդային մեծ ճանաչում գտած «Աքսորի երգ» վերնագիրը կրող ցաւոտ, յուզիչ եւ ազդեցիկ երգը, որ արեւի յայտնի է առաջին տողով՝ «Հալածուած ենք Հայաստանի լեռներէն»:

Չկայ հայ մը, յատկապէս՝ Սփիւռքի տարածքին, որ երգած կամ լսած չըլլայ այս երգը, նաեւ չափազանցած չենք ըլլար, եթէ ըսենք, որ հայ մը մանկութեանը տարիներուն Մեծ եղեռնի ժամանակաշրջանին տեղի ունեցած հայկական կոտորածներուն եւ Եփրատին առաջին անգամ կը ծանօթանայ «Աքսորի երգ»-ով, ինչպիսին էր պարագան մեր եւ մեր նախորդ սերունդներուն: Նշուած այս իրողութեան քաջածանօթ ըլլալնուս համար ուզեցինք պրպտել եւ տեղեկութիւն հաւաքել երգի ինքնութեան եւ ծնունդի մասին:

Մեր աշխատութեան ընթացքին բարեբախտաբար կրցանք փոքր տեղեկութիւն մը ձեռք ձգել: Նախ 25 դեկտեմբեր 1919 թ. Պոսթընի մէջ լոյս տեսած Յ. Գ. Պէրպէրեանի «Ընդարձակ գրպանի երգարան»-ի 267-րդ էջին մէջ կը հանդիպինք «Աքսորի երգեր» խորագրով, ապա՝ բնաստոր յիշողութիւններու եւ հօրս տուեալներուն: Բնական տարիներ յետոյ դիմած եմ նաեւ երկու հօրաքոյրներու (Ալիս եւ Սանդուխտ), որոնք քաջատեղեակ էին այս երգին իրենց մօրմէն (Արուսեակ Գաթրճեան, 1905-1964): Անոնք կը յիշեն իրենց մօր պատմածը՝ մանկութիւնը, ծննդավայրէն (Այնթապ) տարագրութիւնը եւ այլն: Այդ յուշերէն մէկը իրենց մօրը երգած «Աքսորի երգ»-ն է, որ սորված է ծննդավայրի վարժարանը մօտաւորապէս ջարդի օրերուն:

Դժբախտաբար, երգին հեղինակը մեզի համար կը մնայ անյայտ, սակայն վերոնշեալ աղբիւրներու յայտնաբերած փաստերուն հիման վրայ կը հաստատենք, որ իրագործուած հայկական կոտորածներուն, ջարդերուն եւ ցեղային սպանդներուն մասին պատմողական բնոյթ ունեցող «Հալածուած ենք Հայաստանի լեռներէն» երգը գրուած է Հայոց ցեղասպանութեան օրերուն:

Հայոց արհաւիրքը ապրողներու կողմէ գրուած «Աքսորի երգ»-ը այդ ճամբան քալողներու նուէր երգ մը չէ լոկ, այլ երգ մըն է՝ պատմութեան մէջ արձանագրուելիք այդ օրերու՝ իրենց մերկութեամբ ու պատահարներով, որոնք պատճառ դարձան հայ ժողովուրդի զաւակներուն ոչնչացումին, գաղթին, որոնցմէ քիչեր հազիւ կրցան փրկել իրենց կեանքը:

Ստորեւ տրուած երգին մէջ կը բացատրուի, որ հայոց լեռները պաշարուեցան թրքական զօրքի կողմէ, հազարաւոր անմեղներ սուրի քաշուելով նահատակուեցան, ոմանք, քալելով կիզիչ արեւուն տակ դէպի Սուրիոյ անապատները, քշուեցան առանց ջուրի ու

31 Տե՛ս նոյն տեղը, 134-135:

32 Տե՛ս նոյն տեղը, 135:

հացի, ճաշակեցին կեանքի դաժանութիւնը: Հոն կը տեսնենք իրականութիւնը՝ առանց այլափոխումի. իրենց պատիւը փրկող կոյս աղջիկներ, որոնք իրենք գիրենք Եփրատ գետը նետեցին (1895-1896 թթ. սկսած ջարդերէն արդէն սախաղէպը կար, օրինակ՝ Խարբերդի կանայք), մորթուած մանուկներ, անտէր, անմխիթար, որբացած զաւակներ, այրիացած կիներ, եւ խելագարած ամբողջ ժողովուրդ մը, անտեղեակ եղածներէն, իր ետին կը թողու արեամբ հեղեղուած, ածխացած հայրական օճախը եւ ցուպը ձեռքին կ'իյնայ արքայի ճամբան՝ «քիչ ետք իրեն ինչ պիտի պատահի» հարցականով:

Երգի բառերուն եւ երաժշտութեան հեղինակը յայտնի չէ մեզի, սակայն այն մշակած եւ դաշնաւորած է տաղանդաւոր երաժշտագէտ, յօրինող, դաշնաւորող, նուագող եւ խորհրդատու Ալեքսան Մնակեան:

«Հալածուած ենք Հայաստանի լեռներէն» երգը ստեղծուած ու կազմաւորուած է հայ ժողովրդական քնարական երգերու կայուն արտայայտչամիջոցներու, խորհրդանիշներու, կառուցուածքային ու բանաստեղծական տողերու հանգաւորման եղանակներու ու ձևերու օգտագործմամբ: Ուստի երգը հանդարտ է, յուզիչ ու տպաւորիչ, որ տարիներ շարունակ հազարաւոր սիրտեր տաղած է³³:

ԱՔՍՈՐԻ ԵՐԳ

Հալածուած ենք Հայաստանի լեռներէն,
Ո՛վ չի վախնար հուրով-սուրով մեռնելէն.
Դար ու սարեր անցանք, դադար չունեցանք,
Դիակներէն անցանք, արցունք չունեցանք:

Արեւին տակ մեռնիլն, Աստուած իմ, վատ է,
Պուտ մը ջուրի մեր շրթունքը կարօտ է...
Մանուկները կուրծքերուն վրայ մորթեցին,
Հորերուն մէջ ողջ մայրերը լեցուցին...

Ո՛ր է, մայրիկ, ո՞ր է իմին հայրիկը,
Զեն գիտեր, որ վատ է թուրքին դանակը:
Ո՛ր է, մայրիկ, ո՞ր է անոր դիակը,
Արցունքն իջաւ մինչեւ սրտիս յատակը:

Կոյս աղջիկներ իրարու ձեռք բռնեցին,
Իրենք գիրենք Եփրատ գետը նետեցին,
Երկու օր վերջն ալ խեղճ մայրերուն գիտցուցին,
Խեղճ մայրերն ալ անմխիթար մնացին:

Մոխիր դարձան մեր պատուական տուները,
Արիւններով ներկուեցան քարերը³⁴:

33 Տե՛ս նոյն տեղը, 94:

34 *Յեղափոխական եւ ժողովրդային երգեր* (Պէլյուրթ, 1972), 119:

«Աքսորի երգ»-ը Հայոց ցեղասպանութեան ժամանակաշրջանին ապրիլեան երգերու բնագաւառին մէջ առաջիններէն է, որոնք մանրամասն կը նկարագրեն ապրուած օրերու արհաւիրքը, որուն գոհ գնաց հայ ժողովուրդը: «Աքսորի երգ»-ը իր էութեամբ աննախընթաց յուզումի ալիք մը կը խտովէ, եւ ունկնդիրը երգի միջոցով կը ծանօթանայ հայ ազգին կրած տառապանքին ու ցեղասպաշտ թուրքի իրականացրած կոտորածին: Հեղինակը կ'արտացոլացնէ իր հոգեկան հարազատ աշխարհը, մեզի կը բերէ արցունք, տառապանք, պատուախնդիր կեցուածք, մէկ խօսքով՝ հայոյ վիճակը կը ներկայացնէ խոր ու առինքնող թրթռացումներով, հայ սիրտի տրոփով: «Աքսորի երգ»-ը, ստեղծուած ըլլալով գերագանցապէս 1915 թուականի Հայոց ցեղասպանութեան արինահեղ ջարդերու ու կոտորածներու ազդեցութեամբ, կը նկարագրէ Արեւմտահայաստանէն բռնագաղթի ու քսորի ենթարկուած հայերու ընդհանուր մարդկային ու քաղաքական կացութիւնը, կ'արտացոլացնէ քսորի ճամբուն շարք մը էական կողմերը, այս կամ այն չափով կ'անդրադառնայ քսորի հետեւանքներուն:

* * *

Ակամայ հազարաւոր հայ կեանքեր խլած ըլլալուն համար է, որ Եփրատ գետը բազմաթիւ արուեստագէտներու ու յատկապէս երգ-երաժշտութիւն ստեղծագործողներու նիւթ դարձած է:

Մեծատաղանդ, աշուղական եւ ժողովրդական երգերու վարպետ, Հալէպի ծնունդ Լեւոն Գաթրճեան առաջիններէն մէկն է, որ հայերէն հեղինակած եւ երգած է Եփրատ գետին նուիրուած «Եփրատի արտասուքը» երգը, որ կ'արտացոլէ Հայոց ցեղասպանութեան իրողութիւնը եւ հոն կը ներկայացնէ Եփրատ գետի ականատեսի վկայութիւնը:

Հեղինակը Եփրատ գետի հետ երկխօսութեան մէջ կը մտնէ եւ կը նկարագրէ հայոյ ապրած ողբերգութիւնը, հայ բալիկներու թաւալումը գետին մէջ, կոյսերու առեւանգումը եւ այլ սրտաճմլիկ տեսարաններ:

Լեւոն Գաթրճեանի մեկնաբանութիւնը կը լսենք ջինջ հնչողութեամբ, մաքրամաքուր եւ անմրցելի, քանդակագործեալ առոգանութեամբ, որոնցմով ան կը յաջողի խօսք եւ երաժշտութիւն ներարկել մեր էութեան մէջ: Լեւոն, ինչպէս միշտ, հոս եւս պատգամ ունեցող քերթող-երգողն է: Հոս հայրենասիրական շունչն ու ոգին համարկուած են աշուղականին: Այստեղ ի յայտ կու գայ նուագախումբին առաջարկած աշուղագուսանական նուագին ընկերակցութիւնը, որ մասամբ մեղմած է խօսքերուն պտոթկումային խոյանքը³⁵:

ԵՓՐԱՏԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

Ո՞ր է շուրջդ, ու միայն
Հեծեծանքներ Եփրատին
Կ'արձագանգեն դաշտերուն մէջ
Ողբերգութեան դառնագին:

35 Տե՛ս Գաթրճեան, *Հայոց ցեղասպանութեան ազդեցութիւնը երգ-երաժշտութեան վրայ*, 135:

Կրկներգ.

Պատմէ՛, Եփրանտ, երգէ՛, խօսէ՛,
Չառակներուդ անմխիթար
Ափերուդ մէջ, թէ ինչպէս
Բալիկներդ կը թառալեն:

Բայց կը յուզուիս, Եփրանտ,
Դու ինչո՞ւ կը փախչիս քո մայր հողէն,
Քու աղէխարշ արտասուքդ
Դու ինչո՞ւ կը խեղդես ողորմածին:

Կրկներգ.

Այդ դողերէն արիւններով
Կուրծքը ծոռին, ճի, կը դողայ,
Մենակ եմ ես, որք, միմիայն
Հեծեծանքներ Եփրատին:

Լսէ՛, Եփրանտ, հերիք յուզուիս,
Մեր ապրիլեան քսանչորսին
Գարուններէն շող մը բեր ինձ,
Երգ մը բեր ինձ հայ կոունկի:

Կրկներգ.

Ոսկէ ժաման փետուրներէն
Չարդ մը բեր ինձ, կ'ուզեմ այսօր
Մեր նահատակ սերունդներուն
Ես զարդարեմ կուրծքը հօօր:

Արդեօք արարատեան մեղայնամիտ
Դաշտերուն մէջ ծաղիկ չկամր,
Մեր ապրիլեան ծաղիկներէն
Վարդ մը չկամր: Կար, կար, անի կը գոռար:

Կրկներգ.

Կար կոտորած, աւեր, աւանդ,
Դիեր, զանկեր, անի, կոտորած,
Մենակ եմ ես, որք, միմիայն
Հեծեծանքներ Եփրատին:

Դաշտերուն մէջ ան կը ձայներ,
Ա՛խ, կոտորած, կոտորած³⁶:

36 Նոյն տեղը, 135-136:

* * *

Յաջորդ երգը՝ «Եփրատ»-ը, կը պատկանի հայրենի «Ոստան հայոց» ոռոգ խումբին: Երգին եւ խումբին մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ քաղելու համար տեսակցութիւն մը ունեցանք «Ոստան հայոց» խումբի անդամ Արեգ Նազարեանի հետ, որ սիրայօժար պատասխանեց մեր բոլոր հարցումներուն:

1986-1991 թթ. խումբը իր ստեղծագործութիւններու կարգին հեղինակած է «Չարթիր, որդեանկ» խորագիրը կրող ձայներիզը: Այդ ձայներիզին մէջ ներառուած է «Եփրատ» երգը, որ կը խօսի Հայոց ցեղասպանութեան ընթացքին հայերու դիակներու եւ անոնց արեամբ յեղեղուած Եփրատ գետի մասին:

Երգին քանի մը տողերը առնուած են այլ երգէ մը, սակայն անոր վերամշակուած կամ նոր բառերու հեղինակներն են խումբին երկու անդամներ՝ Արեգ Նազարեան եւ Յովհաննէս Կուրդիւնեան, իսկ երաժշտութիւնը կը պատկանի Արեգ Նազարեանի:

«Եփրատ» երգը ընթացք կ'առնէ երաժշտական բաւականին խորհրդաւոր մուտքով մը՝ ունկնդիրը լաւապէս տպաւորելու եւ յատկապէս Եփրատի պատմութեան եղելոյթը ներկայացնելու համար: Ապա յամբօրէն անոր կը միանայ ոռոգ երաժշտական ծանր կշռոյթը:

Երգի կիսուն ժամացուցային երկար թքթքացող ձայն մը գոյութիւն ունի, կարծէք ըսել կ'ուզեն, որ «ժամանակը հասաւ սպանուելու...»³⁷:

ԵՓՐԱՏ

Սասուն նստեր անտէր կու լար,
Անպերն ալ մէջ կը սգան, կը սգան,
Տուման կապեց մեր աշխարհ,
Երբ իմացան սեւ խապար, սեւ խապար,
Սասուն նստեր անտէր կու լար:

Կրկ.
Սասնայ սարերն են միշտ անյողդողդ,
Հայ վա՛միս, հայ վա՛միս, գերի՛ Սասուն,
Սասնայ ձորերն են միշտ արիւնտոտ,
Հայ վա՛միս, հայ վա՛միս, գերի՛ Սասուն:

Եփրատ Հայոց, ջրերդ ի վար
Մարմիններն են կոյսերի անաղարտ,
Շառաչդ, որ կը ցնցէր մեր հող,
Դարձել է երկնահող, սեւ մի ողբ,
Եփրատ, մնացիր անտէր ու որբ:

37 Նոյն տեղը, 178:

Կրկ.

Եփրատ, ժամանակ կար՝ ալիքներդ էին
Խենթ քրքիջով երգում սէր,
Եփրատ, նրբ պիտի դու շնչես ազատ,
Եւ կատարուն մեր յոյսեր³⁸:

* * *

Հայոց ցեղասպանութեան նիւթը իւրայատուկ դրոշմ ունի դասական երաժշտութեան մէջ՝ իր բոլոր ոճերով՝ քամերային, սիմֆոնիք, խմբերգային, գործիքային-համերգային, օրաթորիալ եւ երաժշտաբեմական երկերէն սկսեալ³⁹:

Հայոց ցեղասպանութեան ազդեցութեանը երաժշտութեան վրայ եւ անոր ընդմէջէն արտացոլմանը, կարելի է ըսել, յատկապէս դասական երաժշտութեան բնագաւառին մէջ հաւանաբար առաջին արձագանգողը եղած է Լեւոն Սիմոնեան(ց)ը:

Լեւոն Արսեմի (Արութին) Սիմոնեան(ց) հեղինակած է «Беженецъ»⁴⁰ («Գաղթական») խորագիրը կրող գործը վալս դաշնամուրի համար:

«Պեժենեց» գործին արխիւային տեղեկութիւնը յայտնաբերած է հեղինակին եղբորորդին՝ Եղենի Սիմոնեանը, Հայոց ցեղասպանութեան 86-րդ տարելիցին: Մենք ալ մեր հետազօտական աշխատանքի ընթացքին կրցանք ձեռք ձգել այն Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի արխիւանոցէն:

Լեւոն Սիմոնեան(ց) ծնած է 1887 թ. Գանձակ (Ելիզաւետապոլ): Անոր ընտանիքի անդամները եւ յաջորդական սերունդները եղած են երաժշտական մասնագիտութեամբ անձեր: 1919 թ. ընտանիքին հետ Պաքուէն փախած է Թիֆլիս, ապա՝ Մոսկուա, ուր մահացած է 13 փետրուար 1984 թ.: «Պեժենեց» ստեղծագործութիւնը հրատարակուած է 1915 թ. Ռուսաստանի Ռ-ոսթով քաղաքը: Պրակի կողքին վրայ գետեղուած է նկար մը, իսկ միջուկը՝ երկը, ձայնանիշերով է: Լեւոն Սիմոնեան(ց) այս գործը ստեղծած է 28 տարեկանին 3 ամսուան ընթացքին:

«Պեժենեց» ստեղծագործութիւնը նուիրուած է 1915 թուականի «պատերազմի զոհերուն» յիշատակին: Այստեղ անմիջապէս կ'ուզենք ընդգծել խիստ կարեւոր յայտնաբերում մը: 1915 թ., երբ տակաւին չէր ճշդուած ու յայտնաբերուած «ցեղասպանութիւն» եզրը, Լեւոն Սիմոնեան(ց) կը դժուարանար, թէ այդ օրերու պատահարներուն, եղեռնին, արհաւիրքին, այսինքն՝ Հայոց ցեղասպանութեան, ինչ անուն կրնար տալ, որպէսզի իր գործը նուիրէր այդ օրերուն կոտորուած հայերուն: Վերջապէս յանգած է այն որոշումին, թէ «Պատերազմի զոհերը» կրնայ կոչել: Ուստի անոր պրակին վրայ կը կարդանք «Նուիրուած պատերազմի զոհերուն. ՊԵՇԵՆԵՑ» վերտառութիւնը:

Չայնանիշերը երբ կարդանք, արդէն կը զգանք այդ օրերուն կատարուած ողբերգութիւնը: Լեւոն ըստ իր մտայղացումին կը նկարագրէ: Հայ կին մը իր երեք երեխաներով ոտաբոյսիկ, ցնցոտիներու մէջ կը փախչի լեռներու անցքերէ՝ ազատելու համար

38 Նոյն տեղը:

39 Տե՛ս նոյն տեղը, 369:

40 Լեւոն Արսեմի Սիմոնեան(ց)ի երկի վերնագիրը 1915 թ. իր հրատարակած պրակին վրայ գրուած է հին ռուսերէնով:

իրենց կեանքը. անոնց դէմքերէն կը կարդացուին ոչ միայն յուսայատուրիւնն ու անե-
լիութիւնը, այլ նաեւ գանոնք մտահոգող միակ հարցը՝ ուրկէ՞ կու գան եւ ո՞ր պիտի եր-
թան: Այս անպատմելի բախտը միայն Լեւոն Միմոնեան(ց)ի ընտանիքը չէր, որ ճաշա-
կեց, այլ շատ ու շատ հայեր: Այս դժոխային կեանքը իր արհաւիրքային խորաթափանց
յոյզերով է, որ կը յայտնուի «Պեժենեց» ստեղծագործութեան մէջ:

«Պեժենեց» ստեղծագործութիւնը որոշ չէ, թէ ո՞ր նուագուած է, սակայն, ըստ Լեւո-
նի քրոջ, առաջին անգամ Ղրիմի այգիի մը մէջ առիթով մը փողերային նուագախումբի
կողմէ նուագուած է⁴¹:

* * *

Տարագրութեան օրերը ապրած եւ անոնց ահաւորութիւնը իր յիշողութեան մէջ միշտ
վառ պահած էր երգահան Համբարձում Պերպլերեան (1905-1999): Ատանայի մէջ ծնած
եւ մեծ հօր քով պատսպարուած էր տասը տարեկան Հ. Պերպլերեան, երբ թուրքերը օր
մը եկան, 72 հարազատներու կոնակները պարաններով իրարու կապեցին ու սուին-
ներու ստուերի տակ քալել տուին դէպի անապատ: Ճամբու ընթացքին Համբարձումի
մեծ եղբայրը լալահառաչ կ'ըսէր. «- Համբարձում, դուն քիչ մը կողքով ինծի կպած
քալէ, Համբարձում, կծկուէ, գուցէ գնդակը քեզի չդպնայ»⁴²: Անտեղեակ էր մանուկը
սարսափելի եղելութենէն:

Շեռուն կ'երեւան Եփրատ գետը, Եփրատի ափին զարնուող անմեղ մեղաւորներ:
Անշնչացած մարդոց թուլացած շղթան գետին տապալեցաւ, եւ մանուկն ալ ինկաւ, բայց
ան կը մտածէր. «Զարնուեցանք: Բայց ես ինչո՞ւ չեմ մեռած, ինչո՞ւ կը զգամ. հա, կ'ե-
րեւի դեռ տաք եմ, հիմա պիտի մեռնիմ»⁴³: Գնդակահարուած շղթային մօտէն կ'անց-
նէին դահիճները՝ սուինները մխրճելով անշնչացած մարմիններուն մէջ ստուգելով, որ
կենդանի մէկը մնացած չըլլայ: Համբարձումը գիշերը վիրաւոր, պարանով կապուած
վիճակի մէջ ոտքի կ'ելլէ, կը ձերբազատուի պարանէն եւ կը բացագանչէ. «Մայրիկ,
Հայրիկ...»⁴⁴, բայց, աստի, բոլորն ալ սպաննուած էին Եփրատի եզերքը:

Յետոյ, երբ Հալէպի ամերիկեան որբանոցէն որբերը կը տանէին Թուրքիա՝ ազգու-
րացնելու, ան արագընթաց քալուածքով ինքզինք նետեց Սուրիոյ անապատը:

Մահին այսքան մօտ եղած Համբարձում Պերպլերեանի կրած սեւ օրերու ազդեցու-
թիւնը յետագային անկասկածօրէն ծնունդ պիտի տար անոր ստեղծագործութեան՝
սիմֆոնիք եւ վոգալ-սիմֆոնիք «Requiem Aeternam»-ին (Կոմիտասի յիշատակին՝ Եղիշէ
Չարենցի պոէմին հիման վրայ), քանի որ աղէտներէն հրաշքով ազատած՝ սուիններու,
գնդակներու, հրդեհներու (Իզմիր վառուած օրերուն) ոլորուն ճամբաներով իրեն հետ
տարած էր երկու բան՝ ոսկեղէն երագներու մէջ փայփայուած հայրենիքի սէրն ու լուսե-
ղէն կրակով բոցավառուող երաժշտութեան հուրը: Պերպլերեան այս ամէնն է, որ պիտի
արտացոլէր իր երկին մէջ⁴⁵:

41 Տե՛ս Գաթրճեան, *Հայոց ցեղասպանութեան ազդեցութիւնը երգ-երաժշտութեան վրայ*, 369-371:

42 Յիցիլիա Բրուտեան, *Սփիւռքի հայ երաժիշկները* (Երեւան, «Հայաստան», 1968), 498:

43 Նոյն տեղը, էջ 499:

44 Նոյն տեղը:

45 Տե՛ս Գաթրճեան, *Հայոց ցեղասպանութեան ազդեցութիւնը երգ-երաժշտութեան վրայ*, 381-382:

* * *

1970-ականներու վերջափուլին երեւան ելաւ հայ երգահաններու սերունդ մը, որ, ազդուած ազգային երաժշտութենէն, սփռեց նոր ոգի, նոր շունչ: Այդ սերունդին կը պատկանի Աթէնքի ծնունդ Յարութիւն Տելլալեան (1937-1990):

Տելլալեան ունի հայկական ջարդերու գոհերու յիշատակին նուիրուած «Death» («Մահ») սիմֆոնիք բանաստեղծութիւնը (1978), «A Monument to the Martyrs» («Յուշարձան եղեռնի նահատակներուն») քանթատ-ներուիենը (1984, խօսք՝ Կոստան Զարեանի, երաժշտութիւն՝ Ժորժ Կառվարենցի), «Requiem-Irionfall»՝ երգեհոնի համար (1984), «Տոպաֆոնո» դաշնամուրի եւ քամերային նուագախումբի համերգը (1987), «Dedication to Komitas» («Նուիրում Կոմիտասին») դաշնամուրային սոնատը (1982)⁴⁶:

Տելլալեանի զգացումներու շարժիչն են յաւերժական փիլիսոփայական նիւթերը՝ Մեծ եղեռնի կրակը միշտ վառ մնալով անոր սիրտին ու յիշողութեան մէջ: «Նուիրում Կոմիտասին» գործն իր իւրայատուկ տեղն ունի հայ դաշնամուրային երաժշտութեան մէջ իր ինքնատիպ մտայնացումով, արտայայտուած ազգային վառ երաժշտալեզուով եւ արդիական խիստ բնոյթով՝ բողոքի, հատուցման կանչի:

Յարութիւն Տելլալեանին կը պատկանի «Լռութեան ըօպէ» խմբերգը (1986), որ գրուած է ա քարեկա խառն երգչախումբի համար: Այս գործը նոյնպէս նուիրուած է սուրիական անապատներու անծայրածիր ամայութեան, յատկապէս Տէր-էգ-Զօրի անապատներուն մէջ նահատակուած հայերու յիշատակին: Այս գործին համար գրական հիմք ծառայած են Գէորգ Կառվարենցի (1892-1946) «Գերեզմանի ծաղիկներ», «Որբերը» (գրուած 1919 թ.) եւ Կոստան Զարեանի (1885-1969) «Առաւօտ» բանաստեղծութիւնները: «Լռութեան ըօպէ»-ին մէջ նոյնպէս կը տեսնենք Տելլալեանի խորհրդատր եւ խորաթափանց զգացումները արտայայտող երանգներ: Երաժշտագէտ Թամար Յովհաննէսեան Յարութիւն Տելլալեանի նուիրած գիրքին մէջ մանրամասն կ'անդրադառնայ «Լռութեան ըօպէ»-ին, եւ, Տելլալեանի մէջ արթնցնելով ազգային յիշողութիւն, երեակայութեան մէջ կը յառնեն հայ ժողովուրդի ճակատագրին ամենաողբերգական դրուագներէն Տէր-էգ-Զօրի անապատի մէջ կատարուած հրէշաւոր եղեռնագործութեան պատկերները⁴⁷:

Ստորեւ կը ներկայացնենք «Լռութեան ըօպէ» խմբերգի հիմք ծառայած Գէորգ Կառվարենցի «Որբերը» բանաստեղծութիւնը:

ՈՐԲԵՐԸ

Ժամուն բակին՝
Եղբայրագին
Առընթեր,
Մեծ ու պզտիկ
Ծալապատիկ
Են նստեր:

46 Տե՛ս նոյն տեղը, 377:

47 Տե՛ս Թամար Յովհաննէսեան, *Յարութիւն Տելլալեան. կեանքի եւ սրեղծագործութեան ուրուագիծ* (Երեւան, 1992), 61:

Աագներէն
Եկածներ են
Անոնք հոս.
Հիւր են եկեր,
Ոնկին վերքեր
Ուղահոս:

Անոնց այլայլ,
Գերամըռայլ
Ճակտին վրայ
Դեռ հողմը հին
Անապատին
Կը սուրայ...

Կորսւածներ,-
Կորսւածներ
Սեւ Դաւէն,
Աղջիկ ու մանչ՝
Յեղին կանանչ
Ապաւէն...

Թշնամին ժիտ
Անոնց վըճիտ
Թուշերուն
Հիւսեր է դրոշմն
Իր անողորմ
Փուշերուն:

Բիծեր կապոյտ,
Վիհեր՝ անքոյթ
Յաւերժի,
Որոնց վերեւ
Մէկ մէկ արեւ
Վըրէժի...

Չեն բարբառիր,
Լոկ անյարիր
Կը նային
Սեւ ու խըռով
Աչուրներով
Երկնային:

Ու կը տոկան,-
Ու կը խոկան,
Կը խոկան,
Թէ երբ պիտի
Լուսամիթթի
Ապագան⁴⁸...

* * *

Մեր ուսումնասիրության մաս կը կազմէ նաեւ թաքուն պահուած Չոմախլու գիւղին պատմութիւնը, որ կը ներկայացնէ Նիւ Ճըրզի (Մ. Նահանգներ) ծնած, ճազ (jazz) երաժշտութիւն ուսած եւ դպրոցական ճազ խումբերուն իր մասնակցութիւնը բերած թմբկահար (Տրամպ) Կրէկ Պենտեան (Gregg Bendian, ծն. 1963 թ.):

Պենտեան 1984-էն սկսած է իր երաժշտութիւնը ներկայացնել «Կրէկ Պենտեան ծրագիր» անունով: Ան կը նուագէ անուանի երաժիշտներու հետ:

Կրէկ Պենտեանի 1996 թ. լոյս ընծայած ձայնասկաւառակը կը կրէ «Կրէկ Պենտեան ծրագիր» խորագիրը: Կրկնորդը կ'ընդգրկէ վեց ստեղծագործութիւն, որոն երրորդ երաժշտական կտորը կը կրէ «After Chomaklou was a desert. Threnody to the Victims of the Armenian Genocide» («Չոմախլուն անապատ դառնալէ ետք. ողբ Հայոց ցեղասպանության նահատակներուն») խորագիրը:

Չոմախլուն կը գտնուի հայկական Կեսարիոյ (այժմ՝ Թուրքիոյ Քայսերի նահանգի վարչական կեդրոնը) շրջանի համանուն գաւառին մէջ: Էվերէկ գիւղաքաղաքի կողքին պզտիկ գիւղ մըն էր: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրէին ունեցած է 282 տուն (1750 շունչ) հայ բնակիչ: Անոնք կը գրադէին անասնապահութեամբ, երկրագործութեամբ եւ արհեստներով: Գիւղին մէջ կը գտնուէին երկու առաքելական՝ Ս. Յակոբ եւ Ս. Լուսատրիչ ու մէկ կաթողիկէ եկեղեցիներ, երեք դպրոց: Չոմախլուի բնակիչները կտորորուած են 1915 թ.՝ Մեծ եղեռնի ժամանակ: Սակաւաթիւ են փրկուածները, որոնք ապաստանած են զանազան երկիրներ:

Այս պատմական գիւղը ծնած է Հայոց ցեղասպանության անդառնալի հետեւանքներէն անմասն չմնացած արեւմտահայ բանաստեղծ, արձակագիր եւ երաժշտագետ Յակոբ Ասատուրեանը: Ան իր վէպին սկիզբը կը ներկայացնէ հայրենի գիւղը. «...գիւղ, որ կ'ապրուի ներփակ կեանքով, որեւէ բանով սման չէ հեռուոր քաղաքին. փողոցները նեղ են ու ծուռ ու մուռ, բայց մարդոց սրտերը լայն են ու բաց ամենուն առջեւ: Անոնք կ'ապրին մէկը միւսի տառապանքով ու երջանկութեամբ: Ճիշդ այս փոքր ու երջանիկ գիւղին մէջ կը ծնին Յովակիմի թոռները, որոնց ցառք սրտի վիճակուած էր անցնելու դժոխքի պարունակներու մէջէն: Գիւղին խաղաղ կեանքը յաճախ կը խոտվուէր թուրք ոստիկաններու կողմէն, որոնց անկուշտ աչքերը մշտապէս հայու համեստ ունեցուածքին վրայ էին: Անոնք հարկերու միջոցով անվերջ կը թալանէին ու կը նսեմացնէին գիւղացին»⁴⁹:

48 Գաթրճեան, *Հայոց ցեղասպանության ազդեցութիւնը երգ-երաժշտության վրայ*, 378-379:

49 Սեակ Յակոբեան, «Երագ մը. Չոմախլու», *Չարթօնք օրաթերթ* (Բէլյուրթ), 26 ապրիլի 2017 (Ապրիլեան Յաւելուած), 4:

Գիւղին անուանի զաակներէն է նաեւ Երկրորդ աշխարհամարտին ամերիկեան բանակի օդուծին պատերազմական օդանաւի օդաչու Գառնիկ Անանեանը: Ան իր P-40 օդանաւին վրայ ի պատիւ իր ծնողներուն արձանագրած է «THE CHOMAKLOU KID»... եւ այդ օդանաւով կատարած է նացի Գերմանիոյ օդուծին դէմ իր թռիչքներն ու տոնած է յաղթանակը: Հերոս չումախլուցին իր յուշերու յառաջաբանին մէջ գրած է. «Ձաակներուս, թռռներուս ու անոնցմէ ծնող ապագայ սերունդներուն կ'ուզեմ վկայել, թէ իմ զէնքի ընկերներէս երեքէն երկուքը ինկան պատերազմի դաշտին վրայ: Այդ տղաքը բնաւ առիթը չունեցան ամուսնանալու՝ զաակներ ու թռռներ ունենալու... անոնք բնաւ փորձառութիւնը չունեցան ապրելու կեանքի ուրախութիւնն ու հաճոյքները, ինչպէս ես ունեցայ... անոնք, սակայն, իրենց կեանքը տուին, որպէսզի ես ու դուք ապրիք ազատ եւ խաղաղ կեանք մը: Յետ պատերազմեան ամբողջ կեանքիս ընթացքին միշտ հարցուցի՝ «ինչո՞ւ ես»: Ինչո՞ւ ես խնայուեցայ, մինչ իմ ընկերներէս շատեր՝ ոչ: Հետեալբար փորձեցի կեանք մը ապրիլ արժանի ըլլալու այդ շնորհքին: Կ'աղաչեմ ձեզի տրուած շնորհը բնաւ թէթեւի չտոնել... Արժանի եղէք անոր»⁵⁰:

Արդարեւ, Կրէկ Պենտեանի «After Chomaklou was a desert» երաժշտութիւնը յորինուած է ազատ ճագի ոճով:

Կրէկի հետ մեր ունեցած շփումին ընթացքին ան կը բացատրէ, որ «After Chomaklou was a desert» («Չումախլուի անապատ դառնալէ ետք») ստեղծագործութիւնը գործիքատրուած երաժշտութեան կտոր մըն է, որ ձայնի եւ ձայնանիշներով պատկեր մը կը գծէ: Ան կ'աւելցնէ, թէ իր մեծ հօր անունը Գրիգոր Պենտեան է, որ տարագրուած էր իր ծննդավայրէն՝ Չումախլուէ: Կրէկ որոշած է իր պապենական գիւղի կորուստի մասին գրել եղերերգութիւն մը, որ վնասուած աշխարհ մը կը ներկայացնէ՝ զայրոյթով միախառնուած: Հարուածային գործիքներուն (ճագ) վրայ ծանր շղթաները եւ ծնծղաները կը խորհրդանշեն իր գիւղին եւ իր ժառանգութեան իսպառ ոչնչացումը: Այս երաժշտութեամբ ան կ'ուզէ ներկայացնել խաղաղ գիւղի կեանքը, ապա թուրքերու իրականացրած ջարդը: Երաժշտութիւնը կ'ընդգրկէ հայկական երաժշտական ելեւէջները: Կրէկի այս ստեղծագործութեան մէջ իբրեւ սուգի արտայայտութիւն կը լսենք պաս կիթառը, որ լաւապէս կ'արտացոլացնէ սուգը:

Վերջին բաժինով՝ «Մահուան քայլերգ»-ով, կը ներկայացնէ սարսափի աղաղակները, հայկական Չումախլու գիւղի ժողովուրդի տխուր ձայնը, հեծկլտուքը անապատին մէջ՝ ցոյց տալով ճանաչում չունեցող մարդկային ողբերգութեան հետեանքը: Պենտեանի ստեղծագործութիւնը, որ նուիրուած է հօրենական գիւղին, կ'արտայայտէ մռայլ հայեացքը Չումախլուի եւ հայկական ներկայ հարցերուն:

Կրէկ մեզի կը հաւաստիացնէ, որ իր մեծ հօր հետ շատ լաւ էր, այնքան մօտիկ ու հարազատ եղած, որ «Գրիգոր» խորագրով անոր նուիրուած երաժշտական կտոր մը ունի⁵¹:

50 Սեւակ Յակոբեան, «Չումախլուի Ձաակը», *Զարթօնք օրաթերթ*, 26 սպրիլի 2017 (Ապրիլեան Յաւելում), 2:

51 Գաթրճեան, *Հայոց ցեղասպանութեան ազդեցութիւնը երգ-երաժշտութեան վրայ*, 353-355:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ինչպէս տեսանք, Հայոց ցեղասպանութեան թեման իր բոլոր կողմերով ներառուած է երգ-երաժշտութեան մէջ: Ուստի աշխատութեան ասարտին կը կատարենք կարգ մը եզրայանգումներ:

1. Սոյն ուսումնասիրութիւնը հիմք կը ծառայէ ըսելու, թէ տարիներու ընթացքին «ցեղասպանութիւն» հասկացութիւնը մուտք գործած է հայոց պատմութեան մէջ նաեւ «Ապրիլեան երգ-երաժշտութիւն»-ով եւ այնուհետեւ ցեղասպանութեան քարոզչութեան տուած է նոր նկարագիր:

2. «Ապրիլեան երգ-երաժշտութիւն»-ի մեր ուսումնասիրութեան երկար ժամանակահատուածի հանգամանքը թոյլ կու տայ, որ եզրակացնենք, թէ ամէն մէկ ժամանակաշրջան ունեցաւ հեղինակին հոգեկան ապրումին յատուկ արտայայտութիւն՝ յուզում, մորմոք, պայքար, պոռթկում, վրէժխնդրութիւն, Հայկական հարցի մատնանշում, պահանջատիրութեան ոգի:

3. Կարգ մը արուեստագէտներու գործերուն մէջ կը տեսնենք անոնց ողբը հայ ժողովուրդի դժբախտութեան համար ու փառաբանանքը՝ ի տես անոր վերապրումին եւ վերածնունդին:

4. Հայոց ցեղասպանութեան անժխտելի իրողութիւնը մղիչ ուժ դարձաւ ստեղծելու «Ապրիլեան երգ-երաժշտութիւն», սակայն այս արուեստին ծալքերը ցարդ սպառիչ ձեւով չեն ուսումնասիրուած մեր եւ երբեմն նոյնիսկ օտարին կողմէ: Ներկայացուած են միայն թուրքին կատարած բարբարոսութիւններուն ընդմէջէն՝ քստմնելի եւ սահմնկեցուցիչ պատկերներով, որոնք այնքան ցնցած են հայ տարագրուածներուն միտքն ու հոգին, որ միայն այդ ուղղութեամբ արտայայտուած են անոնց յօրինած երգերուն մէջ: Ուստի «Հայոց ցեղասպանութեան ազդեցութիւնը երգ-երաժշտութեան վրայ» ուսումնասիրութիւնը ենթահող կը պատրաստէ, որ ներկայ եւ յաջորդ սերունդներին երաժիշտները պատրաստ լսարան ունենան:

5. Այս աշխատասիրութիւնը, ըլլալով երաժշտական բնոյթի հետազօտական գործ, դէպքի մը կամ արարքի մը յիշատակման ի խնդիր, իր մէջ ինքնաբերաբար կ'ընդգրկէ նաեւ պատմական եւ քաղաքական հոլովոյթ եւ բնութագրում: «Յեղասպանութիւն» եզրի յայտնաբերումն ու սահմանումը պատճառ դարձան, որ երգերու մէջ այլ բառերու կողքին աւելնայ ու ներառուի «ցեղասպանութիւն» բառը եւս, սակայն արուեստագէտները անմիջապէս չարձագանգեցին այս նորագիտ բառին, նոյնիսկ ուշացաւ անոր յիշատակումը: Այսպէս, հետազօտական մեր աշխատանքին կը հետեւցնենք, որ ան մեզի կը հանդիպի 1990-ական թուականներէն ետք: Ուստի կ'առանձնանայ ժամանակաշրջան մը, երբ «ցեղասպանութիւն» բառը չի յիշատակուիր բացարձակապէս:

6. Տարիներու թափալումով եւ սերնդափոխութեամբ կը հանդիպինք նոր յօրինուած երգերու, որոնք վերապրողներու սերունդի օրերու նման նոյնքան թարմ են իրենց մարմնատրած հոյգերով ու բառերով: Միշտ դէպքերու, հայրենի հողի կորուստի յիշատակ, պոռթկում տասնեակ տարիներ երգուած են երգերու ընդմէջէն:

7. Ակներեւ է, որ ընդգրկուած երգերուն մէջ չեն յիշուած Օսմանեան կայսրութեան տարածքին 1915 թ. իրագործուած Հայոց ցեղասպանութեան զանազան վայրերը,

հետեալաբար անհրաժեշտ է, որ յիշուին Արեւմտեան Հայաստանի ու յատկապէս Սուրիոյ տարածքին իրագործուած ցեղասպանութեան վայրերը, ինչպէս՝ Աշ-Շէտտէտէ, Բաս-ուլ-Էյն, Մէսքէնէ, Քաթմա, սաեւ Իրաքի Մուսուլ քաղաքը, Յորդանանի Մասն քաղաքը եւ այլն, տալու համար ուրուագիծը արեան այս համատարած նախճիրին, քանի որ մինչ օրս ականատես կ'ըլլանք վերոյիշեալ վայրերու հաւաքական գանկերու եւ ոսկորներու:

Վերջապէս, սոյն աշխատութիւնը կը նպաստէ վաւերագրականօրէն հիմնատրելու երգ-երաժշտութեան հոլովոյթը հայոց պատմութեան, մանաւանդ ցեղասպանութեան մէջ: Քանի որ յօրինուած երգերը փաստագրած են Մեծ եղեռնի ճամբարներու շրջանները, որբերն ու որբանոցները եւ այլ իրողութիւններ:

REFERENCES

Օգտագործուած աղբիւրներ

Aghazarian, Mihran. *Աքսորականի յուշեր* [Memoires of an exile]. Adana: Hay Dzayn, 2019;

Agheten veraprogghner [Mesrop, Levon]. Der-Zor. Paris: Printing House P. Elekian, 1955;

Andonian, Aram. *Մեծ ոճիրը. Հայկական վերջին կոտորածները եւ Թալէադ փաշա* [The Great Crime: The Last Armenian Massacres and Talaat Pasha]. Beirut, 1977 (second edition);

Brutyan, Tsitsilia. *Սփիւռքի հայ երաժիշտները* [Armenian Musicians of the Diaspora]. Yerevan: Hayastan, 1968;

Chitchian, Hambardzum. *Մազի չափ մահին մօտ, եղեռնէն վերապրողի յուշեր* [A Hair's Breadth from Death: Memories of a Genocide Survivor]. London: Taderon Press, 2004;

Hakobian, Sevak. «Երագ մը. Չոմախլու» [Chomakhlu: My Dream], *Զարթօնք օրաթերթ* (Բէյրութ) [Zartok' Daily (Beirut)], April 26, 2017 (April Appendix);

Hakobian, Sevak. «Չոմախլուի Չասակը» [Son of Chomakhlu], *Զարթօնք օրաթերթ* (Բէյրութ) [Zartok' Daily (Beirut)], April 26, 2017 (April Appendix);

Յեղափոխական եւ Ժողովրդային երգեր [Revolutionary and Folk Songs]. Beirut: Publication of the "Mshak" series, 1972;

Hovhannisian, Tamar. *Հարություն Դելլալյան. կյանքի և սրեղծագործության ուրվագիծ* [Harutyun Dellalian: An Outline of Life and Work]. Yerevan: Maku, 1992;

Isahakyan, Avetik. *Հայդուկի երգեր* [Haiduk Songs]. Yerevan: Arevik, 1990;

Katerjian, Avo. *Հայոց ցեղասպանութեան ազդեցութիւնը երգ-երաժշտութեան վրայ* [The Influence of the Armenian Genocide on the Songs and Music]. Aleppo, 2010.

REFLECTION OF THE THEME OF CONCENTRATION CAMPS IN THE SONGS AND MUSIC

Avo H. Katerjian

Freelance researcher, Aleppo-Syria

The article examines songs and music born in different languages and during different periods of the Armenian Genocide in the places of the Genocide camps, in the area of the Euphrates River. The themes of their compositions are various: inhumane events, geographical locations, descriptions of scenes, gatherings of orphans and orphanages, people, expression of feelings, and other creepy stuff. The musical style is diverse: folk, rock, heavy metal, rap, hip-hop, new-age, classical, jazz, etc., the areas reflecting the song-music are also artistic, graphic film series, documentary tapes, and plays.

Keywords: martyrs, Euphrates, Der-Zor (Der-ez-Zor), exile, torment, desert, horror, woe, mourning, orphan, sorrow, revenge, genocide.

ПРОЯВЛЕНИЕ ТЕМЫ КОНЦЕНТРАЦИОННЫХ ЛАГЕРЕЙ В ПЕСНЕ И МУЗЫКЕ

Avo A. Gatrđjyan

Исследователь, Алеппо-Сирия

В статье представлены песни и музыка, родившиеся на разных языках и в разные периоды Геноцида армян в концентрационных лагерях, а также в районе реки Евфрат. Тематика их композиций разнообразна: бесчеловечные события, географические локации, описания сцен, сбор сирот и детские дома, отдельные люди, выражение чувств и т.д. Музыкальный стиль также разнообразен: фолк, ашугская музыка, рок, хэви-метал, рэп, хип-хоп, нью-эйдж, классика, джаз и другие направления, а также песенная музыка, отраженная в художественных фильмах и киносериалах, документальные ленты и т. д.

Ключевые слова: мученики, Евфрат, Дер-эз-Зор, изгнание, траур, мучения, пустыня, ужас, горе, сирота, изгнание, скорбь, месть, геноцид.

Հեղինակի մասին
About the Author
Об авторе

Աւօ Յ. Գաթրճեան, Համազգայինի Հալէպի Հայագիտական Հիմնարկին մէջ կը դասաւանդէ Հայ դատ նիւթը:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Սուրիոյ հայութեան պատմութիւն, համաթորքականութիւն-համաթուրանականութիւն եւ թրքացեղ ժողովուրդներ, Հայ դատ, Հայոց ցեղասպանութիւն, Թուրքիա, համախլամութիւն, համաօսմանիզմ, Նախիջեւան, հայ երգ-երաժշտութիւն, Հայոց ցեղասպանութեան ու հայ ազգային-նազմահայրենասիրական եւ ազգագրական երգեր, Ծայրագոյն Արեւելքի մարտարուեստներ ու փիլիսոփայութիւններ:

Էլ. փոստի հասցե՝ avokat1970@hotmail.com

Avo H. Gatrjian, Teacher of the history of the Armenian Issue at Hamazkayin's Aleppo Armenian Studies Institute.

Research fields – History of Syrian Armenians, Pan-Turkism–Pan-Turanism and Turkic peoples, Armenian Issue, Armenian Genocide, Turkey, Pan-Islamism, Pan-Ottomanism, Nakhichevan, Armenian song-music, Armenian Genocide and Armenian national-military-patriotic and ethnographic songs, martial arts and philosophies of the Far East.

E-mail: avokat1970@hotmail.com

Аво А. Гатрджян, учитель, преподает историю Армянского вопроса в Арменоведческом институте Алеппо Амазгайна.

Область исследований – история сирийских армян, пантюркизм-пантуранизм и тюркские народы, Армянский вопрос, Геноцид армян, Турция, панисламизм, паносманизм, Нахичевань, армянская песня-музыка, Геноцид армян и армянская национально-военно-патриотическая и этнографическая песня, боевые искусства и философия Дальнего Востока.

Эл. почта: avokat1970@hotmail.com

ԱՂԲԱԿԻ ԳԱՎԱՌԱԿՈՒՄ ՀԱՅԵՐԻ ԴԵՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՑԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1914-1915 ԹԹ.

Սաթենիկ Ա. Մաթոսյան

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ

Հոդվածում ներկայացվում են Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Աղբակի (Բաշկալեի) գավառակում տեղի ունեցած ցեղասպանական իրադարձությունները՝ հատուկ ուշադրություն դարձնելով 1914 և 1915 թվականներին: Աղբակի աշխարհագրական դիրքը՝ Պարսկաստանին մոտ լինելը, այն դարձրել էր տնտեսական և ռազմական կարևոր տարածաշրջան: Հոդվածը հիմնվում է ժամանակի տարբեր (գերագանցապես արխիվային) աղբյուրների վրա՝ ընդգծելու տարածաշրջանում հայերի նկատմամբ գործադրված բռնությունների համակարգված բնույթը և ներկայացնելու դրանց հաջորդած բռնի տեղահանումները:

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, Վանի նահանգ, Աղբակի գավառակ, հուշեր և վկայություններ, կոտորած, տեղահանություն:

Հոդվածը ներկայացվել է՝ 20.08.2024: Ընդունվել է տպագրության՝ 04.12.2024:
The article was submitted on 20.08.2024 and accepted for publication on 04.12.2024.
Статья поступила 20.08.2024 и была принята к публикации 04.12.2024.

Ինչպես հղել՝ Սաթենիկ Ա. Մաթոսյան, «Աղբակի գավառակում հայերի դեմ իրականացված ցեղասպանական գործողությունները 1914-1915 թթ.», *Յեղասպանագիտական հանդես* 12, no. 2 (2024), 41-56:

How to cite: Satenik A. Matosyan, “The Genocidal Actions Against Armenians in the Aghbak Sub-District in 1914-1915,” *Ts’eghaspanagitakan handes* 12, no. 2 (2024), 41-56.

Как сослаться: Сатеник А. Матосян, “Геноцидальные действия в отношении армян в Ахбаке в 1914-1915 гг.,” *Цехаспанагитакан андес* 12, no. 2 (2024), 41-56.

Գավառակի աշխարհագրական դիրքը, բնակչության կազմը և մշակութային ժառանգությունը ցեղասպանության նախօրեին

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Վանի մոտ լինելը պարսկական սահմանին, սահմանային զգալի առևտուրը և Պարսկաստանի հետ մաքսանենգությունը, վճռորոշ նշանակություն ունեցան նրա տնտեսության և ժողովրդագրական կայունության համար¹:

Վանի նահանգի Բաշկալե քաղաքը՝ հայտնի հայ-քրդական խառը բնակչությամբ, կարևոր դեր է ունեցել այս տնտեսական ցանցում: Քրդերի և հայերի հարաբերությունները բարդ էին. դրանք ներառում էին ն՝ համագործակցային առևտրային փոխառնչություններ, ն՝ քաղաքական ու տարածքային հարցերի շուրջ հակամարտություններ²:

1 Hilmar Kaiser, “Tahsin Uzer: The CUP’s Man in the East,” in *The End of the Ottomans* (Bloomsbury Publishing Plc, ebook, 2019), 93-119:

2 Hilmar Kaiser, “Requiem for a Thug: Aintabli Abdulkadir and the Special Organization,” in *The End of*

Ականատեսների վկայությունները համապարփակ պատկերացում են տալիս օսմանյան իշխանությունների կազմակերպած ցեղասպանական բնույթի համակարգված և դաժան գործողությունների մասին:

Աղբակը գավառ էր Մեծ Հայքի Վասպուրական աշխարհում: Տեղակայված էր Տիգրիսի ձախակողմյան վտակ Մեծ Զավ (կամ Զաբ) գետի վերին հոսանքի շրջանում, բոլոր կողմերից շրջապատված էր լեռներով: Հնում Արծրունիների տոհմական գավառն էր: Այդտեղ էր գտնվում Արծրունիների իշխանանիստ Ադամակերտ (կամ Հադամակերտ) գյուղաքաղաքը³: Ադամակերտը ավելի ուշ կոչվել է Բաշկալե: Գյուղաքաղաքը տեղակայված էր Աղբակի դաշտի արևմտյան սահմանը կազմող լեռների ժայռոտ լանջին՝ 2700 մետր բարձրության վրա՝ Մեծ Զաբի ակունքների մոտ: Եղել է գավառի կենտրոնը:

Հին Աղբակ գավառը համապատասխանում է նոր ժամանակների Վանի նահանգի Հաքարի գավառի համանուն գավառակին: 19-րդ դարի երկրորդ կեսին Աղբակի գավառակն ուներ 81 գյուղ, որից 24-ը՝ հայկական: Այդտեղ ապրում էին հայեր (մոտ 10 000), քրդեր (8 000), ասորիներ ու հրեաներ (մոտ 2 000): Գավառակում կար հայկական հինգ-վեց վարժարան: Հայկական գյուղերը 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ավերվեցին թուրքերի կողմից: Իսկ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայկական գյուղերը գրեթե ամայացան ու ոչնչացան: Հայ բնակիչների մեծ մասը զոհվեց 1915 թվականին, իսկ ողջ մնացածները գաղթեցին տարբեր երկրներ⁴:

Առաջին աշխարհամարտի նախօրեին՝ 1914 թվականին, Աղբակի գավառակն ունեցել է հետևյալ ժողովրդագրական պատկերը⁵.

Քաղաք և գյուղ	Տուն	Շունչ
Բաշկալե	200	1645
Ս. Բարդուղիմեոս	40	244
Հասպտան	45	260
Մալքավան	16	70
Էրնգանի	27	205
Բժակերտ	15	112
Խառատուն	11	65
Սորաղեր	4	18
Փիս	4	24
Բազ	5	49

the Ottomans (Bloomsbury Publishing Plc, ebook, 2019), 67-93.

3 Ա.-Դո, *Մեծ դեպքերը Վասպուրականում 1914-1915 թուականներին* (Երևան, Տպարան «Լոյս», 1917), 28:

4 Թ. Խ. Հակոբյան, Սո. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հատոր 1 (Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1986), 600-601:

5 Ա.-Դո, *Մեծ դեպքերը Վասպուրականում*, 28:

Քաղաք և գյուղ	Տոն	Շունչ
Սորան	24	163
Հերեսան	11	74
Ալաս	35	280
Ալալեան	7	45
Բեզա	9	79
Ռասուլան	8	54
Չուլս	15	96
Պապլիասան	5	18
Քարաբլուր	1	4
Ընդհանուր	482	3505

Իսկ ըստ 1913-1914 թթ. Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի տվյալների Աղբակում հայ բնակչության ընդհանուր թիվը 7 157 էր (390 տուն)⁶:

Քաղաքից վեր բարձրանում էր Բաշկալեի հինավուրց բերդը՝ հռչակավոր Ադամա-կերտը, որի ավերակներն են մնացել: Քաղաքից դեպի արևելք՝ 20 կմ հեռավորության վրա, սուրբ Բարդուղիմեոս առաքյալի հայտնի վանքն էր⁷:

Աղբակի շրջանի մշակութային ժառանգության կոթողներից է Ալտարահի վանքը, որը գտնվում է Վանի Աղբակ գավառի Առակ գյուղի մոտ: Բնական քարայրի մեջ է կառուցված, ճակատին դրոշմված են տարօրինակ ու անընթեռնելի գրեր, տեղ-տեղ երևում են փորված խաչեր⁸:

Մշակութային մեկ այլ արժեք է Ս. Բարդուղիմեոսի վանքը, որն ընկած է Ադամա-կերտ (Բաշկալե) գյուղաքաղաքից հյուսիս-արևելք՝ տարանցիկ ճանապարհի վրա՝ երկու գետակների միախառնման վայրում: Շքեղ էր վանքի գավիթը, որը կառուցվել է ուշ ժամանակներում՝ 11-12-րդ դարերում: Վանքը եղել է գրչության հայտնի կենտրոն: Մինչև Առաջին համաշխարհային պատերազմը այն ուներ դպրոց և որբանոց: Վանքի հիմնադրման թվականը հայտնի չէ: Նրա մասին հավաստի տեղեկությունները սկսվում են 14-րդ դարից: Եղել է գավառակի առաջնորդարանը⁹:

Ս. Բարդուղիմեոսը եղել է Աղբակի թեմի եպիսկոպոսանիստ աթոռը: Որոշ ժամանակ վանքում վարժարան է գործել, որը 1915 թ. փակվել է¹⁰:

6 Ռոբերտ Թաթոյան, «Վիճակագրական տվյալները Վանի նահանգի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ 1878-1914 (աղբյուրների համադրության և վերլուծության փորձ)», *Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր* 7 (2003), 76:

7 Հակոբյան, Մելիք-Բախշյան, Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հատոր 1, 600-601:

8 Տեր Բարդուղիմեոս քահանա Հակոբյան, «Վասպուրականի առաքելահիմն վանքերն ու եկեղեցիները», *Էջմիածին* 6 (2012), 111-112:

9 Հակոբյան, Մելիք-Բախշյան, Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հատոր 1, 622:

10 Հակոբյան, «Վասպուրականի առաքելահիմն վանքերն ու եկեղեցիները», 115-116:

Աղբակի հայության կոտորածն ու թալանը

Թուրքական կանտոնավոր բանակի և քրդական խուժանի բարբարոսությունների մասին տեղեկություններ ենք ստանում Վանի նահանգի Հաքարի գավառի Աղբակի գավառակի գյուղերից վերապրած բնակիչներից: Վերապրածների թիվը մեծ չէ, և կան գյուղեր, որոնցից ոչ մի բնակիչ չի փրկվել: Մեզ հասել են միայն վեց բնակավայրերից վերապրածների հուշեր: Ստորև ներկայացված են Բաշկալե, Բժնկերտ, Հասփստան, Էրնկան, Սորան և Խատատուն գյուղերի վերապրածների հաղորդած տեղեկությունները՝ Աղբակի գավառակի գյուղերում կատարված իրադարձությունների վերաբերյալ:

Հաքարի գավառի Աղբակի գավառակի **Բաշկալե** գյուղաքաղաքում տեղի ունեցած կոտորածի մասին պատմում է վերապրած Հայկանուշ Գասպարյանը, ով, փրկվելով կոտորածից, հաստատվել էր Ախտախանայում (գյուղ Իրանի հյուսիս-արևմուտքում):

Երբ օսմանյան տերությունը մտավ պատերազմի մեջ, և սկսվեցին ռազմական գործողությունները, հայերը բազում արհավիրքներ տեսան, որոնք նախապես ծրագրված էին: Ականատեսի խոսքով՝ բարեկեցության միջին մակարդակ ունեցող բոլոր ընտանիքները բավականին զգալի պատերազմական հարկ էին տալիս՝ այդ թվում ցորեն, ձավար, 10 օսմանյան ոսկի, գուլպաներ, կարպետներ, տրեխներ, ձեռնոցներ, յուղ և երեք գլուխ ոչխար: Սա սահմանված օրենք էր բոլորի համար, որը խախտելու դեպքում ծեծ կամ այլ տեսակ պատիժներ էին կիրառվում, նույնիսկ գործը հասնում էր սպանության, եթե պատերազմական ատյանի առաջ ինչ-որ մեկը հանդգներ ասել, որ չի պատրաստվում ոչինչ տալ բանակին¹¹:

Ինչպես հաղորդում է ականատեսը, երբ ռուսական բանակը գիշերով նահանջեց Բաշկալեից, 1914 թ. նոյեմբերի 19-ի առավոտյան քրդական մի ջոկատ շրջապատեց տեղի բնակիչներին և սկսեց կրակ արձակել տների պատուհաններից ներս: Այն տղամարդիկ, որոնք զենքեր ունեին, դիմեցին ինքնապաշտպանության: Բայց նրանք ոչինչ չէին կարող անել բազմապատիկ անգամ ավել քրդական ջոկատի դեմ: Քրդերն առաջարկեցին անձնատուր լինել և երդվեցին, որ կխնայեն բոլորի կյանքը, սակայն դրանք սին խոստումներ էին և լավագույն միջոցը՝ հեշտությամբ սպանելու գյուղի տղամարդկանց: Հենց առաջին տանը նրանք սպանեցին վեց հոգու, որոնք Բաշկալեում առաջին զոհերն էին: Քրդերը կողոպտեցին ամբողջ տունը, ապա դիերի հետ միասին հրդեհեցին այն¹²:

Ականատեսը շարունակում է, որ ձմռանը՝ ամեն օր, կառավարության հրամանով ոստիկանները ձերբակալում էին հայ տղամարդկանց՝ պատճառաբանելով, թե Վանի պատերազմական ատյանն է հավաքում նրանց, բայց գիշերը Բաշկալեի դարբին Խաչոյի տանը, որը գյուղի եզրին էր, սպանում էին բոլորին և նետում ջրհորը: Սարգիս Մանուկյան անունով 18-ամյա մի տղա կիսակենդան վիճակում կարողացել է դուրս գալ այդ ջրհորից: Շելյա Մահարը խնայել է նրա կյանքը, որից հետո տղան փախել է Հաֆթվան:

11 Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու, հ. 1, կազմողներ՝ Ամատունի Վիրաբյան և Գոհար Ավագյան, գլխ. խմբագիր՝ Ամատունի Վիրաբյան (Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2012), 401:

12 Նույն տեղում, 402:

Հետապնդումները, ձերբակալություններն ու սպանությունները շարունակ սաստկանում էին: Կանայք ամեն օր՝ կեսօրին, թաղում էին սպանվածների դիակները, իսկ քրդերը գիշերները քանդում էին գերեզմանները, հանում դիերը և թողնում, որ շներն ուտեն դրանք¹³:

1914 թ. ուշ աշնանը թուրքական բանակի գլուխ անցած Խալիլ և Ջևդեթ բեյերը շարժվեցին դեպի Թավրիզ՝ ավեր ու կոտորած սփռելով Ուրմիայի, Ուրագ-Բուլաղի և Սալմաստի բնակչության շրջանում: Հենց այդ ժամանակ էլ սկսվեց Վասպուրականի ողբերգությունը: Դեկտեմբերի առաջին շաբաթվա ընթացքում, երբ ռուսական զորամասերն արդեն նահանջել էին Ադրակից, թուրքական կանոնավոր զորամասերը քրդական ջոկատի հետ հաշվեհարդար տեսան Հաքարիի նախկին վիլայեթի կենտրոն Բաշկալեի, ապա՝ Ադրակի շրջանի գյուղերի, Ս. Բարդուղիմեոս վանքի շրջակայքի բնակիչների նկատմամբ: Կոտորում էին անմեղ կանանց ու երեխաներին, հրդեհում տներ, կողոպտում նրանց ունեցվածքը¹⁴:

Ադրակի և Սարայի հայկական և ասորական գյուղերը թալանվում ու հրդեհվում էին, իսկ բնակչությունը՝ կոտորվում: Ռուսների նահանջից հետո Թաբուր աղա Ահմեդ բեկն իր 160 թուրք ժանդարմներով ու Շիկարի մագրիկցի քուրդ ցեղապետ Շերեֆ բեկն իր 150 քուրդ համիդիներով Բաշկալե քաղաքում ու շրջանի ուր գյուղերում ներխուժեցին հայկական թաղերը, թալանեցին ու հրդեհեցին տները, 10 տարեկանից բարձր բոլոր տղաներին կոտորեցին՝ որոշ վայրերում չխնայելով անգամ ավելի ցածր տարիքի երեխաներին, որոնց դիակներն ընկած էին թողնում փողոցներում: Բախտի քմահաճույքին թողնելով անհաց ու անօթևան մնացած կանանց ու երեխաներին՝ գեղեցիկ աղջիկներին տանում էին Վան՝ Շամիրամի թուրքական թաղամասում վաճառելու կամ հյուրասիրության առարկա դարձնելու համար¹⁵:

1914 թ. դեկտեմբերին Վանի նահանգի Սարայ և Բաշկալե գավառներում սպանվեց շուրջ 10 000 հայ: Իրավիճակը բարդանում էր: «Ահ ու դողի ամիսներ էինք ապրում, կոտորածը գաւառներէն (914 թուականի աշնանային նահանջի հետեւանքով) կամաց-կամաց մոտենում էր քաղաքին»¹⁶, - գրել է Արամ Մանուկյանը (Վանի ինքնապաշտպանական մարտերի գլխավոր կազմակերպիչներից, հետագայում՝ Վանի նահանգապետ) 1916 թվականին: 1915 թ. հունվար-մարտ ամիսներին բռնություններ տեղի ունեցան Վասպուրականի Ադրակ, Թիմար, Հայոց ձոր և այլ գավառներում: Կոտորածներին զոհ գնաց 16 000 հայ, 15 000-ը ապաստանեց Վանում: Թուրքական բանակում ծառայող հազարավոր հայ զինվորներ կոտորվեցին¹⁷:

Ի պատասխան թուրքական բռնարարքների՝ հայերը սպանեցին մի քանի տասնյակ թուրք ոստիկանների, մի շարք վայրերում կտրեցին հեռագրալարերը¹⁸:

13 Նույն տեղում, 403:

14 Ջոն Կիրակոսյան, *Երիրթուրքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թվականներ - 1914 թ.)*, գիրք I (Երևան, «Հայաստան», 1982), 259:

15 Ավետիս Հարությունյան, «Հայկական կոտորածները Վան-Վասպուրականի գավառներում (1914-1915 թթ.)», *Էջմիածին* 4 (2013), 36-37:

16 Արամ [Մանուկեան], «Իշխան (Նիկոլ Պողոսեան)», *Հորիզոն* (Թիֆլիս), 7 ապրիլի 1916 (թիվ 78):

17 Մակիչ Արզումանյան, *Հայաստան. 1914-1917* (Երևան, «Հայաստան», 1969), 317:

18 Վահագն Տատրյան, *Հայկական ցեղասպանությունը խորհրդարանային և պատմագիտական քն-*

Այս ամենը շարունակվում է մինչև 1915 թ. գարուն, երբ տեղի թուրք պաշտոնյաները պատրաստվեցին լքելու գյուղը՝ իրենց հետ տանելով այնքան ավար, ինչքան հնարավոր էր: Ապա սկսեցին կոչ անել հայ կանանց և երեխաներին միանալու իրենց՝ ասելով, որ շուտով գալու է Խալիլ փաշան 50 000-անոց զորքով: Շատերը ենթարկվեցին այդ խաբեական կոչին, իսկ ոմանք որոշեցին մնալ: Կառավարության հրամանով, սակայն, ոստիկանները մտան նրանց տները, ուժով դուրս բերեցին նրանց և տարան իրենց հետ՝ չխնայելով անգամ կույրերին, կաղերին ու նույնիսկ մահամերձ հիվանդներին: Այդպիսով հայերին քշեցին դեպի Գավառի գավառակը, որը Բաշկալեից 60 կմ հեռավորության վրա էր: Դժվարին երթի ընթացքում, որը տևեց հինգ օր, շատերը մահացան սովից, ծարավից և հիվանդություններից: Երբ տեղ հասան, դահիճները սպանեցին 15-20 տղամարդու և դիակները նետեցին Գավառի գետը:¹⁹

Մայիսի 5-ին Անդրանիկի հեծելազորը 1-ին և 2-րդ վաշտերի հետ ուղևորվեց Բաշկալե: Վաշտերը գրավեցին Բաշկալեի աջ և ձախ բարձունքները, իսկ հեծելազորը կազակների հետ առաջացավ դեպի Բաշկալե: Այստեղ Անդրանիկի գունդը գերի է վերցրել չորս ձիավորի, որոնցից տեղեկացել են, որ հետախուզություն է ուղարկվել՝ ամրանալու Չուխ-Գյաղուկում: Եթե նրանք հասնեին իրենց նպատակին, ողջ Վասպուրականը կվտանգվեր, քանի որ Չուխ-Գյաղուկում 500 լավ զինված ոստիկան կար՝ չհաշված քրդերը²⁰:

Բաշկալեի տարագրյալներին, որոնք 1 000 հոգուց ավել էին, այնտեղ չթողեցին, այլ սկսեցին քշել դեպի Մոսուլ: Երբ հասան Շամդինանի Նեիրի, սկսեցին նրանց միմյանցից բաժանել. 700 առողջ հայերի քշեցին դեպի Մոսուլ, իսկ մնացած 300 հոգուն հանձնեցին տեղի զորապետ Էմնիեյ էֆենդիին, որոնց հետ էին մնացել նաև 18-19 տարեկան վեց երիտասարդներ, որոնց ոստիկանները, գյուղից դուրս տանելով, ցանկանում էին սպանել, բայց ի վերջո նրանք իսլամացվում են²¹: Երբ Նեիրիում մնացած այդ 300 հոգուց 220-ը ցրտից կամ սովից մահանում են, մյուսներին քշում են դեպի Մոսուլ: Ոմանք, սակայն, հիվանդ ձևանալով, կարողանում են ճողոպրել և մնալ Նեիրիում:

1916 թ. մայիսին սկսվում է ռուսական զորքի հարձակումը: Թուրքերը և տեղի շեյխերը գաղթեցին դեպի Ռևանդուզ և ցանկանում էին իրենց հետ տանել նաև հայերին, սակայն հայերը գիշերով փախան լեռներ և այնտեղ մնացին երեք օր, մինչև կհասներ ռուսական բանակը: Ռուսական բանակի օժանդակությամբ շուրջ 90 հայ կանայք և երեխաներ ազատվեցին գերությունից ու տեղափոխվեցին Մավմաստ: Նրանց թվում էին նաև վերոնշյալ իսլամացած երիտասարդները՝ Մովսես Նիսանյանը, Աղավարդ Դարբինյանը, Հայրիկ Թոսունյանը, Մանվել Կարապետյանը և Խոսրով Պուղոյանը²²:

Հաքարի գավառի Աղբակի գավառակի **Բժնկերտ** գյուղի կոտորածի մասին տեղե-

¹⁹ Նարկուններով (Մասաչուսեթս (ԱՄՆ), «Պայքար» հրատ., 1995), 50:

¹⁹ Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում, հ. 1, 404:

²⁰ Անդրանիկ Օզանյան, Փաստաթղթեր և նյութեր, Բանբեր Հայաստանի արխիվների 1-2 (1991), 143:

²¹ Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում, հ. 1, 404:

²² Նույն տեղում:

կոլոնիաներ ենք ստանում վերապրած Իսկուհի Պաթոյանի վկայությունից, ով փրկվել և բնակություն էր հաստատել Հաջիվարում²³:

Բժնկերտ գյուղը մոտ 50 տուն բնակչություն ուներ, որոնցից 20-ը հայ ընտանիքներ էին, իսկ մնացածը՝ քուրդ: Մինչև ռուսական բանակի մոտենալը Բժնկերտում հայերի և քրդերի հարաբերությունները բարեկամական էին: Բայց երբ ռուսները մոտեցան, քրդերը սկսեցին պնդել, որ պետք է սպանեն գյուղի բոլոր հայերին, որովհետև նրանք կարծում էին, որ հայերը կարող էին միանալ ռուսներին, քանի որ հայերն ու ռուսները կրոնակից էին²⁴:

Զինվորներին պաշար հասցնելու պատրվակով և պատերազմական տուրքի անունով շարունակաբար տեղի էին ունենում թալաններ: Ոստիկանները մտնում էին հայերի տներն ու տանում սնունդ, հագուստ և այլն, որքան ուզենային²⁵: Սակայն անսպասելիորեն եկան ռուսները, և գյուղում կոտորած չեղավ: Բայց դեկտեմբերի 20-ին ռուսները նահանջեցին և հայերին էլ իրենց հետ տեղահանեցին՝ գիտակցելով, որ թուրքերն ու քրդերն իրենց վրեժը հայերից են լուծելու: Գյուղում մնացին միայն երեք ծեր տղամարդ և հինգ ծեր կին, որոնց Մահմուդ և Իսա աղաները սպանեցին և տիրացան գյուղի ամբողջ շարժական ու անշարժ գույքին²⁶:

Հերթական բնակավայրը, որի մասին որոշ տեղեկություններ է հաղորդել վերապրած և Թմբուլում²⁷ բնակություն հաստատած Մուսան Ասպատուրյանը, Աղբակ գավառակի **Էրնկան** գյուղն է: Ի դեպ, այս գյուղը միակն է, որի բնակչությունը, նախապես փախուստի դիմելով, փրկվել է:

Էրնկան գյուղը գտնվում է Աղբակի գավառակում՝ Աղբակ գետի վերին հոսանքի աջակողմյան վտակներից մեկի ափին, Սուրբ Բարդուղիմեոս վանքից մի քանի կիլոմետր արևմուտք, լեռնային վայրում: 1905 թ. ուներ 85 տուն բնակչություն: Եկեղեցին Սուրբ Ստեփանոսն էր, որը կառուցվել է 1660 թվականին: Նշմարվում են ևս երկու եկեղեցիների՝ Սուրբ Ծիրանավորի և Սուրբ Սարգսի ավերակները: Գյուղում եղել են ընդարձակ գերեզմանոցներ, որոնք վկայում են, որ հնում գյուղն ավելի բազմամարդ է եղել՝ մոտ 500 տուն: Գյուղի բնակչության մեծ մասը կոտորվել է գաղթի և տեղահանության ճանապարհին: Գյուղի արևմտյան կողմում՝ Մայայրսա և Մայտանոկա լեռների արևելյան փեշերին է գտնվում Էրնկանի Սուրբ Աստվածածին վանքը, որը միջին դարերում եղել է հայ գրչության կենտրոններից մեկը: Մինչև 1915-1918 թվականները պահպանվում էր գեղեցիկ կաթողիկեն: Պահպանվել են 15-րդ դարի վերջին այդտեղ ընդօրինակված մի քանի հայերեն ձեռագրեր²⁸:

23 Հաջիվար - գյուղ ներկայիս Ադրբեջանի Հանրապետության կազմում գտնվող Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Բաբեկի շրջանում:

24 Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում, հ. 1, 405:

25 Նույն տեղում:

26 Նույն տեղում:

27 Թմբուլ - գյուղ ներկայիս Ադրբեջանի Հանրապետության կազմում գտնվող Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Բաբեկի շրջանում:

28 Հակոբյան, Մելիք-Բախշյան, Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2 (Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1988), 372:

1914 թ. դեկտեմբերի 18-ին ռուսական բանակը նահանջեց, Ադրակի բոլոր գյուղերի բնակչությունը կոտորվեց, գեղեցիկ կանայք առևանգվեցին, բոլոր տները թալանի ու կողոպուտի ենթարկվեցին: Կոտորածից փրկվեցին միայն Էրնկանի բնակիչները, որովհետև, ինչպես նշվեց, նախապես փախուստի էին դիմել: Էրնկանցիները թեև հետո վերադարձան Սալմաստ, բայց և այնպես չէին համարձակվում գնալ Էրնկան, քանի որ գյուղն ամբողջությամբ «մաքրված չէր հայի դահիճներից»: Տարագրվածների մնացած մասը ցրվել էր Կովկասի տարբեր կողմերում²⁹:

Հաջորդ գյուղը, որտեղ տեղի են ունեցել դաժան կոտորածներ, Հաքարի գավառի Ադրակի գավառակի **Խառատուն** գյուղն է: Այս գյուղից կան երկու վերապրածների վկայություններ, որոնք, մեկը մյուսին լրացնելով, պատմում են գյուղում տեղի ունեցած անօրինությունների և դաժանությունների մասին:³⁰ Նրանցից մեկը Խոսրով Մարտիրոսյանն է, մյուսը՝ Նուբար Մարտոսյանը, որոնք, փրկվելով կոտորածներից, բնակչություն են հաստատել Շխմահմուղում³¹:

Նախ՝ մի քանի տեղեկություններ գյուղի մասին: «Խառա» անվանամասը տեղական բարբառով նշանակում էր «հարուստ»: 19-րդ դարի վերջին գյուղն ուներ 25 տուն հայ և 20 տուն քուրդ բնակիչ: Եկեղեցին Սուրբ Աստվածածինն էր: Մոտակայքում կար մեկ այլ ավերակ եկեղեցի ևս: Ինչպես ցեղասպանության շրջանում, այնպես էլ 1895-1896 թվականների հայկական կոտորածների ժամանակ գյուղի հայ բնակչության մեծ մասը կողոպտվել և բնաջնջվել է³²:

1914 թվականի հուլիսի երկրորդ կեսին թուրքերը տղամարդկանց զորահավաք կազմակերպեցին, սակայն այդ զորահավաքին գնացածներից և ոչ ոք չվերադարձավ: Ամեն օր կրկնվում էին պատերազմական տուրքի անունով սննդի, հագուստի և այլ իրերի բռնագրավումները³³:

Հարկ է նշել, որ քրդերը հաճախ էին սպառնում՝ ասելով, որ մինչև ռուսները գան հայերին օգնության, իրենք ամեն ինչ կանեն այդտեղի հայ բնակչությանը կոտորելու համար: Ամեն օր հայերը քնում և արթնանում էին վախի մթնոլորտում: Եվ իսկապես, երբ 1914 թ. հոկտեմբերին ռուսները մտան Ադրակ³⁴, քրդերը մի առավոտ 3 000-անոց բազմությամբ, Շարաֆ բեյի (մեկ այլ աղբյուրում՝ Շահբազ աղայի) գլխավորությամբ շրջապատեցին գյուղի բնակիչներին³⁵: Բոլոր երիտասարդները զորակոչված էին, իսկ գյուղում մնացած պատանիներն ու ծերերը այդ օրը սպանվեցին: Կանանց թալանեցին, մինչև անգամ մերկացրին ու վերցրին նրանց հագուստը³⁶: Ոմանք հասցրին

29 Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում, հ. 1, 406:

30 Նույն տեղում:

31 Շխմահմուղ -- գյուղ ներկայիս Ադրբեջանի Հանրապետության կազմում գտնվող Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Բաբեկի շրջանում:

32 Հակոբյան, Մելիք-Բախշյան, Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, 678:

33 Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում, հ. 1, 407:

34 Նույն տեղում:

35 Նույն տեղում:

36 Նույն տեղում:

փախչել, սակայն մոտակա գյուղերի բնակիչներից ոչ մեկը չփրկվեց. բոլորը կոտորվեցին³⁷:

1914 թ. հոկտեմբերի կեսերին Անդրանիկի կամավորները սարսափահար վիճակում գտան գյուղում ողջ մնացածներին և տարհանեցին: Կանայք և երեխաները, անկարող լինելով քայլելու ցուրտ եղանակին, ցրտահար ընկնում էին ճանապարհի եզրերին: Մահացածների թիվը հասնում էր 1 000-ի: Սալմաստ է հասել տեղահանվածների միայն 1/3-ը: Նրանցից շատ քչերն են հետագայում բնակություն հաստատել Սալմաստում, իսկ մնացածները տեղավորվել են Կովկասի զանազան շրջաններում: Գյուղ վերադարձողներ չեն եղել³⁸:

Աղբակի գավառակի **Հասփստան** գյուղի և մի քանի այլ վայրերի կոտորածների, ինչպես նաև նահանգում տիրող իրադրության մասին է վկայում վերապրած Վահան Պետրոսյանը, ով մի քանի անգամ հայտնվել է ծանր իրավիճակներում և, մեծ դժվարությամբ փրկվելով, բնակություն հաստատել Ախտախանայում³⁹: Հասփստան գյուղի վերապրածներից է նաև Բանամշահ Օհաննեսյանը, ով ևս վկայություն է թողել գյուղի կոտորածի մասին:⁴⁰

Հասփստանը գտնվում է Աղբակ գետի միջին հոսանքի աջ ափին: Հիմնականում հայաբնակ էր: 19-րդ դարի սկզբին ուներ 100 տուն բնակչություն, իսկ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին՝ 40-45 տուն: Գյուղացիները հիմնականում զբաղվում էին երկրագործությամբ և անասնապահությամբ: Հասփստանն ուներ եկեղեցի և «Ծաղկոց դպրոց»: Այն եղել է նաև գրչության կենտրոն: Բնակչությունը մասնակցություն է ունեցել 1915 թվականի ինքնապաշտպանական կոիվներին⁴¹:

1914 թ. օգոստոսի 15-ին գյուղից ուսուցիչներ Վահան Պետրոսյանը և Գասպար Աղոյանը տեղի առաջնորդ Վահրամ վարդապետ Կանաչյանի հանձնարարական նամակով պետք է մեկնեին Վան՝ ընդհանուր ուսուցչական ժողովին մասնակցելու և ուսումնական խորհրդից հրահանգներ ստանալու համար⁴²: Ճանապարհի քառորդ մասը չանցած՝ նրանք տեղեկանում են, որ երեք օր առաջ զորահավաք (սեֆեր-բերլիք) է հայտարարվել: Նաև նրանց ասում են, որ սկսվել էր սարսափելի հավածանք, և պատմում են, թե ինչպես էին Վանի ճանապարհին տեսել քրդերի դիակներ, որոնց սպանել էին զինվորագրվելուց խուսափելու պատրվակով⁴³: Այս ամենը լսելով՝ ուսուցիչներն իսկույն վերադարձել են գյուղ, և այդ տեղեկությունները ստուգելու համար Վահան Պետրոսյանն անձամբ մեկնել է Բաշկալե: Հասնելով այնտեղ՝ նա հրապարակում տեսել է փակցված համապատասխան հայտարարությունը:

37 Նույն տեղում:

38 Նույն տեղում:

39 Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում, հ. 1, 411:

40 Նույն տեղում: Բանամշահ Օհաննեսյանը հետագայում բնակություն է հաստատել Թմբուլում (Տամբատ):

41 Հակոբյան, Մելիք-Բախշյան, Բարսեղյան, Հայասրանի և հարակից շրջանների տեղանունների քառարան, հ. 3 (Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1991), 375:

42 Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում, հ. 1, 408:

43 Նույն տեղում:

Մեկ օրվա ընթացքում գյուղից զինվորագրել են 68 հոգու: Վահան Պետրոսյանը գնացել է Բաշկալե՝ հույս ունենալով ազատվելու զինվորագրումից, քանի որ կար օրենք, ըստ որի՝ ուսուցիչները, անկախ ազգային պատկանելությունից, չպետք է զինվորագրվեին: Նա փորձել է ոստիկանապետին ցույց տալ իր ուսուցչական վկայականը, բայց վերջինս հարձակվել է նրա վրա և, հայտարարելով, որ Վահանը փախել է զինվորական ծառայությունից, հրամայել է ձերբակալել նրան ու բանտ նետել: Չորս օր բանտում մնալուց հետո Վահանին 15 հայերի և 40 քրդերի հետ օգոստոսի 17-ին Բաշկալեից ուղարկել են Ջուլամերիկ⁴⁴:

Վահանի վկայությամբ՝ երբ ռուսներն 1914 թ. աշնանը առաջին անգամ մտել են Բաշկալե և այնուհետև նահանջել, գյուղի բնակիչների մեծ մասը կոտորվել է, իսկ նրանց ունեցվածքը՝ թալանվել: Բնակչության մյուս մասը կոտորվել է 1915 թ. մայիսին, երբ ռուսական զորքերը կրկին մտել են Բաշկալե և գրավել Վանը⁴⁵:

Բաշկալեի կոտորածներից 4-5 օր հետո քրդերը սկսել են անխնա կոտորել Հասփստան գյուղի հայ բնակիչներին: Ամեն մի քուրդ պետք է սպաներ իր հարևան հային, իսկ հետո սպանված հայերի դիակները նետում էին շներին: Մահսար էֆենդիի մասին ասվում է, որ նա մի քանի ցեղապետերի հետ ամեն գիշեր շրջում էր հայերի տներով և հավաքում հայ տղամարդկանց: Այնուհետև վերջիններիս արգելափակում էին՝ ասելով, թե Վանի նահանգապետի հրամանով նրանց հավաքում և ուղարկելու են ճանապարհաշինության, մինչդեռ այնուհետև ենթակաների միջոցով կոտորում էին բոլոր հայ տղամարդկանց: Կոտորածից փրկված Սարգիս Մանուկյանը, ով դաշունահարվելուց հետո ողջ էր մնացել, պատմում է, թե ինչպես էին ամեն օր քրդերը հավաքվում և գնում Մահսարին շտրիավորելու՝ հայերին կոտորելով իր նվիրական պարտքը կատարելու համար: Այդ էին վկայում նաև բաշկալեցի կոշկակար Մկրտիչ Թոսունյանը, Խոսրով Պուղոյանը և Քերոբ Մանուկյանը, որոնք նույնպես ականատես էին եղել այդ տեսարաններին⁴⁶:

Տարագրված հայերի այն խումբը, որն ուղևորվել էր Ջուլամերիկ, տեղ հասավ օգոստոսի 22-ին և մնաց հինգ ամիս: Այդ ընթացքում կառավարությունը տարագրվածներին ոչինչ չի տրամադրել՝ ո՛չ հաց, ո՛չ շաքար, ո՛չ թեյ և ո՛չ էլ հագուստ կամ տրեխ: Հայերը բոլոր ծախսերն իրենց գրպանից էին հոգում: Այդպես շարունակվեց մինչև դեկտեմբերի 25-ը: Այդ ամբողջ ընթացքում հայերը բանտարկյալի կարգավիճակում էին, և միակ բանը, որ լսում էին՝ իսլամացման առաջարկներն էին ու դրանց հետևող սպառնալիքները, ըստ որոնց՝ հակառակ դեպքում բոլորին սպանելու էին: Հայիոյում էին հայերին և նրանց կրոնը, սակայն բոլորն էլ ստիպված էին լուռ տանել այդ ամենը, քանի որ դա կյանքի և մահվան հարց էր⁴⁷:

1914 թ. դեկտեմբերի 18-ի կողմերը ռուսական բանակը նահանջեց Բաշկալեի շրջանից: Հասփստանի բնակիչները քրդերի և թուրքերի կատաղությանը զոհ չգնալու համար ռուսական բանակի հեռանալուց մեկ շաբաթ անց որոշեցին նույնպես հեռանալ

44 Նույն տեղում, 409:

45 Նույն տեղում, 409-410:

46 Նույն տեղում, 410:

47 Նույն տեղում, 410-411:

գյուղից, քանի որ արդեն տեղյակ էին, որ քրդերն օսմանյան զորքի հետ մեծ ջարդեր են կազմակերպել Բագում, Առակում և բուն Աղբակում: Սակայն հեռանալու նախընթաց գիշերը, երբ հայերը պատրաստվել էին ճանապարհ ընկնելու, զորքը և ամեն կողմից հավաքված քրդերը պաշարեցին գյուղը: Նրանք, ովքեր հնարավորություն ունեին փախչելու գաղտնի ճանապարհներով, փրկվեցին, իսկ մյուս մասը փորձեց ապաստանել հարևան քրդերի տներում, բայց բոլորին էլ կամ սրախողխող արեցին, կամ գնդակահարեցին: Սպանվածների հստակ թիվ հայտնի չէ, բայց 100 տուն ունեցող գյուղի տղամարդկանց գրեթե կեսը կոտորվեց: Սպանվածների մեջ էին գյուղի քահանա տեր Վարդանը, տիրացու Թորոսը, մեծահարուստներ Պողոսը, Տիգրանը, Խչոն և Գրիգորը⁴⁸:

Թուրքերն ու քրդերն իրենց հետ տարան մոտ քսան կանանց և գեղեցիկ աղջիկների: Բնակիչների ամբողջ ունեցվածքը թալանվեց: Գյուղում մնացած կանայք և երեխաները մերկ ու քաղցած ճանապարհ ընկան: Ճանապարհին շատերը սովից կամ ցրտից մահացան: Ողջ մնացածների մի մասը վերադարձել է Դիլմանի Մահլամ գյուղը, իսկ մյուսները՝ մոտ 30 տուն, բնակություն են հաստատել Կովկասի զանազան շրջաններում⁴⁹:

1914 թ. դեկտեմբերի վերջերին հասփստանցի Վահանը Պետրոսյանը իր մի հայ ընկերների հետ, թուրք և քուրդ սպաների ուղեկցությամբ տարվում են դեպի Սլահյան կոչվող քրդական գավառը, իսկ նրանց հայ ընկերներից վանքեցի Իգնատիոս Տեր-Հուսիկյանը, պոլսեցի Ավետիսը, բուլանըղջի Ասպատուրը, և սերաստացի Մարգարը, մեկ այլ խմբի հետ ուղարկվեցին Լևին գավառակ, որտեղ միայն ասորիներ ու քրդեր էին բնակվում: Տեղ հասնելուց անմիջապես հետո Իգնատիոսը սպանվում է իրենց ուղեկցող թուրքերի ձեռքով: Մյուս երեք ընկերները, որոնք հինգ տարի շարունակ հավատարմորեն ծառայել էին թուրքերին, ձերբակալվում են և Ջուլամերիկում եղած չորս այլ հայերի հետ թուրք ոստիկանների ուղեկցությամբ ձեռքները կապված ուղարկվում են Բաշկալե: Սակայն տեղ չհասած՝ երեքին էլ թալանում են ու սպանում, իսկ մյուսները հասնում են Վան և պատահականորեն փրկվում մահից: Այս ընթացքում շարունակվում էր սլահյանցիների շրջանում հարկից և զինվորագրումից փախածների որոնումն ու հավաքումը: Հաղորդվում է, որ ութ օրվա ընթացքում շուրջ հինգ տասնյակ տներ են հրդեհվել: Վահանը, Կարապետը և Միմոնը կարողացել են փախչել Ասորեստանի Տիար կոչվող գավառը, որը 15 000 տուն ասորական բնակչություն ուներ: Այստեղ նրանք ապաստանել են Մար Շիմոնի հավատարիմ մարդկանց տներում, իսկ 1915 թ. հունիսին, երբ վերադարձել են Բաշկալեի իրենց տները, դրանք «քրդերի ձեռքում աղբանոցներ դառել էին»⁵⁰:

Աղբակի գավառակի **Սորան** գյուղի կոտորածի մասին է վերապրած Մարիամ Դազարյանի վկայությունը, որը, փրկվելով կոտորածներից, բնակություն էր հաստատել Հաֆթվանում⁵¹: Սորանում տեղի ունեցածի մասին բավական մանրամասն տեղեկու-

48 Նույն տեղում, 412:

49 Նույն տեղում, 412:

50 Նույն տեղում, 411:

51 Նույն տեղում, 412-414:

թյուններ է հաղորդում նաև վերապրած Հռիփսիմե Դավթյանը, ով հետագայում բնակություն էր հաստատել Ախտախանայում⁵²:

Սորան գյուղը, որը Բաշկալե գյուղաքաղաքի հարավ-արևմուտքում էր, մի ժամանակ ամբողջովին հայերով էր բնակեցված՝ շուրջ 40 տուն, իսկ 1916 թ. դրությամբ այնտեղ մնացել էին ընդամենը 4-5 տուն հայեր⁵³:

Սորան գյուղում հիմնականում զբաղվում էին հողագործությամբ, բայց դեռ սուլթան Համիդ II-ի օրոք շեյխ Հասանի որդի Մահսարին և նրա եղբայրները զավթել էին գյուղացիների հողերը, որոնք ստիպված էին հողատերերի հողերը մշակել որպես ճորտեր⁵⁴:

1914 թ. օգոստոսին, երբ սկսվեց պատերազմը, Սորանում պատերազմական հարկ վերցրեցին՝ հագուստի և սննդի տեսքով: Սակայն Սորանի տղամարդկանց մեծ մասին չէին զինվորագրում, քանի որ նրանք քուրդ աղաներին էին ծառայում, որոնք նաև կառավարական պաշտոնյաներ էին: Զինվորագրումից խուսափելուն օգնում էր նաև քուրդ աղաներին կաշառելը⁵⁵:

Պատերազմի բռնկումից հետո գյուղի այն տղամարդկանց, որոնց զինվորագրել էին, ուղարկեցին պարսկական սահման: Չնայած հայերը չորս ամսվա ընթացքում կորցրին իրենց ամբողջ ունեցվածքը, բայց և այնպես նրանք չէին բողոքում, քանի դեռ չունեին անձնական կորուստներ: Գյուղացիներից նրանք, ովքեր գնացել էին ռազմաճակատ, կաշառել էին իրենց հրամանատարներին՝ մի քանի օրով տուն վերադառնալու համար: Սակայն նրանց տուն վերադառնալուց որոշ ժամանակ անց գյուղացիները տեղեկացան, որ ռուսական բանակն արդեն Բաշկալեում է⁵⁶: Հայերը երանության մեջ էին, քանի որ այլևս չէին լինելու իսլամացման փորձեր, չէին լսելու հայիոյանքներ իրենց կրոնի մասին, չէին թալանվելու, սակայն ամեն ինչ այդքան էլ երանելի չէր, քանի որ չորս օր էլ չէր անցել, երբ լուր հասավ ռուսների նահանջի մասին, բայց անգամ այդ դեպքում գյուղացիները չվախեցան՝ մտածելով, որ իրենց ոչինչ չեն անի, քանի որ քուրդ և թուրք աղաների գործերն անողներն իրենք էին, և իրենք էլ երբեք վատություն չէին արել նրանց⁵⁷: Սակայն ռուսների նահանջի երրորդ օրը գյուղի աղաները Բաշկալեից գիշերով գյուղ եկան և արևածագին հավաքեցին բոլոր տղամարդկանց⁵⁸՝ ասելով, որ կառավարությունը հրամայել է նրանց ուղարկել ճանապարհաշինական աշխատանքների: Գյուղի տղամարդիկ, ոչինչ չկասկածելով, հավաքվեցին, ինչպես սովորաբար անում էին իրենց աղաներից հրաման ստանալիս: Սակայն դեռ գյուղից դուրս չեկած՝ նրանց բոլորին սպանում են⁵⁹: Դրանից հե-

52 Նույն տեղում, 415-418:

53 Նույն տեղում, 412:

54 Նույն տեղում, 412-413:

55 Նույն տեղում, 413:

56 Նույն տեղում, 416:

57 Նույն տեղում:

58 Նույն տեղում:

59 Նույն տեղում:

տո քրդական խուժանը մտնում է հայերի տները և թալանում ու տանում այն ամենը, ինչ հնարավոր էր⁶⁰: Կանայք և երեխաները անպաշտպան մնացին քրդերի ձեռքում, որոնցից մեկը՝ հաջի Սաֆո անունով 80-ամյա մի ծերունի, իսլամացրեց գյուղի հայտնիներից մեկին և ամուսնացավ նրա հետ⁶¹: Գյուղում սպանվեցին ութ տղամարդ և չորս կին, որոնց բոլորի դիակներն էլ մնացին առանց թաղելու: Սպանելով ամուսիններին՝ նրանց կանանց և երեխաներին հավաքեցին մի տան մեջ՝ թողնելով մերկ ու սոված: Տեղացի քրդերը կանանցից ոմանց, ուլքեր ի վիճակի էին, տանում էին լեռներ և աշխատեցնում: Այսպես նրանք կիսամեռ գոյատևեցին մինչև գարուն՝ սնվելով գրեթե միայն կանաչեղենով⁶²:

Երբ գյուղացիները մեծ զրկանքներով հաղթահարեցին ձմեռային ծանր օրերը, եկավ գարունը՝ իր հետ բերելով ավելի մեծ փորձություն: Ջնդեթ բեյի զորաբանակը, որը չորս ամիս մնացել էր Սալմաստում, նահանջեց և ուղղվեց դեպի Բաշկալե, և այդ ժամանակ քրդերի թշնամանքը հայերի նկատմամբ ավելի սաստկացավ. «Ջնդեթ բեյը հրաման տուեց իր զօրքերին անխնայ բռնաբարել և թալանել, կոտորել հայերին, նոյնիսկ 10 տարեկան աղջիկներին ձեռք ձգել»⁶³: Այսպիսի մի հարմար հրամանի սպասող քրդերն ու շեյխերը նույնպես երբևէ չտեսնված և չսլված ոճրագործություններ կատարեցին⁶⁴: Բայց և այնպես դա երկար չտևեց: Մի օր կառավարությունը փախավ, զորքն ու ժողովուրդն էլ՝ նրա հետ: Հայերին հարևան քրդերն իրենց հետ տարան որպես գերի, քանի որ դա Ջնդեթ բեյի հրամանն էր, բայց ոմանց, ուլքեր փոքր երեխաներ ունեին, թողեցին՝ փոխարենը տանելով նրանց մեծ երեխաներին: Սորանից գերի են ընկել 13 տղա և 4 կին, իսկ մյուսները գիշերով փախել էին լեռներ ու թաքնվել⁶⁵:

Ուսումնասիրելով Աղբակի գավառակի հայ բնակչությանը վիճակված արհավիրքը՝ ակնհայտ է դառնում, որ առանց իշխանությունների թողստվության ու լուռ համաձայնության, մահմեդական բնակչությունը կամ գավառական իշխանությունը չէր համարձակվի դիմել նման կոտորածի և թալանի, հիմնավորվում է, որ հենց բարձրագույն իշխանությունների հրամանով էր այդ ամենը տեղի ունենում:

1914-1915 թթ. Աղբակի գավառակում տեղի ունեցած հայերի զանգվածային կոտորածների ուսումնասիրությունը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրակացությունները.

- Աղբակի գավառակի հայության բնաջնջումն իրականացվեց նույն եղանակով ու մեթոդներով, ինչ մյուս տարածաշրջաններում: Դա փաստում է ցեղասպանության նախապես ծրագրված լինելը և դրա համակարգված իրականացումը:

60 Նույն տեղում:

61 Նույն տեղում, 413, 417:

62 Նույն տեղում, 416-417:

63 Նույն տեղում, 414:

64 Նույն տեղում:

65 Նույն տեղում:

- Ողջ գավառակում հայ բնակչության տեղահանությանը և բնաջնջմանը, որպես կանոն, նախորդում էր թալանը՝ պատերազմական կարիքների բավարարման պատրվակով կատարվող կամայական բռնագանձումներով:
- Հայերի դեմ ուղղված ցեղասպանական գործողությունների մեկնարկին նախորդում էին հակահայկական սադրանքները մուսուլման բնակչության շրջանում, որոնց նպատակն էր գրգռել վերջիններիս հայերի դեմ և ապահովել նրանց աջակցությունը:
- Գավառակում կոտորածները տեղի են ունեցել երկու փուլով՝ առաջին անգամ, երբ ռուսական բանակը 1914 թ. աշնանը մտավ Բաշկալե և այնուհետև նահանջեց, ապա՝ 1915 թ. մայիսին, երբ ռուսական զորքերը և հայկական կամավորական ջոկատները գրավեցին Վանը և կրկին մտան Բաշկալե:
- Հայերի դեմ ցեղասպանական գործողություններում լայնորեն ներգրավված էին նաև քրդերը և տեղական մուսուլմանական խառնամբոխը:
- Աղբակի գավառակի հայ բնակչությունից միայն քչերը փրկվեցին, որոնք հետո բնակություն հաստատեցին Կովկասի տարբեր վայրերում:

THE GENOCIDAL ACTIONS AGAINST ARMENIANS IN THE AGHBAK SUB-DISTRICT IN 1914-1915

Satenik A. Matosyan

Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

In the Aghbak sub-district, there were 36 Armenian villages, six of which are used as examples to present the brutal massacres, violence, and subsequent forced deportations of Armenians in 1914–1915, based on predominantly archival sources. These examples not only highlight the systematic nature of the atrocities but also reveal the active involvement of both local Kurdish tribes and Ottoman authorities in implementing these acts. The Aghbak sub-district, strategically located near trade routes and the Persian border, was targeted due to its economic significance and geographic vulnerability during the war. This was one of the first attempts at genocidal actions carried out by the Ottoman Empire during World War I.

Key words: Armenian Genocide, Van Province, Aghbak (Bashkale) district, memoirs and testimonies, massacres, deportations.

ГЕНОЦИДАЛЬНЫЕ ДЕЙСТВИЯ В ОТНОШЕНИИ АРМЯН В АХБАКЕ В 1914-1915 ГГ.

Сатеник А. Матосян

Фонд “Музей-институт Геноцида армян,” Армения

В районе Ахбак было 36 армянских деревень, на примере шести из которых представлены жестокие массовые убийства, насилие и последовавшие за ними насильственные

депортации армян в 1914–1915 гг., основанные на различных, преимущественно архивных, источниках. Эти примеры не только подчеркивают систематический характер преступлений, но и раскрывают активное участие как местных курдских племен, так и османских властей в их осуществлении. Ахбак, находившийся вблизи торговых путей и персидской границы, стал мишенью из-за своей экономической значимости и географической уязвимости во время войны. Это была одна из первых попыток геноцидальных действий, осуществленных Османской империей во время Первой мировой войны.

Ключевые слова: Геноцид армян, Ванская провинция, район Ахбака (Башкале), воспоминания и свидетельства, резня, депортации.

REFERENCES

- A-Do. *Մեծ դեպրեզիոն Վասպուրականում 1914-1915 թուականներին* [The Great Events of Vaspurakan]. Yerevan: Hayastan, 1917;
- Aram [Manukian]. «Իշխան (Նիկոլ Պողոսյան)» [Ishkhan (Nikol Poghosian)] *Horizon* (Tiflis), April 7, 1916;
- Arzumanyan, Makich. *Հայաստան. 1914-1917* [Armenia 1914-1917]. Yerevan: Hayastan, 1969;
- Dadrian, Vahagn. *Հայկական ցեղասպանությունը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներով* [The Armenian Genocide Through Parliamentary and Historical Debates]. Massachusetts USA: Payqar, 1995;
- Hakobyan, Rev. Fr. Bardughimeos. *Վասպուրականի առաքելահիմն վանքերն ու եկեղեցիները* [The Apostolic Monasteries and Churches of Vaspurakan]. *Ejmiadzin* 6 (2012), 111-124;
- Hakobyan, T., Melik-Bakhshyan St., Barseghyan, H.. *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան* [Dictionary of Toponymy of Armenia and Adjacent Territories]. Vol. 1-5. Yerevan: Yerevan University publishing, 1986-2001;
- Harutyunyan, Avetis. *Հայկական կոտորածները Վան-Վասպուրականի գավառներում (1914-1915 թթ.)* [Armenian Massacres in Van-Vaspurakan Districts (1914-1915)]. *Ejmiadzin* 4 (2013), 33-45;
- Kaiser, Hilmar. “Requiem for a Thug: Aintabli Abdulkadir and the Special Organization,” in *The End of the Ottomans*, Bloomsbury Publishing Plc, ebook, (2019), 67-93;
- Kaiser, Hilmar. “Tahsin Uzer: The CUP’s Man in the East,” in *The End of the Ottomans*, Bloomsbury Publishing Plc, ebook, (2019), 93-119;
- Kirakosyan, John. *Երիտթուրքերը պատմության դաշտային առաջ* [The Young Turks Before the Tribunal of History]. Yerevan: Hayastan, 1982;
- Tatoyan, Robert. «Վիճակագրական տվյալները Վանի նահանգի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ 1878-1914 (աղբյուրների համադրության և վերլուծության փորձ)» [Statistics of the Armenian Population of Van Vilayet 1878-1914 (Attempt

of Comparison and Analysis of Sources)]. *Hayots' ts'eghaspanut'yan patmut'yan ev patmagrut'yan hart's'er* 7 (2003), 65-79;

Անդրանիկ Օզանյան Փաստաթղթեր և նյութեր [Andranik Ozanian: Documents and Materials]. *Bulletin of Armenian Archives*, 1-2, 1991;

Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու [The Armenian Genocide in the Ottoman Turkey. Survivors' Testimonies. The Collection of Documents]. Vol. I. Yerevan: National Archive of Armenia, 2012.

Հեղինակի մասին

About the author

Об авторе

Սաթենիկ Ա. Մաթոսյան, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Վահագն Դադրյանի անվան համեմատական ցեղասպանագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայկական հարց, Հայոց ցեղասպանության պատմություն, հայերի ճակատագիրը Վանի նահանգում ցեղասպանության տարիներին:

Էլ. փոստի հասցե՝ satenik.matosyan@genocide-museum.am

Satenik A. Matosyan, Junior researcher at the Comparative Genocide Studies Department named after Vahagn Dadrian, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields – Armenian Question, history of the Armenian Genocide and the Fate of Armenians in Van Province during the genocide.

E-mail: satenik.matosyan@genocide-museum.am

Сатеник А. Матосян, младший научный сотрудник Отдела сравнительного геноцидоведения им. Ваагна Дадряна Фонда “Музей-институт Геноцида армян.”

Область исследований – Армянский вопрос, история Геноцида армян и судьба армян Ванской провинции в годы геноцида.

Эл. почта: satenik.matosyan@genocide-museum.am

**ՄԵԾ ԵՂԵՆԻ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԻ
ՄԵՂՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐՏԱՑՈՂՈՒՄԸ ՍՏԱԼԻՆՅԱՆ
ԲՈՒՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ
(ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆ)**

Հարություն Տ. Մարության

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ,

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Հայաստան

Հայրենական մեծ պատերազմի և դրան հաջորդող տարիներին Խորհրդային Հայաստանում լույս են տեսնում պատմավեպեր, ինքնակենսագրական վեպեր, վիպակներ, չափածո գործեր, որոնցում նկարագրվում էր հայոց ինչպես հեռավոր, բայց հերոսական անցյալը, այնպես և ոչ հեռավոր անցյալը՝ Հայոց մեծ եղեռնը՝ իր բազմաթիվ դրվագներով, միայն թե այս դեպքում՝ իրատեսական մտայն գույներով: Վերջին իրողությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ ստեղծագործություններում ոչ միայն պատկերվում են թուրքերի ու քրդերի վայրագությունները, այլև հիմնավորվում է գերմանացիների մասնակցությունը հայերի ցեղասպանությանը, ինչպես նաև որոշ դեպքերում խոսվում է եվրոպական բուրժուական դիվանագիտության մասին, որն ամեն կերպ խոչընդոտում էր հայկական խնդիրների լուծումը: Որոշ ստեղծագործություններում կա նաև խորհրդային կարգերի գովերգը, որպես կանոն հիշվում է նաև ձեռքբերումների հետևում կանգնած երկրի ղեկավարը:

Բանալի բառեր՝ «Պրավդա» օրաթերթ, Գեղամ Սարյան, Գառնիկ Ստեփանյան, Հրաչյա Քոչար, Քրիստափոր Թափալցյան, Օսիկ Փանիկյան, Պարույր Սևակ:

Հոդվածը ներկայացվել է՝ 03.09.2024: Ընդունվել է տպագրության՝ 10.12.2024:

The article was submitted on 03.09.2024 and accepted for publication on 10.12.2024.

Статья поступила 03.09.2024 и была принята к публикации 10.12.2024.

Ինչպես հղել՝ Հարություն Տ. Մարության, «Մեծ եղեռնի հիշողության և գերմանացիների մեղսակցության թեմայի արտացոլումը ստալինյան բռնատիրության տարիներին (Հայրենական մեծ պատերազմի և հետպատերազմյան շրջան)», *Յեղասպանագիտական հանդես* 12, no. 2 (2024), 57-81:

How to cite: Harutyun T. Marutyun, “Manifestations of the Theme of the Memory of the Medz Yeghern and Germans’ Complicity During the Years of Stalin’s Regime (the Great Patriotic War and Post-war Period),” *T’seghaspanagitakan handes* 12, no. 2 (2024), 57-81.

Как сослаться: Арутюн Т. Марутян, “Проявления темы памяти Мец Егерна и немецком соучастии в годы сталинского режима (Великая Отечественная война и послевоенные годы),” *Цехаспанагитакан андес* 12, no. 2 (2024), 57-81.

Մեծ եղեռնի հիշողության հարցը ստալինյան ժամանակաշրջանում. մինչպատերազմյան տարիներ

2006 թ. սեպտեմբերին լույս տեսավ հայտնի գրականագետ Երվանդ Տեր-Իսաչատրյանի «Հրաշալի տասնամյակ (1955-1965)» խիստ շահեկան հոդվածը¹, որում հեղինակը կարևոր իրողություն է արձանագրում.

1965 թվականի ապրիլի 24-ի շաբաթ օրը Երևան քաղաքում տեղի ունեցած խռովահույզ իրադարձությունները նոր ժամանակներում հայ ժողովրդի հավաքական ազգային գիտակցության առկայության վկայությունն էին և այդ գիտակցության դրսևորման ամենաբարձր արտահայտությունը: Եվ իբրև այդպիսին՝ ցնցեցին ամբողջ հայությանը: Բարեբախտաբար օրվա անցուդարձի, օրվա իրադարձությունների նկարագրությունները պահպանվել են առանձին մարդկանց նոթերում և հուշագրություններում: Դրանց մեջ հաճախ այն միտքն է արտահայտվում, թե մեծաթիվ ժողովրդի փողոց դուրս գալը, հախտոն ցույցերը, օպերային թատրոնը շրջապատելը և պաշարելը, ուր կառավարությունը հանդիսավոր ժողով ու արարողություն էր անցկացնում, բարձր իշխանություններին և կառավարությանը քաղաքական պահանջներ առաջադրելը և այլն, եղել են անակնկալ, անսպասելի, իրոք հախտոն տարերքի պես և այլն²:

Ծավալուն և մասնագիտական դիտարկումներով հագեցած իր աշխատանքում հեղինակը խորքային վերլուծություններով ցույց է տալիս, թե ինչպիսի զարգացումներ են նախորդել 1965 թ. ապրիլի 24-ին Խորհրդային Հայաստանի գրականության և արվեստի գործերում: Ընդ որում, որպես թիրախ ընտրված տասնամյակի դիտարկումը նա սկսում է ավելի վաղ ժամանակներից: Հեղինակն իրավամբ նկատում է, որ «Պատմահայրենասիրական ու առհասարակ ազգային թեմաները, որ երեսունական թվականների կեսերից, ավելի ստույգ՝ Եղիշե Չարենցի «Գիրք ճանապարհի»-ից (1934) հետո խստագույնս արգելված էին, թույլատրելի դարձան Համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին և պատերազմի հետևանքով: Անհրաժեշտ էր բարձրացնել կովող զինվորի ոգին, զորացնել նրա հայրենասիրական կորովը, ավելի առարկայական դարձնել Հայրենիքի զգացումը»³: Ապա հեղինակը հանգամանորեն անդրադառնում է ստալինյան ժամանակաշրջանի մի շաբթ ստեղծագործությունների, որոնցում զգալի տեղ էր հատկացվում Մեծ եղեռնի տարիների դաժան իրողությունների նկարագրությանը: Ինչն էր պատճառը, որ ամեն տեղ նացիոնալիզմի դրսևորումներ փնտրող ստալինյան բռնապետության գրաքննիչները թույլ էին տալիս բացել բաց գրել թուրքական վայրագությունների մասին: Այս հարցի պատասխանն է առաջարկվում մեր հոդվածում:

1 Տե՛ս Յուրի Իսաչատրյան, «Հրաշալի տասնամյակ (1955-1965)», *Ազգ. օրաթերթ*, 2 սեպտեմբերի 2006, Երվանդ Տեր-Իսաչատրյան, «Հրաշալի տասնամյակ (1955-1965)», *Պարզ խոսքեր: Հոդվածներ, էսսեներ* (Երևան, «Չանգակ-97», 2018), 96-118:

2 Տեր-Իսաչատրյան, «Հրաշալի տասնամյակ (1955-1965)», 96:

3 Նույն տեղում, 97:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո Հայոց մեծ եղեռնի մասին խոսակցություններն աստիճանաբար դադարեցին: Հայոց ցեղասպանության 20-րդ, 30-րդ և 40-րդ տարելիցները բացարձակապես լռության ու մոռացության էին մատնված: Նշանավոր արձակագիր, հրապարակախոս և հասարակական գործիչ Վարդգես Պետրոսյանի դիպուկ բնորոշմամբ՝ «Քառասունհինգ տարի, 1920-ից մինչև 1965 թվականը, ամեն ապրիլի 24-ը մենք նույնիսկ զրկված էինք... տխրելու իրավունքից»⁴: Խորհրդային իշխանության առաջին տասնամյակներին առհասարակ բուն ազգային ամեն ինչ հետզհետե մերժելի ու բացասական երանգներ էր ստանում: Սակայն հեղափոխական շինարարության աղմուկի, ոգևորության ու պայթույթի մթնոլորտում աստիճանաբար սկսեցին հնչել «մոռացված» անցյալի ձայները: Ազգային ողբերգության պատկերման առաջին փուլը Խորհրդային Հայաստանի գրականության մեջ սկսվեց մանկության հուշերի գեղարվեստական արտացոլման ճանապարհով. եղեռնը վերապրած, հայրենիքը կորցրած գրողները՝ Վահան Թոթովենցը, Զապել Եսայանը և Գուրգեն Մահարին, հիշում էին իրենց մանկությունը, հայրենի վայրերը՝ առանց հատկապես բուն եղեռնը պատկերելու ցանկության. 1920-30-ական թվականներն ազգային ողբերգության և պատմության գեղարվեստական արտացոլման համար կարելի է համարել հիշողությունների փուլ: Ընդհանրապես ինքնակենսագրական վեպերի ծնունդն ուներ հիմնավոր պատճառներ: Գրողներն անձնական կյանքի օրինակով պատկերում են մի ողջ սերնդի ճակատագիրը: Հեղինակները խոսում են ապրած կյանքի ու տառապանքի լեզվով՝ հյուսելով իրենց սերնդի, ծննդավայրի պատմությունը, որն անջնջելի կնիք էր դրել իրենց հիշողության մեջ: Վեպերից յուրաքանչյուրը կերտում է մի ուրույն ու ինքնատիպ աշխարհի, հեղինակի ապրած ու տեսած Հայաստանի, նրա սերնդի դառն ու ցավոտ ճակատագրի ընդհանուր պատկերը: Այս ամենի շտրկիվ էլ անհատի կյանքի պատմությունը ձեռք է բերում նաև հասարակական հետաքրքրություն:

Անցյալի անմիջական վերապրումների հենքի վրա գրականության ստեղծումը, սակայն, վերջիվերջո իր տեղը պետք է գիջեր այլ մոտեցումների, ինչն էլ դրսևորվեց մասնավորապես Ալսեդ Բակունցի և Եղիշե Զարենցի մի շարք ստեղծագործություններում: Քանի որ բացահայտ և ազատ եղեռնի մասին գրել արդեն հնարավոր չէր, գտնվում էին այլ լուծումներ: Այսպես, ասպարեզ էին գալիս հերոսներ, որոնք, ուղղակիորեն չվերհիշելով ցեղասպանության սարսափները, իրենց իսկ գոյությամբ հիշեցնում էին այդ մասին⁵: Կամ հայրենասիրական հզոր ներուժ և սերունդներին ուղղված պատգամ պարունակող գաղափարները շարադրվում էին գաղտնագրերի տեսքով, որոնցից էր Զարենցի՝ 1933 թ. ծնված և մինչ օրս կենսունակ մեզոստիքոսը՝ «Ո՛վ հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»⁶, որը ստեղծվելուց

4 Վարդգես Պետրոսյան, ««Հոգեբանական փշալարի» տարբեր կողմերում», *Մեր ժողովուրդը իմն է՝ ինչպես... իմ վիշտը: Հրապարակախոսական հոդվածների ժողովածու*, խմբ.՝ Լևոն Անանյան (Երևան, «Հայաստան», 2003), 132:

5 Հարցի շուրջ մանրամասն տե՛ս Ազատ Եղիազարյան, «Եղեռնի արտացոլումը խորհրդահայ գրականության մեջ», *Լրաբեր հասարակական գիտությունների* 4 (1990), 36-41:

6 Տե՛ս Յեղիշե Զարենց, *Գիրք ճանապարհի. պոեմներ և բանաստեղծություններ* (Յերեվան, Պետա-

չորս տարի անց բացահայտվելուց հետո որակվեց որպես նացիոնալիստական:

Մեծ եղեռնի հիշողության դրսևորումները ստալինյան ժամանակաշրջանում. պատերազմական տարիներ

Հայրենական մեծ պատերազմի տարիներին և դրա ավարտից անմիջապես հետո Հայաստանում լույս տեսան մի շարք գրքեր, որոնք, թվում է, ինչ-ինչ ճեղքվածքներ բացեցին այն պատի մեջ, որը ստալինյան վարչակազմը դրել էր ժողովրդի պատմական հիշողության առջև: Արդյոք ամեն ինչ այդպես էր, թե՛ կար գաղափարախոսական որոշակի պատճառաբանվածություն: Մասնավորապես Դերենիկ Դեմիրճյանը (1877-1956) և Ստեփան Զորյանը (1890-1967) 4-5-րդ դարերի իրադարձություններին նվիրված պատմավեպերում անդրադառնում են կորսված երկրի ու կորսված պետության ճակատագրին, անուղղակիորեն հիշեցնում, որ հայոց պատմության բոլոր էջերն արյունոտ են: Նրանք համարվում են խորհրդահայ գրականության մեջ պատմավեպի ժանրի սկզբնավորողները: Հայրենական մեծ պատերազմի տարիներին ստեղծված իրենց երկերում այս գրողները ձգտում էին գտնելու հայրենի ժողովրդի գոյատևման գաղտնիքը, ջանում էին ազգային պատմության լավագույն ավանդների օրինակով ոգեշնչել գերմանական ֆաշիզմի դեմ մարտնչող հայ ժողովրդին: Այսպես, Դերենիկ Դեմիրճյանը գրեց «Վարդանանք» վեպը, քանի որ, ըստ նրա, Հայրենական մեծ պատերազմի տարիներին Հայաստանում տիրող իրավիճակը կարծես թե նույնն էր, ինչ 451 թվականին: Այս վեպով (առաջին գիրքը լույս է տեսել 1943 թ., երկրորդը՝ 1946 թ.) հեղինակը փորձում էր հայ ժողովրդի մեջ վերարթնացնել հայրենասիրական ոգին: Ստեփան Զորյանը 1944 թ. տպագրեց «Պապ թագավոր» վեպը (որը գրելու աշխատանքները սկսել էր դեռևս 1938 թ.)՝ գեղարվեստականորեն վերակենդանացնելով 4-րդ դարի երկրորդ կեսի հայ իրականությունը:

Ինչպես հաճախ էր լինում ստալինիզմի տարիներին, Մեծ եղեռնի թեմայի շոշափման գաղափարախոսական թույլտվության առաջին դրսևորումներից մեկը եղավ ՀամԿ(բ) ԿԿ-ի օրգան «Պրավդա» օրաթերթում: 1941 թ. օգոստոսին «Պրավդա»-ն իր առաջնորդողում գրում էր⁷.

կան հրատ., МСМXXXIII), 269-270, Եղիշե Չարենց, *Երկերի ժողովածու*, հ. 4 (Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1968), 427-428:

7 “Армянский народ твердо занимает свое боевое место в общей борьбе всех народов Советского Союза за свою независимость и свободу. ... Армянский народ, как и все другие свободные и равноправные народы Советского Союза, воспринял нависшую над нашей страной смертельную опасность тем более глубоко, что он в своей многовековой истории не раз подвергался нападениям чужеземных насильников. Он знает, что такое резня, погромы, голод, насилия. Армянский народ не забыл физическое истребление армян, организованное предшественником кровавого Гитлера – кайзером Вильгельмом в годы первой империалистической войны” (“Армянский народ – боевой участник освободительной войны Советского Союза,” *Правда* (Москва), 25 августа 1941; *Коммунист* (Ереван), 27 августа 1941, N 202 (2153)). Հմմտ. *Советская Армения в годы Великой Отечественной войны (1941-1945). Сборник документов и материалов*. Составители: В. А. Мурадян и др., главный ред. А. О. Арутюнян (Ереван: Комитет ветеранов войны и вооруженных сил Армении, 2009), 73:

Հայ ժողովուրդը հաստատապես իր մարտական տեղն է գրավել իրենց անկախության և ազատության համար Սովետական Միության բոլոր ժողովուրդների մղած ընդհանուր պայքարում: ... Հայ ժողովուրդը, ինչպես և Սովետական Միության մյուս բոլոր ազատ և իրավահավասար ժողովուրդները, առավել խորապես զգացին մեր երկրի վրա կախված մահացու վտանգն այն պատճառով, որ նա իր բազմադարյան պատմության մեջ քանիցս ենթարկվել է օտար բռնակալների հարձակումներին: Նա գիտե, թե ինչ բան են կոտորածը, ավերը, սովը, բռնությունները: Հայ ժողովուրդը չի մոռացել հայերի ֆիզիկական ոչնչացումը, որ կազմակերպել էր արյունառուշտ Հիտլերի նախորդ Վ. Իլիեմ կայսրը՝ առաջին իմպերիալիստական պատերազմի տարիներին⁸:

Ուշագրավ է, որ չեն նշվում Վ. Իլիեմ կայսեր կազմակերպած⁹ «հայերի ֆիզիկական ոչնչացումը», «կոտորածը, ավերը, սովը, բռնությունները» իրականացնողները, չի նշվում դրանք իրականացրած պետությունը: Եվ դա պատահական չէ, ավելին՝ օրինակալի է, քանի որ նույն ձեռագիրը պահպանվում է նաև հետագայում:

Մեկ տարի անց՝ 1942 թ. աշնանը, հայ ժողովրդի անունից գրվում է նամակ՝ ուղղված Կարմիր բանակի շարքերում կովոդ հայազգի մարտիկներին, որը հրատարակվում է առանձին բրոշյուրով և ուղարկվում ռազմաճակատ: Նամակը ստորագրել էր ավելի քան 335 հազ. մարդ, այդ թվում նաև՝ հայտնի գիտնականներ, նկարիչներ, գրողներ, բանվորներ, կոլտնտեսականներ, ուսուցիչներ, կուսակցական և խորհրդային աշխատողներ: Նամակը տպագրվում է ԽՍՀՄ կենտրոնական մամուլի («Պրավդա», «Իզվեստիա», «Կոմսոմոլսկայա պրավդա», «Կրասնայա զվեզդա»), հանրապետական և ռազմաճակատային մամուլի էջերում, թարգմանվում ԽՍՀՄ ժողովուրդների լեզուներով և միլիոնավոր օրինակներով տարածվում զինվորների ու հրամանատարների շրջանում¹⁰:

Ինչպես «Պրավդա»-ի վերոհիշյալ առաջնորդողում, այս նամակում նույնպես անդրադարձ է կատարվում գերմանացիների դեմին Հայոց մեծ եղեռնի տարիներին: Սակայն եթե նախորդ գրության մեջ գերմանացիները նշվում էին լոկ որպես կազմակերպիչներ, և չէր նշվում, թե ովքեր էին իրականացնում հայերի բնաջնջումը, այս նամակում որպես այդպիսին նշվում են հենց գերմանացիները: Ընդ որում, դա արվում է քարոզչական հնարքով, երբ կեղծվում, կոպտորեն խեղաթյուրվում է սկզբնաղբյուրային տեղեկատվությունը: Նամակում մասնավորապես գրված է.

8 «Հայ ժողովուրդը Սովետական Միության ազատագրական պատերազմի մարտական մասնակիցն է», *Սովետական Հայաստան* (Երևան), 27 օգոստոսի 1941, թիվ 203 (6312):

9 Հայոց ցեղասպանությանը Գերմանիայի մասնակցության ձևերի ու չափի շուրջ քիչ չի գրվել, սակայն մենք կարևորում ենք խնդրի առնչությամբ Գերմանիայի Դաշնության բունդեսթագի՝ 2016 թ. հունիսի 2-ին ընդունված բանաձևը (տե՛ս <http://www.genocide-museum.am/arm/Germany.php>, դիտվել է՝ 30.08.2024):

10 Տե՛ս Կ. Ա. Арутюнян, «Участие армянского народа в Великой Отечественной войне (1941-45 гг.)», *Պարմա-բանասիրական հանդես* 2 (2015), 133-134:

Մեր ժողովրդի ազատության վրա նորից իրենց արյունաթաթալս ձեռքն են բարձրացրել հին և նիսերիմ թշնամիները: Մենք երբեք չպետք է մոռանանք, որ արևախում իմպերիալիստները վաղուց են ուզում ֆիզիկապես բնաջնջել միլիոնավոր հայերի:

Մեր քաջարի եղբայրներ: Մենք մի անգամ էլ հիշեցնում ենք ձեզ, թե ովքեր են մեր երկրի վրա հարձակված գերմանական զազանները: *Այդ նրանք էին, որ 1914-1918 թվականներին մեկ միլիոնից ավելի հայերի արտաքսեցին իրենց տանից ու օջախից, կոտորելով անապարներում:*

Այդ նրանց ուղղակի ցուցումով էր, որ *հայ տղամարդկանց իրար հետ կապում ու խումբ-խումբ գնդակահարում էին, կանանց ու երեխաներին տները լցնելով հրդեհում:*

Արյունդ սառչում է, երբ հիշում ես այն *գազանությունները, որ կատարում էին գերմանացիները Հայաստանում:*

«Դահիճներն իրենց զոհերին՝ հայերին ենթարկում էին ամենասարսափելի խոշտանգումների: Նրանց ուրբերը, ձեռքերը, կրծքերը մեխում էին փայտերին, պոկում էին իրենց զոհերի ձեռքերի ու ուրբերի եղունգները, փեկում էին ծերունիների միրուքներն ու հոնքերը, նրանց ուրբերին պայտեր էին խփում, գլխիվայր կախում էին, և, որպեսզի դրսում գտնվողները չլսեն խեղճ զոհերի հոգեվարքի ճիշերը, հայտուկ մարդկանց թմբուկներ էին զարնել տալիս»: – Այսպես է գրում գերմանացիների կողմից խոշտանգված մեր հայ եղբայրների ու քույրերի մասին այն ժամանակվա ամերիկյան դեսպան Մորգենթաուն¹¹:

Դեռևս հնչում է մեր ականջին հայ ժողովրդի խոշտանգված զավակների, մեր հայրերի ու մայրերի, մեր քույրերի ու եղբայրների, մեր անմեղ մանուկների աղիողորմ կանչը, երբ ահա կրկին լկտի բարբարոսությամբ իրենց արյունոտ ճիրաններն են մեկնում դեպի մեր երկիրը հիտլերյան բարբարոսները:

Անմեղ զոհերի արյունով ծծված մեր հողը վրեժի է կոչում ձեզ: Վրեժ, վրեժ: Վրեժ՝ թափված յուրաքանչյուր կաթիլ արյան համար:

Վրեժ և՛ անցյալի, և՛ միլիոնավոր սովետական մարդկանց, մեր եղբայրների ու քույրերի, մեր հայրերի ու մայրերի թափած ամեն մի կաթիլ արյան համար¹²:

11 Ընդգծումներն իմն են – Հ. Մ.:

12 «Նամակ հայ մարտիկներին հայ ժողովրդից», *Սովետական Հայաստան*, 2 մարտի 1943, թիվ 50 (6778): Տե՛ս նաև «Հայ ժողովրդի նամակը հայ մարտիկներին», *Բանվորագյուղացիական կարմիր բանակի մարտիկ*, 3 մարտի 1943, թիվ 17: Ռուսերեն բնագիր տեքստը՝ «Письмо бойцам-армянам от армянского народа», *Правда*, 27 февраля 1943, նաև *Коммунист* (Ереван), 2 марта 1943, N 50: Բնագիրը հետևյալն է. «На свободу нашего народа вновь подняли свою кровавую лапу старые и заклятые враги. Мы никогда не должны забывать, что кровавые империалисты давно хотят физически уничтожить миллионы армян.

НАШИ ХРАБРЫЕ БРАТЯ!

Мы еще раз напоминаем вам, кто такие ополчившиеся против нашей страны немецкие звери. Это они в 1914-1918 г.г. изгнали из родных очагов и домов, предали смерти в пустынях свыше одного миллиона армян. По их прямому указанию группами расстреливали армян-мужчин, связывая их вместе, поджигали дома, загнав туда женщин и детей.

Մեջբերման մեջ թերևս որպես առանցքային փաստարկ պետք է դիտարկել 1913-1916 թթ. Օսմանյան կայսրությունում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուին վերագրվող տեքստը¹³: Այսինքն՝ վկայությունը պատկանում է ոչ թե հայ «շահագրգիռ» ակադեմիկոսի, այլ չեզոք, իր աշխատանքային գործունեության բնույթով պայմանավորված՝ միայն ու միայն ճշմարտությունը, իրականությունը ներկայացնող անձնավորության գրչին: Այստեղ, սակայն, ականատեսն ենք սուտը որպես ճշմարտություն ներկայացնելու բացահայտ կեղծիքի, մի երևույթ, որն այնքան բնորոշ էր ստալինյան ժամանակաշրջանին. բանն այն է, որ Մորգենթաուի խոսքերը վերաբերում են *թուրքերին*, ինչի մասին նա ուղղակիորեն մատնանշում է իր գրքի 24-րդ գլխում՝ վերնագրված «Ազգի մը սպանումը» («The Murder of a Nation»)¹⁴: Գլխի առաջին մի քանի էջերում Հենրի Մորգենթաուին նկարագրում է, թե ինչպես էին հայ զինվորներին զինաթափում, «գործադրներ»՝ բռնակիրներ դարձնում: Հեղինակը շարունակում է.

Կարգ մը պարագաներու հայ զինուորները մեռցնել կուտային ատի կտրուկ եղանակով մը: Յիրաի, այսօր գրեթէ ընթացիկ սովորութիւն մը դարձաւ, զանոնք պաղարիւնով սպաննելը, միակ մէթոտ մը կիրարկելով: 50էն 100

Леденеет кровь, когда вспоминаешь зверства, чинившиеся немцами в Армении.

«Палачи подвергли свои жертвы-армян, самым ужасающим пыткам. Их руки, ноги, грудь пригвоздили к доскам, вырывали ногти на руках и ногах, вырывали бороды и брови у стариков, надевали им на ноги колодки, вешали вниз головой, чтобы находившиеся снаружи не слышали предсмертных воплей несчастных жертв, специально выделенные люди били в барабаны». Так пишет о наших братьях и сестрах армянах, замученных немцами, бывший американский посол Моргентаяу.

Еще звучит в ушах душераздирающий вопль наших замученных детей, отцов и матерей, братьев и сестер, а уже снова нагло протягивают к нашей стране свои звериные когти кровожадные гитлеровские варвары.

Наша земля, пропитанная кровью невинных жертв, призывает нас к мщению! Мсть, мсть! Мсть и за прошлое, и за каждую каплю крови, пролитой миллионами советских людей, нашими братьями и сестрами, нашими отцами и матерями»:

Ուշագրավ է, որ եթե նամակում գրված է «кровавые империалисты», ասիս «*Советская Армения в годы Великой Отечественной войны*» ժողովածուում այդ մասը կամայականորեն «հստակեցված է» և ձևակերպված է «кровавые немецкие империалисты» (էջ 216): Կլիմենտ Հարությունյանի 7-րդ ծանոթագրությունում հղվող հոդվածում (էջ 134) նույնպես հստակեցում կա. խոսելով նամակի մասին՝ հողվածագիրը նկատում է, որ «Оно также напоминало воинам-армянам горькое прошлое армянского народа, черные дни погромов армян – коренных мирных жителей Западной Армении, турецкими варварами в 1915 году, вдохновителем и соучастником которых была Германия», այն դեպքում, երբ նամակում որևէ խոսք չկա հողվածագրի հիշատակած «թուրք բարբարոսների» և Արևմտյան Հայաստանի մասին:

13 Հենրի Մորգենթաուի «*Ambassador Morgenthau's Story*» (Garden City New York: Doubleday, Page & Company, 1918) գիրքն ունի հայերեն երեք թարգմանություն: Առաջին երկու թարգմանությունները տպագրվել են անգլալեզու հրատարակության հաջորդ տարում. *Դեսպան Մորկենթաուի պատմածները*, թարգմանեց Միրայել Շամոտանճեան (Կ. Պոլիս, տպագր. Յ. Ասատուրեան եւ որդիք, 1919), *Մր. Մորկենթաուի Յիշապակները եւ Հայկական Եղեռնին Գաղչուհիքները*, թարգմանիչ՝ Եսովբ Արմեն (Կ. Պոլիս, տպագր. Օ. Արզուման, 1919), *Դեսպան Հենրի Մորգենթաուի պատմությունը*, անգլերենից թարգմանեց Լիլիթ Թորթյալյանը (Երևան, ՀՅԹԻ, 2012): Ռուսերեն թարգմանությունը հրատարակվել է 2009 թ. (Գենրի Մորգենթաու, *Трагедия армянского народа. История посла Моргентаяу*. Пер. с англ. А. Ю. Фроловой (Москва: ЗАО Центрполиграф, 2009)): Ներկա հոդվածում օգտագործում ենք «նամակը» պատրաստողների թերևս ծանոթ թարգմանություններից Միքայել Շամոտանճյանի:

14 Տե՛ս *Ambassador Morgenthau's Story*, 302-326, *Դեսպան Մորկենթաուի պատմածները*, 295-318:

հոգիևս խումբեր կը հաւաքուէին ասկէց անկէց, զոները չորս չորս իրար կը կապէին, և կը տանէին մարդ չեղած տեղ մը հեռուն. յանկարծ գնդակներու ճարճատիւնը միջոցը կը լեցներ, և թուրք զինուորները որ իբր հետետորդ ծառայած էին, թաղծօրէն իրենց կայքը կը վերադառնային¹⁵:

Մեջբերված հատվածը զգալի չափով համապատասխանում է «նամակում» օգտագործված հետևյալ մտքին. «... հայ տղամարդկանց իրար հետ կապում ու խումբ-խումբ գնդակահարում էին»: Հայոց ցեղասպանությանը սվիրված աշխատություններում բազմաթիվ են օրինակները «նամակում» գերմանացիներին վերագրվող, բայց իրականում թուրքերի ու քրդերի կատարած «կանանց ու երեխաներին տները լցնելով հրդեհելու» գործողության:

Մորզենթաուից արված ընդարձակ մեջբերման մեջ ներկայացված գործողությունները սկզբնաղբյուրում վերագրված են *թուրք* ժանդարմներին: Մորզենթաուն նախ նկարագրում է հայ զոհերի գանակոծությունը՝ ոտքերի թաթերին (կրունկներին) «բարակ գաւագանի [ճիպոտ] հարուածներ» տալը: Ապա շարունակում է.

Եթէ չյաջողէին խօսցնել տալ խեղճը, անոնք ուրիշ շատ միջոցներ ունէին համոզելու. քաշելով կը փրցունէին անոնց յոնքերը և մօրուքը, յետոյ եղունգները. կրակի մէջ կարմրած երկաթներ կը դնէին անոր կուրծքին վրայ, միսերը կը հանէին կրակի պէս տաքցած աքցաններով, և յետոյ եռացած կարագ կը թափէին վերքերուն մէջ: Երբեմն ժանտարմաները, դատապարտեալին ձեռքերը և ոտքերը կը գամէին փայտի կտորներու վրայ, անտարակոյս նմանութեամբ խաչելութեան, և երբ նահատակը ցաւէն պրկուէր, կը պոռային անոր՝ «Ըսէ՛ Բրիստոսիդ որ քեզի օգնելու գայ»:

Այս բարբարոս չարչարանքները – և բազմաթիւ ուրիշներ, զորս կը հրաժարիմ նկարագրելէ – ընդհանրապէս գիշերը ի գործ կը դրուէին: Բանտերու շուրջը, Թուրքեր կը կենային, որոնք թմբուկ կը զարնէին և սուլիչով կը սուլէին, որպէս զի զոհերուն կծու աղաղակները դրացիներէն չստիւն¹⁶:

Վերստին շեշտենք, որ ակներև է քարոզչական կոպիտ հնարք, որը համագոր է «ուրիշի ձեռքերով կրակից շագանակներ հանելու» երևոյթին: Եվ, սակայն, պետք է նշել, որ նման «պրավդայական վերագրումները» պատերազմական շրջանի խորհրդային

15 *Դեսպան Մօրկլենթաուի պարմածները*, 296:

16 Նույն տեղում, 300: Հմմտ. *Մր. Մօրկլենթաուի Յիշատակները եւ Հայկական Եղեռնին Գաղտնիքները*, 254, *Դեսպան Հենրի Մորզենթաուի պարմությունը*, 230-231: Անգլերեն բնագրում մեջբերումը հետևյալն է. «If this did not succeed in bringing their victim to terms, they had numerous other methods of persuasion. They would pull out his eyebrows and beard almost hair by hair; they would extract his finger nails and toe nails; they would apply red-hot irons to his breast, tear off his flesh with red-hot pincers, and then pour boiled butter into the wounds. In some cases the gendarmes would nail hands and feet to pieces of wood—evidently in imitation of the crucifixion, and then, while the sufferer writhed in his agony, they would cry: “Now let your Christ come and help you!” These cruelties—and many others which I forbear to describe—were usually inflicted in the night time. Turks would be stationed around the prisons, beating drums and blowing whistles, so that the screams of the sufferers would not reach the villagers» (*Ambassador Morgenthau's Story*, 306):

քարոզչության մեջ կիրառվում են ոչ մեկ անգամ, ավելին՝ ունենում են որոշակի ազդեցություն: Դիմենք օրինակների: Այսպես, Դրիմի ռազմաճակատի քաղվարչությունը հայազգի զինվորներին ու հրամանատարներին ուղղված դիմումում վերստին հիշեցնում է, որ հայ ժողովրդի պատմության ամենամոայլ ժամանակաշրջանը Առաջին իմպերիալիստական պատերազմի տարիներն էին, երբ «գերմանական իմպերիալիզմը կազմակերպեց հայ ժողովրդի դաժան կոտորածը և ֆիզիկական ոչնչացումը»¹⁷: Անդրկովկասյան ռազմաճակատի «Боец РККА» ամենօրյա թերթի համարներից մեկում զինվորական լրագրող Իգոր Վսեվոլոժսկին կրկին «դաժան կոտորածի» իրականացման մեղքը բարդում է «քսաներորդ դարի գերմանացի բարբարոսների» վրա. «Հայրերն ու զավակները հիշում են այդ կոտորածը ամբողջ կյանքում և դրա մասին հիշել հրամայեցին իրենց որդիներին ու թոռներին: Գետերը կարմրել էին արյունից: Մարդիկ փորձում էին թաքնվել տներում. նրանց զոռով հանում էին այդտեղից: Մարդիկ փորձում էին փախչել դեպի բարձր լեռները. թշնամու դաժան ձեռքերը հասնում էին նրանց»: Եվ քանի որ հաջորդ իսկ նախադասության մեջ հմտորեն մեջբերվում են Օսմանյան կայսրությունում գերմանական դեսպանի խոսքերը, միանշանակ տպավորություն է ստեղծվում, որ այդ դաժանություններն իրականացվել են գերմանացիների ձեռքերով¹⁸:

«Պրավդայական» մոտեցումներն արտացոլվում են նաև հայ հեղինակների գործերում: Ինչպես ընդունված էր Խորհրդային Միությունում, գաղափարախոսական կարևորագույն դրոյթները պետք է ունենային նաև գրավոր «արձագանքներ» ինչպես կարմիրբանակայիններից, այնպես էլ ժողովրդական լայն զանգվածներից¹⁹: Այդպիսի մի արձագանք էր «Էրմիտաժի» տնօրեն, ակադեմիկոս Հովսեփ Օրբելու՝ «Հայերի յոթերիմ թշնամիները» վերտառությամբ հոդվածը՝ հրապարակված «Պրավդա»-ի և

17 «Но самым мрачным периодом жизни армянского народа были годы первой империалистической войны, когда германский империализм организовал зверскую резню и физическое уничтожение армянского народа» (*Советская Армения в годы Великой Отечественной войны*, 362):

18 «Отцы и деды могут рассказать, как на их глазах устроили в Армении страшную резню немцы-варвары двадцатого века. Отцы и дети запомнили эту резню на всю жизнь и они приказали помнить о ней сынам и внукам. Ручьи стали красные от крови. Люди пытались скрываться в домах – их вытаскивали оттуда. Люди пытались бежать в высокие горы – жестокие руки врага доставали их. Навеки запомнили армяне слова германского посла, ставленника кайзера Вильгельма: «Эта резня – справедливое наказание армянам». Наказание? За что? А вот за что: «Я диктовал до войны армянам – сбросить русских и склониться на сторону немцев. Но они последовали за русскими. И вот сегодня они понесли справедливое наказание». Вот оно, немецкое наказание! Десятки тысяч убитых детей, матерей, жен, сестер – и все за то лишь, что свободолюбивый армянский народ не захотел добровольно сунуть голову в германское ярмо, не захотел добровольно отдать своих жен и детей в немецкое рабство!» (*Советская Армения в годы Великой Отечественной войны*, 401-402. Սկզբնաղբյուրը՝ *Боец РККА: ежедневная красноармейская газета Закавказского фронта*, 30 сентября 1942 г.):

19 Արձագանքները տե՛ս, օրինակ, հետևյալ հրապարակումներում. «Հայ ժողովրդի նամակի քննարկումը նոր սխրագործությունների է կոչում հայ մարտիկներին», *Սովետական Հայաստան*, 6 մարտի 1943, թիվ 54 (6782), «N հայ մարտիկների և հրամանատարների պատասխանը» և «Սրբազան երդումը», *Սովետական Հայաստան*, 14 մարտի 1943, թիվ 59 (6787), «Հայ մարտիկների սրբազան երդումը», «Մեր թանկագին հարազատներ», «Մեր խոսքը», *Սովետական Հայաստան*, 28 մարտի 1943, թիվ 69 (6797) և այլն: Բոլոր այս և նման հրապարակումներում, որպես կանոն, խոսք էր գնում ժողովրդական հերոսներ Վարդան Մամիկոնյանի, Գևորգ Մարգարեանու, Դավիթ Բեկի հայրենակներ պայքարի մասին, ինչպես և տարբեր ձևակերպումներով հիշեցվում էր 1914-1918 թթ. գերմանացիների կազմակերպած հայերի կոտորածների, հայերի քնաջնջման պլանների մասին:

«Սովետական Հայաստանի» այն նույն համարներում, որոնցում տպագրված էր հայ ժողովրդի անունից կազմված նամակը: Հեղինակը գրում է.

Հայ ժողովուրդը հաշիվներ ունի գերմանացիների հետ ոչ միայն այն չարագործությունների համար, որ կատարում են նրանք այժմ սովետական երկրի ժամանակավորապես զավթած մարզերում: Հայերը հին հաշիվներ ունեն գերմանական իմպերիալիզմի հետ՝ վաղուց թափած հայ արյան համար, հայերին վաղուց պատճառած անսահման տառապանքների համար:

... Բայց հայրերի ու մայրերի հիշողության մեջ այս բոլոր տարիները պահպանվել են հայկական հին՝ ողբալից ու վշտոտ եղանակների արձագանքները: Դրանք այն երգերն էին, որոնց մեջ խոշտանգված, տանջված ժողովուրդը երգում էր անցյալ դարի վերջերին սպանված իր շատ հազարավոր զավակների ու դուստրերի մասին: Դրանք մոռալ հիշողություններ էին այն անթիվ վայրագ գազանությունների մասին, որոնք կատարվել էին գերմանական իմպերիալիզմը ոգեշնչող Վիլհելմ երկրորդի կամքով²⁰:

Կրկին ոչ մի ուղիղ խոսք Օսմանյան կայսրության և Հայոց եղեռնի իրականացնող թուրքերի ու քրդերի մասին: Բաց, անթաքույց շեշտադրումները միայն ու միայն գերմանացիների մասին են:

«Նամակ հայ մարտիկներին հայ ժողովրդից» գրությունն իր արտացոլումը գտավ նաև Գառնիկ Ստեփանյանի «Մղձավանջային օրեր» գրքում: «Նամակից» մեկուկես տարի անց լույս տեսած այս գրքի եզրափակիչ էջերում տեղ է գտել ցեղասպանությունը վերապրած ականատեսի (իրականում՝ հեղինակի)՝ ռազմաճակատում գտնվող որդու՝ հորը գրած նամակը, որում նա նշում է.

Անցյալ տարի մեր զորամասում կարդացիք հայ ժողովրդի նամակը ուղղված իր մարտիկներին: Առաջին անգամն էր, որ ես լսում էի մի ժողովրդի նամակը իր զավակներին: Ինչքան հարազատ էր, ինչքան մոտ մեր հոգուն, կարծեք այդ տողերը գրել էին հենց մեր հայրերն ու մայրերը, մեր քույրերն ու եղբայրները: Այդ նամակում նրանք մի անգամ էլ մեզ հիշեցնում էին 1914-18 թվերին գերմանացիների կատարած գազանությունները հայերի նկատմամբ: Նամակի ընթերցումից հետո թշնամու նկատմամբ մեր ունեցած ատելությունը ավելի ու ավելի կուտակվեց, մենք այժմ յուրաքանչյուր անգամ, երբ ոչնչացնում ենք թշնամու այս կամ այն միավորումը, երբ մեր ոտքերի տակ տեսնում ենք արյունաթաթախ գերմանական գազանների լեշերը, մեզ թվում է, թե նրանք նույն այն գերմանացիներն են, որոնք համաշխարհային պատերազմի ժամանակ նպաստել էին, իրենք էլ մասնակցել հայ ժողովրդի բնաջնջմանը²¹:

20 Հովսեփ Օրբելի, «Հայերի ոխերիմ թշնամիները», *Սովետական Հայաստան*, 2 մարտի 1943, թիվ 50 (6778):

21 Գառնիկ Ստեփանյան, *Մղձավանջային օրեր* (Երևան, Հայպետհրատ, 1945), 211-212:

Գրքում օգտագործված է նաև «նամակի» բնութագրական ձևակերպումներից մեկը՝ «Վրեժ ն անցյալի համար, ն ներկայի համար»²²:

Այսպիսով՝ գոնե «Պրավդա»-ի, ասել է թե՛ կոմունիստական գաղափարախոսության գլխավոր քարոզչի գործառնություններն իրականացնող մամուլի օրգանի մակարդակով գաղափարախոսական թույլտվությունը կար, և հրապարակ էին գալիս մի շարք ստեղծագործություններ, որոնցում կարմիր թելի նման անցնում է Մեծ եղեռնի կազմակերպման մեջ գերմանացիների (հանձինս կայսրի և զինվորականության ներկայացուցիչների) մեղսակցության, հայկական կոտորածների թե՛ կազմակերպիչներ, թե՛ իրականացնողներ լինելու թեման:

1944 թ. տպագրվում է Գեղամ Սարյանի «Դեպի կառափնարան» բալլադը²³՝ նվիրված Կոմիտասի հիշատակին: Պետք է, սակայն, նշել, որ գրքույկը, որում տեղ էր գտել նշված բալլադը, մեծ մասամբ Հայրենական մեծ պատերազմի թեմատիկայով է, և միայն «Դեպի կառափնարան» բալլադի վերջին քառատողում հիշատակվում է Գերմանիայի Վիլիելմ կայսրը:

Իսկ երկնքում լուսնի մահիկն ամպաքող
Սահելով դուրս նայեց ուրախ ու տիրաբար,
Ինչպես Վիլիելմ կայսեր հայացքի տակ պարող
Ծախված գեղեցկուհու ժպտուն ատամնաշար²⁴...

Մեծ եղեռնի հիշողության հարցը ստալինյան ժամանակաշրջանում. հետպատերազմյան տարիներ

1945 թ. Երևանում տպագրվում է «Եղեռնը պատկերող նոր ժամանակների առաջին և ցնցող գրքերից»²⁵ մեկը՝ Գառնիկ Ստեփանյանի (1909-1989) «Մղձավանջային օրերը»: Գառնիկ Ստեփանյանը գրող էր, գրականագետ, թատերագետ, բառարանագիր: «Մղձավանջային օրեր» գիրքն առաջին անգամ լույս է տեսել 1945 թ. հունիսին 3 000 օրինակ տպաքանակով: Գրքում իր ողջ դաժանությամբ պատկերված է Մեծ եղեռնը: Գրքի գաղափարախոսական հենքը, սակայն, որն անթաքույց մատուցվում է ընթերցողին առաջինից մինչև վերջին էջերը, տարաբնույթ ձևերով գերմանացիների մասնակցությունն է հայության ցեղասպանությանը և նրանցից (ինչպես նաև եղեռն իրականացրած թուրքերից ու քրդերից) վրեժ լուծելու անհրաժեշտության մատնանշումը:

22 Նույն տեղում, 211:

23 Տե՛ս Գեղամ Սարյան, *Բալլադներ* (Երևան, Հայպետհրատ, 1944), 59-63: Բալլադը ընդամենը երկու տարի անց տեղ է գտնում «Ընտիր էջեր հայ գրականության հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» (խմբ.՝ Հրաչյա Գրիգորյան, Նաիրի Զարյան, Ռուբեն Զարյան, Ստեփան Զորյան, Էդուարդ Թովիչյան, Ավետիք Իսահակյան, կազմողներ՝ Մինաս Հյուսյան, Կարապետ Մելիք-Օհանջանյան և այլք (Երևան, Հայկական ՍՍՌ պետական հրատ., 1946), 1052-1053) ժողովածուում, որում ամփոփված էր «հայ գեղարվեստական խոսքի լավագույնը, այն ընտիրը, որ մեր ժողովուրդը ստեղծել է հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» (նույն տեղում, 5):

24 Սարյան, *Բալլադներ*, 63:

25 Տեր-Խաչատրյան, «Հրաշալի տասնամյակ (1955-1965)», 99:

Գրքի առաջին ու երկրորդ էջերում մի անծանոթ ծերունի (իրականում՝ հեղինակն ինքը) ասում է զրուցակցին.

Դուք երիտասարդներդ նոր եք ծանոթանում գերմանացիների գազանություններին: Իսկ ես, Օ, ես 1914-1918 թվերին իմ կաշվի վրա զգացել եմ, թե ինչպիսի դահիճներ են գերմանացիները. Դուք լսել եք, չէ՞, որ նրանք համաշխարհային պատերազմի ժամանակ նպաստեցին հայ ժողովրդի բնաջնջմանը:

.... Ես չկարողացա վրեժ լուծել թշնամիներից, այդ վրեժը լուծում է որդիս՝ լեյտենանտ Ավետիս: Ճանապարհ զցելիս Երևանի կայարանում ես փաթաթվեցի, համբուրեցի նրան ու ասացի. լուծիր քո հոր և քո ժողովրդի վրեժը: Խփիր գերմանացուն, խփիր ինչքան քո բազկի մեջ ուժ կա²⁶:

Այսինքն՝ կրկին ոչ մի խոսք թուրքերի մասին. պահպանվում է, պայմանականորեն ասած, «պրավդայական» ոճը:

Հեղինակը նշում է, որ մինչև պաշտոնապես պատերազմի մեջ մտնելը Թուրքիան կողմնորոշված էր դեպի Գերմանիան, թուրքական ողջ բանակը վերակառուցում էր գերմանական զինվորականությունը, ամենուրեք վիստում էին գերմանացի սպաները²⁷: Մեկ այլ տեղ նշվում է, որ թուրք ոճրագործներից մեկին հենց գերմանացի սպան է հայերի վերաբերյալ հստակ հանձնարարություններ տվել. «... կառավարության հրամանով ձեր շրջանի բոլոր հայաբնակ գյուղերի բնակիչները պետք է գաղթեցվեն հեռավոր վայրեր: Այդ գործի ընդհանուր ղեկավարությունը քեզ ենք հանձնում: Դու պետք է կազմես կարավանները: Նրանց տանես նշանակված տեղը: Եթե անհրաժեշտ է՝ ճանապարհին պատժել անհնազանդներին, պատժիր: ... Անխնա պատժիր: Քեզ լայն հնարավորություն: Իսկ վարձատրություն դու կստանաս գաղթողներից էլ, կառավարությունից էլ, և կստանաս ինչքան որ ցանկանաս»²⁸: Գրքի մեկ այլ հատվածում նկարագրվում է, թե ինչպես է հարբած գերմանացի սպանում փոքր երեխային, սպա՝ ընկերոջ հետ բռնի ուժով տիրանում արքայական կանանցից մեկին²⁹: Նշվում է, որ Գերմանիան էր ձեռք «բերել Բաղդադի երկաթգծի կառուցման մենաշնորհը, վաղուց մտածում էր տեղահան անել հայերին և բնակեցնելով երկաթգծի ուղղությամբ, ստրկական աշխատանքի լծել ստեղծագործ հայ ժողովրդին»³⁰, «Ամբողջ երկիրը [Օսմանյան կայսրությունը] փաստորեն ղեկավարվում էր Գերմանիայի կողմից: Պատերազմական մինիստրության ամեն մի պաշտոնատնում նստած էին գերմանացի զինվորականներ, ոչ մի հրաման չէր կարող կենսագործվել առանց նրանց ստորագրությունների»³¹, «Գաղթից ամիսներ առաջ հրահանգվել էր գերմանական բոլոր դեսպաններին, միսիոներների միջոցով համոզել հայ ժողովրդին, որ զինաթափ լինի: Ամենուրեք գերմանացի միսիոներները շրջում էին

26 Ստեփանյան, *Մղձավանջային օրեր*, 3-4:

27 Տե՛ս նույն տեղում, 17:

28 Նույն տեղում, 29-30:

29 Տե՛ս նույն տեղում, 151-152:

30 Նույն տեղում, 178:

31 Նույն տեղում:

գյուղից գյուղ և Քրիստոսի անունից, մասամբ սպառնալիքով, մասամբ էլ համոզելով ստիպում էին բոլոր զենքերը հանձնել կառավարությանը»³², «Վիլիելմի անմիջական թելադրանքով Պոլսի գերմանական դեսպանը դիմում է օսմանյան կառավարությանը մի առաջարկով՝ ազատ արձակել բանտերից բոլոր քրեական հանցագործներին, մարդասպաններին և նրանցից կազմված չեթեական խմբերին հանձնել տեղահանված հայ ժողովրդի բախտը: ... Այդպես էլ կատարվում է»³³, «Ամենուրեք գերմանացի սպաներն ուղեկցում էին քարավաններին, ճանապարհներին չտեսնված սանձարձակություններ անում՝ թալանում, բռնաբարում, գնդակահարում, խեղդամահ անում անմեղ կանանց ու երեխաներին»³⁴ և այլն:

Հեղինակը եզրակացնում է, որ «հայ ժողովրդի ամենառիտերիմ թշնամին է նաև Գերմանիան»³⁵: Մինևույն ժամանակ, թերևս ակնարկելով «Թուրքահայաստանի մասին» ՌԽՖՍՀ ժողկոմխորհի դեկրետը (29 դեկտեմբերի 1917 թ.), նշում է, որ «այդտեղ ասված էր, որ հայ ժողովրդի փրկությունը ոչ թե պետք էր սպասել եվրոպական դիվանագիտությունից, այլ բանվորական ռևոլյուցիայից, թե ինչպես Ռուսաստանի մյուս ժողովուրդների բախտը, այնպես էլ հայ ժողովրդի բախտը սերտ կերպով կապված էր այդ ռևոլյուցիայի հետ, որը միայն կարող է ճնշված ազգերին տալ լիակատար ազատություն»³⁶:

Չնայած նման գաղափարախոսական «գեղումներին»՝ «Միձավանջային օրեր» գիրքը խորհրդային շրջանի թերևս առաջին գեղարվեստական ստեղծագործությունն է (ինքնակենսագրական վեպի տարրերով), որում համակարգված նկարագրվում է Մեծ եղեռնը:

1945 թ. «Պրավդա» թերթում լույս է տեսնում Հրաչյա Քոչարի «Գեներալի քույրը» պատմվածքը՝ հայկական կոտորածների մասին պատմող դրվագներով³⁷: Պատմվածքի մեխը ամերիկահայ Անահիտ Բաղրամյանի նամակն է ԽՍՀՄ մարշալ Հովհաննես Բաղրամյանին: Անահիտը նամակում նկարագրում է 1915 թ. Վասպուրականի իրենց գյուղում տեղի ունեցած ջարդի տեսարաններ, պատմում, թե ինչպես են ռուս կոզակների շնորհիվ փրկվում ինքը (այն ժամանակ՝ 7 տարեկան) ու իրենից ութ տարով մեծ եղբայրը՝ Հովհաննես Բաղրամյանը, ինչպես են հասնում Կարս, որտեղից եղբայրը մեկնում է պատերազմ, և ինքը նրան այլևս չի տեսնում: Որբացած Անահիտին որոշ ժամանակ անց ամերիկացիները տանում են Միացյալ Նահանգներ, որտեղ նա ամուսնա-

32 Նույն տեղում:

33 Նույն տեղում, 179:

34 Նույն տեղում, 180:

35 Նույն տեղում, 182:

36 Նույն տեղում, 185:

37 Տե՛ս Грачя Кочар, “Сестра генерала”, *Правда*, 26 ноября 1945, N 282 (10053), Հրաչյա Քոչար, «Գեներալի քույրը», *Սովետական Հայաստան*, 4 դեկտեմբերի 1945, թիվ 260 (7513): Պատմվածքը տպագրվում է նաև Բաքվում լույս տեսնող «Կոմունիստ» հայալեզու թերթում (6 դեկտեմբերի 1945, թիվ 187 (7043)): Մեկ տարի չանցած՝ այն վերահրատարակվում է «Ընտիր էջեր հայ գրականության հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» հիմնարար ժողովածուում (էջ 1082-1085):

նում է հայի հետև և որդու անունը դնում Հովհաննես: Անահիտը մասնավորապես գրում է. «Ես իմացա, որ նորից ռուսները օգնության ձեռք մեկնեցին մեր մեռնող ժողովրդին, ոտքի կանգնեցրին մեր քայքայված Հայաստանը, որ մենք ունենք Հայրենիք՝ Սովետական Հայաստանը, որի կյանքն ու ապագան փրկված են»³⁸: Անահիտը Խորհրդային Հայաստանի բարեկամն է. իր ոսկեղենը նվիրաբերել է «Կարմիր Բանակի և մարտերում զոհված սովետական ռազմիկների երեխաների» ֆոնդին, խնայողությունները տրամադրել խորհրդային բանակի «Սասունցի Դավիթ» էսկադրիլայի կազմման համար, ատում է ֆաշիստներին ու դրվատանքի խոսքերով է անդրադառնում Ստալինին: Անահիտը հույս ուներ, որ մարշալ Բաղրամյանն իր հարազատ եղբայրն է:

Ինչո՞ւ «Պրավդա»-ն 1945 թ. նոյեմբերին հրատարակեց նման հողված-պատմվածք: Բանն այն է, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին ԽՍՀՄ ղեկավարությունը բարձրացրեց Թուրքիայի արևելյան որոշ տարածքներ Խորհրդային Հայաստանին ու Խորհրդային Վրաստանին վերադարձնելու հարցը: Մասնավորապես կարևորվում է 1945 թ. օգոստոսին Պոտոսդամի կոնֆերանսում Ստալինի հնչեցրած ձևակերպումը՝ «... Կարսի շրջանը, որը մինչև պատերազմը [Առաջին համաշխարհային] գտնվում էր Հայաստանի կազմում...»³⁹: 1945 թ. դեկտեմբերի 14-ին Մոսկվայում կայանալու էր ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարների հանդիպումը (դեկտ. 16-26): Դրան նախորդում են մի շարք իրադարձություններ: Դեկտեմբերի 2-ին ընդունվում է ԽՍՀՄ կառավարության որոշումը հայերի հայրենադարձության թույլտվության մասին⁴⁰, տպագրվում են նոյեմբերի 29-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ VI-ի հարցազրույցը և ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի ու Մեծ Բրիտանիայի ղեկավարներին ուղղված դիմումը, որում ուղղակիորեն խոսվում է Թուրքիայից Խորհրդային Հայաստանին հայկական նահանգների վերադարձի անհրաժեշտության մասին⁴¹, ապա այդ դիմումին դեկտեմբերի 4-ին հաջորդում է Խորհրդային Հայաստանի մտավորականության խանդավառ արձագանքը հայրենադարձության մասին որոշմանը⁴²:

38 Հրաչյա Քոչար, «Գեներալի քոյրը», *Սովետական Հայաստան*, 4 դեկտեմբերի 1945:

39 Հարցը հանգամանորեն դիտարկված է մի շարք հրապարակումներում: Տե՛ս, մասնավորապես, Джамиль Гасанлы, *СССР-Турция: от нейтралитета к холодной войне (1939-1953 гг.)* (Москва: Изд-во «Центр Пропаганды», 2008), Քրիստինե Մելրոյան, *ԽՍՀՄ-Թուրքիա հարաբերությունները. Հայկական հարցը, սևծովյան նեղուցների խնդիրը և դաշնակից պետությունները (1945-1947 թթ.)* (Երևան, Հեղինակային հրատ., 2013), “Запись беседы Народного комиссара иностранных дел СССР с Министром иностранных дел Великобритании,” в кн.: *Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946 гг.* Ред. Арман Киракосян (Ереван: Изд-во «Тигран Меч», 2010), 262:

40 Տե՛ս «ՍՍՌ-Մ ժողովրդական կոմիսարների սովետում. Արտասահմանից հայերի Սովետական Հայաստան վերադառնալու կապակցությամբ ձեռնարկվող միջոցառումների մասին», *Սովետական Հայաստան*, 2 դեկտեմբերի 1945, թիվ 259 (7512):

41 Տե՛ս «Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ VI-ի մոտ տեղի է ունեցած պրես-կոնֆերանսում», «Ծայրագույն պատրիարք Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ VI-ի դիմումը երեք մեծ տերությունների ղեկավարներին՝ ՍՍՌ Միության ժողովրդական կոմիսարների սովետի նախագահ Ի. Վ. Ստալինին, Ամերիկայի Միացյալ Նահանգների պրեզիդենտ Հ. Ս. Տրումենին, Մեծ Բրիտանիայի պրեմիեր-մինիստր Կ. Ռ. Էտալին», *Սովետական Հայաստան*, 2 դեկտեմբերի 1945, թիվ 259 (7512):

42 Տե՛ս «Սովետական Հայաստանի աշխատավորները ջերմորեն ողջունում են ՍՍՌ-Մ ժողովրդական պատմական որոշումը», *Սովետական Հայաստան*, 4 դեկտեմբերի 1945, թիվ 260 (7513):

Մեր համոզմամբ՝ «Գեներալի քույր» պատմվածքի հրապարակումը «Պրավդա»-ում նպատակ էր հետապնդում հիշեցնելու Արևմտյան Հայաստանի հայաթափման պատճառների ու հայկական սփյուռքի մասին և գեղարվեստական գրականության լեզվով ձևավորում էր այն հետևախորքը, որին հաջորդեցին արդեն քաղաքական բնույթի որոշումներ: Նկատենք, որ Արևմտյան Հայաստանի տարածքների մի մասի վրա «աչք ունեցող» Վրաստանում արձագանքը որակապես այլ էր. դեկտեմբերի 14-ին Թբիլիսիի «Կոմունիստ» թերթում վրացերեն հրապարակվում է ակադեմիկոսներ Ս. Ջանաշիայի և Ն. Բերձենիշվիլու նամակը՝ «Թուրքիայի նկատմամբ ունեցած մեր օրինական պահանջների մասին» վերտառությամբ, որը դեկտեմբերի 20-ին թարգմանվում ու հրատարակվում է «Պրավդա»-ում⁴³:

Պատերազմից հետո ազգային ողբերգության հիշողությունը երբեմն կարծես անհետանում էր, բայց առաջին իսկ հարմար պահին կրկին ասապրեզ էր գալիս ամենատարբեր ձևերով: Մեծ եղեռնի մասին ուղղակիորեն խոսվում է Քրիստափոր Թափալցյանի «Պատերազմ» քառահատոր վեպի 1946 թ. լույս տեսած առաջին հատորում⁴⁴: Առաջին հատորում իրադարձությունները ծավալվում են 1940-1941 թթ.: Վեպի հերոսներից մեկը՝ նշանավոր նկարիչ Միքայել Արմենյանը, մի մեծադիր կտավ է նկարել, որ կոչվում է «Հայկական ջարդը Համաշխարհային առաջին պատերազմի օրերին»: Վեպի մի քանի գործող անձեր նկարչի արվեստանոցում դիտում են կտավը, և նկարիչը խոսում է մեծ ողբերգության, այդ ողբերգության մասին հրապարակավ բարձրաձայնելու, այն գեղարվեստորեն պատկերելու անհրաժեշտության մասին: Ապա ներկայացվում է կտավի բովանդակությունը. պատկերված է ողջակիզման տեսարան, այն է՝ թուրք ասկյարներից մեկը մի մանուկի անց է կացրել սվինի ծայրին ու տանում է դեպի խարույկը:

Մարդահրկիզումից ոչ հեռու, լայն հրապարակում, օսմանյան փաշաները, գերմանական հրամանատարի հետ՝ հսկայական սեղան էին բաց արել: Նրանց առաջ խոշտանգված, մերկացած մատաղահաս, գեղեցիկ աղջիկների, կանանց մի խումբ ասքյարների սվինների, հրացանների սպառնալիքի տակ պար էին բռնել, և նրանց համար նվագում էր դիոլ-գուռնան: Գերմանացի հրամանատարը սեղանի վերևում բազմած, ոտը ոտին զցած, զլուխը բարձր բռնած՝ նայում էր այդ քստմնելի տեսարանին վիլիելմյան գոռոզությունը⁴⁵:

43 Հարցի մանրամասն քննարկումը տե՛ս Հարություն Մարության, «Տայքի ճարտարապետության պատմության ուսումնասիրությունը և խորհրդային գրաքննությունը», *Բանբեր Մարենասդարանի* 23 (2016), 112-130:

44 Տե՛ս Քրիստափոր Թափալցյան, *Պարերազմ*, հատոր առաջին (Երևան, Հայպետհրատ, 1946): Հմմտ. Տեր-Խաչատրյան, «Հրաշալի տասնամյակ (1955-1965)», 99-102:

45 Թափալցյան, *Պարերազմ*, հատոր առաջին, 38-39:

Նկարիչ Արմենյանը հարց է բարձրացնում. «Իսկ ինչո՞ւ չգրել, չնշավակել օսմանյան փաշաներին, որոնք գերմանացիների թելադրանքով քարերով ջարդեցին Վարուժանի, Սիամանթոյի, Գրիգոր Չոհրապի, Ռուբեն Սևակի գլուխները, խելագարեցրին մեր երաժշտության անկրկնելի հանճար Կոմիտասին և սրի քաշեցին հարյուրավոր հայ մտավորականների...»⁴⁶: Խոսակցության մեջ է մտնում մեկ այլ նկարիչ՝ Վահագն Տիգրիսյանը, որը առաջին պլան է բերում գերմանացիների թեման՝ նկատելով, որ մենք (ԽՍՀՄ-ն) «գերմանացիների հետ այժմ բարեկամ ենք... որքան նպատակահարմար է ներկայացնել նրանց թելադրած ոճիրները, որ կատարել են թուրք փաշաները»⁴⁷: Այս դիտարկմանն արձագանքում է Արմենյանը.

Գիտեք ինչ, ստեղծագործողի համար ամենամեծ բարեկամը ճշմարտությունն է, ո՛չ մի ուժ չի կարող պատմության էջերից ջնջել կատարված փաստերը... կարելի է այդ էջերը առժամանակ փակել, բարձրաձայն չկարդալ, բայց ջնջելն անհնարին է... Իսկ ինչ վերաբերում է մեր և գերմանացիների բարեկամությանը. մեր ժողովուրդը մի շատ լավ խոսք ունի, ասում է. «Շան հետ որքան ուզում ես ընկերացիր, բայց փայտը ձեռքից մի գցիր»։ Պատմությունը ցույց է տվել, որ Գերմանիայի բարեկամությունը օձային է։ Հիտլերի բռնած քաղաքականությունը ըստ իս շատ ռազմամուլական է և շատ հեռու կտանի⁴⁸:

Այսինքն՝ Մեծ եղեռնին անդրադարձն ուղղակիորեն կապվում է գերմանական ֆաշիզմի դեմ պայքարելու անհրաժեշտության շեշտադրմանը:

Վեպի մեկ այլ հատվածում նույն հերոսն ասում է. «.... ինձ ամենից շատ հուզում է մի ուրիշ բան... որ մեր կառավարությունը լուծելով Արևմտյան Ուկրաինայի, Բելոռուսիայի, Բեսարաբիայի, մեր երկրի Հյուսիսային սահմանների ու Լենինգրադի ապահովման հարցերը, ապա անպայման կզբաղվի և մեր՝ հարավային սահմանների ընդլայնումով... դա մեզ համար կենսական նշանակություն ունի»։ Զրույցին ներկա զինվորականն արձագանքում է. «Մեր կառավարությունը ժամանակի ընթացքում կլուծի այդ բոլոր կնճռոտ հարցերը»⁴⁹: Այս դրվագն էլ ուղղակիորեն կապվում է ԽՍՀՄ ղեկավարության՝ Թուրքիային ներկայացրած տարածքային պահանջներին:

Վեպի երկրորդ հատորում ևս անդրադարձներ կան Մեծ եղեռնին ու գերմանացիների թեմային: Վեպի գլխավոր հերոսներից նկարիչ Արմենյանը Հայրենական պատերազմի առաջին օրերին տեղի ունեցած ցույցերից մեկի ժամանակ հնչեցրած իր խոսքում հետևյալ դիտարկումն է անում.

– ... Վիլիելմ կայգերի մարդկային կերպարանքը կորցրած, հոգով թզուկ սերունդը, – ցատումով արտասանեց վերջին բառերը, – ամենամեծ թշնամին է հայ ժողովրդի ...

46 Նույն տեղում, 39-40:

47 Նույն տեղում, 40:

48 Նույն տեղում:

49 Նույն տեղում, 259:

Եվ պատմական էքսկուրսիա կատարելով, նկարիչը հիշեց համաշխարհային առաջին պատերազմի տարիներին կատարած բազմահազար հայ անմեղ մանուկների, ծերերի, մայրերի, մտավորականների անլուր տանջանքներն ու ջարդերը:

– ... Այդ գոհերը հայ ժողովրդին հասցրած չափացող վերքերն այսօր, սկսած մանուկից մինչև զառամ ծերունու բերանով գոչում են. «Վրեժ, վրեժ Հիտլերից, վրեժ ամեն մի ֆաշիստից, որի հայրը, եղբայրը կամ ինքը օսմանյան ասքարների, փաշաների հետ իրենց ձեռքերը թաթախեցին մեր արյան մեջ...»⁵⁰:

1946 թ. սկսված հայրենադարձությունը Հայաստան բերեց եղեռնից փրկված մարդկանց, նրանց զավակների մի մասին ու նրանց հիշողությունը: Եվ այն, ինչ չէր կարելի հաղորդել գրավոր, եղեռնի հետ առնչություն չունեցող բազմաթիվ մարդկանց հայտնի դարձավ ներգաղթածների ու նրանց ծնողների, ազգականների, բարեկամների ու ծանոթների ճակատագրերի պատմությունների միջոցով⁵¹:

1948 թ. 4 000 օրինակ տպաքանակով լույս է տեսնում Օսիկ Փանիկյանի (1905-1975) «Մահից դեպի կյանք» ինքնակենսագրական վիպակը⁵²: Հեղինակը ծնվել է Թուրքիայի ծայր արևմուտքում գտնվող Մալգարա գյուղաքաղաքում: Վիպակում ռեալիստական մոայլ գույներով նկարագրված են նրա ընտանիքի գլխով անցած եղեռնի դաժան փորձությունները, աքսորը դեպի Դեյր-էզ-Ջոր ու վերադարձը, ապա փախուստը Բուլղարիա և վերստին բնակության հաստատումը Խորհրդային Հայաստանում: Գիրքը համեմված է նաև պատմական տեղեկություններով, շատ բան ասված է ամենայն պարզությամբ: Թուրքերի դաժանությունների նկարագրություններից հետո հեղինակը նշում է. «Այսքանը գրում ենք հայ նոր սերնդին ծանոթացնելու անյն, ինչ որ տեսան ու ապրեցին իրենց հայրերը Թուրքիայում, թուրքերի լծի տակ: Գրում ենք պատմության համար»⁵³: 1944-1946 և 1953-1956 թթ. Օսիկ Փանիկյանը ձերբակալվել և աքսորվել է Սիբիր: 1950-1972 թթ. աշխատել է «Հայաստան» հրատարակչությունում որպես տեխնիկական խմբագիր:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից մեկ տարի անց՝ 1946 թ. սկսված Սառը պատերազմն իր հետ բերել էր գաղափարախոսական համապատասխան շեշտադրումներ խորհրդային ցանկացած բնույթի հրապարակման մեջ: Դրանից անմասն չէր մնացել նաև ցեղասպանության դաժան պատկերներով լի «Մահից դեպի կյանք» վիպակը: Նախ, ցեղասպանության մեղքի մի զգալի բաժին բարդվում էր գերմանացիների ուսերին. «Գերմանացիները իրենց կարգին հաշվում էին, որ հայերից ոչ մի օգուտ չունեն բացի վնասից, և որպեսզի թուրքերը իրենց քաղաքական կյանքին լծվեն և իրենց կողքին կռվեն, համաձայն էին հայերի բնաջնջման»⁵⁴, «Իսկ գեր-

50 Քրիստափոր Թափալցյան, *Պարերազմ*, հատոր երկրորդ (Երևան, Հայպետհրատ, 1949), 36-37:

51 Տե՛ս Տեր-Խաչատրյան, «Հրաշալի տասնամյակ (1955-1965)», 99:

52 Տե՛ս Օսիկ Փանիկյան, *Մահից դեպի կյանք* (Երևան, «Սովետական գրող», 1948):

53 Նույն տեղում, 47:

54 Նույն տեղում, 20:

մանացիների կայսրը, Վիլիելմ Բ-ն, վաղուց հայտարարել էր արդեն. – Հարկավոր է բոլոր հայերին ոչնչացնել, բացի մեկից, նրան էլ իբրև նմուշ պահելու համար ազգաբանական մուգելում»⁵⁵, «Թուրքական կառավարության մեղսակից ու գործակից էին դարձել գերմանացիների կայսր Վիլիելմ Բ-րդը, Գերմանիայի Կ.Պոլսի դեսպան Վանգենհայմն ու Թուրքիայում գտնվող գերմանական բանակների վերին հրամանատար գոր. [ավար] ֆոն Դեր Հուցն ու գորավար ֆոն Չանդերսը: Նրանք ցանկացել էին ոչնչացնել մեր փոքրիկ անպաշտպան ժողովուրդը, որ դարեր շարունակ ծառայել էր ընդհանուր մարդկության մշակույթին և իր մասնակցությունն էր բերել աշխարհի քաղաքակրթության»⁵⁶, «Հայ կարմիրբանակայինների արիաշունչ երգերը մինչև օրս հնչում են գերմանական հողից և սա պատմության մեծ դասն է, մի շառաչյուն ապտանկ մեր ջարդերի կազմակերպիչների երեսին»⁵⁷ և այլն:

Սառը պատերազմի ջատագով Ուինսթոն Չերչիլի հայրենակիցների պահվածքին անդրադառնալիս հիշվում է նրանց վերաբերմունքը 1919 թ. գարնանը Հալեպում տեղի ունեցած հայկական ջարդերի նկատմամբ. նրանց «ուշացման» մի քանի ժամվա ընթացքում մի քանի հարյուր հայ զոհվեց թուրքերի ու արաբների ձեռքից⁵⁸: Հեղինակը նկատում է, որ «Անգլիացիները ուղղակի և անուղղակի կերպով միջտ օգնել են թուրքերին և մինչև այսօր էլ օգնում են, թե ու թիկունք հանդիսանում նրանց. օգնում են «դեմոկրատիզմի ջատագով» և «քաղաքակրթության պաշտպան» մեծ պետությունները, սեղմում են թուրքերի արյունոտ ձեռքը, օժանդակում են՝ միլիոններով ստերիլիզ և դոլար հատկացնելով, որպեսզի չարագործը վաղը նորից սպանի, նորից ավերի»⁵⁹: Հիշատակվում են նաև անգլիացիների վերաբերմունքի դրսևորման այլ դրվագներ: Որպես եզրակացություն է հնչում հեղինակի այն խոսքը, որ «[Եվրոպական] դիվանագետները կեղծավոր ու խորամանկ գործակալներն էին իրենց բուրժուական պետությունների և պարզապես շահագործում էին հայկական տառապանքներն ու զոհերը և Թուրքիայից քաղաքական կամ տնտեսական շահեր ապահովում՝ հայկական հարցի շնորհիվ»⁶⁰:

Վիպակի վերջին էջերը (96, 105-108, 112) լի են Հայաստանի՝ խորհրդային տարիների ձեռքբերումների նկարագրություններով, նշվում է Ստալինի, կոմունիստական կուսակցության և ռուս ժողովրդի ունեցած դերը դրանցում: Գրքի վերջին տողերն են. «Թուրքերը ցանկացել էին արմատախիլ անել, գերեզմանել հայությունը, բայց նրանց այս ոճրային ծրագրին իբրև պատասխան՝ ահա՛ մեր Սովետական ծաղկող Հայաստանը: Եվ սակայն ես ապրում եմ ու պիտի ապրեմ, իմ ուժը Սովետական Հայաստանն է, Սովետական հզոր Միությունը, ազգերի ու ժողովուրդների եղբայրությունը»⁶¹:

55 Նույն տեղում, 21:

56 Նույն տեղում, 74:

57 Նույն տեղում, 95:

58 Տե՛ս նույն տեղում, 61:

59 Նույն տեղում, 74-75:

60 Նույն տեղում, 12:

61 Նույն տեղում, 112:

1948 թ. ամռանը լույս է տեսնում Պարույր Սևակի «Անմահները հրամայում են» բանաստեղծությունների գրքույկը⁶²՝ առավելապես գրված Հայրենական մեծ պատերազմի թեմատիկայով: Գրքույկի շարքերից մեկում («Մեր բախտը») գետեղված երկու բանաստեղծություններում անուղղակիորեն խոսվում է հայ ժողովրդի մեծագույն ողբերգության մասին: «Տունը» բանաստեղծությունը նվիրված է «հայրենադարձ հայերին» և սկսվում է Մեծ եղեռնի հետևանքների գեղարվեստական պատկերումով.

Եվ Եփրատի ափին իմ տնակը այրվեց,
Մի բուռ մոխիր դարձավ հիմքի վրա,
Նրա միակ սյունը ծնկի նման ծալվեց,
Եվ գերանը ջարդվեց՝ մեջքի նման⁶³:

Հիշվում է այդ ամենի պատճառը՝ «արյունոտ մահիկը», ապա և հստակորեն շեշտվում է պատահածի մասին.

Դադարել էր հոգիս հավատալուց վաղուց
Ամեն մի հրաշքի՝ այն օրից դեռ,
Երբ սեփական տան մեջ, իր հայրենի հողում
Ամբողջ մի ժողովուրդ սրով մորթվեց⁶⁴:

Երկրորդ բանաստեղծության մեջ՝ «Մասիսները (գրույց ռուս ճակատային բարեկամիս հետ)», հեղինակը, անդրադառնալով հայության գլխով անցած արհավիրքներին, գրում է.

Բայց վերջում էր բախտը պահել սարսափելին.
Վերջում արևելյան մի բռնակալ
Բավական չէ նրա բարիքները տիրեց,
Բավական չէ նրա բորբ արյունը հագավ,
Իբրև սուլթանական բորբ ծիրանի, –
Մի գիշեր էլ հանկարծ՝
Ննջող ներքինու պես կես գիշերին զարթնած
Օշարակի, Օ, ոչ – ալ արյան ծարավից, –
Ուզեց մորթել ողջին, ջարդել և սպանել...⁶⁵

62 Պարույր Սևակ, *Անմահները հրամայում են* (Երևան, Հայպետհրատ, 1948):

63 Նույն տեղում, 32:

64 Նույն տեղում, 33-34:

65 Նույն տեղում, 37:

Այս հայտնվում է «գերմանական մեղսակցությունը», ինչի առկայությունն էլ թերևս այս բանաստեղծության տպագրվելու գրավականն է դարձել.

Այդպես մի խոլ գիշեր
Նրա կնքահայրը – գերմանական արքան,
Իր մուսուլման սանին հասկացրեց,
Որ Հայաստանն, իբր, վեհափառ սուլթանին
Կամեցել է ... մտքով դավաճանել
(Ակնարկել էր արքան ռուս ջահել ցարին):
Կյանքում, թե մտքի մեջ – միևնույնն էր արդեն
Եվ որոշվեց նրան,
Ի շահ Վիլիելմ կայզեր, ի շահ մեծ սուլթանի,
Յաթաղանով մորթել...⁶⁶

Եվ այդպես հայ ժողովրդին «իր իսկ տան մեջ, իր սեփական հողում / Մորթում էին մի խաչ և մի կիսատ լուսին»⁶⁷:

Այսպիսով՝ պատերազմական և հետպատերազմյան տարիներին, այն, Խորհրդային Հայաստանում լույս են տեսնում պատմավեպեր, ինքնակենսագրական վեպեր ու վիպակներ, չափածո գործեր, որոնցում նկարագրվում էր հայոց ինչպես հեռավոր, բայց հերոսական անցյալը, այնպես և ոչ հեռավոր անցյալը՝ Հայոց մեծ եղեռնը՝ իր բազմաթիվ դրվագներով, միայն թե այս դեպքում՝ իրատեսական մտայն գույներով: Վերջին իրողությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ ստեղծագործություններում ոչ միայն պատկերվում են թուրքերի ու քրդերի վայրագությունները, այլև հիմնավորվում է գերմանացիների մասնակցությունը հայերի ցեղասպանությանը: Գոյութենական պատերազմ վարող Խորհրդային Միությանն անհրաժեշտ էր ոչ միայն ռազմական ուժի համախմբում, այլ նաև իր կազմում գտնվող ժողովուրդների գաղափարախոսական, իրական մորիլիզացիա, որպիսին կարող էր տրամադրել ազգային-էթնիկ ինքնության կարևորագույն տարրերին անդրադարձը, դրանց այնպիսի ներկայացումն ու մեկնաբանումը, որը կօժանդակեր խորհրդային երկրի թշնամու կերպարի մեջ նաև ազգային (էթնիկ) թշնամի տեսնելը: Եվ այս պարագայում խորհրդային գաղափարախոսներին «օգնության» է գալիս ազգային հիշողության այն գործոնը, որը պատերազմից ընդամենը մի քանի տարի առաջ որակվում էր որպես նացիոնալիզմի դրսևորում և պատժվում էր ամենադաժան ձևերով: Խորհրդային Հայաստանի քաղաքացիների մի զգալի մասը արևմտահայեր էին ու նրանց ժառանգները, և նրանց հիշողության մեջ թարմ էր ընդամենը 20-25 տարի առաջ տեղ գտած արևմտահայության եղեռնը: Իսկ դրանում, դեռևս Առաջին աշխարհամարտի տարիներին (ինչի մասին վկայում են ականատեսների պատմությունները, տպագիր ու անտիպ հուշագրությունները), մեծապես կարևորվում էր Օսմանյան կայսրության դաշնակից

66 Նույն տեղում, 38:

67 Նույն տեղում:

Գերմանիայի դերը: Խորհրդային քարոզչությունը երբեմն դիմում էր կոպիտ հնարքների, երբ արևմտահայերի զանգվածային կոտորածների ոչ միայն կազմակերպումը, այլ նաև իրականացումը կապում էր գերմանացիների անվան հետ:

Գերազանցապես այս հանգամանքներով էր պայմանավորված Հայոց մեծ եղեռնի թեմայի արծարծումը ստալինյան ժամանակաշրջանի վերջին փուլի՝ Հայրենական մեծ պատերազմի և հաջորդող մի քանի տարիների ընթացքում:

**MANIFESTATIONS OF THE THEME OF THE MEMORY
OF THE MEDZ YEGHERN AND GERMANS' COMPLICITY
DURING THE YEARS OF STALIN'S REGIME
(THE GREAT PATRIOTIC WAR AND POST-WAR PERIOD)**

Harutyun T. Marutyan

Armenian Genocide Museum-Institute Foundation,

Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia

SUMMARY

During the Great Patriotic War and the following years, historical novels, autobiographical novels, novels, and prose works were published in Soviet Armenia, in which the distant but heroic past of the Armenians was described, as well as in realistic, gloomy colors – the not-so-distant past, the Armenian Genocide with its many episodes. The latter reality is that these works depict not only the atrocities of the Turks and Kurds but also justify the participation of the Germans in the Armenian Genocide; in some cases, there is also talk of European bourgeois diplomacy, which hinders the solution of the Armenian problems in every way. In some of those works, there is praise for the Soviet order; as a rule, the country's leader behind the achievements is also remembered.

Keywords: “Pravda” daily, Gegham Saryan, Garnik Stepanyan, Hrachya Kochar, Kristapor Tapaltsyan, Onik Panikyan, Paruyr Sevak.

**ПРОЯВЛЕНИЯ ТЕМЫ ПАМЯТИ МЕЦ ЕГЕРНА
И НЕМЕЦКОМ СОУЧАСТИИ В ГОДЫ СТАЛИНСКОГО РЕЖИМА
(ВЕЛИКАЯ ОТЕЧЕСТВЕННАЯ ВОЙНА И ПОСЛЕВОЕННЫЕ ГОДЫ)**

Арутюн Т. Марутян

Фонд “Музей-институт Геноцида армян”,

Институт археологии и этнографии, НАН, Армения

РЕЗЮМЕ

В годы Великой Отечественной войны и в последующие годы сталинской эпохи в Советской Армении, выходят в свет исторические романы, автобиографические

повести, повести, проза, в которых рассказывалось о далеком, но героическом прошлом армянского народа, а также в реалистических, мрачных красках описывалось не столь уж и далекое прошлое – Геноцид армян, с его многочисленными эпизодами. Последнее обуславливалось тем, что в этих произведениях изображались не только зверства турок и курдов, но и обосновывалось участие немцев в Геноциде армян, в некоторых случаях речь идет и о европейской буржуазной дипломатии, которая разными способами препятствует решению армянских проблем. В некоторых из этих произведений встречается и восхваление советского строя, нередко упоминается и руководитель страны, стоявший за достижениями.

Ключевые слова: газета “Правда,” Гегам Сарьян, Гарник Степанян, Грачья Кочар, Кристафор Тапалцян, Оник Паникян, Паруйр Севак.

REFERENCES

«Ամենայն Հայոց կաթողիկոս Գեորգ VI-ի մոտ տեղի ունեցած պրես-կոնֆերանսում», «Ծայրագույն պատրիարք Ամենայն Հայոց կաթողիկոս Գեորգ VI-ի դիմումը երեք մեծ տերությունների ղեկավարներին՝ ՍՍՌ- Միության ժողովրդական կոմիսարների սովետի նախագահ Ի. Վ. Ստալինին, Ամերիկայի Միացյալ Նահանգների պրեզիդենտ Հ. Ս. Տրումենին, Մեծ Բրիտանիայի պրեմիեր-մինիստր Չ. Ռ. Էտտլիին» [At the Press-conference held at the Catholicos of All Armenians George VI. The Appeal of the Supreme Patriarch Catholicos of All Armenians George VI to the Leaders of the Three Great Powers: Chairman of the Soviet of People's Commissars of the USSR I. V. Stalin, President of the United States of America H. S. Truman, British Prime Minister C. R. Attlee], *Սովետական Հայաստան* [Sovetakan Hayastan (Yerevan)], December 2, 1945, no. 259 (7512);

«Գերմանիայի Բունդեսպագում ընդունված Հայոց ցեղասպանության վերաբերյալ քանաձեռնի տեքստը» [The text of the resolution on the Armenian Genocide passed in the German Bundestag], <http://www.genocide-museum.am/arm/Germany.php>;

Դեսպան Մորկենթաուի պատմությունը [Ambassador Morgenthau's Story], transl. from English into Armenian by Michael Shamdanjian. Constantinople: Print. House Asaturian and Sons, 1919;

Դեսպան Հենրի Մորգենթաուի պատմությունը [Ambassador Morgenthau's Story], transl. from English into Armenian by Lilit Tutkhalian. Yerevan: AGMI, 2012;

Հարիր էջեր հայ գրականության հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը [Selected Pages of the Armenian Literature from Ancient Times to the Present], ed. Hrachya Grigoryan et al., comp. Minas Hyusyan et al. Yerevan: State Publishing House of Armenian SSR, 1946;

«Հայ ժողովուրդը Սովետական Միության ազատագրական պատերազմի մարտական մասնակիցն է» [The Armenian People – Combat Participants in the Liberation War of the Soviet Union]. *Sovetakan Hayastan Daily* (Yerevan), August 27, 1941, N 203 96312);

Մի. Մորկենթաուի Յիշատակները և Հայկական Եղեռնին Գաղտնիքները

[Ambassador Morgenthau's Story], transl. from English into Armenian by Yenovq Armen. Constantinople: Printing by O. Arzuman, 1919;

«Նամակ հայ մարտիկներին հայ ժողովրդից» [A Letter to Armenian Fighters from the Armenian People]. *Sovetakan Hayastan Daily*, March 2, 1943, N 50 (6778);

«Սովետական Հայաստանի աշխատավորները ջերմորեն ողջունում են ՍՍՌ-Մ ժողովուրդների պատմական որոշումը» [The Workers of Soviet Armenia Warmly Welcome the Historic Decision of the Soviet of People's Commissars of the USSR], *Սովետական Հայաստան* [Sovetakan Hayastan (Yerevan)], December 4, 1945, no. 260 (7513);

«ՍՍՌ-Մ ժողովրդական կոմիսարների սովետում. Արտասահմանից հայերի Սովետական Հայաստան վերադառնալու կապակցությամբ ձեռնարկվող միջոցառումների մասին» [At the Council of the People's Commissariat of the USSR: About the Measures Taken in Connection with the Return of Armenians from Abroad to Soviet Armenia], *Սովետական Հայաստան* [Sovetakan Hayastan (Yerevan)], December 2, 1945, no. 259 (7512);

Charents, Eghishe. *Երկերի ժողովածու* [Collected works], vol. 4. Yerevan: Academy of Sciences of the Armenian SSR, 1968;

Charents, Yeghishe. *Գիրք ճանապարհի. պոեմներ և բանաստեղծություններ* [The Book of the Road. Poems]. Yerevan: Pethrat, 1933;

Eghiazaryan, Azat. «Եղեռնի արտացոլումը խորհրդահայ գրականության մեջ» [The Reflection of the Genocide in the Soviet Armenian Literature]. *Herald of Social Sciences* 4 (1990), 36-41;

Khachatryan, Yuri. «Հրաշալի տասնամյակ (1955-1965)» [Wonderful Decade (1955-1965)]. *Azg daily. Culture* (Yerevan), September 2, 2006;

Kochar, Hrachya. «Գեներալի քույրը» [The Sister of the General], *Սովետական Հայաստան* [Sovetakan Hayastan (Yerevan)], December 4, 1945, no. 260 (7513);

Kochar, Hrachya. «Գեներալի քույրը» [The Sister of the General], *Կոմունիստ օրաթերթ* [Communist (Baku)], December 6, 1945, no. 187 (7043);

Marutyan, Harutyun. «Տայքի ճարտարապետության պատմության ուսումնասիրությունը և խորհրդային գրաքննությունը» [Research of the History of the Architecture of Tayk and the Soviet Censorship], *Banber Matenadarani* 23 (2016): 112-130;

Melkonyan, Christine. *ԽՍՀՄ-Թուրքիա հարաբերությունները. Հայկական հարցը, սևծովյան նեղուցների խնդիրը և դաշնակից պետությունները (1945-1947 թթ.)* [Relations Between the USSR and Turkey: The Armenian Question, Problem of the Black Sea Passages and Allies (1945-1947)]. Yerevan, 2013;

Orbeli, Joseph. «Հայերի դիսերիմ թշնամիները» [Archenemies of Armenians], *Sovetakan Hayastan Daily*, March 2, 1943, N 50 (6778);

Panikyan, Onik. *Մահից դեպի կյանք* [From Death to Life]. Yerevan: Sovetakan grogh, 1948;

Petrosyan, Vardges. «Հոգեբանական փշալարի տարբեր կողմերում» [On Different Sides of "Psychological Barbed Wire"] in Vardges Petrosyan, *Մեր ժողովուրդը ինն է՝ ինչպես... իմ վիշտը: Հրապարակախոսական հոդվածների ժողովածու* [Our People are Mine, as... My Sorrow: Collection of Journalistic Articles], edited by Levon Ananyan. Yerevan: Hayastan, 2003, 127-155;

- Saryan, Gegham. *Բալլադներ* [Ballads]. Yerevan: Haypethrat, 1944;
- Sevak, Paruyr. *Անմահները հրահայրու են* [Immortals Command]. Yerevan: Haypethrat, 1948;
- Stepanyan, Garnik. *Միջապահօրերի օրեր* [Nightmare Days]. Yerevan: Haypethrat, 1945;
- Tapaltsyan, Kristapor. *Պատերազմ, հարյուր տասըին* [War, vol. 1]. Yerevan: Haypethrat, 1946;
- Tapaltsyan, Kristapor. *Պատերազմ, հարյուր երկրորդ* [War, vol. 2]. Yerevan: Haypethrat, 1949;
- Ter-Khachatryan, Yervand. «Հրաշալի տասնամյակ (1955-1965)» [Wonderful Decade (1955-1965)] in Yervand Ter-Khachatryan, *Պարզ խոսքեր: Հոդվածներ, էսսեներ* [Simple Words: Articles, Essays]. Yerevan: Zangak-97, 2018, 96-118;
- Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946 гг.* [Armenia and Soviet-Turkish Relations in Diplomatic Documents, 1945-1946], edited and Introduction by Arman J. Kirakossian. Antelias-Lebanon: Printing House of the Armenian Catholicosate of Cilicia, 2018 (“Khatchig Babikian Publication Fund,” no. 11);
- “Армянский народ – боевой участник освободительной войны Советского Союза,” [The Armenian People – Combat Participants in the Liberation War of the Soviet Union]. *Pravda* (Moscow), August 24, 1941;
- Narutyunyan, Kliment. “Участие армянского народа в Великой Отечественной войне (1941-45 гг.)” [Participation of the Armenian people in the Great Patriotic War (1941-45)]. *Historical-Philological Journal* 2 (2015): 117-142;
- Hasanli, Jamil. *СССР-Турция: от нейтралитета к холодной войне (1939-1953 гг.)* [USSR-Turkey: From Neutrality to the Cold War (1939-1953)]. Moscow: Izdatelstvo “Tsentr Propagandy,” 2008;
- Kochar, Grachya. “Сестра генерала” [The Sister of the General], *Pravda* (Moscow), November 26, 1945, no. 282 (10053);
- Marutyan, Narutyun. “Как помнят Великую Отечественную в Армении: некоторые наблюдения” [How Great Patriotic is Remembered in Armenia: Some Observations]. *Plural. Journal of the History and Geography Department, «Ion Creanga» Pedagogical State University: History, Culture, Society* Vol. 4, no. 2 (2016): 95-105.
- Morgenthau, Henry. *Трагедия армянского народа. История посла Моргентхау* [The Tragedy of the Armenian People. Ambassador Morgenthau’s Story], transl. from English into Russian by A. Yu. Frolova. Moscow: Tsentrpoligraf, 2009;
- “Письмо бойцам-армянам от армянского народа” [A Letter to Armenian Fighters from the Armenian People]. *Pravda*, February 27, 1943; *Коммунист* (Ереван), 2 марта 1943, N 50;
- Советская Армения в годы Великой Отечественной войны (1941-1945). Сборник документов и материалов* [Soviet Armenia during the Great Patriotic War (1941-1945). Collection of Documents and Materials], comp. by V. A. Muradyan, editor in chief A. O. Narutyunyan. Yerevan: Committee of War Veterans and Armed Forces of Armenia, 2009.

Հեղինակի մասին

About the author

Об авторе

Հարություն Տ. Մարության, պատմական գիտությունների դոկտոր, ազգագրագետ, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Արցախի, Նախիջևանի և Ադրբեջանի հայության բռնաճնշումների ուսումնասիրության բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ ցեղասպանության հիշողություն և ազգային ինքնություն, պատկերագրություն:

Էլ. փոստի հասցե՝ harutyun.marutyan@genocide-museum.am

Harutyun T. Marutyan, PhD in History, social/cultural anthropologist, Chief of Department of Repressions of Armenians of Artsakh, Nakhijevan, and Azerbaijan's Armenian-populated regions of the Armenian Genocide Museum-Institute Foundation; Head Researcher, Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences of Armenia.

Research fields – genocide memory and national identity, iconography.

E-mail: harutyun.marutyan@genocide-museum.am

Арутюн Т. Марутян, доктор исторических наук, этнограф, зав. отделом по исследованиям репрессий против армян Арцаха, Нахичевана и Азербайджана Фонда “Музей-институт Геноцида армян”; главный научный сотрудник Института археологии и этнографии Национальной академии наук Армении.

Область исследований – память о геноциде и национальная идентичность, иконография.

Эл. почта: harutyun.marutyan@genocide-museum.am

ՀԵՐԵՐՈՆԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սուրեն Ա. Մանուկյան

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Նարեկ Մ. Պողոսյան

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Գաղութային կառավարումը հաճախ ներառում էր անընդմեջ անհամաչափ բռնության կիրառում, որը թույլ տվեց եվրոպացի գաղութարարներին գործել անսահմանափակ դաժանությամբ: Ակնառու օրինակ է գերմանական գաղութային քաղաքականությունը Հերերո և Նամա ժողովուրդների նկատմամբ Գերմանական Հարավ-Արևմտյան Աֆրիկայում (այժմ՝ Նամիբիա), որը լայնորեն ճանաչվում է որպես ցեղասպանություն:

Սույն հոդվածում ցեղասպանագիտական ուսումնասիրության շրջանակներում հայրենական պատմագրության մեջ առաջին անգամ վերլուծում է Հերերոների ցեղասպանությունը:

1904-1908 թվականներին հերերոները բախվեցին գերմանական ուժերի կողմից կանխամտածված ոչնչացման քաղաքականությանը՝ հարկադիր արտաքսումների, զանգվածային սպանությունների և աշխատանքային ճամբարների միջոցով, ինչը հանգեցրեց բնակչության կտրուկ կրճատման: Թեև Գերմանիան ի սկզբանե հերքում էր պատասխանատվությունը, սակայն փոխհատուցման բանակցությունները սկսվեցին 2015 թ., երբ Գերմանիան ի վերջո ճանաչեց իր հանցագործությունները և առաջարկեց որոշակի փոխհատուցում:

Հերերոների ցեղասպանությունը արտացոլում է եվրոպական տերությունների կողմից գաղութային բռնության ավելի լայն օրինաչափություններ՝ կրելով Հարավային Աֆրիկայի և Հյուսիսային Ամերիկայի տարածաշրջաններում վարվող քաղաքականության ազդեցությունը: Այնուամենայնիվ, հերերոների հետ տեղի ունեցածը եզակի է գեներալ ֆոն Տրոտայի «բնաջնջման պատերազմի» (Vernichtungskrieg) բացէ՛հբաց հայտարարության պատճառով, որը հազվադեպ հանդիպող դեպք է, քանի որ բացահայտորեն նշվում էր ցեղասպանության մտադրության մասին:

Այս ցեղասպանությունը որոշ գիտնականների կողմից դիտվում է նաև որպես Հոլոքոստի նախադրյալ՝ զուգահեռներ անցկացնելով համակենտրոնացման ճամբարների կիրառման և գերիների վրա բժշկական փորձարկումների հարցում: Բացի այդ, Հայոց ցեղասպանության հետ կապեր են նկատվում այնպիսի մարտավարությունների կիրառման մեջ, ինչպիսիք են հարկադիր երթերը դեպի անապատ, որտեղ զրկանքները հանգեցրել են զանգվածային մահվան:

Հերերոների ցեղասպանության շուրջ ժամանակակից քննարկումները նաև ընդգծում են հետցեղասպանական զարգացումները, այդ թվում՝ Գերմանիայի պատրաստակամությունը՝ ընդունելու մեղքը, թեև հատուցման պայմանները մնում են վիճարկվող:

Նամիբիայում տեղի ունեցած ցեղասպանությունը հատկապես ակնառու է հերերո համայնքի համար, որը բնակչության մոտ 10%-ն է կազմում, մինչդեռ այլ էթնիկ խմբեր, չնայած գաղութարարների դեմ պայքարի ընթացքում ցուցաբերած աջակցությանը, անկախությունից հետո այս հարցին առաջնահերթություն չեն տվել:

Բանալի բառեր՝ հերերոներ, գաղութատիրություն, գերմանական քաղաքականություն, հիշողություն, ցեղասպանության համար փոխհատուցում, ցեղասպանության մտադրություն, Լոթար ֆոն Տրոտա:

Հոդվածը ներկայացվել է՝ 06.08.2024: Ընդունվել է տպագրության՝ 27.11.2024:

The article was submitted on 06.08.2024 and accepted for publication on 27.11.2024. Статья поступила 06.08.2024 и была принята к публикации 27.11.2024.

Ինչպես հղել՝ Սուրեն Ա. Մանուկյան, Նարեկ Մ. Պողոսյան, «Հերերոների ցեղասպանությունը. պատմություն և արդիականություն», *Յեղասպանագիտական հանդես* 12, no. 2 (2024), 81-122:

How to cite: Suren A. Manukyan, Narek M. Poghosyan, “Herero Genocide: History and Modernity,” *Ts’eghaspanagitakan handes* 12, no. 2 (2024), 81-122.

Как сослаться: Сурен А. Манукян, Нарек М. Погосян, “Геноцид племени гереро: история и современность,” *Цехаспанagitakan андес* 12, no. 2 (2024), 81-122.

Ներածություն

Գաղութային ցեղասպանությունների ուսումնասիրությունը ցեղասպանագիտության կարևորագույն ուղղություններից է¹: Թեև բռնությունը գաղութային կառավարման ամենաակնառու հատկանիշն էր, սակայն մինչև վերջերս այն բավարար ուսումնասիրված չէր: Այսօր դրա քննությունը ցեղասպանագիտության կարևորագույն միտումներից է: Գաղութային քաղաքականությունը «ամենօրյա բռնության» մարմնավորումն էր, երբ եվրոպացի գաղութարարը մշտական և անհամաչափ բռնություն գործադրելու իրավունք ուներ:

Ուշագրավ օրինակներից է Աֆրիկայի հարավարևմտյան հատվածում բնակվող հերերո և նամա ցեղախմբերի նկատմամբ գերմանական իշխանությունների վարած գաղութային քաղաքականությունը, որը շատ հեղինակներ որակում են որպես ցեղասպանական:

Այս հոդվածը հայրենական ցեղասպանագիտության մեջ առաջին փորձն է գիտական քննության ենթարկելու հերերոների ցեղասպանության դեպքը: 1904-1908 թթ. նրանք ենթարկվեցին գերմանական գաղութարար իշխանությունների գործադրած նպատակաուղղված ոչնչացման քաղաքականությանը: Հետագոտության շրջանակներում նաև առաջին անգամ համեմատական զուգահեռների սերքո դիտարկվում են Հայոց ցեղասպանության և Հերերոների ցեղասպանության միջև գոյություն ունեցող որոշակի նմանություններն ու կապը: Այս թեման, սակայն, առանձին խորը հետազոտության թեմա է:

Հոդվածում նաև փորձ է արվում գնահատելու փոխհատուցման հարցի շուրջ այսօր ընթացող գերմանա-նամիբիական բանակցությունները: Գերմանիան երկար տարիներ ժխտել է իր մեղքը և անտեսել հերերոների՝ ցեղասպանության ճանաչման ու փոխհատուցման պահանջները, սակայն 2015 թ. երկու երկրների միջև սկսվեցին բանակցություններ, որոնց ընթացքում Բեռլինը ոչ միայն ընդունեց իր գործած ոճիրը,

1 Յեղասպանագիտական ուսումնասիրությունների ժամանակակից միտումների, այդ թվում նաև՝ գաղութային ցեղասպանությունների ուսումնասիրության զարգացումների մասին տե՛ս, Օրինակ, Սուրեն Մանուկյան, «Յեղասպանագիտական ուսումնասիրությունների ժամանակակից միտումները», *Վէմ*, no. 1 (2024), 8-65:

այլև պատրաստակամություն դրսևորեց որոշակի հատուցում տրամադրելու Նամիբիային:

Ռ.Լեմկինը և հերերոների ցեղասպանության վաղ շրջանի պատմագրությունը

Գաղութացված ժողովուրդների բնաջնջման փորձերը դեռևս «ցեղասպանություն» եզրույթի հեղինակ Ռ. Լեմկինի ուսումնասիրության շրջանակում էին: «Ցեղասպանություն» եզրույթի հեղինակն ունի որոշ հետազոտություններ աշխարհի տարբեր մասերում գաղութարար կայսրությունների կողմից տեղաբնիկների ոչնչացման մասին²:

1940-ական թթ. իր ուսանող օգնականների հետ աշխատելով ցեղասպանության պատմությանը վերաբերող եռահատորյակի վրա՝ Լեմկինը նախատեսում էր հերերոների դեմ իրագործված ցեղասպանությանը նվիրել աշխատանքի 11-րդ գլուխը³: Նրա՝ Նյու Յորքում գտնվող Հրեական պատմական ընկերությունում պահվող հավաքածուում պահպանվել են նաև հերերոների կոտորածին վերաբերող Գլխավոր ասամբլեայի զեկույց, ակնարկներ և բրոշյուրներ⁴:

Ուշագրավ է, որ իր՝ «Գերմանացիներն Աֆրիկայում» վերնագրով ձեռագրում Լեմկինը նաև անդրադարձ է կատարում հերերոների դեմ ցեղասպանության իրագործմանը նախորդած՝ Գերմանական Հարավարևմտյան Աֆրիկայում (Նամիբիայում) գերմանացի պաշտոնյաների կողմից տեղական բնակչության թիրախավորման պրակտիկային: Օրինակ՝ գերմանացի զինվորները հրահանգավորվել էին կտրել սպանված տեղաբնիկների ականջները և դրանցով ապացուցել սպանվածների թիվը⁵: Պատմաբան Դոմինիկ Շալերը նշում է, որ Լեմկինի չհրապարակված աշխատություններում կարելի է գտնել երկու մեքենագրված ձեռագիր գերմանական գաղութատիրության և 1904-1908 թթ. հերերոների դեմ բնաջնջման պատերազմի մասին: Երկուսն էլ թվագրված չեն, և ենթադրվում է, որ գրվել են 1950-ականների սկզբին: Ամենայն հավանականությամբ, դրանք պետք է դառնային վերոնշյալ աշխատության համապատասխան գլխի հիմքը: Պատմաբանը նաև նկատում է, որ տեքստից երևում է, որ Լեմկինն այնքան լավ տեղեկացված չէր Նամիբիայում հերերոների մշակութային, սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի պայմանների մասին⁶:

Մինչև 2000-ական թվականները Գերմանական Հարավարևմտյան Աֆրիկայում հերերո և նամա ժողովուրդների ցեղասպանության (1904-1908 թթ.) վերաբերյալ

2 St'u American Jewish Historical Society, Raphael Lemkin Collection, P – 154, Series III: History of Genocide, undated, 1763, 1919, circa 1921, 1940s, 1951:

3 St'u Steven L. Jacobs, “The papers of Raphael Lemkin: A first look,” *Journal of Genocide Research* 1, no. 1 (1999): 113, Lemkin, *Lemkin on Genocide*, ed. Jacobs S. L. (Lanham: Lexington Books, 2012), 267-278:

4 St'u AJHS, Raphael Lemkin Collection, P – 154, Box 7, Folder 6: German Massacre at Herrero (Southwest Africa), General Assembly Report, Essay and Pamphlets, undated, 1947-1949:

5 St'u Jeremy Sarkin, *Colonial Genocide and Reparations Claims in the 21st Century: The Socio-Legal Context of Claims under International Law by the Herero against Germany for Genocide in Namibia, 1904-1908* (Westport, London: Greenwood Publishing Group, 2009), 16-17:

6 St'u Dominik J. Schaller, “Raphael Lemkin’s view of European colonial rule in Africa: between condemnation and admiration,” *Journal of Genocide Research* 7, no. 4 (2005): 532:

ակադեմիական հետազոտությունները համեմատաբար սակավ էին, և այն ավելի քիչ էր ուշադրության արժանանում, քան մյուս գաղութային ցեղասպանությունները կամ Հոլոքոստը: Այնուամենայնիվ, որոշ պատմաբաններ և հետազոտողներ, հատկապես գերմանական գաղութատիրության պատմության և աֆրիկյան ուսումնասիրությունների շրջանակներում, անդրադարձ կատարեցին Նամիբիայում տեղի ունեցած հանցագործությանը: Այսպես, Հորսթ Դրեխսլերի «Թող մեռնենք կովելով» («Südwestafrika unter deutscher Kolonialherrschaft») ստեղծագործությունը համարվում է հերերո և նամա ժողովուրդների ցեղասպանության վերաբերյալ կարևոր աշխատություն⁷, որում նա ուսումնասիրում էր ցեղասպանության պատճառները, մեթոդները և հետևանքները՝ այն դիտարկելով նաև գերմանական գաղութատիրության ավելի լայն համատեքստում:

Հարավարևմտյան Աֆրիկայում գերմանական գաղութատիրության մասին ավելի լայն պատկերացում է տալիս Հելմուտ Բլեյի գիրքը⁸՝ ներառելով ցեղասպանությանը հանգեցրած տնտեսական, սոցիալական և քաղաքական պայմանների մանրամասն վերլուծությունը: Բլեյն չի կենտրոնացել բացառապես ցեղասպանության վրա և ուսումնասիրել է նաև հերերոների ապստամբության պատճառներն ու գերմանական բանակի կողմից այն ճնշելու դաժան մեթոդները՝ ներառյալ զանգվածային սպանությունները և համակենտրոնացման ճամբարներ արքայազնը: Ամերիկացի պատմաբան Ջոն Բրիջմենը 1981 թ. հրապարակեց հերերոների ցեղասպանության վերաբերյալ առաջին անգլալեզու հետազոտություններից մեկը⁹: Բրիջմենն ընդգծում էր գեներալ Լոթար ֆոն Տրոտայի բնաջնջման տխրահռչակ հրամանի (Vernichtungsbefehl) ցեղասպանական բնույթը, որով նա բացահայտորեն կոչ էր անում ոչնչացնելու հերերո ժողովրդին: Չնայած այս աշխատանքն այնքան ընդգրկուն չէր, որքան Դրեխսլերի կամ Բլեյի ուսումնասիրությունները, այնուամենայնիվ, կարևոր ներդրում էր ցեղասպանությունը պատմական ավելի լայն քննության ենթարկելու հարցում:

Հոլանդացի պատմաբան Յան-Բարտ Գևալդը ներկայացրել է հերերո ժողովրդի սոցիալ-քաղաքական կյանքի մանրամասն պատմությունը՝ ներառյալ ցեղասպանության և դրա հետևանքների լայնածավալ քննությունը¹⁰: Գևալդն իր հետազոտության մեջ միավորել է արխիվային ուսումնասիրությունները և հերերոների ժառանգների բանավոր պատմությունները՝ ավելի հստակ պատկերացում տալով հերերո հասարակության վրա ցեղասպանության երկարատև ազդեցության մասին:

Վաղ շրջանի այս աշխատությունները հիմք դարձան ցեղասպանության ավելի ընդգրկուն ուսումնասիրությունների և հանրային ճանաչման համար 21-րդ դարում:

7 Անգլերեն տարբերակը տե՛ս Horst Drechsler, “Let us die Fighting”: the Struggle of the Herero and Nama against German imperialism (1884-1915) (London: Zed Press, 1980), 277 էջ:

8 Տե՛ս Helmut Bley, *South West Africa Under German Rule, 1894-1914* (Evanston: Northwestern University Press, 1971), 303 էջ:

9 Տե՛ս Jon Bridgman, *The Revolt of the Hereros (Perspectives on Southern Africa)* (Berkeley and Los Angeles: University of California Press, 1981), 184 էջ:

10 Տե՛ս Jan Bart Gewald, *Towards Redemption: A Socio-Political History of the Herero of Namibia between 1890 and 1923* (Leiden: Research School CNWS, School of Asian, African, and Amerindian Studies, 1996), 400 էջ:

Եվ այսօր ցեղասպանությունների և էթնիկ զտումների պատմության մասին տպագրվող յուրաքանչյուր գիրք անդրադարձ է կատարում հերերոների ցեղասպանությանը¹¹: Վերջին շրջանի պատմական աշխատություններում ընդգծվում է հերերո և նամա ժողովուրդների ու եվրոպացի հրեաների ճակատագրերի միջև կապը: Հետազոտողները պնդում են, որ գաղափարներն ու մեթոդները, որոնք առանցքային դեր են կատարել Հոլոքոստում, որոշակիորեն դրսևորվել են գաղութատիրական Աֆրիկայում գերմանացիների իրականացրած վայրագությունների մեջ:

Հերերոները և գերմանական գաղութային քաղաքականության սկզբնավորումը

Աֆրիկյան մայրցամաքի հարավ-արևմտյան մասում՝ ներկայիս Նամիբիայի տարածքում, ապրում էին հերերոները, որոնց լեզուն պատկանում է բանտու լեզվաընտանիքին, իսկ հարավում՝ նամաները, որոնք խոսում էին քոյսանյան լեզուներով: Հերերոները բնակվում էին Նամիբիայի կենտրոնական ափամերձ բարձրադիր հարթավայրերում: Նրանք ինքնավար էին, ունեին ապակենտրոնացված ցեղային կառավարում, ապրում էին մեծ ընտանիքներով և զբաղվում անասնապահությամբ:

Եվրոպացիների ծանոթությունը Նամիբիայի տարածքներին սկիզբ է առել առևտրականների և նավաստիների միջոցով՝ սկսած 1486 թ. հունվարից, երբ պորտուգալացի հետազոտող Դիեգո Կանն ավի իջավ Քեյփ Քրոսում: 1485 թ. Պորտուգալիայի թագավոր Ժոաո II-ը հանձնարարել էր նրան Աֆրիկայի արևմտյան ափով նավարկել հարավ՝ դեպի Հնդկաստան տանող ծովային ճանապարհ գտնելու և պորտուգալական թագի համար անհայտ տեղանքն ուսումնասիրելու և տվյալներ գրառելու համար¹²: Սակայն տևական ժամանակ եվրոպական գաղութացումը սահմանափակ բնույթ էր կրում: 1805 թ. Լոնդոնի միսիոներական միությունը փոքր առաքելություն հիմնեց Նամիբիայում¹³, բայց այս խումբը զգալի հաջողության չհասավ: Իսկ 1840-ական թթ. Նամիբիա ժամանեցին գերմանական «Ռենիշ» միսիոներական ընկերության¹⁴ միսիոներները¹⁵:

11 Թեմայի վերաբերյալ տպագրված գրականության մասին տե՛ս Dominik J. Schaller, “Genocide in Colonial South-West Africa: The German War Against the Herero and Nama, 1904-1907,” in *Genocide: A Critical Bibliographic Review*, vol. 8: Genocide of Indigenous Peoples, ed. Samuel Totten and Robert K. Hitchcock (New Brunswick: Transaction, 2011), 37-60:

12 Տե՛ս “Cape Cross,” <https://www.info-namibia.com/activities-and-places-of-interest/swakopmund-surrounds/cape-cross>, դիտվել է՝ 28.07.2022:

13 Տե՛ս Tilman Dedering, “Southern Namibia c.1700 - c.1840: Khoikhoi, Missionaries and the Advancing Frontier” (PhD diss., University of Cape Town, 1989), 131-144:

14 1828 թ. սեպտեմբերի 23-ին Էլբերֆելդից, Բարմենից և Քյոլնից միսիոներական խմբերը որոշեցին միավորվել՝ ստեղծելով «Ռենիշ» միսիոներական միությունը: Հետագայում այն պետք է դառնար միսիոներական ամենամեծ միությունը ողջ Գերմանիայում: Առաջին միսիոներները ձեռնադրվեցին և ուղարկվեցին Հարավային Աֆրիկա 1828 թ. վերջին: Ավելի մանրամասն տե՛ս “The Rhenish Mission in South Africa and Namibia,” https://safrika.org/rhenish_en.html, դիտվել է՝ 30.09.2024:

15 Տե՛ս Cai Nebe, “Namibia: A timeline of Germany’s brutal colonial history,” *Deutsche Welle*, September 2, 2021, <https://www.dw.com/en/namibia-a-timeline-of-germanys-brutal-colonial-history/a-57729985>:

Ի տարբերություն իր եվրոպական մրցակիցների՝ Գերմանիան բավականին ուշ մուտք գործեց Աֆրիկա: Ֆրանս-պրուսական պատերազմում հաղթանակը լավ առիթ էր նորաստեղծ գերմանական պետության համար ցուցադրելու իր կարողությունները: Գերմանիայի՝ հերերոների նկատմամբ դաժան վերաբերմունքը կարելի է բացատրել նաև իր ուժն ու կարողությունները եվրոպական մյուս երկրներին ցույց տալու համատեքստում: Նա պետք է ապացուցեր, որ թեև երիտասարդ, բայց կարող մի կայսրություն է, որն ունակ է մրցակցելու գաղութացման հին ավանդույթներ ունեցող այլ մեծ տերությունների հետ: Այս առումով պետք է նշել, որ Գերմանիան մեծապես ոգեշնչված էր բրիտանական օրինակով և կարծում էր, որ միայն գաղութներին տիրապետելը կարող է պետությունը բարձրացնել մեծ տերության կարգավիճակի¹⁶:

1882 թ. նոյեմբերի 16-ին գերմանացի վաճառական Ադոլֆ Լյուդերիցը կանցլեր Բիսմարկից պաշտպանություն խնդրեց մի կայանավայրի համար, որը նա նախատեսում էր կառուցել Հարավարևմտյան Աֆրիկայում: Երբ համաձայնությունը ձեռք բերվեց, նրա աշխատակից Հենրիխ Ֆոգելսանգը հողատարածք գնեց տեղական ցեղապետից և բնակավայր հիմնեց Անգրա Պեկենայում, որը վերանվանվեց Լյուդերից: 1884 թ. նոր հողեր գնելով՝ Լյուդերիցն ընդարձակեց բնակավայրի տարածքը և համոզեց Բիսմարկին այն հռչակել գերմանական պրոտեկտորատ, կառավարիչներ ու զինվորներ ուղարկել՝ գերմանական իշխանությունն ամրապնդելու և տեղացիներին ընդունել տալու նպատակով¹⁷:

1884 թ. տեղի է ունենում Բեռլինի կոնգրեսը, որի որոշմամբ Աֆրիկան հայտնվեց եվրոպական տարբեր պետությունների վերահսկողության ներքո: Դա արվում էր ռեսուրսների վերահսկման համար գաղութատերերի մրցակցությունը կարգավորելու նպատակով և կարևոր նշանակություն ունեցավ հետագայում մայրցամաքի վրա ավելի ուշ ձևավորված ազգային պետությունների սահմանները գծելու գործում: Տեղի ժողովուրդներն այդ ժամանակից սկսում են ավելի շատ կապվել հեռավոր եվրոպական տերությունների և ոչ թե տարածաշրջանային միջավայրի հետ¹⁸: Ներկայիս Նամիբիայի տարածքը դառնում է Գերմանական կայսրության պրոտեկտորատ՝ կոչվելով Գերմանական Հարավարևմտյան Աֆրիկա¹⁹:

Հետաքրքիր է, որ 1885 թ. որպես գերմանական կայսերական հանձնակատար Հարավարևմտյան Աֆրիկա է ժամանում դոկտոր Գյորինգը, ով նացիստական կուսակցության ապագա առաջնորդներից Հերման Գյորինգի հայրն էր: Նա կարողա-

16 St'u Jurgen Zimmerer, *Deutsche Herrschaft über Afrikaner. Staatslicher Machtanspruch und Wirklichkeit im kolonialen Namibia* (Münster, 2004), 15, Mads Bomholt Nielsen, *Britain, Germany and Colonial Violence in South-West Africa, 1884-1919. The Herero and Nama Genocide* (London: Palgrave Macmillan, 2022), 18:

17 St'u Joshua Hammer, "Retracing the steps of German colonizers in Namibia," *The New York Times*, June 13, 2008, <https://www.nytimes.com/2008/06/17/travel/17iht-trnamibia.1.13695784.html>.

18 St'u Antony Gerald Hopkins, "Quasi States, Weak States, and the Partition of Africa," *Review of International Studies* 26, no. 2 (2000): 311-320, Veena Das, "Collective Violence and the Shifting Categories of Communal Riots, Ethnic Cleansing and Genocide, The Historiography of Genocide," in *The Historiography of Genocide*, ed. Dan Stone (Basingstoke: Palgrave Macmillan, 2008), 98:

19 St'u Nebe, "Namibia: A timeline of Germany's brutal colonial history":

նում է մեծացնել գերմանական ազդեցությունն այս տարածաշրջանում, այդ թվում նաև տարբեր ցեղերի առաջնորդների հետ կնքելով հովանավորության վերաբերյալ պայմանագրեր²⁰: 1897 թ. ժանտախտի պատճառով ոչնչանում է հերերոների հոտերի ավելի քան 80 %-ը, ինչը ստիպում է շատ հովիվների օրապահիկով աշխատել գերմանական ֆերմաներում²¹:

Սկզբում գերմանացիների և հերերոների միջև հարաբերությունները համեմատաբար ջերմ էին, հատկապես երբ հերերոներն ընդունեցին քրիստոնեություն և համակերպվեցին գերմանական ներկայության հետ: Նրանք նաև պաշտպանության պայմանագրեր ստորագրեցին գաղութատերերի հետ, որպեսզի վերջինները պաշտպանին իրենց հակառակորդ նամա խմբերի հարձակումներից²²:

Մինչև 1903 թվականը մոտ 5 000 գերմանացի էր ապրում գաղութներում, որոնք գյուղատնտեսությամբ զբաղվելու համար չորային կլիմայի պատճառով հողատարածքների կարիք ունեին: Ուստի գաղութային իշխանությունները սկսեցին տարբեր մարտավարություններ կիրառել հերերոներին իրենց հողերից ու անասուններից զրկելու համար, նույնիսկ այն դեպքում, երբ դա նշանակում էր խախտել արդեն իսկ ձեռք բերված պայմանավորվածությունները:

Ուշագրավ է, որ վերաբնակները չէին վստահում միսիոներներին, որոնք ձգտում էին նոր քրիստոնյաներ ստեղծելու արտերկրում, քանի որ դա կարող էր նպաստել ձուլմանը և խարխլել անհավասարությունը, որն էական նշանակություն ուներ գաղութատիրական հասարակության համար: Վերաբնակները վախենում էին, որ քրիստոնեացումը կարող էր սևամորթ աֆրիկացիների շրջանում արթնացնել, օրինակ, հավասարության և մարդկային արժանապատվության գաղափարներ, քանի որ դրանք հակասում էին գաղութատիրական հիերարխիային: Իսկ եթե քրիստոնեացումը պետք է տեղի ունենար, ապա միայն սևամորթներին հնազանդեցնելուց «դարեր անց»²³:

Հերերոների առաջնորդները, տեսնելով գերմանացիների հետ կնքած պայմանագրերի անօգուտ լինելը, կապեր են հաստատում անգլիացիների հետ: Դրանից հետո Բիսմարկը փոքրիկ զորախումբ է ուղարկում Հարավարևմտյան Աֆրիկա՝ ցույց տալու, որ գերմանական կառավարությունն այն վերցնում է իր անմիջական պատասխանատվության տակ²⁴: Եվ միայն 1893 թ., երբ գաղութի առաջին կառավարիչ է նշանակվում

20 St'u Jon Bridgeman and Leslie J. Worley, *Genocide of Hereros, Century of Genocide. Critical Essays and Eyewitness Accounts* (Routledge, New York, London), 2004, 18:

21 St'u Nicolas Patin, "The massacre of the Herero and Nama: A colonial laboratory for genocide?," *Digital Encyclopedia of European History*, <https://ehne.fr/en/encyclopedia/themes/europe-europeans-and-world/europe-and-colonial-wars/massacre-herero-and-nama-a-colonial-laboratory-genocide>, դիտվել է՝ 30.09.2024:

22 St'u Cai Nebe, "When colonial Germany committed genocide in Namibia," *Deutsche Welle*, April 1, 2024, <https://www.dw.com/en/when-colonial-germany-committed-genocide-in-namibia/a-67623302#:~:text=In%201897%20a%20Rinderpest%20epidemic,arid%20to%20semi%20Darid%20climate>.

23 St'u Matthias Häussler, *The Herero Genocide. War, Emotion, and Extreme Violence in Colonial Namibia* (New York/Oxford: Berghahn, 2021), 250-251:

24 St'u Bridgeman and Worley, *Genocide of Hereros, Century of Genocide. Critical Essays and Eyewitness Accounts*, 18:

Թեոդոր Լոյթվեյնը, պարզվում են գերմանական իշխանությունների մտադրությունները, այն է՝ հպատակեցնել բնիկ հերերո և նամա ժողովուրդներին ու նրանց հողերը բնակեցնել գերմանացի ֆերմերներով²⁵:

Գաղութային քաղաքականությունը և ցեղասպանության պատճառները

Մինչև հերերոների ցեղասպանության պատճառներին անդրադառնալը պետք է նշել, որ գերմանական գաղութատերերի դաժանությունը համատարած բնույթ ուներ: Այլ գաղութներում նույնպես, ինչպիսին էր, օրինակ, Գերմանական Արևելյան Աֆրիկան, գոյություն ուներ բռնության իսկական պաշտամունք: Գերմանական արևելաաֆրիկյան ընկերությունը²⁶, մասնավորապես Կարլ Պիթերսի ղեկավարության շրջանում, աֆրիկյան բնակչությանը վերաբերվում էր որպես կենդանիների և օգտագործում նրանց ծանր աշխատանքներում՝ այդ ամենը հիմնավորելով բացահայտ ռասիստական գաղափարախոսությամբ²⁷: Ավելին՝ տեղացիների երկու՝ Վահեհենների (1891-1898) և Մաջի-Մաջի²⁸ (1905-1907) ապստամբությունները ճնշելիս դրսևորվեց այնպիսի դաժանություն, որը պետք է կանխեր հետագայում նման զարգացումները²⁹:

Կային մի քանի պատճառներ, որոնք հանգեցրին հերերոների ապստամբությանը: Դրանք բոլորը կապված էին տնտեսական մրցակցության և գաղութային դաժան քաղաքականության հետ, որը գերմանացիները գործադրում էին Հարավարևմտյան Աֆրիկայում:

Տնտեսական հակասության հիմքում *հողային հարցն* էր: Հերերոները զբաղեցնում էին Նամիբիայի արոտավայրային լավագույն տարածքները, որոնք բնականաբար հայտնվեցին գաղութարարների հետաքրքրությունների առանցքում: Ուշագրավ է, որ տեղացիներին հողագրկելու հիմնավորումներն ունեին բացահայտ ռասիստական բնույթ: Այսպես, 1898 թ. գերմանական հարավարևմտյան գաղութների նահանգա-

25 St' u Niall Ferguson, *Civilization: The West and the Rest* (New York: The Penguin Press, 2011), 176:

26 Գերմանական արևելաաֆրիկյան ընկերությունը (Deutsch-Ostafrikanische Gesellschaft) կանոնադրական գաղութային կազմակերպություն էր, որը ծառայեց Գերմանական Արևելյան Աֆրիկայի հիմնադրմանը, որը ներառում էր ներկայիս Տանզանիայի, Բուրունդիի և Ռուանդայի տարածքները: Ընկերությունը հիմնադրվել է 1884 թ. որպես Գերմանական գաղութացման ընկերություն (Gesellschaft für deutsche Kolonisation)՝ նպատակ ունենալով առևտուր անելու Աֆրիկայում: Սակայն երբ պարզ դարձավ, որ ընկերությունը չի կարող կառավարել իր տիրապետության տակ գտնվող տարածքները, 1891 թ. դրանք վաճառվեցին գերմանական կառավարությանը, որը սկսեց ուղղակիորեն կառավարել Գերմանական Արևելյան Աֆրիկան: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Բրիտանիան ի վերջո գրավեց Գերմանական Արևելյան Աֆրիկան: Ավելի մանրամասն տե՛ս “Deutsch-Ostafrikanische Gesellschaft (D.-O.-A. G.),” <https://deutsche-schutzgebiete.de/wordpress/deutsch-ostafrikanische-gesellschaft-d-o-a-g/>, դիտվել է՝ 10.10.2024:

27 Ավելի մանրամասն տե՛ս Arne Perras, *Carl Peters and German Imperialism, 1856-1918: A Political Biography* (Oxford: Clarendon Press, 2004), 118:

28 Գերմանական Արևելյան Աֆրիկայում (ժամանակակից Տանզանիա) բնակվող մոտ 20 ցեղերի համընդհանուր ապստամբություն՝ ընդդեմ գերմանացի գաղութարարների:

29 Գերմանական Արևելյան Աֆրիկայում դրսևորված դաժանության վերաբերյալ տե՛ս, օրինակ, Susanne Kuss, *German Colonial Wars and the Context of Military Violence* (Cambridge, MA: Harvard University Press, 2017), 72; Nielsen, *Britain, Germany and Colonial Violence in South-West Africa, 1884-1919*, 5:

պետ Թ. Լոյթվեյնը շեշտում էր, որ «Գաղութի ապագան հետևյալն է. հողն աստիճանաբար պետք է քիչ աշխատող բնիկների ձեռքից անցնի սպիտակների ձեռքը»³⁰: Նման ձևակերպում կա նաև «The Deutsch Südwestafrikanische Zeitung» թերթի 1901 թ. հունվարի 22-ի համարում, ըստ որի՝ հողը պետք է բնիկներից փոխանցվեր սպիտակներին. դա էր այդ տարածքում գաղութացման նպատակը: Այսինքն՝ տարածաշրջանը պետք է բնակեցվեր սպիտակներով: Այդպիսով բնիկները պետք է հանձնվեին, դառնային սպիտակների ծառաները կամ հեռանային³¹:

Հերերոները մեծապես անհանգստանում էին հողերի աստիճանական կորստով: Մինչև 1900 թվականը նրանց ժառանգական հողերի միայն մի փոքր մասն էր օտարվել, սակայն իրավիճակը փոխվում էր: Նման ընթացքի դեպքում նրանք չէին ունենա բավականաչափ հող իրենց ավանդական ապրելակերպը պահպանելու համար³²: Արդեն 1903 թ. եվրոպացիների ձեռքերում էր հերերոների հողերի մոտ 25 %-ը³³: Այսպիսով՝ հողի կորուստը հերերոները դիտում էին որպես սպառնալիք՝ ուղղված իրենց ավանդական կյանքին:

Հողային խնդիրն ավելի սրեց Օտավիի երկաթգծի կառուցման նախագիծը: Այդ երկաթգիծը պետք է կապեր Ատլանտյան օվկիանոսը Ցումեր հանքավայրի հետ, որտեղ գերմանացիները արդյունահանում էին պղինձ և հազվագյուտ բազմաթիվ այլ մետաղներ: Իսկ երկաթգիծն անցնում էր հերերոների հողերով³⁴:

Խնդրահարույց հաջորդ ոլորտն *անասնապահությունն* էր: Խոշոր եղջերավոր անասունները հերերոների տնտեսության հիմքն էին: Անասուններ ունենալը հերերոների համար նշանակում էր նաև ունենալ հարստություն, հեղինակություն և իշխանություն: Սակայն աստիճանաբար անասունները նույնպես անցնում էին գաղութարարների ձեռքը: Գերմանացիները հստակ նպատակ ունեին իրենց աֆրիկյան գաղութի առնչությամբ, այն է՝ դարձնել այն համաշխարհային շուկայում մրցունակ անասնապահական շրջան³⁵: 1902 թ. արդեն հերերոների ձեռքում մնացել էր ընդամենը 45 910 գլուխ խոշոր եղջերավոր անասուն: Գերմանացի վերաբնակները նրանցից գնել կամ գնեքով առգրավել էին մոտ 44 490 խոշոր եղջերավոր անասուն³⁶:

30 Gerhard Pool, *Samuel Maherero* (Windhoek: Gamsberg Macmillan, 1990), 117, ըստ Benjamin Madley, "Patterns of frontier genocide 1803-1910: the aboriginal Tasmanians, the Yuki of California, and the Herero of Namibia," *Journal of Genocide Research* 6, no. 2 (2004): 181.

31 Տե՛ս John H. Wellington, *South West Africa and its Human Issues* (Oxford: Oxford Press, 1967), 194, ըստ Madley, "Patterns of frontier genocide 1803-1910," 181:

32 Տե՛ս Jon Bridgman and Leslie J. Worley, "Genocide of the Hereros," in *Century of Genocide Critical Essays and Eyewitness Accounts*, eds. Samuel Totten and William S. Parsons (New York and London: Routledge, 2009), 17:

33 Տե՛ս Bridgman, *The Revolt of the Hereros*, 52, Wellington, *South West Africa and its Human Issues*, 197, ըստ Madley, "Patterns of frontier genocide 1803-1910," 181:

34 Տե՛ս Bley, *South West Africa under German Rule, 1898-1914*, 139, Brian Wood ed., *Namibia 1884-1984: Readings on Namibia's History and Society* (London: Namibia Support Committee, 1988), 195, ըստ Madley, "Patterns of frontier genocide 1803-1910," 181:

35 Տե՛ս Theodor Leutwein, *Elf Jahre Gouverneur in Deutsch Südwestafrika* (Berlin: Ernst Siegfried Mittler und Sohn, 1907), 410, ըստ Madley, "Patterns of frontier genocide 1803-1910," 181:

36 Տե՛ս Drechsler, "Let Us Die Fighting," 119, ըստ Madley, "Patterns of frontier genocide 1803-1910," 181:

Պետք է նշել նաև, որ տեղացիներն ունեին կովերի պաշտամունք: Ըստ հերերոների առասպելների՝ Աստված հերերոներին տվել էր կով և ցուլ, իսկ մնացած ժողովուրդներին՝ նվազ արժեքավոր նվերներ: Հերերոների բառապաշարն այնքան էլ հարուստ չէր, սակայն ուներ մոտ հազար բառ, որոնք առնչվում էին կովերին: Ուստի պատահական չէ, որ երբ անասունները վտանգվում էին, հիմնականում խաղաղասեր հերերոները կարող էին վերածվել ահարկու զինվորների³⁷:

Այսպիսով՝ հողի և անասունների բռնագրավումը միայն տնտեսական հիմքեր չունեին: Այն մեծ ազդեցություն ունեցավ նաև հերերոների ինքնության ու մշակույթի վրա: Անասունները սերտորեն կապված էին ցեղային հավատալիքների հետ. հերերոների համար անասունների վաճառքը մեղք էր նախնիների հանդեպ, որոնցից նրանք ստացել էին կովերի հոտերը: Նախնիների պաշտամունքը սերտորեն կապված էր անասուններ ունենալու հետ, ուստի նրանց կորստով վտանգվում էր նաև այդ պաշտամունքը³⁸: Այդպիսով խարխվում էր հավատալիքների ողջ համակարգը, որը ցեղային մշակույթի կարևորագույն մասն էր³⁹: Նույնը կարելի է ասել հողի մասին⁴⁰:

Գերմանական *առևտրուն ու դրանից առաջացած պարտքերը* տնտեսական հակասությունների երրորդ պատճառն էին: Տարիներ շարունակ հերերոներն ապրանքներ էին ձեռք բերում գերմանացի առևտրականներից, որոնք չափազանց բարձր տոկոսադրույքներ էին գանձում փոխառություն տրամադրելու համար: Ավելին՝ գերմանացիներն ուղղակիորեն հորդորում էին հերերոներին վարկով ապրանքներ գնել⁴¹:

Պարտքերը հաճախ այնքան մեծ էին լինում, որ հերերոները ստիպված դրանց դիմաց տալիս էին իրենց անասուններին և հողերը: Երբ նահանգապետ Լոյթվելը փորձեց հանգուցալուծում տալ այս խնդրին, դա փաստացի ավելի վատ հետևանքներ ունեցավ:

Նահանգապետի 1903 թ. հուլիսի 23-ի որոշմամբ՝ պարտատերերին տրվում էր մեկ տարի ժամանակ հերերոներից իրենց պարտքերը հավաքելու համար, իսկ ժամկետի լրանալուց հետո բոլոր պարտքերն անվավեր էին ճանաչվելու: Այդ որոշումն ուժի մեջ մտավ 1903 թ. նոյեմբերի 1-ին: Որպես արդյունք, պատմաբան Ջոն Վելինգթոնի խոսքերով, «առևտրականները գայլերի ոհմակի նման հարձակվեցին հերերոների

37 St'u Bridgman, *The Revolt of the Hereros*, Chapter 1, ըստ Bridgeman and Worley, *Genocide of Hereros, Century of Genocide. Critical Essays and Eyewitness Accounts*, 17:

38 St'u Heinrich Vedder, *South West Africa in early times* (New York: Barnes & Noble, 1966), 47, 162, ըստ Sarkin, *Colonial genocide and reparations claims in the 21st century*, 48: St'u Bridgman, *The Revolt of the Hereros*, Chapter 1, ըստ Bridgeman and Worley, *Genocide of Hereros, Century of Genocide. Critical Essays and Eyewitness Accounts*, 17:

39 St'u Hendrik Gerhardus Luttig, *The religious system and social organization of the Herero: A study in Bantu culture* (Utrecht: Kemink & Zoon, 1933), 3, ըստ Sarkin, *Colonial genocide and reparations claims in the 21st century*, 48:

40 St'u Carl-J. Hellberg, *Mission, colonialism, and liberation: The Lutheran Church in Namibia 1840-1966* (Windhoek: New Namibia Books, 1997), 13, ըստ Sarkin, *Colonial genocide and reparations claims in the 21st century*, 48:

41 St'u Tilman Dederling, ““A Certain Rigorous Treatment of All Parts of the Nation”: The Annihilation of the Herrero in German South West Africa, 1904,” in *The Massacre in History*, ed. by Mark Levene & Penny Roberts (New York and Oxford: Berghahn Books, 1991), 206:

վրա»⁴²: Բնականաբար, գերմանացի առևտրականները սկսեցին հերերոներից պահանջել հնարավորինս շուտ վերադարձնել իրենց գումարը⁴³: Այդ գործընթացն ուղեկցվում էր բազմաթիվ չարաշահումներով և խարդախություններով: Պարտապանները երբեմն ոստիկանական համազգեստներ էին հագնում պարտքեր ունեցողներին ահաբեկելու համար, երբեմն օգտագործվում էր բանակը, իսկ դատարանները մշտապես գերմանացիների օգտին էին վճիռ կայացնում: Հերերոների դեմ միայն քաղաքացիական դատարանում 106 հազար պահանջ էր ներկայացվել⁴⁴: Այդ պահանջները մեծ զայրույթ էին առաջ բերում հերերոների շրջանում:

Մյուս կողմից՝ հերերոները լավ չէին պատկերացնում եվրոպական ֆինանսական համակարգը և պարտքի դիմաց ունեցվածքի բռնագրավումն ընկալում էին իբրև գողություն, ինչն ավելի էր սրում երկու համայնքների միջև հարաբերությունները: Հերերոներն ավանդաբար տարիներն անվանակոչում էին ըստ տեղի ունեցած ամենակարևոր իրադարձության: Եվ պատահական չէ, որ 1903 թ. անվանվեց «առևտրականների և խարդախության տարի»⁴⁵:

Բացի տնտեսական պատճառներից՝ ոչ պակաս նշանակություն ուներ նաև *ընդհանուր խարդակալական վերաբերմունքը տեղաբնիկների նկատմամբ*:

Հերերոների սպանությունները գաղութարարների կողմից սովորական երևույթ էին: Մշտապես թիրախավորվում էին հերերո կանայք: Դրա պատճառը սեռային անհավասար բաշխվածությունն էր, որ ստեղծվել էր վերաբնակիչների շրջանում: 1903 թ. գերմանական հարավարևմտյան գաղութում ապրում էին 3 970 եվրոպացի տղամարդ և միայն 712 եվրոպացի կին: Այս պայմաններում հերերո կանայք հաճախ էին դառնում բռնության զոհ: Ավելին՝ գերմանացիները նույնիսկ հատուկ տերմիններ էին ստեղծել իրենց գործողությունների համար՝ «Verkauffung» կամ «գնալ տեղացիների մոտ» և «Schmutzwirtschaft» կամ «կեղտոտ գործ»⁴⁶:

Դեռևս 1902-1903 թթ. գեներալ Լոյթվեյնը գիտեր, որ հերերոները գենք էին ձեռք բերում պորտուգալացիներից և Հարավային Աֆրիկայից՝ Բարեհուստ հրվանդանից՝ չնայած 1897 թ. գենք ձեռք բերելու արգելքի հրամանին: 1903 թ. օգոստոսին արդեն Լոյթվեյնը զեկուցում էր, որ ապստամբությունը մոտենում է⁴⁷:

Ապստամբության նախօրեին հերերոների առաջնորդներից մեկի որդին իր կնոջ հետ հյուրընկալվում է Դիթրիխ անունով գերմանացի մի վերաբնակի տանը: Գիշերը տանտերը սեռական բռնության է ենթարկում և սպանում հերերո կնոջը: Գեր-

42 Wellington, *South West Africa and Its Human Issues*, 198.

43 St' u Bridgman and Worley, "Genocide of the Hereros," 19:

44 St' u Jeremy Sarkin, *Germany's Genocide of the Herero: Kaiser Wilhelm II, His General, His Settlers, His Soldiers* (Cape Town: University of Cape Town Press, 2011), 83:

45 St' u Wellington, *South West Africa and Its Human Issues*, 198, Drechsler, "Let Us Die Fighting," 118, ըստ Bridgeman and Worley, *Genocide of Hereros, Century of Genocide. Critical Essays and Eyewitness Accounts*, 19:

46 St' u Paul Rohrbach, *Deutsche Kolonialwirtschaft* (Berlin and Schöneberg: Buchverlag der Hilfe, 1907), 243, ըստ Madley, "Patterns of frontier genocide 1803-1910," 182:

47 St' u Sarkin, *Germany's Genocide of the Herero*, 41-42:

մանական դատարանը սկզբում արդարացնում է Դիթրիխին, սակայն բարձրացած դժգոհությունների մեծ ալիքից հետո միայն դատապարտում է նրան երեք տարվա ազատազրկման՝ սպանության մեղադրանքով: Հերերոների համար այս ոճրագործությունն իրենց համայնքի խոցելիության և անպաշտպան լինելու ևս մեկ ապացույց էր. եթե նման բան կարող էր տեղի ունենալ իրենց առաջնորդներից մեկի ընտանիքի հետ, ապա ոչ մի հերերո ապահովագրված չէր⁴⁸:

Սա, սակայն, եզակի դիպված չէր: Երբ շվեյցարական «Bernner Tagwacht» թերթը հոդված է տպագրում երեք գերմանացիների կողմից մեկ այլ հերերո կնոջ բռնաբարության և նրա ամուսնու սպանության մասին, տեղական իշխանություններն արձագանքում են, որ նման դեպքերն այնքան շատ են, որ նույնիսկ կարիք չկա բոլորը լուսարանելու⁴⁹:

Հերերոների ընդվզումը և պատերազմի սկիզբը

Ստեղծված պայմաններում հերերոների առաջնորդ Սամուել Մահարերոն դիմում է այլ ցեղերի առաջնորդներին՝ առաջարկելով գեներ վերցնել և թեկուզ գոհվել, բայց կոչվել նախընտրել կոտորածից⁵⁰:

1904 թ. հունվարի կեսերին հերերոները սկսեցին հարձակումներ գործել եվրոպացիների տների վրա: Հետաքրքիր է, որ զինյալներն իրենց առաջնորդից հրաման էին ստացել խնայելու կանանց, երեխաներին, աֆրիկացիներին և, բացի գերմանացիներից, մյուս եվրոպացիներին⁵¹: Եվ հրամանը կատարվել էր գրեթե անշեղորեն, քանի որ առաջին սպանվածները՝ բացառությամբ 10 հոգու, 150 գերմանացի տղամարդիկ էին⁵²: Սա արվում էր, որպեսզի սպիտակամորթ մյուս գաղութարարները չցանկանային միանալ գերմանական զինված ուժերին, և հերերոների առաջխաղացմանը դիմակայությունը համընդհանուր չդառնար:

1904 թ. սկզբին հերերոներն ունեին 7 000-8 000 զինյալ, իսկ գերմանական ուժերը բաղկացած էին 800 զինվորից, նույն թվով կովոդներից կազմված պահեստագործից, 400 զինված գերմանացի բնակիչներից և 250 աֆրիկացի սկաուտներից: Իսկ արդեն փետրվար-մարտ ամիսներին Գերմանիայից ժամանեցին ևս մոտ 1 500 տղամարդ 1

48 St'u South-West Africa Administrator's Office, *Report on the Natives of South-West Africa and their Treatment by Germany* (London: His Majesty's Stationery Office, 1918), 54-55, Wellington, *South West Africa and Its Human Issues*, 199-200, ըստ Madley, "Patterns of frontier genocide 1803-1910," 183:

49 St'u Drechsler, "Let Us Die Fighting," 133-134, ըստ Madley, "Patterns of frontier genocide 1803-1910," 183:

50 St'u Leutwein, letter to the editor of *Deutsch Südwestafrikanische Zeitung*, Nov. 5, 1903, quoted in Goldblatt, *History of South West Africa* (Cape Town: Juta and Company Limited, 1971), 147, Bridgman and Worley, *Genocide of Hereros, Century of Genocide. Critical Essays and Eyewitness Accounts*, 8, Mark Cocker, *Rivers of Blood, Rivers of Gold: Europe's Conquest of Indigenous Peoples* (New York: Grove Press, 2000), 311-312, 314, 319, ըստ Ben Kiernan, *Blood and Soil: A World History of Genocide and Extermination from Sparta to Darfur* (London: Yale University Press, 2007), 381-382:

51 St'u Sarkin, *Colonial genocide and reparations claims in the 21st century*, 16:

52 St'u Bridgman, *The Revolt of the Herero*, 74, Cocker, *Rivers of Blood, Rivers of Gold*, 314, 320, ըստ Kiernan, *Blood and Soil*, 382:

000 ձիերով՝ իրենց հետ բերելով 10 միավոր հրետանի և 6 գնդացի: Իր ենթակայության տակ ունենալով 2 500 զինվոր՝ գերմանացի կառավարիչ Լոյթվեյնը մարտին և ապրիլին փորձեց շրջապատել հերերոներին: Սակայն որոշ ժամանակ անց գերմանական զորքերը ստիպված էին նահանջել՝ հաշվի առնելով հիվանդությունների տարածումը և հերերոների հարձակումները⁵³: Եվ այսպես, ապստամբությունը հաջող սկսվեց հերերոների համար: Հերերոների մոտ 3 000-անոց բանակը երկու ճակատամարտերում՝ մարտին և ապրիլին, հաղթանակներ տարավ⁵⁴: Նրանք կովի ընթացքում հաճախ նույնիսկ կրկնօրինակում էին պրուսական մարտավարությունը⁵⁵: Ապստամբները նաև կտրել էին հեռագրատան գծերը, քանդել երկաթուղային ուղիները, ավերել գյուղական տնտեսությունները և գրավել ռազմական փոքր կայանները, սակայն ընդհանուր ռազմավարություն չունենալով՝ նրանք չկարողացան զարգացնել այդ նախնական հաջողությունները⁵⁶:

Հետաքրքիր է, որ նույնիսկ այսպես անհաջող ընթացող պատերազմի պայմաններում նահանգապես Լոյթվեյնը փորձեց խուսափել ծայրահեղ դաժանությունից: Թեև նա պահանջում էր հերերոներից անվերապահորեն հանձնվել, սակայն իր մայիսի 30-ի հայտարարության մեջ խոստանում էր ներում շնորհել բոլոր նրանց, ովքեր կհանձնվեին, և ովքեր ներգրավված չէին սպիտակամորթների սպանությունների մեջ: Ընդ որում, նրա այս խաղաղասիրական քաղաքականությունը չափազանց վատ ընդունվեց զինվորականների, գաղութարարների և Գերմանիայի հանրության կողմից: Սակայն նահանգապեսը պնդում էր, որ նման դիրքորոշում ունեցող մարդիկ գաղափար չունեն տեղական պայմանների մասին և «մոլեռանդներ են, որոնք ցանկանում են տեսնել հերերոների իսպառ ոչնչացումը»⁵⁷:

Լոյթվեյնն իր կառավարման տասնամեկ տարիների ընթացքում փորձեց կիրառել նաև դիվանագիտական միջոցներ և ուժի դիմել միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում: Նա խուսափում էր գերմանացի վերաբնակների ցանկություններին հազուրդ տալուց՝ հասկանալով, որ չի կարողանա հաղթել հերերոներին ռազմական ուժով, ինչպես նաև իր ցանկությամբ պահպանել եղած պայմանավորվածությունները⁵⁸:

1904 թ. հունիսին Գերմանական Հարավարևմտյան Աֆրիկայի գաղութ լրացուցիչ ուժերով ժամանեց գեներալ Լոթհար ֆոն Տրոտան: Որպես գաղութի կառավարիչ փոխարինելով Լոյթվեյնին՝ նա կտրականապես հրաժարվեց ապստամբների հետ բա-

53 St'u Timothy J. Stapleton, *A History of Genocide in Africa* (Santa Barbara: ABC-CLIO, 2017), 15:

54 St'u Cocker, *Rivers of Blood, Rivers of Gold*, 320-324, ըստ Kiernan, *Blood and Soil*, 382:

55 St'u Andreas Selmecci and Dag Henrichsen, *Thomas Pynchon und die Geschichte der Herero* (Bielefeld, 1995), 59-60, ըստ Mark Levene & Penny Roberts (eds.), *The Massacre in History* (New York and Oxford: Berghahn Books, 1999), 206:

56 St'u Drechsler, "Let Us Die Fighting," 144:

57 St'u BAB, R 1001/2115: Leutwein to Auswärtiges Amt, Kolonial Abt., 3 June 1904, ըստ Nielsen, *Britain, Germany and Colonial Violence in South-West Africa, 1884-1919*, 26:

58 St'u Helgine Gertrud Ritter-Petersen, *The Herrenvolk mentality in German South West Africa 1884-1914* (Pretoria: University of South Africa, 1991), 157, ըստ Sarkin, *Colonial genocide and reparations claims in the 21st century*, 45:

նակցություններից և պահանջեց նրանցից անվերապահորեն հանձնվել⁵⁹: Սակայն հերերոները կարողացան մինչև 1904 թ. հուլիս հաջողությամբ շարունակել հարձակումը⁶⁰:

Այսպիսով՝ 1904 թ. հունվար-հունիս ամիսները կարելի է համարել պատերազմի առաջին փուլը:

Յեղասպանական քաղաքականության գաղափարական հիմնավորումը

Գերմանական Հարավարևմտյան Աֆրիկայում գերմանական քաղաքականությունը հիմնված էր բացահայտ ռասայական խտրականության վրա: Սևամորթներին արգելված էր ձի վարել, քայլել արահետներով, նրանք չէին կարող ունենալ հեծանիվներ կամ այցելել գրադարաններ: Գաղութի դատական ատյաններում մեկ գերմանացու խոսքն ուներ յոթ աֆրիկացու խոսքի արժեք⁶¹: Ավելին՝ շատ հաճախ գերմանացիները հերերոներին չէին դիտարկում որպես մարդ, այլ ընդունում էին նրանց որպես կենդանիներ, օրինակ՝ պավիաններ⁶²:

Հարավարևմտյան Աֆրիկան դարձավ նաև առաջին խոշոր լաբորատորիաներից մեկը, որտեղ գործնականում կիրառվեցին ռասայական գերակայության սոցիալ-դարվիսյան տեսությունները: Հետաքրքրական է, որ գերմանացի պրոֆեսոր Օյգեն Ֆիշերը Նամիբիա էր ժամանել գենետիկական հետազոտություններ իրականացնելու նպատակով և ուսումնասիրում էր հերերոներին ու մուլատներին՝ հերերո կանանց և գերմանացի տղամարդկանց սերունդներին⁶³: Հերերոների ցեղասպանության ընթացքում Ֆիշերը գաղութային համակենտրոնացման ճամբարներում ռասայի վերաբերյալ բժշկական փորձարկումների շրջանակներում հերերո բանտարկյալներին ենթարկել է ստերիլիզացման, ներարկել ջրծաղիկի, տիֆի և տուբերկուլյոզի հարուցիչներ: Նա նաև հիմք է դրել ժառանգական «թերաթերություն» գաղափարին: Կողմնակից լինելով հերերոների ցեղասպանությանը՝ Ֆիշերը նրանց դիտարկում էր որպես «ստորադաս ռասա»⁶⁴: 1913 թ. նա հրապարակեց իր բացահայտումները՝ ներկայացնելով դրանք որպես ավստրիացի Գրեգոր Մենդելի մշակած գենետիկական ժառանգության սկզբունքները մարդկանց նկատմամբ կիրառելու առաջին փորձ⁶⁵:

59 St'u Stapleton, *A History of Genocide in Africa*, 16:

60 St'u John Dugard (ed.), *The South West Africa / Namibia Dispute* (Berkeley, Los Angeles, London: University of California Press, 1973), 25:

61 St'u Ferguson, *Civilization: The West and the Rest*, 177:

62 St'u Bruce Vandervort, *Wars of Imperial Conquest in Africa, 1830-1914* (London: Routledge, 2006), 196, Neta C. Crawford (ed.), *Argument and Change in World Politics: Ethics, Decolonization, and Humanitarian Intervention* (Cambridge: Cambridge University Press, 2002), 227:

63 St'u Mahmood Mamdani, *When Victims Become Killers: Colonialism, Nativism, and the Genocide in Rwanda* (Princeton: Princeton University Press, 2020), 12:

64 St'u Alliance for Human Research Protection, "Germany's Colonial Genocide in Namibia (Part 2)," <https://ahrp.org/germanys-colonial-genocide-in-namibia-part-2/>, դիտվել է՝ 14.01.2022:

65 St'u Ferguson, *Civilization: The West and the Rest*, 180:

Ֆիշերի գիրքը՝ «Ցեղային հիգիենայի և մարդկային ժառանգականության սկզբունքները», 1923 թ. Լանդսբերգի բանտում կարդացել է Հիտլերը, որի վրա ռասայական հիգիենայի մասին գաղափարները մեծ ազդեցություն են ունեցել⁶⁶: Ռասայական հիգիենայի գաղափարի հիմքում Ֆիշերը դնում էր «գերմանական հիանալի ազգի փրկության» շարժառիթը⁶⁷: Նա դեմ էր խառնամուսնություններին՝ պնդելով, որ դրանք կոպտորեն եղծում են «ռասայական հիգիենան», աղտոտում և թուլացնում ամբողջ ռասան: Ուստի Հիտլերն իր «Իմ պայքարը» գրքում ներառեց Ֆիշերի գաղափարները՝ պնդելով, որ արիական արյունը պետք է մաքուր մնա և չաղտոտվի ցածրակարգ ռասաների արյամբ⁶⁸: 1933 թ. նա Ֆիշերին նշանակեց Բեռլինի Ֆրեդերիկ Ուլլամի (այժմ՝ Հումբոլդտի) անվան համալսարանի ռեկտոր⁶⁹, որտեղ նա բժշկություն էր դասավանդում նացիստ բժիշկներին:

Գերմանիայի՝ գաղութային տերություն դառնալու ժամանակաշրջանում առաջ եկավ իր գաղութներից մեկում «Նոր Գերմանիայի» ստեղծման գաղափարը, որտեղ կարող էին բնակություն հաստատել գերմանացիները և ընդարձակել Գերմանիայի տարածքը: 19-րդ դարի վերջին Գերմանիայի բնակչության թիվն արագ աճում էր: 1890-1913 թթ. ընկած ժամանակահատվածում այն 45 միլիոնից հասավ 65-ի: Մեծ թվով գերմանացիներ արտագաղթում էին իրենց երկրից՝ հիմնականում հաստատվելով ԱՄՆ-ում: Իսկ Բեռլինը ձգտում էր գերմանացիներին պահելու գերմանական հողերում՝ արտագաղթող գերմանացիներին ուղղորդելով դեպի Հարավարևմտյան Աֆրիկա: Սակայն, չնայած Գերմանիայի գործադրած ջանքերին, քիչ գերմանացիներ էին հետաքրքրված Գերմանական Հարավ-արևմտյան Աֆրիկայով: Նրանք դժկամությամբ էին տեղափոխվում այդ անկայուն տարածաշրջան՝ շատ քիչ ենթակառուցվածքներով⁷⁰:

Պատերազմի երկրորդ փուլը և հերերոների պարտությունը

Պարտությունը հերերոների դեմ պատերազմում կվտանգեր գաղութացման ամբողջ ծրագիրը և Գերմանիային կխայտառակեր եվրոպացի մրցակիցների աչքերում: Դա էր գեներալ Լոտար ֆոն Տրոտային Հարավարևմտյան Աֆրիկա ուղարկելու և պատերազմի ընթացքին անձամբ հետևելու համար նրան այդ գերմանական գաղութի գործերի հրամանատար նշանակելու պատճառը: Ֆոն Տրոտան փորձված գեներալ էր, ով ուներ Գերմանական Արևելյան Աֆրիկայում գաղութային ելույթների ճնշման, ինչ-

66 Տե՛ս W. Michael Byrd, Linda A. Clayton, *An American Health Dilemma: Race, Medicine, and Health Care in the United States 1900-2000*, vol. 2 (New York: Routledge, 2002), 283:

67 Տե՛ս Casper Erichsen, David Olusoga, *The Kaiser's Holocaust: Germany's Forgotten Genocide and the Colonial Roots of Nazism* (London: Faber & Faber, 2010), 251:

68 Տե՛ս Stella Morabito, *The Weaponization of Loneliness: How Tyrants Stoke Our Fear of Isolation to Silence, Divide, and Conquer* (New York: Bombardier Books, 2022), 20-21:

69 Տե՛ս "Rektoratsreden im 19. und 20. Jahrhundert," <https://www.historische-kommission-muenchen-editionen.de/rektoratsreden/anzeige/index.php?type=universitaet&id=104>, դիտվել է՝ 14.01.2022:

70 Տե՛ս Sarkin, *Germany's Genocide of the Herero*, 51-52:

պես նաև Չինաստանում Բոնցքամարտիկների խռովության⁷¹ դեմ պայքարելու փորձ⁷²: Նրա ժամանումը խորհրդանշում էր հերերոների հետ հնարավոր հաշտեցման և բանակցությունների միջոցով խնդրի լուծման կողմնակից նահանգապետ Լոյթվեյնի քաղաքականության տապալումը և ավելի կոշտ միջոցների կողմնակից Ֆոն Տրոտայի ռազմավարության հաղթանակը:

Ամառվանից սկսած՝ հերերոներն իրենց ընտանիքներով և անասունների հոտերով սկսում են կենտրոնանալ երկրի հյուսիսում՝ Վաթերբերգում: Թեև դա շահավետ էր գյուղատնտեսական նպատակներով, քանի որ այդ շրջանի հողերն առավել բարեբեր էին ու կարող էին սննդով ապահովել համայնքին, սակայն այդքան մարդու կենտրոնացումը մի տեղում շուտով հանգեցնում է բնական ռեսուրսների սպառմանը և համաճարակի տարածմանը: Բացի այդ՝ դա նպաստավոր պայմաններ է ստեղծում գեներալ Ֆոն Տրոտայի համար տարածքը շրջափակելու առումով⁷³:

1904 թ. օգոստոսին Վաթերբերգում Համակարիի ճակատամարտում հերերոները ծանր պարտություն կրեցին անհամեմատ լավ զինված և կազմակերպված գործող գերմանացիներից: Դրան հետևեց վիրավորների, գերիների, այդ թվում նաև՝ կանանց ու երեխաների կոտորածը հրանոթների և գնդացիների կրակի ներքո: Ֆոն Տրոտան հրահանգեց նաև գնդակահարել բոլոր զինված տղամարդկանց, որոնք հայտնվել էին գերմանական գերության մեջ: Միայն ապստամբների մի մասին հաջողվեց օգոստոսի 11-ին և 12-ին դուրս պրծնել գերմանական շրջափակումից:

Յեղասպանության իրականացման ձևերը, ընթացքը և որոշումը

Այն փաստը, որ գեներալ Ֆոն Տրոտան մարտից առաջ Վաթերբերգում ռազմագերիների ճամբարներ էր բացել, հուշում է, որ այդ պահին նա դեռ չէր պատրաստվում ոչնչացնելու հերերոներին, սակայն հաջորդող շաբաթների ընթացքում առաջ եկավ նաև այդ նպատակը⁷⁴:

Քանի որ հնարավոր չեղավ միանգամից զինվորական ուժով կոտորել Վաթերբերգում կուտակված մոտ 60 հազար հերերոներին, ընտրվեց նրանց դեպի անապատ քշելու միջոցով ոչնչացնելու մարտավարությունը: Դեպի արևմուտք, հարավ և հյուսիս-արևելք բոլոր ուղիները փակվեցին, ստեղծվեց շուրջ 250 կմ երկարությամբ պահակապատնեշ, նաև վերահսկողության տակ վերցվեցին ջրի բոլոր աղբյուրները⁷⁵:

71 Բոնցքամարտիկների ապստամբությունը «Արդար և ներդաշնակ բռնցքների հասարակության»՝ օտարների դեմ մղած հակաիմպերիալիստական և հակաքրիստոնեական պայքարն էր Հյուսիսային Չինաստանում 1899-1901 թթ.: Ապստամբները հայտնի էին *Բոնցքամարտիկներ* անվամբ, քանի որ նրանցից շատերը զբաղվել էին չինական մարտավեժտով:

72 Տե՛ս Kiernan, *Blood and Soil*, 382:

73 Տե՛ս Levene & Roberts (eds.), *The Massacre in History*, 208:

74 Տե՛ս George Steinmetz, “The First Genocide of the 20th Century and its Postcolonial Afterlives: Germany and the Namibian Ovaherero,” *The Journal of International Institute* 12, no. 2 (2005): 4, <https://quod.lib.umich.edu/~jii/4750978.0012.201/--first-genocide-of-the-20th-century-and-its-postcolonial?rgn=main;view=fulltext>, դիտվել է՝ 30.09.2024:

75 Տե՛ս Levene & Roberts (eds.), *The Massacre in History*, 210:

Ֆոն Տրոտսկան ուղարկում է շարժունակ ջոկատներ, որոնք պետք է հետապնդեին վերապրածներին, սակայն պարզվեց, որ դա ոչ միայն ծախսատար, այլև դժվար իրագործելի նախաձեռնություն էր՝ հաշվի առնելով տարածքի բնական բարդ պայմանները: Մա կարևոր դրվագ է, քանի որ դա փոխում է հակամարտության բնույթը՝ այն պատերազմականից վերածելով ցեղասպանականի⁷⁶: Ու թեև թե՛ գերմանացի միսիոներների, թե՛ սպայակազմի շրջանում կար որոշակի տարածայնություն ջախջախված հակառակորդին հետապնդելու քաղաքականության վերաբերյալ, բայց գեներալը ոչ մի զիջման մասին լսել չէր ուզում՝ պատճառաբանելով, որ դա կարող էր տանել հին ցեղային համակարգի վերականգնման, որն ուշ թե շուտ նոր արյունահեղության կհանգեցներ, հետևաբար միակ լուծումը հերերոնների գոյության բացառումն էր⁷⁷:

Ֆոն Տրոտսկան 5 հազար զինվոր տեղակայեց այն բլուրների շրջակայքում, որտեղ ապրում էին 60 հազար հերերոնները: Գերմանացիները հավաքեցին հերերոններին ու նրանց նախիրները, առգրավեցին նրանց ջրհորները: Դեպի Կալահարի անապատ քշվելու ճանապարհին հերերոններին զրկում էին ջրից և հանդիպող ջրի աղբյուրներն էլ թունավորում էին: Մի քանի ամսվա ընթացքում ստեղծված պայմանների գոհ դարձավ հերերո տղամարդկանց, կանանց և երեխաների մեծ մասը:

Գերմանական գլխավոր շտաբի պահպանվող փաստաթղթերում հանդիպում ենք հետևյալ վկայությանը. «Ոչ մի ջանք, ոչ մի միջոց չխնայվեց թշնամուն դիմադրության վերջին պաշարներից զրկելու համար. կիսամեռ կենդանու նման նրան քշում էին ջրհորից ջրհոր, մինչև որ նա վերածվեց բնության իսկ կողմից ջլատված գոհի: Ջրագուրկ Օմահեկեն պետք է ավարտին հասցնեք գերմանական գենքի գործը՝ հերերո ժողովրդի ոչնչացումը»⁷⁸:

Վերը նկարագրված իրադարձություններն ուղեկցվեցին գեներալ Ֆոն Տրոտսկի հոկտեմբերի 2-ի հրամանով, որը հայտնի է որպես «Vernichtungs Befehl» կամ «բնաջնջման հրաման». «Ես՝ գերմանացի զինվորների մեծ գեներալս, այս ուղերձն եմ հղում հերերո ժողովրդին. հերերոններն այլևս գերմանական հպատակներ չեն: Նրանք սպանել, թալանել ու կտրել են վիրավոր զինվորների ականջները, քթերն ու մարմնի այլ մասեր, իսկ հիմա վախենալով հրաժարվում են կովել... Հերերոնները պետք է հեռանան երկրից: Եթե ոչ, ես դա անել կստիպեմ նրանց թնդանութներով: Գերմանական երկրի սահմաններում յուրաքանչյուր հերերո, լինի զինված, թե անզեն, խոշոր եղջերավոր անասուններով, թե առանց դրանց, գնդակահարվելու է: Այլևս չեմ ընդունի կանանց և երեխաների, այլ հետ կքշեմ դեպի իրենց ժողովուրդը կամ նրանց գնդակահարելու հրաման կտամ: Սրանք են իմ խոսքերը՝ ուղղված հերերո ժողովրդին»⁷⁹:

76 St'u Henrik Lundtofte, ““Ich glaube, dass die Nation als solche vernichtet werden muss...” – Radikaliseringen af den tyske nedkæmpler af hereroopstanden 1904,” *Den Jyske Historiker*, 90 (2000): 88-90, ըստ Nielsen, *Britain, Germany and Colonial Violence in South-West Africa, 1884-1919*, 27:

77 St'u Grosser Generalstab, *Die Kämpfe der Deutschen Truppen in Südwestafrika*, vol. 1 (Berlin: Mittler und Sohn, 1906), 212, ըստ Levene & Roberts, *The Massacre in History*, 210:

78 Levene & Roberts, *The Massacre in History*, 213.

79 Dugard (ed.), *The South West Africa / Namibia Dispute*, 25-26, Marion Wallace, *History of Namibia: From the Beginning to 1990* (New York: Oxford University Press, 2011), 165.

Այս հրամանում բացեիքաց արտահայտվում էր հերերո ժողովրդին ոչնչացնելու՝ ցեղասպանության մտադրությունը: Սովորաբար ցեղասպանության կազմակերպիչները փորձում են քողարկել իրենց գործողությունները՝ հետագայում պատասխանատվությունից խուսափելու համար, սակայն այս դեպքում նպատակները և ծրագրերը բացահայտորեն հրապարակվում էին:

Ֆոն Տրոտան անձամբ է ընթերցում իր հայտարարությունը հերերո բանտարկյալների առաջ, այնուհետև՝ մասնակցում մի քանիսին կախաղան բարձրացնելու արարողությանը: Այդ փաստաթուղթը թարգմանվում և տարածվում է նաև հերերոների լեզվով:

Ֆոն Տրոտան հաստատական էր, նա բազմիցս հրապարակայնորեն արտահայտվել էր այդ մասին: Այսպես, բեռլինյան մի թերթի տված հարցազրույցի ժամանակ նա նշել է, որ «հնարավոր չէ մարդկայնորեն պատերազմ վարել ոչ մարդկանց դեմ»⁸⁰: Մեկ այլ առիթով նա նշել էր. «Իմ քաղաքականությունն է եղել և է ուժ կիրառել ահաբեկելով և դաժանաբար: Ես կոչնչացնեմ ապստամբ ցեղերին արյան և ոսկու գետերի միջոցով: Միայն հիմնովին արմատախիլ անելուց հետո ինչ-որ բան կարող է ծիլ տալ»⁸¹: Իսկ 1904 թ. հոկտեմբերի 4-ին՝ հայտնի հրամանից երկու օր անց, նա Գերմանիայի գլխավոր շտաբի պետին գրել է հետևյալը. «Ես կարծում եմ, որ այս ազգը՝ որպես այդպիսին, պետք է ոչնչացվի: Ես կարծում եմ, որ ավելի լավ է, որ ազգը կորչի, քան վարակի մեր զինվորներին»⁸²: Ավելին՝ նա ինքն էր ստանձնում այդ գործողությունների իրականացումը՝ պահանջելով կոշտ վերաբերմունք ցուցաբերել ազգի բոլոր հատվածների նկատմամբ⁸³: Լոյթվեյնին գրած մի նամակում նա ավելի անկեղծ էր. «Իմ իշխանության շրջանում գաղութի արևելյան սահմանը մնալու է փակված, և հերերոների ահաբեկումը շարունակվելու է: Այդ ազգը պետք է ոչնչացվի երկրի երեսից: Չկարողանալով ոչնչացնել նրանց զենքի միջոցով՝ ես կհասնեմ այդ նպատակին այլ ճանապարհով»⁸⁴:

Տրոտան իր գործողությունները հիմնավորում էր նաև ռասայական պայքարի համատեքստում և գրում. «Այս ապստամբությունը ռասայական պայքարի սկիզբն է, որը ես կանխատեսել էի Արևելյան Աֆրիկայի համար դեռևս 1897 թ. կայսերական կանցլերին ուղղված իմ զեկույցներում»⁸⁵:

Ռաֆայել Լեմկինը նկատում է, որ հերերոների ոչնչացումն իրականացվում էր հրագենով, կախաղանով, սովամահությամբ, հարկադիր աշխատանքով, որոնց գումարվում էին նաև մարմնավաճառությունը և ընտանիքների բաժանումը, ինչի հետևան-

80 Berliner Lokalanzeiger, Aug. 2, 1904, in Isabel V. Hull, *Absolute Destruction: Military Culture and the Practices of War in Imperial Germany* (London/Cornell University Press, 2006), 154, Cocker, *Rivers of Blood, Rivers of Gold*, 328-330, ըստ Kiernan, *Blood and Soil*, 382, Robert Gallately, Ben Kiernan, "The Study of Mass Murder and Genocide," in *The Specter of Genocide: Mass Murder in Historical Perspective*, eds. Robert Gallately, Ben Kiernan (Cambridge/New York: Cambridge University Press, 2003), 26.

81 Նույն տեղում:

82 Hull, *Absolute Destruction*, 155-156, ըստ Kiernan, *Blood and Soil*, 383.

83 Bundesarchiv Potsdam (BAP), Reichkolonialamt (RKA), vol. 2089, 7, ըստ Levene & Roberts, *The Massacre in History*, 211.

84 BAP, RKA, vol. 2089, von Trotha to Leutwein, 27 October, 1904, ըստ Levene & Roberts, *The Massacre in History*, 211-212.

85 Cocker, *Rivers of Blood, Rivers of Gold*, 333.

քով էլ ծնելիությունը նվազում էր⁸⁶: Հատկանշական է, որ ցեղասպանական գործողություններին մասնակցել են ինչպես գերմանացի վերաբնակներ, այնպես էլ այդ տարածաշրջանի բնիկ ցեղերի անդամներ: Իսկ միսիոներներն ավելի շատ հակված էին հերերոների համայնքը պաշտպանելուն՝ նախընտրելով նրանց տեղափոխել այլ շրջաններ՝ դրանով իսկ ձգտելով պահպանելու իրենց դերակատարությունը և ավելի շատ հերերոների բերելու իրենց ազդեցության դաշտ⁸⁷:

Գերմանական հանրային կարծիքը և քաղաքականության փոփոխությունը

Հերերոների անխտիր ոչնչացման քաղաքականության գործադրումը շարունակվեց մի քանի ամիս, մինչև Գերմանիայի ներսում բարձրացած ընդվզումը ստիպեց դադարեցնել այն: Գերմանիայում սոցիալ-դեմոկրատներն ակտիվորեն քննադատում էին դաժանությունները: Ըստ կուսակցության անդամ Գեորգ Լեդերբորի՝ բնաջնջման հրամանը «հակասում էր պատերազմում մարդասիրության մասին մեր բոլոր պատկերացումներին, նույնիսկ բնիկների դեմ գործադրելու պարագայում»⁸⁸:

Հերերոների մնացուկներին խնայելու որոշումը կայացվեց ամենաբարձր օղակներում: Հետաքրքիր է Գերմանիայի գինված ուժերի շտաբի պետ Ֆոն Շլիֆենի նամակը՝ ուղղված կանցլեր Ֆոն Բյուլովին, ով թեև աջակցում էր Տրոտայի՝ հերերոներին ոչնչացնելու քաղաքականությանը, սակայն նշում էր, որ վերջինս չունի այդքան ռեսուրս իր մտադրությունն իրագործելու համար⁸⁹: Մյուս կողմից՝ նա անհանգստանում էր, թե միջազգային հեղինակության տեսանկյունից ինչ հետևանքներ կարող էր ունենալ այդ քաղաքականությունը, և գերմանական կայսրին հիշեցնում, որ գաղութային նման կոչոտ քաղաքականությունը Չինաստանում 1900 թ. արդեն թույլ է տվել Գերմանիայի հակառակորդներին գերմանացիներին պիտակավորել որպես հոների ցեղեր: Բյուլովը նաև մտահոգված էր գաղութներում աշխատուժի հնարավոր պակասով⁹⁰: Կայսրը մեծ դժվարությամբ է համոզվում: Այնուամենայնիվ, արդեն 1905 թ. կայսրն իր նամակներում իր աջակցությունն էր հայտնում Տրոտային՝ նշելով, որ նա լիովին արդարացրել է իր ակնկալիքները⁹¹: Բայց և այնպես, Ֆոն Տրոտան իր դժգոհությունն էր արտահայտում, որ ստիպված էր խնայել շրջափակման մեջ գտնվող որոշ հերերոների: Ինչպես նշում էր ժամանակակիցներից մեկը, Կալահարիից դուրս եկած հերերոները «դատարկ, ներս ընկած աչքերով կմախքներ էին՝ անուժ ու անհույս»⁹²:

86 Տե՛ս Lemkin, *Lemkin on Genocide*, 274:

87 Տե՛ս Sarkin, *Germany's Genocide of the Herero*, 15-16:

88 Helmut Walser Smith, “The Talk of Genocide, the Rhetoric of Miscegenation: Notes on Debates in the German Reichstag concerning Southwest Africa, 1904-1914,” in *The Imperialist Imagination: German Colonialism and its Legacy*, eds. Sara Friedrichsmeyer, Sara Lennox and Susanne Zantop (Ann Arbor: The University of Michigan Press, 1988), 111, ըստ Nielsen, *Britain, Germany and Colonial Violence in South-West Africa, 1884-1919*, 28.

89 Տե՛ս Gunter Spraul, *Volker mord, 727-728*, ըստ Levene & Roberts, *The Massacre in History*, 212:

90 Տե՛ս Drechsler, “*Let Us Die Fighting*,” 163-164, in Levene & Roberts, *The Massacre in History*, 212:

91 Տե՛ս Sarkin, *Germany's Genocide of the Herero*, 210.

92 Տե՛ս Jan-Bart Gewald, “Imperial Germany and the Herero of Southern Africa: Genocide and the Quest

Համակենտրոնացման ճամբարներ

Վերապրողների թվում էր հերերոների առաջնորդ Սամուել Մահարերոն, ով մոտ հազար հերերոների հետ հատեց անապատը և կարողացավ հասնել բրիտանական գաղութ Բեչուանալենդը (Բոթսվանա): Մոտ 2 հազար հերերոներ փախան հյուսիս՝ Օվամբուլանդ և Նամալանդի հարավ: Ամենաքիչը 30 հազար հերերոներ մահացան մի քանի շաբաթվա ընթացքում, հիմնականում անապատում⁹³:

Վերապրած հերերոները տեղավորվեցին համակենտրոնացման ճամբարներում: Սրանով լուծվում էր մի քանի խնդիր: Նախ՝ բացառվում էր ապստամբության շարունակությունը, քանի որ վերապրող հերերոները մշտապես վերահսկողության տակ էին: Բացի այդ՝ նրանց օգտագործում էին ծանր աշխատանքներում՝ երկաթգծի և ալեհատ պատնեշների կառուցման համար: Եվ վերջապես՝ նրանց թիվն էականորեն նվազում էր, ինչը գերմանական գաղութային իշխանություններին թույլ էր տալիս տարածքների վերահսկողությունը վերցնել իրենց ձեռքը⁹⁴:

Այս ճամբարները ոչ միայն պետական, այլև նույնիսկ մասնավոր վերահսկողության տակ էին: «Woermann shipping lines» և «Arthur Koppel Company» ընկերությունները վճարում էին գերմանական կառավարությանը և իրավունք ստանում օգտագործելու հերերոների ստրկական աշխատուժն իրենց ձեռնարկությունների համար⁹⁵:

Գերմանական իշխանություններն ընդօրինակել էին անգլո-բուրական պատերազմից հետո հիմնված ճամբարների կառուցվածքը: Իսկ ավելի վաղ նման մարտավարություն կիրառել էին իսպանացիները Կուբայում 1896 թ. և ԱՄՆ-ն Ֆիլիպիններում 1901 թ.:

Ընդհանրապես համակենտրոնացման ճամբարներում ստրկական ուժի օգտագործումը իրարամերժ գաղափարներ էր առաջ բերում: Գաղութարար պետություններում հակաստրկատիրությունն ու մարդասիրությունը ներթափանցել էին հասարակական մշակույթի մեջ, և, օրինակ, 1885 թ. Բեռլինի պայմանագիրը ստորագրած տերությունները հանձն էին առել պայքարել ստրկության ու Աֆրիկայում ստրկավաճառության դեմ, ինչպես նաև Աֆրիկա բերել «քաղաքակրթությունների բարիքները»⁹⁶:

Հետաքրքիր է, որ փորձ էր արվում այս հարկադիր աշխատանքին ևս գաղափարական հիմնավորում տալու: Նշվում էր, որ «հանրային աշխատանքները» ոչ միայն գաղութի զարգացման, այլև տեղացիների «պարասպ, հետևաբար անհան-

for Recompense,” in Adam Jones (ed.), *Genocide, War Crimes and the West: History and Complicity* (London: Zed Books, 2004), 62:

93 Տե՛ս Kiernan, *Blood and Soil*, 383-385:

94 Տե՛ս Nielsen, *Britain, Germany and Colonial Violence in South-West Africa, 1884-1919*, 31:

95 Տե՛ս Casper W. Erichsen, *The Angel of Death has descended violently among them: A study of Namibia's concentration camps and prisoners-of-war, 1904-08*, chapter 2 (MA thesis (History), University of Namibia, 2004), 57, ըստ Sarkin, *Colonial genocide and reparations claims in the 21st century*, 7:

96 Տե՛ս The National Archives, Kew (TNA), Foreign Office (FO) 881/5181: General Act of the West African Conference, 26 February 1885, Article 6, ըստ Nielsen, *Britain, Germany and Colonial Violence in South-West Africa, 1884-1919*, 33:

գիստ և վտանգավոր դառնալը» կանխելու համար են⁹⁷: Փաստորեն, համարվում էր, որ հարկադիր աշխատանքը քաղաքակրթելու է աֆրիկացիներին: Պատու Ռորբախը հռչակեց, որ աֆրիկացիները կարող են միայն «վաստակել գոյության իրավունքը»⁹⁸:

Սարսափելի էր դրությունը Շնաձկան կղզում, որտեղ բանտարկյալները պահվում էին անմարդկային պայմաններում և օգտագործվում ստրկական աշխատանքներում: Դա ուղեկցվում էր նաև մշտական ծեծով և բռնություններով: Գերմանական պաշտոնական վիճակագրությունը հաղորդում էր հարկադիր աշխատանքներում ներգրավվածների 45 տոկոսի մահվան մասին: Հետագայում աշխատանքային ճամբարները փակվեցին, և «փրկված հերերոները բաժանվեցին փոքր խմբերի և ուղարկվեցին աշխատելու գերմանացի վերաբնակների՝ հազարավոր քառակուսի կիլոմետրերի վրա տարածված հազարավոր ռանչոներում ու ֆերմաներում»⁹⁹: 15 000 հերերոներից և 2200 նամաններից մոտ 7 700-ը մահացան ճամբարներում¹⁰⁰:

Սպանվածների և վերապրածների թվերը ստույգ չեն: Սովորաբար նշվում է, որ ցեղասպանությանը զոհ է գնացել 40-70 հազար հերերո: Երբեմն այդ թիվը հասցնում են նույնիսկ 100 հազարի¹⁰¹: Մոտ 15-20 հազար հերերոներ են փրկվել պատերազմից և ցեղասպանությունից¹⁰²:

1905 թ. դեկտեմբերին ընդունվեց բռնագրավման հրամանը, որով հերերոների «ցեղի ամբողջ շարժական և անշարժ գույքը» խլվում էր նրանից: Գերմանական Հարավարևմտյան Աֆրիկայում բնակեցման հանձնակատար Պատու Ռորբախը պնդում էր. «Հողի հարցը լուծված է: Հերերոները կորցրել են իրենց հողը, որն այժմ պետական հող է՝ բնակեցված սպիտակամորթներով: Լուծված է նաև անասունների հարցը: Հերերոների բոլոր անասունները ոչնչացված են. անասուն գրեթե չի մնացել: Սակայն դա ողբերգական չի թվում, երբ հիշում ենք երկրի բերրիությունը»¹⁰³: Նկատենք, որ նույն ռճով Ռորբախը հետագայում պաշտպանելու էր Արևմտյան Հայաստանից հայերի տեղահանության մասին Օսմանյան կայսրության իշխող շրջանակների ծրագրերը: Նա նշում էր, որ «Արևմտյան Հայաստանից պետք է դուրս քշել բնիկ հայերին», իսկ նրանց տեղում բնակեցնել Թրակիայից և Ռուսաստանից բերված մահմեդականներին¹⁰⁴:

97 St'u TNA, Colonial Office (CO) 879/52: Milner to Chamberlain, 28 July 1897, ըստ Nielsen, *Britain, Germany and Colonial Violence in South-West Africa, 1884-1919*, 33:

98 St'u Paul Rohrbach, *Der Deutsche Gedanke in der Welt* (Leipzig, 1912), 134, ըստ Nielsen, *Britain, Germany and Colonial Violence in South-West Africa, 1884-1919*, 33:

99 St'u Kiernan, *Blood and Soil*, 386:

100 St'u Benjamin Madley, "From Africa to Auschwitz: How German South West Africa Incubated Ideas and Methods Adopted and Developed by the Nazis in Eastern Europe," *European History Quarterly* 35, no. 3 (2005): 181:

101 St'u Sarkin, *Germany's Genocide of the Herero*, 138:

102 St'u Madley, "Patterns of frontier genocide 1803-1910," 181:

103 Lemkin, *Lemkin on Genocide, 276-277*.

104 St'u «Հայկական հարց» հանրագիտարան (Երևան, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 1996), 387:

Նամա ժողովրդի պատերազմը

Գերմանացիների իրականացրած ցեղասպանությանը զոհ գնաց նաև 20 հազար բնակչություն ունեցող նամա ժողովրդի կեղծ՝ 10 հազարը¹⁰⁵: Նամաներն ապստամբեցին հոկտեմբերի 4-ին, երբ պարզ դարձավ հերերոների ճակատագիրը: Յեղային առաջնորդ Հենրիկ Վիտթորյի գլխավորությամբ նրանք սպանեցին տեղական կոմիսար Ֆոն Բուրգադորֆին: Այնուհետև նրանք ոմբակոծեցին Գիբեռնի եկեղեցին, որպեսզի գերմանացիները չկարողանան օգտագործել այն որպես պաշտպանական ամրոց: Սա պաշտոնականացրեց նամաների և գերմանացիների միջև պատերազմը¹⁰⁶: Հենրիկ Վիտթորյին հաջողվել էր 2-հազարանոց բանակ ձևավորել, իսկ գերմանական ուժերի ընդհանուր թիվը 15 հազար էր, որոնք արդեն իսկ փորձ էին ձեռք բերել հերերոների ապստամբության ժամանակ¹⁰⁷:

Վիտթորյի բազան տեղակայված էր բազմաթիվ հարակից ցեղերի պատկանող տարածքներում, որոնք բրիտանական Կապի գաղութի¹⁰⁸ մեջ ներառված հողերից Օրանժ գետի երկայնքով ձգվում էին դեպի հյուսիս: Եվրոպացիներին հայտնի լինելով որպես հոտենտոտներ¹⁰⁹՝ այդ ցեղերը սերում էին Բարեհուստ հրվանդանի առաջին բնակիչներից, բայց ներկայանում էին որպես նամաներ¹¹⁰: Ռ-աֆայել Լեմկինը նախատեսել էր իր ցեղասպանության պատմության մեջ առանձին մաս նվիրել հոտենտոտների դեմ իրականացված գործողություններին՝ անդրադառնալով նաև Վիտթորյի ապստամբությանը¹¹¹:

Ուշագրավ է, որ նամաների կազմակերպած դիմադրությունն ավելի հաջող ընթացք է ունենում, քան հերերոներինը: Օգտագործելով բնակավայրի լեռնային տեղանքը՝ նրանք պարտիզանական կոիվներում մեծ կորուստներ են պատճառում գաղութարարներին: Հերերոներին վիճակված վաթերբերգյան աղետը դաս էր նամաների համար և ցույց տվեց, որ անհրաժեշտ է խուսափել ուղղակի առճակատումից ու լայնամասշտաբ ճակատամարտերից:

105 Տե՛ս Nebe, “Namibia: A timeline of Germany’s brutal colonial history”:

106 Տե՛ս “Timeline of the German and Herero, Nama War and Genocide,” <https://www.sahistory.org.za/article/timeline-german-and-herero-nama-war-and-genocide>, դիտվել է՝ 30.09.2024:

107 Տե՛ս Kiernan, *Blood and Soil*, 384:

108 Կապի գաղութը (Cape Colony) հոլանդական վերաբնակեցված առաջին գաղութն էր Հարավային Աֆրիկայում՝ Կապստադ կենտրոնով: Հետագայում այն անցել է անգլիական տիրապետության տակ, իսկ քաղաքը՝ վերանվանվել Քեյփթաուն:

109 «Հոտենտոտ» տերմինի օգտագործումն այժմ վիրավորական է համարվում. Արևմտյան Քեյփի տարածքի՝ բանտու լեզուներով չխոսող բնիկ ժողովրդի համար նախընտրելի է *JunleJun* (նախկինում՝ խոլխոլ) անվանումը: 17-րդ դարի հոլանդերենում «հոտենտոտ» անվանումը երբեմն օգտագործվում էր բոլոր սևամորթներին նշելու համար: 18-րդ դարից սկսած՝ «հոտենտոտ» եզրույթն ասոցացվում էր բարբարոսության կամ մարդակերության հետ: Հոտենտոտների գաղութային պատկերները բնութագրվում էին վայրենությանը, որը հաճախ հուշում է մարդակերության կամ հում մսի սպառման մասին և ռասայականության շրջանակներում ընդգծում ֆիզիոլոգիական այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսին էր ստեատոպիգիան: Այս եզրույթը դեռ օգտագործվում է որոշ կենդանիների և բույսերի անվանումներում:

110 Տե՛ս Cocker, *Rivers of Blood, Rivers of Gold*, 275:

111 Տե՛ս Lemkin, *Lemkin on Genocide*, 18, 204-205:

Նամաների առաջնորդները ևս չէին վստասում խաղաղ բնակչությանը և գերիներին¹¹²: Եղել է նույնիսկ մի դեպք, երբ նամա զինյալներն ուղեկցել են գերմանացի կանանց և երեխաներին գերմանական բնակավայր՝ անգամ վտանգելով իրենց կյանքը¹¹³:

Պարտիզանական մարտերը շարունակվեցին նույնիսկ այն բանից հետո, երբ գերմանացիներին հաջողվեց վերցնել նամաների բնակավայրերը: Գերմանական զորքերը նույնիսկ փոխեցին իրենց մարտավարությունը՝ փորձելով փոքր շարժուն խմբերով հետապնդել ապստամբներին: Սակայն տեղանքի վատ իմացությունը թույլ չի տալիս վերջնական հաղթանակ տանել¹¹⁴:

Անդրադառնալով նամաների ապստամբությանը՝ 1905 թ. ապրիլի 22-ին գեներալ Ֆոն Տրոտան հայտարարում է. «Նրանք, ովքեր ապստամբության սկզբում սպանել կամ հրամայել են սպանել սպիտակամորթներին, օրենքով զրկվել են իրենց կյանքից: Ինչ վերաբերում է չպարտվածներին, որոնք շատ քիչ են, ապա նրանց հետ կկատարվի այն, ինչ հերերոնների հետ, որոնք նույնպես կուրորեն հավատում էին, որ կարող են հաջող պատերազմ մղել գերմանական հզոր կայսրի և գերմանական մեծ ժողովրդի դեմ: Ես ձեզ հարցնում եմ՝ որտեղ են այսօր հերերոնները, որտեղ են նրանց առաջնորդները: Նրանց մի մասը մահացավ սովից և ծարավից, մյուս մասը՝ գերմանական զորքերի գործողություններից: Սա է լինելու հոտենտոտների ճակատագիրը»¹¹⁵: Այլ կերպ ասած՝ գերմանացի գեներալը նշում էր իրենց անպատիժ գործելու հանգամանքը՝ ընդգծելով, որ եթե նամա ժողովրդի ներկայացուցիչները շարունակեն պայքարել գերմանացիների դեմ, ապա այն գործողությունները, որոնք իրականացվել էին հերերոնների սկստամբ, կարող են կրկնվել այս անգամ նամա ժողովրդի սկստամբ: Իսկ նրա՝ հերերոնների վերաբերյալ հարցադրումը՝ «որտեղ են այսօր հերերոնները», այլ ձևակերպմամբ կրկնելու էր Հիտլերը արդեն Հայոց ցեղասպանության իրագործման համատեքստում: Հիտլերը խրախուսում էր իր գեներալներին ներխուժել Լեհաստան՝ հարցնելով. «Ո՞վ է, ի վերջո, այսօր խոսում հայերի ոչնչացման մասին»¹¹⁶:

Դիմադրությունն այնքան ուժեղ էր, որ գերմանական կառավարությունը նույնիսկ փոխեց Ֆոն Տրոտային և նրան հետ կանչեց Բեռլին¹¹⁷: Բայց և այնպես ուժերն անհավասար էին, և երբ գաղութային իշխանությունները խոստացան ներում շնորհել գեներալը վայր դրած ու հանձնված նամաներին, շատերը համաձայնեցին, սակայն արժանացան հերերոնների ճակատագրին՝ հայտնվելով աշխատանքային ճամբարներում:

Հետաքրքիր դրվագ կարող է համարվել նամա ժողովրդի ապստամբության առաջնորդներից մեկի՝ Յակոբ Մարենգոյի շուրջ գերմանա-բրիտանական վեճը: Իր պար-

112 Տե՛ս Kiernan, *Blood and Soil*, 384:

113 Տե՛ս Drechsler, “Let us Die Fighting,” 184:

114 Տե՛ս Nielsen, *Britain, Germany and Colonial Violence in South-West Africa, 1884-1919*, 54:

115 Erichsen, Olusoga, *The Kaiser's Holocaust: Germany's Forgotten Genocide, 184-185*, Jürgen Zimmerer, “War, Concentration Camps and Genocide”, in *Genocide in German South-West Africa: The Colonial War of 1904-1908 and its Aftermath*, eds Jürgen Zimmerer Joachim Zeller (London, Merlin Press, 2008), 51-52:

116 Տե՛ս Richard Albrecht, “„Wer redet heute noch von der Vernichtung der Armenier?“ Kommentierte Wiederveröffentlichung der Erstpublikation von Adolf Hitlers Geheimrede am 22. August 1939,” *Zeitschrift für Weltgeschichte* 9, no. 2 (2008): 115-132:

117 Տե՛ս Kiernan, *Blood and Soil*, 187-188:

տիզանական պայքարի ընթացքում Մարենգոն երբեմն հատում էր սահմանը և անցնում բրիտանական վերահսկողության տակ գտնվող տարածք, որտեղ գերմանական ուժերը չէին կարող հետապնդել նրան: Ավելին՝ նա երբեմն օգնություն էր ստանում տեղաբնիկներից¹¹⁸: 1906 թ. մայիսին Մարենգոն հանձնվում է Քեյփի գաղութային իշխանություններին և բանտարկվում¹¹⁹: Հետագայում նա ազատ է արձակվում, և դա դառնում է բրիտանական, գերմանական և Քեյփի գաղութային իշխանությունների միջև դիվանագիտական հայտարարությունների ակտիվ փոխանակումների պատճառ:

Ի վերջո նա սպանվեց 1907 թ. սեպտեմբերի 21-ին Քեյփի գաղութի ոստիկանության մայոր Էլլիոթի կողմից, երբ ապստանների խմբով նորից հատում էր սահմանը¹²⁰: Էլլիոթը պարզևատրվեց և գերմանական և բրիտանական կայսրությունների կողմից:

Ուշագրավ է, որ գերմանական ռազմական արշավից փրկված նամաներն էլ հերերոների նման տարվեցին Սվակոլամունդի և Լյուդերիցի բանտարկյալների ճամբարներ, որտեղ գերմանական ընկերությունները՝ ներառյալ «Վոերմանը»¹²¹, ռազմագերիներին ստրուկների նման օգտագործում էին ենթակառուցվածքային աշխատանքներում, որոնցից էր¹²² երկաթուղիներ և նավահանգիստներ կառուցելը:

Գերմանական հանրային կարծիքը ցեղասպանության վերաբերյալ

Պետք է հիշել, որ հերերոների ցեղասպանությունն իրականացրին գաղութային իշխանությունները, և, ի տարբերություն այլ ցեղասպանությունների, դրանում ներգրավված չէր երկրի ամբողջ վարչական համակարգը կամ հասարակությունը: Ավելին՝ Գերմանիայում հուժկու բողոքի գործողություններ տեղի ունեցան, որոնց շնորհիվ հերերոների իսպառ բնաջնջումը կասեցվեց, իսկ գերմանական կառավարության որոշ գործակալություններ պարզապես հրաժարվեցին մասնակցել մի գործողության, որը հա-

118 St' u Peter Curson, *Border Conflicts in a German African Colony – Jakob Morengo and the Untold Tragedy of Edward Presgrave* (Bury St. Edmunds: Arena Books, 2012), ըստ Nielsen, *Britain, Germany and Colonial Violence in South-West Africa, 1884-1919*, 55-56:

119 St' u Nielsen, *Britain, Germany and Colonial Violence in South-West Africa, 1884-1919*, 57:

120 St' u Patrick Adam Longson, "The Rise of the German Menace. Imperial Anxiety and British Popular Culture, 1896-1903" (PhD diss., University of Birmingham, 2014), 80-81, Claus H. R Nordbruch, *Die Europäischen Freiwilligen in Burenkrieg, 1899-1902* (Pretoria, 1999) and Elria Wessels, *They Fought on Foreign Soil* (Bloemfontain, 2001):

121 «Վոերման» ընկերությունը հիմնել էր գերմանացի վաճառական, նավատեր և քաղաքական գործիչ Ադոլֆ Վոերմանը, ով մեծ դեր է ունեցել Աֆրիկայում գերմանական գաղութների ստեղծման գործում: Ժամանակին նա գերմանացի ամենախոշոր առևտրականն էր Արևմտյան Աֆրիկայում: Զինվորները, ձիերը, գենքերը, սարքավորումները և այլ պարագաներ գաղութ էին տեղափոխվում գերագանցապես նրա ընկերության միջոցով: Պատերազմը Վոերմանին անսպասելի շահույթ բերեց, որը գրեթե կրկնապատկվեց հերերո և նամա ժողովուրդների ցեղասպանության ժամանակ: Ավելի մանրամասն տե՛ս Alexandra Gittermann, "Steinreich durch Schnaps und Zwangsarbeit," *Der Spiegel*, March 23, 2021, <https://www.spiegel.de/geschichte/kolonialist-adolph-woermann-reich-durch-schnaps-und-zwangsarbeit-in-afrika-a-7d8102dd-f383-4c98-8f68-c8f3bd931f2d>:

122 St' u Cai Nebe, "How German merchants drove colonialism in West Africa," *Deutsche Welle*, January 30, 2024, <https://www.dw.com/en/how-german-merchants-drove-colonialism-in-west-africa/a-67585364>:

մարում էին անբարոյական արարք¹²³: Վերջին հաշվով՝ գաղութային վարչակազմը ոչ թե ինքնուրույն ուժ էր, այլ գերմանական կառավարությունների ներկայացուցիչների իշխանություն, որը գործում էր գերմանական միապետի և քանակի գլխավոր շտաբի իմացությամբ ու լռելյայն համաձայնությամբ¹²⁴: Ավելին, ժամանելով հերերոների երկիր, գեներալ Լոթար ֆոն Տրոտան փոխանցեց նահանգապետ Լոյթվեյնին, որ կայգեր Վիլհելմ II-ը պատերազմ է ուզում. «Նորին մեծությունն ասաց, որ ակնկալում է, որ ես ճնշեմ ապստամբությունը բոլոր միջոցներով»¹²⁵:

Հետաքրքիր է հետազայում հայ-գերմանական միության հիմնադիր Պաուլ Ռորբախի արձագանքն աֆրիկյան այս ժողովուրդների ոչնչացմանը. «Տեստեսական տեսանկյունից հոտենտոտները¹²⁶ ընդհանուր առմամբ անօգուտ են, և այս առումով ոչ մի հիմնավորում չկա այդ ռասայի պահպանման համար»: Այդ գերիշխող մտեցմամբ պայմանավորված, ըստ Ռորբախի, «նրանց կորուստներն ընդունվեցին անտարբերությամբ, եթե ոչ գոհունակությամբ»¹²⁷: Հետաքրքրական է, որ գերմանական «Southwest Africa» թերթը գրում էր, որ հերերոները չպետք է ոչնչացվեին, քանի որ նրանք պետք էին գերմանացիներին որպես աշխատողներ, իսկ նամաները պետք է ոչնչացվեին, քանի որ նրանք աննշան ցեղ էին¹²⁸:

Դեռ պատերազմի ընթացքում գործադրված դաժանության մասին լուրերը հասնում էին Գերմանիա: Բազմաթիվ գերմանացի զինվորներ իրենց հարազատներին ուղարկած նամակներում նկարագրում էին սարսափելի դեպքեր, նաև գերիներ չվերցնելու հրամանը: Մանն տեղեկություններ էին փոխանցում նաև գերմանացի միսիոներները: Այդ ամենը սոցիալ-դեմոկրատական կուսակցության նախագահ Ավգուստ Բերեյին նույնիսկ ստիպեց կառավարությանը մեղադրել անօգնական աֆրիկացիներին կոտորելու մեջ¹²⁹:

1918 թ. Լոնդոնում հրապարակվում է Հարավարևմտյան Աֆրիկայի բնիկների և նրանց նկատմամբ Գերմանիայի վերաբերմունքի մասին զեկույցը¹³⁰, որն ընդունված

123 Ամերիկացի կամ աֆրիկացի տեղաբնիկների նկատմամբ գերմանացիների վերաբերմունքը տարբեր էր. հմնա., օրինակ, Կանտի կարծիքը, որ «հնդկացիներն ի վիճակի չեն ստեղծելու ոչ մի ձևի մշակույթ», և Յոհան Գոթֆրիդ Հերդերի համոզմունքը, որ նեգրերը, ամերիկացիները և մոնղոլները՝ բոլորն էլ ունեն «շտրիներ, հմտություններ, քնատուր տաղանդ», որոնք չունեն եվրոպացիները (տե՛ս Immanuel Kant, “Über den Gebrauch teleologischer Prinzipien in der Philosophie,” *Der Teutsche Merkur*, 1 (1788): 121, Johann Gottfried Herder, *Briefe zu Beforderung der Humanitat* (Riga, 1793-1797), 2, ըստ Kiernan, *Blood and Soil*, 375:

124 Տե՛ս Bridgeman and Worley, *Genocide of Hereros, Century of Genocide. Critical Essays and Eyewitness Accounts*, 15-16:

125 Leutwein, letter to the editor of *Deutsch Südwestafrikanische Zeitung*, Nov. 5, 1903, quoted in Goldblatt, *History of South West Africa*, 147, ըստ Kiernan, *Blood and Soil*, 382.

126 Տե՛ս Levene & Roberts, *The Massacre in History*, 207:

127 Goldblatt, *History of South West Africa*, 142, 147-148, Cocker, *Rivers of Blood, Rivers of Gold*, 334, 336, ըստ Kiernan, *Blood and Soil*, 384.

128 Տե՛ս Kiernan, *Blood and Soil*, 384-385:

129 Տե՛ս Drechsler, “Let Us Die Fighting,” 151, Levene & Roberts, *The Massacre in History*, 207:

130 Տե՛ս South-West Africa. Administrator’s Office, *Report on the Natives of South-West Africa and Their Treatment by Germany* (London: H.M. Stationery Office, 1918): Չեկույցը բաղկացած էր երկու հիմնա-

է անվանել «Կապույտ գիրք»: Այն, փաստորեն, հերերոների ցեղասպանության փաստագրման առաջին իրական աղբյուրն է:

Զեկույցը գրվել է այն ժամանակ, երբ Գերմանիան պարտվել էր Առաջին համաշխարհային պատերազմում: Հարավաֆրիկյան միությունը, որն այդ ժամանակ բրիտանական գաղութ էր, ներխուժել էր Հարավարևմտյան Աֆրիկայի գերմանական գաղութ, իսկ Նամիբիան անցել էր նրա իրավասության ներքո: Տեղի գերմանացի բնակիչների պահանջով հարավաֆրիկյան կառավարիչ Վերթը համաձայնում է ոչնչացնել «Կապույտ գիրքը», իսկ Բրիտանական կայսրության այլ վայրերից դրա պատճենները տեղափոխվում են բրիտանական արտաքին գործերի նախարարություն¹³¹: Հետաքրքրական է, որ բրիտանացիները նախաձեռնել էին նաև Գերմանիայի՝ Առաջին աշխարհամարտում դաշնակցի՝ Օսմանյան կայսրության իրականացրած Հայոց ցեղասպանության վերաբերյալ «Կապույտ գրքի» հրապարակումը¹³²: Վերսալյան պայմանագրերի կնքումից հետո, որպես պատասխան Նամիբիայում տեղի ունեցածը փաստագրող «Կապույտ գրքի», գերմանացիները հրատարակեցին «Սպիտակ գիրք»¹³³ իր գաղութներում Բրիտանիայի դաժանությունների մասին¹³⁴:

Հանրությունը, սակայն, ինչպես ցույց են տալիս ժամանակի գերմանական մամուլն ուսումնասիրած գիտնականները, ընդհանուր առմամբ կամ աջակցում էր նման քաղաքականությանը, կամ ընդունում էր այն իբրև բնական ու սովորական եղելություն: Այն դիտարկվում էր սոցիալ-դարվինիզմի՝ ժողովրդականություն վայելող տեսության, հետամնաց ցեղերի՝ իրենց տեղն ավելի քաղաքակիրթ եվրոպացիներին անխուսափելիորեն զիջելու հրամայականի շրջանակներում: Եվ եթե նույնիսկ կային բողոքներ, ապա դրանք վերաբերում էին հերերոների խնդրի վերջնական լուծման տապալմանը¹³⁵, այդ պատերազմի վրա ծախսված միջոցների ահռելի մեծ՝ 600 միլիոն գերմանական մարկի հասնող չափերին¹³⁶, մտավախությանը, որ այն կարող է հանգեցնել ապստամբությունների նաև այլ գաղութներում, ինչպես նաև այն տնտեսական վտանգներին, որոնք կա-

կան մասերից՝ «Բնիկները և գերմանական վարչակազմը» ու «Բնիկները և քրեական իրավունքը»: Այն կազմված էր գերմաներեն թարգմանված փաստաթղթերից և ակնատեսների վկայություններից, որոնք հավաքվել էին 1917 թ. աֆրիկացիներից ու սպիտակամորթ վերաբնակներից: Զեկույցի հիմնական նպատակն էր ցույց տալ Գերմանիայի անկարողությունը՝ ղեկավարելու բնիկ ժողովուրդներին: Այն պարունակում էր նաև ծառերից կախված, պարանոցներին շղթաներով բանտարկյալների և մորակված կանանց տասներեք լուսանկարներ:

131 Տե՛ս Jan-Bart Gewald, “Herero genocide in the twentieth century: Politics and memory,” in *Rethinking Resistance: Revolt and Violence in African History*, eds. Gerrit Jan Abbink, Mirjam De Bruijn, Klaas Van Walraven (Leiden, Boston: Brill, 2003), 287-288:

132 Տե՛ս James Bryce, Arnold Toynbee, *The treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-16: Documents presented to Viscount Grey of Fallodon, Secretary of State for Foreign Affairs, by Viscount Bryce* (London: H.M.S.O., 1916), 684 էջ:

133 Գերմանական «Սպիտակ գիրքը» (գերմ. «Das Deutsche Weißbuch») գերմանական կառավարության 1914 թվականի հրատարակություն էր, որում հիմնավորվում էին Առաջին համաշխարհային պատերազմի պատճառների վերաբերյալ նրանց պնդումները:

134 Տե՛ս Gewald, “Herero genocide in the twentieth century: Politics and memory,” 288:

135 Տե՛ս Levene & Roberts, *The Massacre in History*, 214:

136 Տե՛ս նույն տեղում:

րող էր առաջ բերել անապատում մեծաքանակ ընտանի կենդանիների ոչնչացումը¹³⁷:

Որպես դրական կողմ նշվում էին նաև երկարատև խաղաղությամբ խաթարված գերմանական ազգի ռազմատենչ ոգու բարձրացումը և սոր գինատեսակների փորձարկման հնարավորությունը¹³⁸:

Գերմանացիների՝ հերերոների ցեղասպանության իրականացման հաջողությունը որոշ չափով ճանապարհ հարթեց նաև Հայոց ցեղասպանության և Հոլոքոստի իրագործման համար: Հայոց ցեղասպանության ժամանակ գերմանացի խորհրդականներն արդեն օգնում էին թուրքերին հայերի տեղահանությունը կազմակերպելու հարցում¹³⁹: Հայֆայի համալսարանի պատմության պրոֆեսոր Ստեֆան Բիրիգն ընդգծում է, որ գերմանական ռազմական մշակույթ էր ներթափանցել այն գաղափարը, որ հաղթանակը հնարավոր չէ պատկերացնել այլ կերպ, եթե ոչ թշնամու իսպառ ոչնչացում: Այս տրամաբանությամբ պատերազմի վարումն էր, որ հանգեցրեց հերերո և նամա ժողովուրդների ցեղասպանությանը: Եվ հաշվի առնելով երիտթուրքերի ղեկավարների շրջանում ռազմական իդեալների գերակշռությունը և գերմանացի ռազմական խորհրդատուների կողմից նրանց վերապատրաստումը՝ կարելի է կարծել, որ նման գաղափարներ կային նաև նրանց շրջանում¹⁴⁰:

Ջարգացումներ ցեղասպանությունից հետո

Ցեղասպանության հետևանքներից էր նաև փախստականական ճգնաժամը: 1905 թ. մոտավորապես 13 հազար նամա և հերերո ապաստան գտան Քեյփի գաղութում: Թվերը չափազանց մոտավոր են, քանի որ գաղութային իշխանությունները վիճակագրական տվյալներ չէին պահում¹⁴¹: Փախստականները կամ ձուլվում էին հերերոների լեզվով խոսող տեղի բնակչությանը, կամ հավաքագրվում հանքերում աշխատելու¹⁴²:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ գերմանական գաղութային իշխանություններին հաջողվել էր հասնել նրան, որ հերերոների խումբը գրեթե ոչնչացել էր. «... հերերոները մեծապես ցրվել էին, իսկ բոլոր ցեղային կապերը՝ թե՛ քաղաքական, թե՛ մշակութային, նրանց խորհրդանիշները՝ եզները, տարբերանշանները, և պետերը՝ ոչնչացվել»¹⁴³: Քաղաքներն ու բնակավայրերը, որոնք կրում էին հերերոների տված անունները, վերանվանվել էին¹⁴⁴:

Առաջին աշխարհամարտից հետո Փարիզի համաժողովում քննարկվեց Գերմա-

137 Տե՛ս նույն տեղում:

138 Տե՛ս նույն տեղում, 214-215:

139 Տե՛ս Nicole Rafter, *The Crime of All Crimes: Toward a Criminology of Genocide* (New York/London: New York University Press, 2016), 60-61:

140 Տե՛ս Stefan Ihrig, *Justifying Genocide: Germany and the Armenians from Bismarck to Hitler* (Cambridge, Massachusetts, and London: Harvard University Press, 2016), 93:

141 Տե՛ս Nielsen, *Britain, Germany and Colonial Violence in South-West Africa, 1884-1919*, 93-94:

142 Տե՛ս նույն տեղում, 100:

143 Sarkin, *Colonial genocide and reparations claims in the 21st century*, 18.

144 Տե՛ս նույն տեղում:

նիայի գաղութների հարցը: Դեռ պատերազմի ընթացքում խոսակցություններ էին տարածվում, որ Գերմանիան կորցրել է Հարավարևմտյան Աֆրիկայում տիրելու բարոյական և քաղաքական իրավունքը:

Հիմնական քննարկումը, որին մասնակցեցին նաև Մեծ Բրիտանիայի դոմինիոնները, տեղի ունեցավ 1919 թ. հունվարի 24-ին: Հաստատվեց Գերմանիայից գաղութները խլելու որոշումը: Թեև Հարավաֆրիկյան միությունը պահանջում էր Աֆրիկայում գերմանական գաղութները միացնել իրեն՝ պնդելով, որ դրանք «աշխարհագրորեն մեկ միասնություն են»¹⁴⁵, որոշվեց, որ թեև Հարավարևմտյան Աֆրիկայի, թեև Նոր Գվինեայի վրա տարածվելու է մանդատային համակարգը: Ընդ որում նրանք լինելու էին մանդատային Շ խմբում¹⁴⁶, ինչը փաստացի նշանակում էր գաղութային կարգավիճակի շարունակություն¹⁴⁷:

Տարիներ շարունակ Հարավարևմտյան Աֆրիկայում իրականացված վայրագությունները մոռացության մատնվեցին: Հիմնականում տեղի ունեցածը ներկայացվում էր որպես քաղաքակրթության հաղթանակ ուսսայական դեգեներատների նկատմամբ: Ավելին՝ 1912 թ. հունվարի 27-ին՝ Գերմանիայի կայսր Վիլհելմ II-ի ծննդյան օրը, Վինդհուկում՝ Նամիբիայի մայրաքաղաքում, բացվեց «Հարավ-արևմտքի հեծյալ» (Südwester Reiter) անվամբ «Ձիասպորտի հուշարձանը» (Reiterdenkmal), որով հարգանքի տուրք էր մատուցվում 1904-1907 թթ. Հերերոյի և Նամակուայի պատերազմում գերմանական կողմից զոհված զինվորներին և խաղաղ բնակիչներին¹⁴⁸: Հերերո և նամա ժողովուրդների տառապանքներին նվիրված հուշարձան մինչ օրս չի կանգնեցվել, բայց Սվակոպմունդի Սվակոպ գետի և Վինդհուկի երկաթուղային կայարանների հարակից տարածքում դեռևս պահպանվում են զանգվածային գերեզմանները¹⁴⁹:

1966 թ. պատմաբան Հորսթ Դրեյսլերն առաջին անգամ Գերմանիայի՝ Հարավարևմտյան Աֆրիկա արշավը ներկայացրեց որպես հերերո և նամա ցեղերին ոչնչացնելու միտումնավոր փորձ¹⁵⁰, սակայն միայն 1985 թ. Ուիտակերի պատրաստած գեկույցում¹⁵¹ այն որակվեց որպես ցեղասպանություն: Զեկույցում հերերոների և նամաների

145 Տե՛ս TNA, FO 608/153: Statement by Jan Smuts, 24 January 1919:

146 Շ դատում ներառված էին նախկինում Գերմանիայի տիրապետության տակ գտնվող տարբեր տարածքներ, որոնք հետագայում կառավարվում էին որպես մանդատը ստանձնած երկրների տարածքների անբաժանելի մասեր՝ Հարավարևմտյան Աֆրիկա (այժմ՝ Նամիբիա. մանդատը տրված էր Հարավային Աֆրիկային), Նոր Գվինեա (տրված էր Ավստրալիային), Արևմտյան Սամոա (այժմ՝ Սամոա. տրված էր Նոր Զելանդիային), Խաղաղ օվկիանոսի արևմտյան մասում գտնվող՝ հասարակածից հյուսիս ընկած կղզիներ (տրված էին Զապոնիային) և Նաուրուն (տրված էր Ավստրալիային, Մեծ Բրիտանիային և Նոր Զելանդիային):

147 Տե՛ս TNA FO 608/153, Resolution in Reference to Mandatories, 29 January 1919, ըստ Nielsen, *Britain, Germany and Colonial Violence in South-West Africa, 1884-1919*, 183:

148 Տե՛ս “Das Reiterdenkmal in Windhoek (Namibia) - Die Geschichte eines deutschen Kolonialdenkmals,” <https://www.freiburg-postkolonial.de/Seiten/Zeller-Reiterdenkmal-1912.htm>, դիտվել է՝ 27.09.2024:

149 Տե՛ս Post-Conflict Research Center, “The 20th Century’s First Genocide: Not the Holocaust, but the Herero,” https://p-crc.org/2019/04/06/not-the-holocaust-but-the-herero/#_ftn16, դիտվել է՝ 27.09.2024:

150 Տե՛ս նույն տեղում:

151 Ուիտակերի գեկույցը, որը պաշտոնապես հայտնի է որպես «Յեղասպանություն հանցագործության կանխարգելման և պատժի հարցի վերանայված և թարմացված գեկույց», նշանակալից փաս-

ցեղասպանությունը նշվում է որպես 20-րդ դարի ամենամեծ ցեղասպանություններից մեկը 1915-1916 թթ. Օսմանյան կայսրությունում հայերի կոտորածների, Հոլոքոստի և հանցագործության այլ օրինակների հետ¹⁵²: Երկար ժամանակ, սակայն, Գերմանիան հրաժարվում էր պատասխանատվություն ստանձնելուց: Առաջին համաշխարհային պատերազմից հետո Հարավարևմտյան Աֆրիկան անցել էր Հարավային Աֆրիկայի կառավարման ներքո, որտեղ ստեղծվել էր ապարտեիդի համակարգ¹⁵³: Իսկ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Հարավային Աֆրիկայի կառավարությունը քայլեր ձեռնարկեց իր կազմում ներառելու Նամիբիան որպես Հարավաֆրիկյան միության հինգերորդ նահանգ:

Ցեղասպանության թեմայի վերադարձը հանրային քննարկումների դաշտ

Միայն այն բանից հետո, երբ 1990 թ. Նամիբիան անկախացավ Հարավային Աֆրիկայից, Գերմանիայի կառավարությունը սկսեց ընդունել իր դերը վայրագությունների մեջ: Զուգահեռներ անցկացնելով Հայոց ցեղասպանության ու հերերո և նամա ժողովուրդների ցեղասպանության միջև՝ պետք է նկատել, որ Հայոց ցեղասպանությունը գերմանական հանրային դիսկուրսում ընկալվել է որպես մի ամբողջ ժողովրդի սպանություն, իսկ Հարավարևմտյան Աֆրիկայում 1904-1907 թթ. տեղի ունեցածը տարբեր էր, քանի որ խմբին ոչնչացնելու մտադրությունը հաստատված և հրապարակայնորեն ճանաչված չէր: Եվ գերմանական հասարակության շրջանում հանրային բանավեճ ցեղասպանության մասին՝ որպես այդպիսին, չի եղել: Հիմնականում խոսքը գաղութային բռնության մասին էր¹⁵⁴:

2024 թ. ապրիլին «Forensic Architecture» հետազոտական գործակալությունը Շնաձկան կղզում (Shark Island), որն այժմ թերակղզու է վերածվել, և Նամիբիայի Լյուդերից քաղաքի նավահանգստում հայտնաբերել է մահապատիժների, հարկադիր աշխատանքի և բանտարկության վայրեր: Այս հանցանքները կատարվել են կղզին Գերմանական կայսրության կողմից 1905-1907 թթ. որպես համակենտրոնացման ճամբար օգտագործվելու ընթացքում¹⁵⁵: Այդ հրապարակումներից հետո ցեղասպանությանը զոհ գնացած ժողովուրդների առաջնորդները հանդես եկան թերակղզին

տաթոթթ է, որը կազմել պատվիրել էր ՄԱԿ-ը 1985 թվականին: Գրել է բրիտանացի իրավապաշտպան Բենջամին Ուիտակերը, ով նպատակ ուներ վերանայելու և ընդլայնելու ցեղասպանության՝ որպես միջազգային հանցագործության ՄԱԿ-ի ընկալումն ու վերաբերմունքը, հատկապես 1948 թ. ցեղասպանության մասին կոնվենցիայի ընդունումից հետո:

152 Տե՛ս «UN Whitaker Report on Genocide,» 1985, <http://www.preventgenocide.org/prevent/UNdocs/whitaker/section5.htm#n13>, դիտվել է՝ 27.09.2024:

153 Ապարտեիդը ռասայական սեգրեգացիայի, խտրականության և ճնշման քաղաքականություն է, որը մինչև 20-րդ դարի 90-ականները Հարավաֆրիկյան Հանրապետության կառավարությունը գործադրում էր բնիկ աֆրիկացիների և ոչ եվրոպացի այլ ազգերի նկատմամբ:

154 Տե՛ս Ihrig, *Justifying Genocide*, 356:

155 Տե՛ս «Shark Island: An Architectural Reconstruction of a Death Camp,» Report by Forensic and Forensic Architecture, April 12, 2024, <https://content.forensic-architecture.org/wp-content/uploads/2024/04/Shark-Island-Report.pdf>, դիտվել է՝ 01.10.2024:

պատմական վայր հռչակելու կոչով: Թերակղզին այժմ զբոսաշրջային վայր է՝ ճամբարային հարմարություններով, ծովափնյա հանգստավայրերով և բանուկ նավահանգստով: Նամիբիայի իշխանություններին կոչ արվեց սառեցնելու Շնաձկան թերակղզում նավահանգիստը ընդարձակելու ծրագրերը: Նավահանգստի շինարարությունը նախատեսվում է սկսել հաջորդ տարվա սկզբին: Նամիբիայի նավահանգստային մարմինը հայտնել է, որ պատվիրել է հնագիտական ուսումնասիրություններ իրականացնել և խորհրդակցում է տուժած խմբերի ու Նամիբիայի ժառանգության խորհրդի հետ: Կատարվում էին նաև շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումներ: Փոլ Սամուել Հերերոն՝ Սամուել Մահարերոյի ծոռը, ով հերերո ժողովրդի պարագլուխն էր ապստամբության ժամանակ և Նամիբիայի 9 ազգային հերոսներից մեկը, նշում է, որ Շնաձկան կղզին իրենց համար սուրբ վայր է և պետք է լինի հուշարձան. «Մենք ուզում ենք, որ մեր ժողովուրդը կարողանա գալ ու հասկանալ մեր պապերի ցավն ու տառապանքը, որոնք մահացել են շատ ցավալի մահով»¹⁵⁶:

Նամա զոհերի ժառանգ և «Nama Traditional Leaders Association»-ի ներկայացուցիչ Սիմա Լուիպերտն ընդգծում է, որ Նամիբիայի կառավարությունը նվազեցնում է ցեղասպանության ծանրությունն ու տևական ազդեցությունը, ինչն իրենք ցանկանում են կանխել: Նրա խոսքով՝ թերակղզու երկայնքով կանգնեցվել են գերմանացի գաղութատեր զինվորների հիշատակը հավերժացնող նշանավոր հուշարձաններ, մինչդեռ ցեղասպանության զոհերի գերեզմանները հիմնականում անհայտ են¹⁵⁷:

Հատկանշական է, որ գերմանացի աշակերտները շատ քիչ տեղեկություններ են ստանում իրենց երկրի գաղութային անցյալի մասին, քանի որ գերմանական դպրոցական համակարգը գաղութատիրությանը վերաբերող հարցերին անհրաժեշտ ուշադրություն չի դարձնում: Այսպես, օրինակ, Նամիբիայում տեղի ունեցած ցեղասպանության թեման դասավանդվում է միայն ուսուցիչների հայեցողությամբ¹⁵⁸:

Հոլոքոստի ընթացքում 6 միլիոն հրեաների սպանությունը, Երկրորդ համաշխարհային պատերազմը, Սառը պատերազմը և Գերմանիայի բաժանումը գերմանական դպրոցական համակարգում կարևոր թեմաներ են, սակայն այլ թեմաների, օրինակ՝ Աֆրիկայում և Խաղաղ օվկիանոսի արևմտյան երկրներում գերմանական գաղութատիրության 30-ամյա պատմությանը, քիչ դասաժամեր են հատկացվում: Գերմանական որոշ նահանգներում այս թեման ընդհանրապես չի դասավանդվում, իսկ որոշ նահանգներում էլ միայն թեթևակիորեն է հիշատակվում: Եվ այժմ պայքար է տարվում այս իրավիճակը փոխելու ուղղությամբ¹⁵⁹:

156 Caroline Kimeu, “Call for port extension to be halted as genocide remains are found on Namibia’s Shark Island,” *The Guardian*, May 6, 2024, <https://www.theguardian.com/global-development/article/2024/may/06/port-extension-call-halted-genocide-remains-namibia-shark-island>:

157 Տե՛ս նույն տեղում:

158 Տե՛ս Peter Hille, “Germany’s colonial history often missing at school,” *Deutsche Welle*, October 10, 2020, <https://www.dw.com/en/how-german-schools-miss-out-countrys-colonial-history/a-55230081>:

159 Տե՛ս նույն տեղում, Daniel Pelz, “How is Germany dealing with its colonial history?,” *Deutsche Welle*, April 26, 2021, <https://www.dw.com/en/how-seriously-is-germany-taking-its-colonial-history/a-57340809>:

Նամիբիայում հերերոների ցեղասպանության հարցի անորոշությունը

Ինչպես նշեցինք, մինչև 1990 թվականը հերերոների նկատմամբ իրականացված ցեղասպանության թեման չէր արծարծվում: Պարզ է, որ գաղութային տարածքի կարգավիճակը չէր կարող նպաստել պահանջների ներկայացմանը: Երբ 1990 թ. Նամիբիան անկախանում է Հարավաֆրիկյան Հանրապետությունից, ծավալվում են քննարկումներ Գերմանիային պահանջներ ներկայացնելու շուրջ:

Միաժամանակ Նամիբիայի անկախացումը զուգադիպեց միջազգային արդարադատության իրականացմանը, այդ թվում նաև՝ անցյալում տեղի ունեցած հանցագործությունների համար պատժի և փոխհատուցման թեմաների քննարկմանը: 1990-ական թվականները նշանավորվեցին խոշոր հակամարտություններով և նույնիսկ ցեղասպանություններով Ռուանդայում և նախկին Հարավսլավիայի տարածքում, ինչը հանգեցրեց այս հարցերի վերարժևորմանը և ավելի խոր ուսումնասիրությանը:

Բազմաթիվ փորձեր եղան ստեղծելու ճշմարտությունը բացահայտող հանձնաժողովներ¹⁶⁰, սակայն Նամիբիայի կառավարությունը դիմադրում էր այս ճշմանը՝ հայտարարելով, որ անցյալը փորփրելը կարող է բացասաբար ազդել երկրի տարբեր համայնքների միջև հաշտեցման վրա: Նույնիսկ մերժվեց Հարավային Աֆրիկայի առաջարկը՝ Հարավային Աֆրիկայի ճշմարտության և հաշտեցման հանձնաժողովի լուծումներ անցկացնել Նամիբիայում¹⁶¹:

Ընդհանրապես Նամիբիայի կառավարության և հերերոների հարաբերությունները միանշանակ չեն: Հերերոները կազմում են երկրի բնակչության ընդամենը 10 տոկոսը և փաստացի մշտապես ընդդիմադիրների կարգավիճակում են:

Նամիբիայի կառավարությունը որոշել էր, որ չի խրախուսելու հերերոների պահանջները: Դիրքորոշումը հիմնվում էր այն հիմնավորման փորձի վրա, որ թեև հերերոներն ու նամաները կորցրել էին իրենց բոլոր հողերը, սակայն ո՛չ Գերմանիան, ո՛չ էլ Հարավաֆրիկյան գաղութատիրական իշխանությունը Օվամբո թագավորությունների¹⁶² բնակիչներին երբեք չեն տեղահանել իրենց հողերից. «... ներկայիս կառավարությունը չի ընդունում, որ պետք է պայքարի մի բանի համար, ինչը սրա ընդհանուր պատմական փորձառության մաս չէ»¹⁶³: Եվ սա այն դեպքում, երբ հերերոների ցեղասպանությունը լայնորեն օգտագործվել է Հարավարևմտյան Աֆրիկայի ժողովրդա-

160 Stéu Africa Watch, *Accountability in Namibia: Human rights and transition to democracy* (New York: Human Rights Watch, 1992), 120 էջ; Lauren Dobell, “Silence in context: Truth and/or reconciliation in Namibia”, *Journal of Southern African Studies*, 23 (1997): 2, Chris Tapscott, “National reconciliation, social equity and class formation in independent Namibia”, *Journal of Southern African Studies*, 19 (1993): 29-39:

161 Stéu Paul Conway, “Truth and reconciliation: The road not taken in Namibia,” *The Online Journal of Peace and Conflict Resolution* 5, no 1 (2003): 66-76, http://www.trinstitute.org/ojpcr/5_1conway.htm, դիտվել է՝ 09.10.2024:

162 Օվամբո ժողովուրդը, որի լեզուն պատկանում է բանտու լեզվաընտանիքին, էթնիկ խումբ է Հարավային Աֆրիկայում՝ հիմնականում ներկայիս Նամիբիայի տարածքում: Օվամբո ժողովուրդը բնակվում է Հյուսիսային Նամիբիայի և Հարավային Անգոլայի Կունեն նահանգի ավազոտ, խոտածածկ հարթավայրերում, որոնք երբեմն կոչվում են Օվամբոլենդ:

163 Gewalt, “Herero genocide in the twentieth century: Politics and memory,” 279-304.

կան կազմակերպության կողմից որպես քարոզչական միջոց Հարավային Աֆրիկայից անկախանալու գործընթացում¹⁶⁴: Դա միտված էր նպաստելու Նամիբիայի ժողովրդի ազատագրական պայքարի համար համաշխարհային հանրության աջակցությունը ստանալուն¹⁶⁵:

Հարկ է ընդգծել, որ երբ 2004 թ. նշվում էր հերերոների ցեղասպանության 100-րդ տարեկիցը, և Նամիբիայում կազմակերպվեցին մի շարք արարողություններ, դրանք հիմնականում դուրս չեկան երկրի սահմաններից: Նույնիսկ երկրի ներսում դրանք միանշանակորեն չէին ընդունվում: Եվ երկրի նախագահը չմասնակցեց այդ միջոցառումներին¹⁶⁶:

Սակայն նույնիսկ պետական աջակցության բացակայության պայմաններում 2001 թ. հերերո ժողովրդի ներկայացուցիչները հայց ներկայացրին ԱՄՆ-ում: Դատական գործընթացում որպես մեղադրյալներ ներգրավվեցին Գերմանիայի կառավարությունը և «Deutsche Bank»-ը (առևտրային կազմակերպություն, որը ֆինանսավորում էր գերմանական կառավարությանը և Գերմանական Հարավարևմտյան Աֆրիկայում գտնվող այլ ընկերություններին): Հերերոների ներկայացուցիչները 4 մլրդ դոլարի փոխհատուցում էին պահանջում գերմանական կառավարությունից և ԱՄՆ-ում գործող երկու գերմանական ընկերություններից: Միայն գերմանական կառավարությունից 2 մլրդ դոլարի փոխհատուցում էին պահանջում գաղութատիրության ժամանակ կատարված վայրագությունների համար¹⁶⁷: Գերմանիան մերժեց հայցը՝ նշելով, որ այդ հակամարտության շրջանում զինվորների և քաղաքացիական անձանց պաշտպանության միջազգային օրենքներ գոյություն չեն ունեցել¹⁶⁸: Թեման, սակայն, դառնում է հանրային քննարկումների առարկա՝ ներառելով հումանիտար, բարոյական և հիշողության հետ կապված չափումներ:

1933 թ. նացիստական իշխանությունները Մյունխենի մի փողոց անվանեցին գեներալ Ֆոն Տրոտայի անունով՝ «Von Trotha StraBe»: 2006 թ. Մյունխենի քաղաքային խորհուրդը պաշտոնապես որոշեց այդ փողոցը վերանվանել «Հերերո փողոց» (Herero StraBe)՝ ի հիշատակ գեներալի զոհերի¹⁶⁹: Մեկ այլ դրվագ էր 2007 թ. գեներալ Լոթար ֆոն Տրոտայի տասնմեկ ժառանգների այցը Նամիբիայի նախկին գերմանական գաղութ՝ իրենց նախնիների արարքների համար գղջում արտահայտելու և ներողություն խնդրելու նպատակով: Նրանք մասնակցեցին Նամիբիայի մայրաքաղաք Վինդհուկից մոտ 250 կիլոմետր դեպի արևմուտք գտնվող Օմարորու քաղաքում կայացած

164 Տե՛ս նույն տեղում, 279-304:

165 Տե՛ս Sarkin, *Colonial genocide and reparations claims in the 21st century*, 55:

166 Տե՛ս Lindsey Dentlinger, “DTA Slams Govt over Recognition of Herero Chiefs,” *Africa News Service*, August 20, 2004, ըստ Sarkin, *Colonial genocide and reparations claims in the 21st century*, 56-57:

167 Տե՛ս “Germany Urges Herero to Drop Lawsuit,” *Deutsche Welle*, August 5, 2004, <https://www.dw.com/en/germany-urges-herero-to-drop-lawsuit/a-1287663>:

168 Տե՛ս Andrew Meldrum, “German Minister Says Sorry for Genocide in Namibia,” *Guardian*, August 16, 2004, <http://www.guardian.co.uk/print/0,3858,4993918-103532,00.html>:

169 Տե՛ս Bernd Kastner, “Ehre, wem keine gebührt,” *Süddeutsche Zeitung*, Juli 26, 2013, <https://www.sueddeutsche.de/muenchen/umbenennung-von-strassen-ehre-wem-keine-gebuehrt-1.1731842>:

միջոցառմանը՝ նվիրված 1904 թ. Վիլհելմ II-ի զորքերի արշավանքի տարեդարձին: «Մենք ամաչում ենք Նամիբիայում մեկ դար առաջ տեղի ունեցած սարսափելի իրադարձությունների համար»¹⁷⁰, - ասել է 67-ամյա Թիլո ֆոն Տրոտան՝ ընտանիքի անդամների ներկայացուցիչը: Նամիբիայի մոտ մեկ տասնյակ ոստիկաններ դուրս եկան պաշտպանելու պատվիրակներին այն բանից հետո, երբ հերերոների առաջնորդ Կուայմա Ռիբուակոն նախագգուշացրեց, որ նրանց կյանքը կարող է վտանգվել: Արաբողությունը, սակայն, խաղաղ անցավ¹⁷¹:

Քաղաքական ճանաչում

Պետք է նշել, որ այս ամենն ուղեկցվում էր տեղի ունեցածի քաղաքական ճանաչման գործընթացով: 2004 թ. օգոստոսին Բեռլինն առաջին անգամ պաշտոնապես ներողություն խնդրեց Գերմանական կայսրության՝ Նամիբիայում իրականացրած գործողությունների համար: Նամիբիայի հերերո ժողովրդի դեմ մահաբեր արշավից 100 տարի անց Գերմանիայի զարգացման նախարար Հեյդեմարի Վիեցորեկ-Չեուլը այցելեց նախկին գաղութ և ներողություն խնդրեց կատարված հանցագործությունների համար: Ավելին՝ նա նշեց, որ հարյուր տարի առաջ տեղի ունեցած հանցագործությունները կարող են որակվել որպես ցեղասպանություն¹⁷²:

2006 թ. Նամիբիայի խորհրդարանի ներկայացուցիչներից մեկը Գերմանիայից փոխհատուցում պահանջող միջնորդություն ներկայացրեց: Այդ ընթացքում նա ընթերցեց 1900-ականների սկզբին գերմանացի մի զինվորի գրած վկայությունն այն մասին, թե ինչպես են գերմանացիները հետապնդել հերերոներին դեպի Բոտսվանա¹⁷³: Այս տեսանկյունից հետաքրքրական է, որ 2024 թ. Նամիբիայի կառավարությունը ողջունեց 100 ծագումով հերերոների վերադարձը Բոտսվանայից իրենց նախնիների հողը՝ համարելով դա կարևոր կետ արդարության վերականգնման շարունակական գործընթացում այն մարդկանց ժառանգների համար, որոնք փախել էին Գերմանական Հարավարևմտյան Աֆրիկայից 1904-1908 թթ. ցեղասպանության ժամանակ: Ավելին՝ Նամիբիան հինգ առևտրային ֆերմաներ տրամադրեց նրանց վերաբնակեցման համար¹⁷⁴:

170 Տե՛ս “General’s Descendants Apologize for ‘Germany’s First Genocide,’” *Der Spiegel*, October 8, 2007, <https://www.spiegel.de/international/world/herero-massacre-general-s-descendants-apologize-for-germany-s-first-genocide-a-510163.html>, “German family’s Namibia apology,” *BBC News*, October 8, 2007, <http://news.bbc.co.uk/2/hi/africa/7033042.stm>:

171 Տե՛ս նույն տեղում:

172 Տե՛ս “Germany Asks for Namibians’ ‘Forgiveness,’” *Deutsche Welle*, 14 August 2004, <https://www.dw.com/en/germany-asks-for-namibians-forgiveness/a-1298060>:

173 Տե՛ս “Motion on the Ovaherero Genocide,” Voted on 19 September 2006 in the National Assembly of the Republic of Namibia, https://genocide-namibia.net/wp-content/uploads/2015/02/2006_09_Motion_Genocide_nam_parliament-1.pdf, դիտվել է՝ 10.09.2024, ըստ Sarkin, *Colonial genocide and reparations claims in the 21st century*, 56:

174 Տե՛ս Vitalio Angula, “Namibia begins restorative justice for descendants of genocide,” *VOA*, September 25, 2024, <https://www.voanews.com/a/namibia-begins-restorative-justice-for-genocide-descendants/7799415.html>:

2006 թ. հոկտեմբերի 26-ին Նամիբիայի Ազգային ժողովը միաձայն (նաև Հարավարևմտյան Աֆրիկայի ժողովրդական կազմակերպության (SWAPO) աջակցությամբ) ընդունեց մի որոշում, որով ճանաչվում էր հերերոների ցեղասպանությունը, և արդարացի համարվում փոխհատուցման պահանջները:

«Ցեղասպանություն» եզրույթը կրկին կիրառեց Գերմանիայի Բունդեսթագի նախագահ Նորբերտ Լամմերթը 2015 թ. Նամիբիա կատարած իր այցի ժամանակ¹⁷⁵: Գերմանական «Zeit» թերթի համար գրած հոդվածում նա նշում էր, որ յուրաքանչյուր ոք, ով 1915 թ. Թուրքիայի կողմից հայերի ջարդերը համարում է ցեղասպանություն, պետք է նաև ընդունի, որ դրանցից մեկ տասնամյակ առաջ գերմանական կայսերական զորքերի՝ ներկայիս Նամիբիայում իրականացրած վայրագությունները նույնպես պետք է բնութագրվեն որպես այդպիսին¹⁷⁶: Նույն թվականին Գերմանիան և Նամիբիան սկսեցին բանակցել մի համաձայնագրի շուրջ, որով գերմանական կողմը պետք է պաշտոնապես ներողություն խնդրեր և փոխհատուցում տրամադրեր 1904-1908 թթ. ընթացքում գերմանացի գաղութարարների կողմից բնիկ հերերո և նամա ժողովուրդների տասնյակ հազարավոր ներկայացուցիչների սպանության համար¹⁷⁷: Իսկ գերմանական գլխավոր բանագնաց Ռուպրեխտ Պոլենցը վերահաստատեց, որ Գերմանիայի կատարած վայրագությունները որակվում են որպես ցեղասպանություն¹⁷⁸:

Փոխհատուցման խնդիրը

2015 թվականից Նամիբիայի և Գերմանիայի միջև բանակցություններ են ընթանում 1900-ականների սկզբին հերերո և նամա էթնիկ խմբերի ցեղասպանության համար փոխհատուցման շուրջ¹⁷⁹: 2017 թ. նամիբիական լրատվամիջոցներում տեղեկություն տարածվեց այն մասին, որ Նամիբիան պատրաստվում է Գերմանիայի դեմ 30 միլիարդ դոլարի (28 միլիարդ եվրո) հայց ներկայացնելու Հաագայի միջազգային արդարադատության դատարան գաղութատիրության ժամանակ տեղի ունեցած ցեղասպանության համար¹⁸⁰: Սակայն նույն թվականին հերերոների ու նամաների ներկայացուցիչները դիմեցին Նյու Յորքի ֆեդերալ դատարան՝ Գերմանիայից փոխհատուցում ստանալու պահանջով¹⁸¹, բայց մերժում ստացան: 23-էջանոց վճռում դատավոր

175 St' u Renate Rengura, "German reparations for Namibia," *Deutsche Welle*, August 10, 2015, <https://www.dw.com/en/is-germany-moving-closer-to-paying-reparations-for-namibian-genocide/a-18769503>:

176 St' u "Lammert: Germany's colonial genocide," *Deutsche Welle*, July 8, 2015, <https://www.dw.com/en/bundestag-president-calls-on-germany-to-recognize-namibia-massacre-as-genocide/a-18571132>:

177 St' u "Namibia rejects German reparations offer," *Deutsche Welle*, December 8, 2020, <https://www.dw.com/en/namibia-germany-reparations/a-54535589>:

178 St' u Elisa von Joiden-Forgey, "Women and the Herero Genocide," in *Women and Genocide: Survivors, Victims, Perpetrator*, ed. Elissa Bemporad, Joyce W. Warren (Bloomington: Indiana University Press, 2018), 51:

179 St' u Antonio Cascais, "Germany faces its colonial past," *Deutsche Welle*, August 30, 2020, <https://www.dw.com/en/germany-colonial-reparations-namibia-herero-nama/a-54761024>:

180 St' u "Government makes U-turn on genocide," *The Namibian*, March 17, 2017, <https://www.namibian.com.na/162523/archive-read/Government-makes-U-turn-on-genocide>:

181 St' u "Descendants of Namibia genocide victims seek reparations in New York," *The Guardian*, March

Լորա Թեյլոր Սուեյնը նշում էր ինքնիշխան պետության անձեռնմխելիության սկզբունքի կիրառման մասին, որը գործը դարձնում էր անընդունելի¹⁸²: Հերերո և նամա ժողովուրդների ներկայացուցիչները բողոքարկեցին Նյու Յորքի դատարանի վճիռը, բայց ԱՄՆ-ի վերաքննիչ դատարանը մերժեց նրանց բողոքը¹⁸³:

Բայց և այնպես, փաստ է, որ երկու երկրների միջև երկխոսությունն այդ հարցով սկսված էր: Առաջին քայլով 2018 թ. Բեռլինում տեղի ունեցած եկեղեցական արարողության ժամանակ Գերմանիան Նամիբիային վերադարձրեց նամիբիական ցեղերի ներկայացուցիչների մասունքները, որոնք ցուցադրվում էին իր թանգարաններում և եվրոպական ռասայական գերազանցության պնդումներն առաջ մղելու նպատակով օգտագործվել էին գաղութատիրության շրջանի փորձերում¹⁸⁴:

Որպես երկրորդ քայլ Գերմանիան պաշտոնապես ներողություն խնդրեց Նամիբիայից: «Հաշվի առնելով Գերմանիայի պատմական և բարոյական պատասխանատվությունը՝ մենք Նամիբիայից և զոհերի ժառանգներից հայցում ենք ներում», - հայտարարեց Գերմանիայի ԱԳ նախարար Հայկո Մասարը և նշեց, որ այդու հետ Գերմանիան պաշտոնական մակարդակում Նամիբիայում 1904-1908 թթ. տեղի ունեցած զանգվածային սպանությունները կոչելու է ցեղասպանություն¹⁸⁵:

Եվ վերջապես, գործը հասավ փոխհատուցմանը: Նամիբիայի նախագահ Հեյզ Գեյնգորը 2020 թ. հայտարարեց, որ մերժում է 20-րդ դարի սկզբին Գերմանական կայսրության իրականացրած ցեղասպանության համար 10 միլիոն եվրոյի (11.7 միլիոն դոլար) փոխհատուցում վճարելու Գերմանիայի առաջարկը՝ նշելով, որ այն պետք է վերանայվի: Նամիբիայի նախագահը նաև շեշտեց, որ Գերմանիան օգտագործում է «վերքերը բուժող» արտահայտությունը, այլ ոչ թե «փոխհատուցում» բառը՝ ընդգծելով, որ տերմինաբանությունը հետագայում կքննարկվի¹⁸⁶: Այնուամենայնիվ, Նամիբիայի հերերո և նամա ժողովուրդների առաջնորդները կողմ են արտահայտվում «հատուցում» բառին: Իսկ Նամիբիայի հետ բանակցությունների գծով գերմանացի բանագնաց Ռուարելստ Պոլենցը հայտարարեց, որ 10 միլիոն եվրոյի առաջարկ երբեք սեղանին չի եղել: Նա հավելել է, որ Նամիբիայի անկախացումից ի վեր Գերմանիան ավելի քան 800 միլիոն եվրո է ուղղել այդ երկրի զարգացման աշխատանքներին¹⁸⁷:

16, 2017, <https://www.theguardian.com/world/2017/mar/16/namibia-genocide-reparations-case-germany-new-york>:

182 Տե՛ս «New York court dismisses Namibia genocide compensation suit,» *France 24*, March 7, 2019, <https://www.france24.com/en/20190307-new-york-court-dismisses-namibia-genocide-compensation-suit>:

183 Տե՛ս «Genocide appeal fails in US court,» *The Namibian*, September 29, 2020, <https://www.namibian.com.na/204978/archive-read/Genocide-appeal-fails-in-US-court>:

184 Տե՛ս «Germany returns skulls of Namibian genocide victims,» *BBC*, August 29, 2018, <https://www.bbc.com/news/world-africa-45342586>:

185 Տե՛ս Marina Adami, «Germany recognizes Herero and Nama genocide,» *Politico*, May 28, 2021, <https://www.politico.eu/article/germany-recognizes-colonial-herero-nama-genocide/>:

186 Տե՛ս «Namibia rejects German reparations offer»:

187 Տե՛ս Cai Nebe, «A German offer of €10 million for genocide in Namibia?,» *Deutsche Welle*, August 13, 2020, <https://www.dw.com/en/did-germany-offer-10-million-for-colonial-era-genocide-in-namibia/a-54544363>:

2021 թ. Գերմանիայի և Նամիբիայի միջև հնգամյա բանակցային գործընթացի արդյունքում Բեռլինը համաձայնեց 1.1 մլրդ եվրոյի ներդրումներ կատարել այդ հարավաֆրիկյան պետության տնտեսության մեջ որպես իր գաղութային շրջանի մեղքերի որոշակի հատուցում¹⁸⁸: 2021 թ. մայիսի 28-ին Գերմանիայի արտգործնախարար Հայկո Մասարը Նամիբիայի հետ բանակցությունների ավարտի կապակցությամբ հանդես եկավ հայտարարությամբ, որում նշում էր. «Հաշվի առնելով Գերմանիայի պատմական և բարոյական պատասխանատվությունը՝ մենք ներողություն կխնդրենք Նամիբիայից և զոհերի ժառանգներից: Որպես զոհերի կրած անչափելի տառապանքների ճանաչման նշան՝ մենք ցանկանում ենք աջակցել Նամիբիային և զոհերի ժառանգներին վերակառուցման և զարգացման համար 1.1 միլիարդ եվրոյի ծրագրով: Յեղասպանությունից տուժած համայնքներն առանցքային դեր կունենան այս ծրագրի շրջանակում: Դրանից փոխհատուցման իրավական պահանջներ չեն կարող բխել»¹⁸⁹:

Նշենք, որ 1.1 մլրդ եվրոյի ֆինանսական օգնությունը նախատեսվում էր տրամադրել 30 տարվա ընթացքում՝ կյանքի կոչելով ենթակառուցվածքային մեծ նախագծեր՝ ճանապարհաշինություն, դպրոցաշինություն, առողջապահության արդիականացում, ինչպես նաև բնակչության կրթության կազմակերպում և մասնագիտական վերապատրաստում: Այդուհանդերձ, վերջնական համաձայնագրի տեքստում Գերմանիան մեղմեց ձևակերպումները՝ իրադարձությունները որակելով «այնպես, ինչպես դրանք եղել են այսօրվա տեսանկյունից՝ ցեղասպանություն», և խուսափեց «ռեպարացիա» ու «փոխհատուցում» բառերից¹⁹⁰, որպեսզի բացառի իրավական նախադեպի ստեղծումը, որի հետևանքով իր առաջ նման պահանջներ կդրվեին նաև այլ դեպքերի առնչությամբ¹⁹¹:

Նամիբիայի փոխնախագահ Նանգոլո Մբումբան հայտարարեց, որ Նամիբիայում 30 տարվա ընթացքում ավելի քան մեկ միլիարդ եվրոյի նախագծեր ֆինանսավորելու Գերմանիայի առաջարկը բավարար չէ ցեղասպանության հասցրած վնասները փոխհատուցելու համար: Նրա խոսքով՝ ոչ մի արժույթով ոչ մի գումար չի կարող իսկապես փոխհատուցել մարդու կյանքը¹⁹²:

Այսպիսով՝ փոխհատուցման հարցը դարձավ քննարկումների առարկա: Նամիբիայում բազմամարդ ցույցերի մասնակիցները պահանջում են Գերմանիայից ավել-

188 Stü u Philip Oltermann, “Germany agrees to pay Namibia €1.1bn over historical Herero-Nama genocide,” *The Guardian*, May 28, 2021, <https://www.theguardian.com/world/2021/may/28/germany-agrees-to-pay-namibia-11bn-over-historical-herero-nama-genocide>:

189 “Foreign Minister Maas on the conclusion of negotiations with Namibia,” *Federal Foreign Office*, May 28, 2021, <https://www.auswaertiges-amt.de/en/newsroom/news/-/2463598>:

190 Stü u “Joint Declaration by the Federal Republic of Germany and the Republic of Namibia ‘United in Remembrance of Our Colonial Past, United in Our Will to Reconcile, United in Our Vision of the Future’,” https://www.dngev.de/images/stories/Startseite/joint-declaration_2021-05.pdf, դիտվել է՝ 03.06.2024:

191 Կան ռեպարացիաների վճարման օրինակներ: Այսպես՝ Գերմանիան պատերազմի փոխհատուցում է վճարել Հոլոքոստը վերապրածներին, ԱՄՆ-ն փոխհատուցել է ճապոնա-ամերիկյան ներկավաճներին, Մեծ Բրիտանիան խոստացել է վճարել Քենիայում իր իշխանության ներքո խոշտանգված մաու-մաու ժողովրդին:

192 Stü u “Germany colonial-era genocide reparations offer not enough – Namibia vice president,” *Reuters*, June 5, 2021, <https://www.reuters.com/world/africa/germany-colonial-era-genocide-reparations-offer-not-enough-namibia-vice-2021-06-04/>:

լացնել վճարումը՝ հասցնելով այն 9 մլրդ եվրոյի: Մեկ այլ պահանջ է վերադարձնել տեղաբնիկների գյուղատնտեսական հողերը, որոնց 70 տոկոսը ցեղասպանությունից հետո բաժանվել էր գերմանացի վերաբնակեցված ֆերմերների միջև¹⁹³: Նամիբիայի համայնքները, որոնց նախնիները կոտորվել են գերմանական գաղութային ուժերի կողմից, իսկ ունեցվածքը՝ բռնագրավվել, կոչ են անում երկրի իշխանություններին բանակցություններ սկսելու Բեռլինի հետ իրենց նախնիների հողերի վերադարձի շուրջ: Համայնքները նաև պնդում են, որ հողի սեփականության հարցը 2021 թ. համատեղ հայտարարության մեջ լուծված չէ, և իրենց նախնիների՝ գերմանական ուժերի խլած հողերը չեն վերադարձվել¹⁹⁴:

Թերևս նաև գաղութային անցյալի պատճառով է, որ Նամիբիայում մոտ 4 հազար ֆերմերներ, որոնք հիմնականում սպիտակամորթներ են, տիրապետում են Նամիբիայի վարելահողերի կեսին¹⁹⁵: Եվ ընդհանուր առմամբ սոցիալական անհավասարությունն այդ երկրում սուր բնույթ է կրում:

Հերերո և նամա ժողովուրդների բազմաթիվ ներկայացուցիչներ կարծում են, որ իրենց երկրում՝ Նամիբիայում, մեծամասնություն կազմող կառավարական կուսակցությունը Հարավարևմտյան Աֆրիկայի ժողովրդական կազմակերպությունը, պատշաճ կերպով չի ներկայացնում իրենց ժողովուրդներին, քանի որ այդ կուսակցությունն ամենից շատ աջակցություն ստանում է երկրի հյուսիսային կեսում բնակվող Օվամբոյի ժողովրդից: Անգամ տեսակետներ են հնչում, որ Նամիբիայի կառավարությունն է ներգրավված գերմանական կողմի հետ բանակցություններում, այնինչ տուժած համայնքների ղեկավարները պետք է ներգրավվեն: Իսկ կառավարության դիրքորոշումն այն է, որ ինքը ներկայացնում է բոլոր նամիբիացիներին, և Գերմանիայի հետ համաձայնագիրը չի կարող անդրադառնալ միայն հերերո ու նամա ժողովուրդներին¹⁹⁶:

2023 թ. հունվարի 20-ին հերերոների ու նամաների ներկայացուցիչները հայտարարեցին, որ հայց են ներկայացրել ընդդեմ Գերմանիայի հետ համաձայնության: Նրանք պահանջում են անօրինական ճանաչել հերերո և նամա ժողովուրդների ցեղասպանության մասին Նամիբիայի և Գերմանիայի միջև կնքված համաձայնագիրը, քանի որ զոհերի ժառանգներին անմիջականորեն փոխհատուցում չի տրվում¹⁹⁷: Նամիբիայում ցեղասպանության զոհերի ժառանգները կոչ են արել Գերմանիային

193 Stéu Joseph Cotterill, “Battle for Namibia reparations: German deal ‘was never about us’,” *Financial Times*, April 29, 2022, <https://www.ft.com/content/ab289014-0414-4514-a77e-a3f030505e0f>:

194 Stéu Nyasha Nyaungwa, “Namibian communities demand return of land in dispute over German genocide legacy,” *Reuters*, March 7, 2024, <https://www.reuters.com/world/africa/namibian-communities-demand-return-land-dispute-over-german-genocide-legacy-2024-03-07/>:

195 Stéu Peter Shadbolt, “Namibia country profile: moving on from a difficult past,” *CNN*, October 23, 2012, <https://edition.cnn.com/2012/10/23/world/africa/namibia-eye-on-country-profile/index.html>:

196 Stéu Hamilton Wende, “‘Our Auschwitz, our Dachau’ Reckoning with Germany’s genocide in Namibia,” *Al Jazeera*, November 6, 2022, <https://www.aljazeera.com/features/longform/2022/11/6/reckoning-with-genocide-in-namibia>:

197 Stéu Daniel Pelz, “Herero and Nama file suit against genocide agreement,” *Deutsche Welle*, January 22, 2023, <https://www.dw.com/en/herero-and-nama-dispute-genocide-agreement-with-germany/a-64476907>:

«այլևս չթաքնվելու» և ուղղակիորեն քննարկելու փոխհատուցումներն իրենց հետ, քանի որ իրենք Նամիբիայի կառավարությանը դատի են տվել՝ դիմելով Նամիբիայի գերագույն դատարան առանց իրենց հավանության գործարք կնքելու համար¹⁹⁸: Նրանք իրենց հայցում պահանջում էին չեղարկել Գերմանիայի հետ ծրագրված «հաշտության համաձայնագիրը»: Այդպիսով նրանք հույս ունեին ճնշում գործադրելու Գերմանիայի կառավարության վրա, բայց դա կարող է ապարդյուն լինել, քանի որ բանակցությունները շարունակվում են:

«Դաշնային կառավարությունը և Նամիբիայի կառավարությունը հանդես են գալիս համատեղ հայտարարությամբ և այն կարծիքին են, որ չլուծված հարցերը պետք է պարզաբանվեն կրկին բանակցությունների միջոցով»¹⁹⁹, - նշում էր Գերմանիայի արտգործնախարարությունը՝ ի պատասխան գերմանացի պատգամավոր Սևիմ Դագդելենի հարցմանը: Նամակում նաև նշվում էր, որ երկու կառավարությունների ներկայացուցիչները չորս անգամ հանդիպել են 2022 թ. սոյեմբերին և դեկտեմբերին՝ քննարկելու բաց մնացած հարցերը²⁰⁰: Փաստացի Գերմանիայի կառավարությունը ցանկանում է, որ բանակցությունները շարունակվեն միայն կառավարությունների մակարդակով: Իսկ հերերո և նամա ժողովուրդների ներկայացուցիչների առաջադրած ուղղակի բանակցությունների պահանջը մերժվում է:

Գերմանիան իր հերթին խուսափում է այս գործընթացը փոխհատուցում անվանելուց՝ այն ձևակերպելով որպես անհատույց օգնություն: Եվ սա ոչ միայն Բեռլինի ցանկությունն է, այլև Եվրամիության միացյալ պահանջը, քանի որ մտավախություն կա, որ մեկ փոխհատուցման համաձայնագիրը կարող է նախադեպային իրավունքի տրամաբանությունը գործարկել և առիթ դառնալ նոր հայցերի: Օրինակ՝ Կոնգոն կարող է բարձրացնել Բելգիայի գաղութային քաղաքականության հետևանքների հարցը, իսկ Ալժիրը՝ Ֆրանսիայի տիրապետության շրջանի չարաշահումների: Տանզանիան և Բուրունդին արդեն իսկ փոխհատուցում են պահանջում Գերմանիայից գաղութային շրջանում իրենց կրած զրկանքների համար: Տանզանիան մեղադրել է գերմանական զորքերին 1905-1907 թթ. Մաջի-Մաջիի ապստամբությունը ճնշելու ժամանակ ռազմական հանցագործություններ կատարելու մեջ ու նաև փոխհատուցում պահանջել Գերմանիայից²⁰¹: Հետևելով Նամիբիայի օրինակին՝ Բուրունդին Գերմանիայից և Բելգիայից 36 միլիարդ եվրո (42.86 միլիարդ դոլար) փոխհատուցում պահանջեց գաղութատիրության շրջանում կատարված հանցագործությունների համար²⁰²: Ուշագրավ է նաև, որ Բրիտանական համագործակցության առաջնորդները 2024 թ., ավարտելով

198 St' u Kaamil Ahmed, "Descendants of Namibia's genocide victims call on Germany to 'stop hiding'," *The Guardian*, February 3, 2023, <https://www.theguardian.com/global-development/2023/feb/03/namibia-genocide-victims-herero-nama-germany-reparations>:

199 Daniel Pelz, "Germany adheres to contested Namibia genocide deal," *Deutsche Welle*, March 23, 2023, <https://www.dw.com/en/germany-adheres-to-contested-namibia-genocide-deal/a-65081066>:

200 St' u նույն տեղում:

201 St' u Jane Ayeko-Kümmeth, "Tanzania seeks compensation from Germany," *Deutsche Welle*, February 9, 2017, <https://www.dw.com/en/tanzania-to-press-germany-for-damages-for-colonial-era-atrocities/a-37479775>:

202 St' u "Burundi 'to demand billions' from Germany for colonial rule," *Deutsche Welle*, August 16, 2020, <https://www.dw.com/en/burundi-to-demand-36-billion-from-germany-belgium-for-colonial-rule-report/a-54589695>:

Մամուլայում ընթացող երկշաբաթյա գազաթնաժողովը, հայտարարեցին, որ ժամանակն է քննարկելու, թե արդյոք Մեծ Բրիտանիան պե՛տք է փոխհատուցում տրամադրի անդրատլանտյան ստրկավաճառության մեջ իր դերի համար²⁰³:

Գերմանացի պատմաբան Յուրգեն Յիմմերերը նշում է. «Նամիբիային հատուցման վճարումները կարող են նախադեպ դառնալ Բելգիայի և Կոնգոյի, Ֆրանսիայի և Ալժիրի կամ Մեծ Բրիտանիայի և ստրկավաճառության պատմության համար: Հերերոների հետնորդները նույնպես գիտեն դա»²⁰⁴: Թեև որոշ փորձագետներ պնդում են, որ փոխհատուցումն անիրագործելի է²⁰⁵, այնուամենայնիվ, այս հարցի քննարկումն արդեն իսկ կարևոր զարգացումներ է ներառում միջազգային քաղաքական օրակարգ:

Եզրակացություն

Հերերոների ցեղասպանությունը մեկն էր բազմաթիվ գաղութային հանցագործություններից: Գերմանական Հարավարևմտյան Աֆրիկայի գաղութային բռնությունը եզակի երևույթ չէր: Գրեթե բոլոր եվրոպական տերությունները նման դաժանություններ էին գործադրում իրենց գաղութներում: Ավելին, ամենայն հավանականությամբ, գերմանական քաղաքականությունը գաղափարապես մեծապես ազդվել էր Հարավային Աֆրիկայում, Հյուսիսային Ամերիկայում և Կանադայում իրականացված գործողություններից: Սակայն նույնիսկ նման պարագայում այն, ինչ տեղի ունեցավ հերերոների հետ, երբ գերմանական գեներալ Ֆոն Տրոտան տոտալ պատերազմ հայտարարեց և ցեղասպանություն իրականացրեց այսօրվա Նամիբիայի տարածքում ապրող հերերո և նամա ժողովուրդների հանդեպ, բացառիկ էր:

Չդիմանալով գերմանական գաղութային ծանր պայմաններին՝ հողազրկմանը, ունեզրկմանը, մշտական ոտնձգություններին և հարձակումներին՝ 1904 թ. հունվարին Աֆրիկայի հարավարևմտյան այս հատվածում բնակվող հերերո ցեղի ներկայացուցիչներն ապստամբեցին գերմանական գաղութային իշխանությունների դեմ: Երկու տարի տևած պատերազմում հերերո բնակչության մեծ մասը սպանվեց, մի մասը քշվեց Կալահարի անապատ, որը նույնպես մահվան դատավճիռ էր: Սակավաթիվ վերապրածները հետագայում տեղափոխվեցին աշխատանքային ճամբարներ, որտեղ կյանքի չափազանց ծանր պայմանները, տաժանակիր աշխատանքը վերապրելու աննշան հնարավորություն էին տալիս: Հետագայում այս ճակատագրին արժանացավ նաև նամա ժողովուրդը:

1904 թ. սկզբին Լոյթվեյսը հակադարձեց հերերոներին բնաջնջելու կոչերին՝ նշե-

203 Տե՛ս «Commonwealth leaders say ‘time has come’ for discussion on UK slavery reparations,” *CNN World*, October 26, 2024, <https://edition.cnn.com/2024/10/26/world/commonwealth-leaders-slavery-reparations-intl/index.html>:

204 Տե՛ս Jason Burke, Philip Oltermann, “Germany moves to atone for ‘forgotten genocide’ in Namibia,” *The Guardian*, December 25, 2016, <https://www.theguardian.com/world/2016/dec/25/germany-moves-to-atone-for-forgotten-genocide-in-namibia>:

205 Տե՛ս Jason Burke, Philip Oltermann, “Viewpoint: Why Britain does not owe reparations to India,” *BBC*, July 28, 2015, <https://www.bbc.com/news/world-asia-india-33647422>:

լով, որ «60.000-70.000 հոգի չի կարող այդքան հեշտությամբ ոչնչացվել»²⁰⁶: Այսինքն՝ գերմանացիների համար բարդ որոշում էր միանգամից մեծ թվով մարդկանց ոչնչացնելը: Հերերոների դեպքը բացառիկ էր մի քանի պատճառով:

Նախ՝ ցեղասպանության իրականացման մտադրության մասին բացահայտ հայտարարվեց գաղութում գերմանական զինված ուժերի հրամանատարի կողմից: Իսկ մտադրության հարցը ցեղասպանության մասին կոնվենցիայի թիրախային կետերից է: Ցանկացած հանցագործ փորձում է թաքցնել իր մեղավորությունը, և ցեղասպանությունները ծրագրողները բացառություն չեն: Հերերոների ցեղասպանության դեպքը երևի միակն է, երբ մի ամբողջ խմբի ոչնչացման միտումի մասին ուղղակիորեն հայտարարվել է, և նույնիսկ այդ հայտարարությունները տարածվել են զոհ խմբին տեղեկացնելու համար: Հերերոների դեմ արշավը հաճախ ներկայացվում է որպես «Vernichtungskrieg», որը նշանակում է «բնաջնջման ցեղասպանական պատերազմ», որը սերտորեն կապված է Լոթար ֆոն Տրոտայի հրամանի հետ: Ռազմական պատմաբան Կարլ Լիններթալը նկարագրել է նման պատերազմը որպես «ամենաձայրահեղ դեպք», որը պահանջում է «երևակայելի ամենամեծ զոհաբերությունը», քանի որ այն ներառում է առնվազն մեկ պատերազմող կողմ, որը փորձում է ջնջել կոնկրետ խմբի իր ձևով²⁰⁷:

Մյուս կարևոր հանգամանքը ցեղասպանության գաղափարական հիմնավորումն էր: Հերերոների նկատմամբ վերաբերմունքը բացահայտ ռասիստական էր. նրանք ընկալվում էին իբրև երկրորդ կարգի մարդիկ և մի խումբ, որի գոյությունն առանձնապես մեծ արժեք չունեի մարդկության համար: Ընդ որում, այդ պատկերացումները համատարած էին և բնականորեն էին ընկալվում նաև գերմանական մտավորականության շրջանում:

Շատ գիտնականներ հերերոների ցեղասպանության դեպքը համարում են Հոլոքոստի նախօրինակ, նույնիսկ փորձարկում, քանի որ տվյալ դեպքում նույնպես կային համակենտրոնացման ճամբարներ, բանտարկյալների նկատմամբ իրականացվում էին բժշկական փորձարկումներ: Այդ գիտնականները նաև այս «գաղութատիրական հատուկ ճանապարհին» ենթադրաբար նացիզմի արմատներ են տեսնում Նամիբիայում²⁰⁸: Միաժամանակ կարելի է ասել, որ սա հետահայաց որոշակի դիտարկում է հերերոների ցեղասպանության պատմագրության համատեքստում, որով այս հանցագործությունն ընկալվում է Հոլոքոստի ստվերի տակ: Վերջինս ընկալվում է որպես վերջնակետ, իսկ գերմանական գաղութային բռնությունը՝ դրան տանող մի ընթացք²⁰⁹:

206 Häussler, *The Herero Genocide. War, Emotion, and Extreme Violence in Colonial Namibia*, 90.

207 Տի՛ս նույն տեղում, 90-91:

208 Տի՛ս Madley, “From Africa to Auschwitz,” 429-464, Jürgen Zimmerer, *Von Windhuk nach Auschwitz? Beiträge zum Verhältnis von Kolonialismus und Holocaust* (Münster: Lit Verlag, 2011), 352 էջ, և Sarkin, *Germany's Genocide of the Herero*, ըստ Nielsen, *Britain, Germany and Colonial Violence in South-West Africa, 1884-1919*, 5:

209 Տի՛ս Mads Bomholt Nielsen, Selective Memory: British Perceptions of the Herero-Nama Genocide, 1904-1908 and 1918, *Journal of Southern African Studies*, vol. 43, no. 2 (2017): 315-330, ըստ Nielsen, *Britain, Germany and Colonial Violence in South-West Africa, 1884-1919*, 5:

Բացի այդ՝ կան որոշակի զուգահեռներ նաև Հայոց ցեղասպանության հետ: Անապատ քշելու մարտավարությունը, որի հետևանքով հերերոները զանգվածաբար մահանում էին սովից և ջրի պակասից, գործադրվեց նաև Մեծ եղեռնի ժամանակ: Կային նաև որոշ գործիչներ, որոնց հանդիպում ենք երկու դեպքում էլ, օրինակ՝ Պ. Ռորբախը:

Այս թեման հետաքրքիր է նաև հետցեղասպանական զարգացումների տեսանկյունից, քանզի Գերմանիայի իշխանությունները ոչ միայն ընդունել են իրենց գործած ոճիրը, այլև պատրաստ են քայլեր ձեռնարկելու դրա հետևանքները վերացնելու ուղղությամբ: Սակայն այս պարագայում նույնպես հեշտ չէ հարցին լուծում գտնել, քանի որ կողմերը չեն կարողանում համաձայնության հասնել ոչ միայն փոխհատուցման չափի, ձևի, այլև անվանման շուրջ: Իսկ վերջին շրջանում հակասությունները նույնիսկ սրվել են, քանի որ Նամիբիան քննադատել է Գերմանիայի որոշումը՝ աջակցելու Իսրայելին, այն դեպքում, երբ Հարավաֆրիկյան Հանրապետության՝ Իսրայելի դեմ միջազգային դատարան ներկայացրած 84-էջանոց հայցում ասվում է, որ Գազայի հատվածում պաղեստինցիների դեմ Իսրայելի գործողությունները «հաշվարկված են նրանց ֆիզիկական ոչնչացման համար», և արտահայտվում է պնդում, որ Իսրայելը ցեղասպանություն է իրականացնում նրանց նկատմամբ: «Գերմանիան չի կարող բարոյապես հավատարիմ լինել «Ցեղասպանություն հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիային, քավել Նամիբիայում իրականացված ցեղասպանության մեղքը՝ միաժամանակ աջակցելով Գազայի հատվածում Հոլոքոստին և ցեղասպանությանը», - նշել է Նամիբիայի նախագահն իր հայտարարության մեջ՝ կոչ անելով Գերմանիայի կառավարությանը վերանայելու իր վաղաժամ կայացրած որոշումը²¹⁰:

Հավելենք, որ նույնիսկ Նամիբիայի ներսում հերերոների ցեղասպանության նկատմամբ վերաբերմունքը խիստ տարբեր է: Այն, փաստորեն, միայն տվյալ խմբի, որը կազմում է երկրի բնակչության ընդամենը տասը տոկոսը, հիշողության մաս է: Նամիբիայում իշխանության եկած այլ ցեղեր, թեև օգտագործել են այս թեման անկախության համար մղվող պայքարում, սակայն անկախության շրջանում այն երբեք էլ չեն համարել առաջնահերթություն:

210 “Namibia condemns Germany for defending Israel in ICJ genocide case,” *Al Jazeera*, January 14, 2024, <https://www.aljazeera.com/news/2024/1/14/namibia-condemns-germany-for-defending-israel-in-icj-genocide-case>.

HERERO GENOCIDE: HISTORY AND MODERNITY

*Suren A. Manukyan,
Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia*

*Narek M. Poghosyan,
Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia*

SUMMARY

Colonial rule frequently involved routine, disproportionate violence that empowered European colonizers to act with unchecked brutality. A key example is the German colonial policy toward the Herero and Nama people in German South-West Africa (now Namibia), widely recognized as genocidal.

In 1904-1908, the Herero faced an intentional extermination campaign by German forces through forced expulsions, mass killings, and labor camps, resulting in severe population decimation. Although Germany initially denied responsibility, negotiations for reparations began in 2015, with Germany eventually acknowledging its crimes and offering some form of compensation.

The Herero genocide reflects broader patterns of colonial violence by European powers, influenced by policies observed in regions like South Africa and North America. However, the Herero case is unique due to General von Trotha's open declaration of a "war of extermination" (Vernichtungskrieg), an unusual instance in which genocidal intent was explicitly stated. This genocide is also viewed by some scholars as a precursor to the Holocaust, drawing parallels in the use of concentration camps and medical experiments on captives. Additionally, connections with the Armenian Genocide are observed in tactics such as forced marches into the desert, where deprivation led to mass death.

Contemporary discussions around the Herero genocide also highlight post-genocide developments, including Germany's willingness to admit wrongdoing, though reparation terms remain contested. Within Namibia, the genocide resonates particularly with the Herero community, which represents about 10% of the population. At the same time, other ethnic groups, although supportive during anti-colonial struggles, have not prioritized this issue in the post-independence era.

Key words: Hereros, colonialism, German politics, memory, reparations for genocide, genocidal intent, Lothar von Trotha.

ГЕНОЦИД ПЛЕМЕНИ ГЕРЕРО: ИСТОРИЯ И СОВРЕМЕННОСТЬ

Сурен А. Манукян,

Фонд “Музей-институт Геноцида армян,” Армения

Нарек М. Погосян,

Фонд “Музей-институт Геноцида армян,” Армения

РЕЗЮМЕ

Колониальное правление часто сопровождалось повседневным, непропорциональным насилием, что позволяло европейским колонизаторам действовать с неограниченной жестокостью. Ключевым примером является политика Германии в отношении народов гереро и нама в Германской Юго-Западной Африке (ныне Намибия), широко признанная геноцидом.

В 1904-1908 годах народ гереро столкнулся со спланированной кампанией уничтожения со стороны немецких властей, которая включала массовые выселения, убийства и трудовые лагеря, что привело к значительному сокращению их численности. Хотя Германия изначально отрицала свою ответственность, переговоры о репарациях начались в 2015 году, и в итоге Германия признала свои преступления и предложила определенную форму компенсации.

Геноцид гереро отражает более широкие модели колониального насилия европейских держав, во многом вдохновленные политикой, проводившейся в Южной Африке и Северной Америке. Однако случай с гереро уникален тем, что генерал фон Трота открыто объявил «войну на истребление» (Vernichtungskrieg) – редкий случай, когда геноцидальный умысел был озвучен прямо. Некоторые ученые также рассматривают этот геноцид как предвестник Холокоста, отмечая параллели в использовании концентрационных лагерей и медицинских экспериментов над заключенными. Кроме того, прослеживаются связи с Геноцидом армян, например, в тактике принудительных маршей в пустыню, где массовая гибель была вызвана природными условиями и истощением.

Современные дискуссии вокруг Геноцида гереро также акцентируют внимание на постгеноцидных событиях, включая готовность Германии признать свою вину, хотя условия репараций остаются спорными. В Намибии тема геноцида особенно близка народу гереро, составляющему около 10% населения страны, тогда как другие этнические группы, хотя и поддерживали антиколониальные движения, не уделяли этой теме приоритетного внимания в постколониальный период.

Ключевые слова: Гереро, колониализм, немецкая политика, память, репарации за геноцид, намерение геноцида, Лотар фон Тротта

REFERENCES

Manukyan, Suren. «Ցեղասպանագիտական ուսումնասիրությունների ժամանակակից միտումները» [Current Trends in Genocide Research]. *VEM*, Year 16 (22), no. 1(85), (2024), 8-65.

Հեղինակների մասին

About the Authors

Об авторах

Սուրեն Ա. Մանուկյան, պատմական գիտությունների թեկնածու, արևելագետ, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Վահագն Դադրյանի անվան համեմատական ցեղասպանագիտության բաժնի վարիչ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի Ցեղասպանագիտության բաժնի վարիչ:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ ցեղասպանության ոճրագործներ, համեմատական ցեղասպանագիտություն:

Էլ. փոստի հասցե՝ manukyan.suren@genocide-museum.am

Suren A. Manukyan, PhD in History, orientalist, Head of the Comparative Genocide Studies Department named after Vahagn Dadrian, Armenian Genocide Museum-Institute Foundation; Head of the Department of Genocide Studies at Institute of Armenian Studies, Yerevan State University.

Research fields – genocide perpetrator studies, comparative genocide studies.

E-mail: manukyan.suren@genocide-museum.am

Сурен А. Манукян, кандидат исторических наук, востоковед, заведующий Отделом сравнительного геноцидоведения им. Ваагна Дадряна Фонда “Музей-институт Геноцида армян,” заведующий Отдела геноцидоведения Института арменоведения Ереванского государственного университета.

Область исследований – изучение преступников, виновных в осуществлении геноцида, сравнительное изучение геноцидов.

Эл. почта: manukyan.suren@genocide-museum.am

Նարեկ Մ. Պողոսյան, պատմական գիտությունների թեկնածու, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Համեմատական ցեղասպանագիտության բաժնի գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը Ռ-աֆայել Լեմկինի կողմից, տեխնոլոգիական առաջընթացը և ցեղասպանության իրագործման ռիսկերը, ցեղասպանությունների առանձին օրինակներ (Բանգլադեշ, Կամբոջա, Թիմոր, Անֆալ և այլն), համեմատական ցեղասպանագիտություն, էլիտիցիդ:

Էլ. փոստի հասցե՝ poghosyan.narek@genocide-museum.am

Narek M. Poghosyan, PhD in History, Researcher at the Comparative Genocide Studies Department named after Vahakn Dadrian, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields: a study of the Armenian Genocide by Raphael Lemkin, technological progress and the risks of committing genocide, other genocides (Bangladesh, Cambodia, Timor, Anfal campaign, etc.), comparative genocide studies, eliticide.

E-mail: poghosyan.narek@genocide-museum.am

Нарек М. Погосян, кандидат исторических наук, научный сотрудник Отдела сравнительного геноцидоведения им. Ваагна Дадряна Фонда “Музей-институт Геноцида армян.”

Область исследований – изучение проблемы Геноцида армян Рафаэлем Лемкиным, технологический прогресс и риски совершения геноцида, отдельные примеры геноцидов (Бангладеш, Камбоджа, Тимор, Анфаль и др.), сравнительное изучение геноцидов, элителицид.

Эл. почта: poghosyan.narek@genocide-museum.am

ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Հեղինակների համար

- Հոդվածը պետք է ներկայացնել «Յեղասպանագիտական հանդեսի» խմբագրություն՝ հեղինակի և բոլոր համահեղինակների(երթե գրված է համահեղինակությամբ) մասին տեղեկատվությամբ:
- Հոդվածը պետք է լինի բացառապես հեղինակի/համահեղինակների կողմից կատարված ուսումնասիրություն. խստիվ արգելվում է գրագողությունը:
- Հոդվածը չպետք է նախկինում նույնությամբ տպագրված լինի որևէ լեզվով՝ բացառությամբ առանձին դեպքերի՝ խմբագրի համաձայնությամբ:
- Հոդվածը չպետք է միաժամանակ հանձնված լինի տպագրության կամ դիտարկման մեկ այլ տեղում:
- Հոդվածը պետք է բարեխղճորեն շարադրված լինի՝ պահպանելով «Յեղասպանագիտական հանդեսի» սահմանած կանոնները:
- Հոդվածի շրջանակում կատարված ուսումնասիրությունը պետք է հիմնված լինի ստույգ տվյալների վրա:
- Հոդվածը պետք է ունենա գիտական նորույթ և արդիականություն:
- Հոդվածում (հղման տեսքով) թույլատրելի է երախտագիտություն հայտնել ուսումնասիրությանը որևէ կերպ աջակցած անձանց:
- Հեղինակը պարտավոր է համագործակցել խմբագրակազմի հետ, կատարել անհրաժեշտ փոփոխությունները, հավելումները կամ կրճատումները, ինչպես նաև շտկել սխալները:
- Հեղինակն իրավունք չունի վիճարկելու խմբագրության՝ հոդվածը չտպագրելու որոշումը կամ գրախոսության բացասական կարծիքը՝ առանց հիմնարար փաստարկների:

Գրախոսների համար

«Յեղասպանագիտական հանդեսին» ներկայացված հոդվածները գրախոսվում են առվագն մեկ գրախոսի կողմից: Գրախոսությունը կազմակերպվում է երկկողմանի գաղտնիության սկզբունքով: Գրախոսությունների արդյունքի հիման վրա խմբագրությունը որոշում է կայացնում նյութը հրատարակելու կամ մերժելու վերաբերյալ:

Գրախոսը պետք է՝

- նյութը գրախոսի՝ անկախ անձնական հետաքրքրություններից ու շահերից՝ դրսևորելով բացառապես գիտական անաչառ մոտեցում,
- լրացնի գրախոսման համար նրան ուղարկված ձևաթուղթը հնարավորինս սեղմ ժամկետներում,
- շահերի բախման առկայության դեպքում այդ մասին տեղեկացնել խմբագրությանը:

Գրախոսված ձևաթուղթը պահվում է «Յեղասպանագիտական հանդեսի» արխիվում, չի տրամադրվում որևէ մեկին՝ այդ թվում՝ հեղինակին, և այն հրապարակման ենթակա չէ: Գրախոսման արդյունքների, առաջարկների ու դիտարկումների մասին հեղինակին տեղեկացվում է տրամադրված էլ. փոստի միջոցով:

Խմբագրակազմի համար

Խմբագրակազմը պարտավորվում է՝

- կազմակերպել «Յեղասպանագիտական հանդեսին» ներկայացված հոդվածների պատշաճ գրախոսությունը,
- հոդվածը «Յեղասպանագիտական հանդեսի» խմբագրություն հանձնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում, հեղինակին տեղեկացնել խմբագրական խորհրդի որոշման վերաբերյալ,
- հետևել պարբերականի հրատարակչական էթիկետին և երաշխավորել հրատարակվող աշխատանքների գիտական բարձր մակարդակը,
- չհրապարակել հեղինակի և գրախոսի անձնական տվյալները և չտրամադրել դրանք երկու կողմերին:

Խմբագրությունն իրավունք ունի մերժելու հոդվածի տպագրությունը, եթե այն չի համապատասխանում խմբագրության կողմից սահմանված պահանջներին:

Խմբագրությունը նյութերի տպագրության կամ մերժման որոշումը կայացնում է՝ հիմնվելով գրախոսների կատարած առաջարկների ու դիտարկումների վրա՝ հանդեսի տեխնիկական պահանջներին բավարարելու դեպքում:

Գրախոսման փուլի ավարտից և հեղինակի կողմից կատարված շտկումներից հետո հոդվածները խմբագրվում են «Յեղասպանագիտական հանդեսի» խմբագրական մոտեցումներին համաձայն:

Հեղինակային իրավունք

Հրատարակված նյութերի հեղինակային իրավունքը (©) պատկանում է «Յեղասպանագիտական հանդեսին»: Տպագրելու վերաբերյալ դրական որոշում ստանալուց հետո հեղինակը պարտավորվում է լրացնել և ստորագրել հեղինակային իրավունքի փոխանցման վերաբերյալ ձևաթուղթը:

Հեղինակային իրավունքով պաշտպանված նյութեր

Հեղինակի պատասխանատվությունն է հեղինակային իրավունքով պաշտպանված ցանկացած նյութի (լուսանկար, տեքստ, պատկեր, աղյուսակ, դիագրամ և այլն) տպագրության կամ վերատպության համար գրավոր թույլտվություն ստանալը (ու՜մ պատկանում է հեղինակային իրավունքը): Դրանք պետք է տրամադրվեն «Յեղասպանագիտական հանդեսի» խմբագրությանը (տպագրելու վերաբերյալ դրական որոշում ստանալուց հետո): Հեղինակային իրավունքով պաշտպանված նյութերի համար ձևաթուղթը կտրամադրվի խմբագրության կողմից:

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ

Յեղասպանագիտական հանդեսում հրատարակման համար կարող են ներկայացվել գիտական հոդվածներ, գրախոսություններ, ինչպես նաև, առանձին դեպքերում խմբագրության որոշմամբ, մշակված անտիպ հուշագրություններ:

Յեղասպանագիտական հանդեսում հրատարակման ներկայացվող հոդվածները լինելու են հիմնականում հայերենով (արևելահայերեն, արևմտահայերեն), իսկ առանձին դեպքերում՝ խմբագրության համաձայնությամբ՝ նաև օտար լեզուներով:

Ներկայացվող հոդվածները նախ դիտարկվում և հավանության են արժանանում խմբագրակազմի կողմից, ապա՝ թեմատիկ, որակական և տեխնիկական պահանջների բավարարման դեպքում միայն՝ ուղարկվում գրախոսության:

Յեղասպանագիտական հանդեսին ներկայացված հոդվածները գրախոսվում են առնվազն մեկ գրախոսի կողմից, գործընթացը կազմակերպվում է երկկողմանի գաղտնիության սկզբունքով: Գրախոսությունների արդյունքների հիման վրա խմբագրությունը որոշում է կայացնում նյութը հրատարակելու կամ մերժելու վերաբերյալ: Խմբագրությունն իրավունք ունի անմիջապես մերժել ներկայացված նյութը՝ Յեղասպանագիտական հանդեսի տեխնիկական և գիտական պահանջներին չբավարարելու դեպքում:

Յեղասպանագիտական հանդեսում հոդվածների տպագրությունը կատարվում է անվճար հիմունքով:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1. Ծավալը՝ մինչև 30 էջ (ավելի մեծ ծավալի դեպքում՝ խմբագրության որոշմամբ):
2. Հայերեն տեքստը կազմել «Sylfaen» տառատեսակով, լատինատառ և սլավոնատառ տեքստերը՝ «Times New Roman» տառատեսակով, 12 տառաչափով, իսկ հղումները՝ 10 տառաչափով:
3. Առաջին էջում գրել հոդվածի հեղինակ(ներ)ի անունը, հայրանվան սկզբնատառը, ազգանունը, գիտական աստիճանը:
4. Հոդվածի վերնագիրը գրել ՄԵԾԱՏԱՌ-ԵՐՈՎ, թավատառ, հավասարեցնել կենտրոնում:
5. Հաջորդ տողում գրել «Բանալի բառեր – » արտահայտությունը և կցել նվազագույնը 5 հանգուցային բառ կամ արտահայտություն՝ 10 տառաչափով:
6. Հոդվածի բնագրի լեզվով գրել կարճ ներածական հատված (Abstract)՝ 150-200 բառ:
7. Անհրաժեշտության պարագայում բուն տեքստից անմիջապես հետո հասցեագրել երախտագիտություն անհատներին և/կամ կազմակերպություններին (acknowledgment):
8. Հոդվածի բուն տեքստից հետո (եթե կա երախտագիտության խոսք, ապա դրանից հետո) գրել նախ անգլերեն, ապա՝ ռուսերեն ամփոփումը: Անգլերեն հոդվածի դեպքում գրել նախ հայերեն, ապա՝ ռուսերեն ամփոփում, իսկ ռուսերեն հոդվածի դեպքում՝ նախ հայերեն, ապա՝ անգլերեն ամփոփում:
Յուրաքանչյուր լեզվով ամփոփման վերնագրից հետո կցել համապատասխան լեզվով բանալի բառեր (բանալի բառերը բոլոր լեզուներով տրվող ամփոփումներում պետք է լինեն նույնը):
9. Ամփոփումներից հետո ներկայացնել ոչ լատինատառ գրականության ցանկն այբբենական կարգով՝ նշելով նյութի վերնագիրը բնագրով, իսկ [] փակագծերում տալ համարժեք անգլերեն թարգմանությունը: Հղման այլ մանրամասները (հեղինակի անուն, ազգանուն, հրատարակչության անունը, վայրը, ամսագրի վերնագիրը և այլն) տալ լատինատառ՝ ներկայացված տառադարձմամբ, օրինակ՝

Marutyan, Harutyun. *Հայ ինքնության պարկերագրությունը: Հարյոր 1. Յեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը* [Iconography of Armenian Identity. Vol. 1: The Memory of Genocide and the Karabagh Movement]. Yerevan: Gitut'yun, 2009;

Սուրիական փարեցոյց [Syrian Almanach]. Cairo: Zareh Pe'rape'rean, 1924;

Ցավի, հիշողության և պայքարի կոթողներ. Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված կոթողներ [Memorials of Sorrow, Remembrance and Struggle]. Yerevan: Ministry of Diaspora, 2010;

Sahakyan, Vera. «Հատուկ կազմակերպության (Թեշքիլաթը Մախսուսե) ձևավորման նախադրյալները», *Հայոց ցեղասպանություն – 100. Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու* [“Prerequisites of the Formation of Special Organization (Teşkilât-i Mahsusa)”

in Armenian Genocide -100. Collection of Papers of the International Conference]. Yerevan: Gitut'yun, 2016, 198-212.

Marutyan, Harutyun. «Ինքնության «ամրացման» երկու հնարաորություններ Հայաստան-Սփիւրք յարաբերությունների համատեքստում», *Սփիւրք եւ ինքնություն* (խմբ.՝ Շահան Գանտահարեան) [“Two ‘possibilities’ of strengthening Identity in the Context of Armenia-Diaspora Relations,” in *Diaspora and Identity* (ed. Shahan Kandaharian)]. Antelias-Lebanon: Printing House of the Armenian Catholicosate of Cilicia, 2018, 219-233.

Margaryan, Narine. «Հայ երեխաների թրքացման գործընթացն Օսմանյան կայսրության պետական որբանոցներում (1915-1918 թթ.)» [Turkification of Armenian Children in the Ottoman Empire's State Orphanages (1915-1918)]. *T'seghaspanagitakan handes* 4 no. 1 (2016): 25-43;

Antonyan, Aram. «Տօքոս. Ալթունյան» [Dr. Alt'unyan]. *Veratsnund* (Paris), 27 May, 1919, no. 12.

10. Ներկայացնել նաև հեղինակի մասին տվյալներ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով՝ գրել նաև պաշտոնը և աշխատավայրը, ուսումնասիրությունների ոլորտը, էլ. փոստի հասցեն:

ՀՂՈՒՄՆԵՐ

11. Ցեղասպանագիտական հանդեսի հղումները ձևավորել համաձայն *The Chicago Manual of Style Online 17th Edition*-ի:

Հղումները պետք է համարակալվեն սկզբից մինչև վերջ: Անկախ լեզվից յուրաքանչյուր աղբյուր, եթե շարունակաբար հղվում է մեկից ավելի անգամ, ապա սկսած երկրորդ հղումից պետք է օգտագործվի՝

Նույն տեղում: (եթե էջը նույնն է)

Նույն տեղում, ...: (եթե էջը փոխվում է)

Ա. *Գրքեր* (մենագրություններ կամ համահեղինակությամբ աշխատություններ)

1) Հղումները պետք է պարունակեն հրատարակության ամբողջական տվյալները, հեղինակի անունը (ամբողջությամբ), հեղինակի ազգանունը, վերնագիրը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Բոլոր գրքերի վերնագրերը գրել շեղատառ:

Անգլերեն վերնագրերի բոլոր բառերը (բացառությամբ նախդիրների, հոդերի կամ շաղկապների) գրել մեծատառ: Օր.՝

1. Սարգիս Թորոսյան, *Դարդաններից մինչև Պաղեստին* (Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2013), 55:

2. Валерий Тунян, *Россия и Армянский вопрос* (Ереван: Музей-институт Геноцида армян, 1998), 55.

3. Vahagn Dadrian, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus* (Providence - Oxford: Berghahn Books, 1995), 55.

2) Եթե նույն հոդվածում գիրքը հղվում է մեկից ավելի անգամ, ապա սկսած երկրորդ հղումից և անկախ լեզվից պետք է նշվի կրճատ տարբերակը՝ հեղինակի ազգանունը,

գրքի շեղատառ վերնագիրը (կարճ վերնագրերի դեպքում) կամ վերնագրի առաջին մի քանի բառը (երկար վերնագրի դեպքում): Օր.՝

Թորոպյան, *Դարդանելից մինչև Պաղեստին*, 55:

Тунян, *Россия и Армянский вопрос*, 55.

Dadrian, *The History of the Armenian Genocide*, 55.

4) Մեկից ավելի հեղինակների դեպքում, գրել առաջին երկու հեղինակների անունները և ազգանուններն ամբողջությամբ, ապա՝ «և ուրիշներ», “и др.”, “et. al.”, որից հետո շարունակել վերը նշված սկզբունքներով:

Բ. Թարգմանված գրքեր

Հղումները պետք է պարունակեն հրատարակության ամբողջական տվյալները. հեղինակի անունը, ազգանունը, գրքի վերնագիրը, թարգմանողի ամբողջական անունը և ազգանունը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Գրքի վերնագիրը պետք է գրել շեղատառ:

1. Jhumpa Lahiri, *In Other Words*, trans. Ann Goldstein (New York: Alfred A. Knopf, 2016), 146.

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք է գրել հեղինակի ազգանունը և գրքի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում), շեղատառ, էջը: Օր.՝

1. Lahiri, *In Other Words*, 184.

Գ. Թվային գրքերի (ebook)

Թվային գրքերի օգտագործման դեպքում գրել գրքի տվյալները վերոնշյալ սկզբունքներով, ավելացնել գրքի URL կամ շտեմարանի անունը: Եթե գրքի էջերը առկա չեն, ապա պետք է նշել բաժնի կամ գլխի համարը և դիտման ժամանակը: Օր.՝

1. Herman Melville, *Moby-Dick; or, The Whale* (New York: Harper & Brothers, 1851), 627, <http://mel.hofstra.edu/moby-dick-the-whale-proofs.html>, դիտվել է 17.07.2019:

2. Philip B. Kurland and Ralph Lerner, eds., *The Founders' Constitution* (Chicago: University of Chicago Press, 1987), chap. 10, doc. 19, <http://press-pubs.uchicago.edu/founders/>, դիտվել է 17.07.2019:

3. Brooke Borel, *The Chicago Guide to Fact-Checking* (Chicago: University of Chicago Press, 2016), 92, ProQuest Ebrary.

4. Jane Austen, *Pride and Prejudice* (New York: Penguin Classics, 2007), chap. 3, Kindle.

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է գրել հեղինակի ազգանունը և գրքի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում) շեղատառ, էջը կամ բաժնի կամ գլխի համարը: Օր.՝

1. Melville, *Moby-Dick*, 722–723.

2. Kurland and Lerner, *Founders' Constitution*, chap. 4, doc. 29.

3. Borel, *Fact-Checking*, 104–105.

4. Austen, *Pride and Prejudice*, chap. 14.

Դ. Ժողովածուներ

1) Ժողովածուները պետք է հղվեն՝ նշելով հեղինակի անունը, ազգանունը ամբողջական, հոդվածի կամ գլխի վերնագիրը չակերտների մեջ, ամբողջ ժողովածուի վերնագիրը, խմբագիր(ներ)ը կամ կազմող(ներ)ը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Օր.՝

1. Vahakn Dadrian, “Ottoman Archives and Denial of the Armenian Genocide,” in *The Armenian Genocide: History, Politics, Ethics*, ed. Richard G. Hovannisian (New York: St. Martin’s Press, 1992), 280.

2. Վերծինե Սվազյան, «Հայոց ցեղասպանությունը ըստ ականատես վերապրողների վկայությունների», *Հայոց Մեծ եղեռն 90*, հոդվածների ժողովածու (Երևան, ԵՊՀ հրատ., 2005), 471:

3. Сурен Манукян, “Наказание за верность.” От Эрзурумского конгресса до Сарыкамышского сражения,” *Первая мировая война: взгляд спустя столетие: доклады и выступления участников V Международной научно-практической конференции* (М.: Изд-во МНЭПУ, 2016), 648.

2) Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հոդվածի կամ գլխի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում) չակերտների մեջ, էջը: Օր.՝

1. Dadrian, “*Ottoman Archives*,” 471.

2. Սվազյան, «*Հայոց ցեղասպանությունը*», 471:

3. Манукян, “*Наказание за верность*,” 648.

Ե. Հոդվածներ

1) Հոդվածներ հղելիս նշել հեղինակի ամբողջական անունը, ազգանունը, հոդվածի վերնագիրը չակերտների մեջ, իսկ հանդեսի անվանումը շեղատառ: Առկայության դեպքում ավելացնել գրքի URL կամ շտեմարանի անունը, նաև՝ DOI-ն (Digital Object Identifier): Օր.՝

1. Rouben P. Adalian, “Comparative Policy and Differential Practice in the Treatment of Minorities in Wartime: the United States Archival Evidence on the Armenians and Greeks in the Ottoman Empire,” *Journal of Genocide Research* 3, no. 1 (2001): 35.

Shao-Hsun Keng, Chun-Hung Lin, and Peter F. Orazem, “Expanding College Access in Taiwan, 1978–2014: Effects on Graduate Quality and Income Inequality,” *Journal of Human Capital* 11, no. 1 (2017): 9–10, <https://doi.org/10.1086/690235>

3. Peter LaSalle, “Conundrum: A Story about Reading,” *New England Review* 38, no. 1 (2017): 95, Project MUSE.

4. Շուշան Խաչատրյան, «Ջիհադը և Հայոց ցեղասպանությունը. հրովարտակներ, հրահանգներ ու կոչեր», *Ցեղասպանագիտական հանդես* 6, թիվ 2 (2014), 40:

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հոդվածի ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ (երկար վերնագրերի դեպքում) վերնագիրը չակերտների մեջ, էջը: Օր.՝

1. Adalian, “Comparative Policy and Differential Practice,” 35.

2. Keng, Lin, and Orazem, “Expanding College Access,” 23.

6. Խաչատրյան, «Ջիհադը և Հայոց ցեղասպանությունը», 40:

Զ. Համահեղինակությամբ հոդվածներ

Երեքից ավել համահեղինակ ունեցող հոդվածներում նշել առաջին հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ, ապա՝ «և ուրիշներ», “и др.,” “et. al.,” որից հետո շարունակել վերը նշված սկզբունքներով:

է. Մամուլ

Մամուլի հոդվածներ հղելիս պետք է նշել հեղինակի ամբողջական անունը, ազգանունը, հոդվածի վերնագիրը չակերտների մեջ, իսկ հանդեսի անվանումը շեղատառ: Նշել նաև հանդեսի տպագրության վայրը: Օր.՝

1. Գալստյան Սուսանա, «Երվանդ Օտյանը և ազգային տոնը», *Ազգ* օրաթերթ (Երևան), 24 ապրիլի 2010, 13:
2. Rebecca Mead, “The Prophet of Dystopia,” *New Yorker*, April 17, 2017, 43.
3. Farhad Manjoo, “Snap Makes a Bet on the Cultural Supremacy of the Camera,” *New York Times*, March 8, 2017, <https://www.nytimes.com/2017/03/08/technology/snap-makes-a-bet-on-the-cultural-supremacy-of-the-camera.html>.
4. Խմբագրական, *Ազարանարար* օրաթերթ (Կ.Պոլիս), 31 հոկտեմբեր/13 նոյեմբեր 1914, 1:

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հոդվածի ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ (երկար վերնագրերի դեպքում) վերնագիրը չակերտների մեջ, էջը: Օր.՝

1. Գալստյան, «Երվանդ Օտյանը», 13:
2. Mead, “The Prophet of Dystopia,” 43.
3. Manjoo, “Snap.”
4. Խմբագրական, 1:

Ը. Թեզեր և ատենախոսություններ

Թեզերը և ատենախոսությունները հղելիս պետք է նշել հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ, թեզի կամ ատենախոսության վերնագիրը չակերտների մեջ, պաշտպանության վայրը, տարեթիվը, էջը: Օր.՝

1. Cynthia Lillian Rutz, “King Lear and Its Folktale Analogues” (PhD diss., University of Chicago, 2013), 99–100.
2. Նարեկ Պողոսյան, «Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը Ռ-աֆայել Լեմկինի կողմից» (ատեն., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2017), 77:

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, թեզի կամ ատենախոսության վերնագիրը՝ ամբողջությամբ կամ կրճատ, շեղատառ, չակերտների մեջ, պաշտպանության վայրը և տարեթիվը, էջը:

1. Rutz, “King Lear,” 158.
2. Պողոսյան, «Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը», 77:

Թ. Համացանց

Համացանցային նյութերը հղելիս՝ գրել հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ (եթե նշված է), նյութի վերնագիրը (եթե նշված է), ապա՝ համացանցային հասցեն և նյութից օգտվելու ամսաթիվը: Օր.՝

1. “The Ten Stages of Genocide by Dr. Gregory Stanton,” <http://www.genocidewatch.org/genocide/tenstagesofgenocide.html>, դիտվել է 17.07.2019:
2. Նարինե Մարգարյան, «Օսմանյան Կայսրության Պետական Որբանոցներում Կիրառվող Թրքացման Մեթոդները», <http://www.genocide-museum.am/arm/05.02.2019-MargaryanNarine.php>, դիտվել է 17.07.2019:
3. Katie Bouman, “How to Take a Picture of a Black Hole,” filmed November 2016 at TEDxBeaconStreet, Brookline, MA, video, 12:51, https://www.ted.com/talks/katie_bouman_what_does_a_black_hole_look_like, դիտվել է 17.07.2019:

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք նշել հեղինակի ազգանունը և/կամ նյութի վերնագիրը(երկար վերնագրերի դեպքում՝ կրճատ): Օր.՝

1. “The Ten Stages of Genocide by Dr. Gregory Stanton.”
2. Մարգարյան, «Օսմանյան Կայսրության»:
3. Bouman, “Black Hole.”

12. Անձնական հաղորդակցություններ

Անձնական հաղորդակցությունները, ներառյալ էլեկտրոնային և տեքստային նամակները (messages), ինչպես նաև սոցիալական ցանցերի միջոցով ուղարկվող հաղորդագրությունները հղելիս, պետք է նշել հետևյալ կերպ.

1. Պետրոս Տեր-Մաթոսյան, Ֆեյսբուքյան նամակ հեղինակին, 1 օգոստոսի 2017 թ.:
2. Պետրոս Տեր-Մաթոսյան, Էլեկտրոնային նամակ հեղինակին, 15 մարտի 2017 թ.:

13. Ամսաթվերի գրելաձև

1. Խոսքին քերականորեն չկապվող ամսաթվերում նախադաս թվանշանը գրել առանց չակերտի և առանց հոդի, իսկ ամսանունը՝ սեռական հոլովաձևով: Պահպանել ամսաթիվ-ամսանուն-տարեթիվ հերթականությունը: Ամսանունը գրել փոքրատառ: Այսպես՝ 15 մայիսի 2018 թ. կամ 15.05.2019:

Թույլատրելի է նաև ամսանվան ուղիղ ձևով գրությունը: Օրինակ՝ 15 մայիս 2018 թ.: Շարադասության փոփոխության դեպքում ամսանունը կարող է գրվել նաև սկզբում: Օրինակ՝ մայիսի 15 2018 թ.:

1. Ամիս-ամսաթիվը և տարեթիվն իրարից ստորակետով չանջատել: Օրինակ՝ 3 հունվարի 2019 թ.կամ 2019 թ. փետրվարի 1:
2. Միայն թվերով գրվող ամիս-ամսաթվերում գործածել միջակետ: Օրինակ՝ 25.01.2019:
3. «Թվական» բառի համառոտագրությունը՝ «թ.»-ն, գրել թվանշանից առանձին՝ թողնելով բացատ: Օրինակ՝ 31 հունվարի 2019 թ.: Միայն թվերով գրվող ամիս-ամսաթվերից հետո «թ.»-ն չգրել՝ համարելով ավելորդ:

14. Տառադարձություն

Հայերեն

Ա ա - A a
Բ բ - B b
Գ գ - G g
Դ դ - D d
Ե ե - E e
Զ զ - Z z
Է է - E' e'
Ը ը - Ę ę
Թ թ - T' t'
Ժ ժ - Zh zh
Ի ի - I i
Լ լ - L l
Խ խ - Kh kh
Մ մ - Ts ts
Կ կ - K k
Հ հ - H h
Ձ ձ - Dz dz
Ղ ղ - Gh gh
Ճ ճ - Ch ch
Մ մ - M m
Յ յ - Y y
Ն ն - N n
Շ շ - Sh sh
Ո ո - Vo vo (բառամիջում գրել օ ձևով)
Չ չ - Ch' ch'
Պ պ - P p
Ջ ճ - J j
Ռ ռ - R' r'
Ս ս - S s
Վ վ - V v
Տ տ - T t
Ր ր - R r
Յ յ - Ts' ts'
Ու ու - U u
Փ փ - P'p'
Ք կ - Q q
Եվ և Ev ev
Օ օ - O' o'
Ֆ ֆ - F f

Ռուսերեն

А а - A a
Б б - B b
В в - V v
Г г - G g
Д д - D d
Е е - E e
Ё ё - Io io
Ж ж - Zh zh
З з - Z z
И и - I i
Й й - Ĭ ĭ
К к - K k
Л л - L l
М м - M m
Н н - N n
О о - O o
П п - P p
Р р - R r
С с - S s
Т т - T t
У у - U u
Ф ф - F f
Х х - Kh kh
Ц ц - Ts ts
Ч ч - Ch ch
Ш ш - Sh sh
Щ щ - Shch shch
Ъ ъ - “
Ы ы - Y y
Ь ь - ‘
Э э - E' e'
Ю ю - Iu iu
Я я - Ia ia

Տպագրությունը՝ օֆսեթ, թուղթը՝ օֆսեթ,
տպաքանակը՝ 100:

Կազմի ձևավորումը՝ Քրիստինե Վարդանյանի
Համակարգչային ձևավորումը՝ Արաքս Ալեքսանյանի

Տպագրությունը՝